Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2289

82
2-16

82
Լ-16
1 3 JUN 2005
1 6 OCT 2009

ԼԱՄԲԱՅ

Լ-16

ՎԷՊ

Ի ԴԵՐԻՑ ՇԷԿՍՊԻԵՐԱՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ՅԱՆԳԼԻԱԿԱՆԷՆ

Թ. ՏՔՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ

ՎԱՐԺԱՊԵՏ ՀԱՅԿԵԱՆ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՈՐ

Ի ԿԱԼԿԱԹԱ

82
Լ-16
37020-62

Ի ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1903.

164

2289

ԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Բազմաց ոչ–Անգղիերէնագիտաց իսկ թերևս չիցէ անծանօթ անուն մեծ բանաստեղծին՝ Շէկսպիերայ Անգղիացւոյ։ Եկեաց սա թէ և ի սկզբան հօթնեւտասներորդ դարու, այլ գործք նորա գրաւեցին զայսչափ ժամանակ և գրաւեն դեռ զզարմանս և զմայլումն ընթերցողաց, ոչ ի սակս գերապանծ ստեղծական հանճարոյն միայն տեսանելի ի նմին, այլ մանաւանդ վասն սքանչելի թափանցկութեան մտաց հեղինակին ի խորս մարդկային կրից և բնութեան, զոր մարմնացուցանէ ի դերս իւր՝ ի մէն մի գործօղ անձին՝ արդարև հրաշալի ինն կենդանի գունով և հարազատութեամբ, թէ ըստ բարւոյն և թէ ըստ յոռի մասին։ Այսքիկ քանի մի վէպք ի գերից նորա, թարգմանեալ առաջի եղեալ աստանօր, այս՛, նման են յաւէտ սոսկ չրջագծի ինչ հոյակապ դարպասի միոյ, որ մարթասցի ընծայել լոկ անկատար գաղափար ինն գոյնանէ, այլ մանրամասնութիւն չքեղութեան

և փառաւորութիւն ճարտարապետական արհեստի նորին միայն ականատես գննութեան կարեն գալ ի յայտ: Բայց և այնպէս՝ կարծիս ի միտս եղեալ թէ գուցէ եւ նոյն իսկ լոկ գաղափար մեծ հեղինակութեան մեծի առնս բազում հետաքննին մտաց պրեսցի ըղձալի լինչ, սիրով յանձն առաւ աշխատութիւնս, և համարեսցի լիով վարձատրեալ եթէ իրագործեսցէ այն զդէմ եղեալն նպատակ:

Ի Կալկաթա, 2 Մարտի 1893:

Ի Կալկաթայ. յ'3 Մարտ, 1893.

Ա.ո Ազնիւ Պարոն,

Միքայէլ Սարգիս Պարտիրոսեան,

Ի Սինգափուր.

Սիրելեալ Հոգևոր Զաւակ իմ,

Արժանի ձեզ նուէր ինչ չկարացի տալ ոսկի կամ գոհար, այլ զայս փոքրիկ աշխատութիւն նուիրեմ ահա քեզ եւ ամենիւ Հարսին քում իբր ընծայ հարսանեկան: Այո՛, ոչ մեծ ինչ, այլ հաւատամ թէ իբրեւ նշան անկեղծ սիրոյ իմոյ առ Ձեզ, ընդունել ունիք զսոյն նոյնչափ սիրով եւ յօժարութեամբ, որչափ սիրով եւ յօժարութեամբ ընծայեմ Ձեզ: Սիրոյ ջերմ ողջունիւ մնամ

Ձերդ կարի հաւաստեաւ,

Թ. ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ

ՎԷՊ Ք

Ի ԴԵՐԻՑ ԹԷԿՍՊԻԵՐԱՅ

ՎԻՊ
Ի ԴԵՐԻՑ ԹԷԿՍՊԻԵՐԱՑ

ՈՄՄԻՈ ԵՒ ՋՈՒԼԻԷՏ

Կային ի վերօնա երկու նշանաւոր և հարուստ ընտանիք, մին անուանեալ Կապիւլէտ և միւս՝ Մօնտէկիւ: Ի հին ժամանակաց հետէ կայր ի մէջ սոցա վէճ մի, և այս վէճ՝ ամ ըստ ամէ սաստկացեալ եւ զայրացեալ՝ փոխարկեալ էր յայնպիսի անհաշտելի եւ մահաբեր թշնամութիւն, զի մինչ անգամ հեռաւոր ազգականք, ծառայք և նոյն իսկ վարձկանք երկու ընտանեացն ցուցանէին սո՛ւր մխիթարս այնչափ խիստ սուրբ լութիւն, զի ծառայի միոյ Մօնտէկիւ սան՝ անհնար էր հանդիպել ծառայի սան Կապիւլէտի՝ և ոչ ծառայ Կապիւլէտի՝ ծառայի Մօնտէկիւ սան առանց հայհոյելոյ՝ կռուելոյ և երբեմն պատճառելոյ արիւնահեղութիւն եա: Վասն որոյ անդադար եւ յաճախ էին կռիք՝ գըժսութիւնք և ցոյցք սակրութեան ի մէջ նոցա յորժամ

և դէպ լինէր հանդիպել միմեանց, և այսպէս բազում անգամ խաղաղութիւն ժողովրդոց վերջնայ ամբոխեալ լինէր խռովութեամբ։

Ծերունի սեպուհն կապիւլէա, կամ գլուխ այլ անուն ընտանեաց, յաւուր միում կազմեալ մեծահանդէս ընթրիս, հրաւիրեաց զբազում տիկնայս և զաղնուատոհմ և զաւագ սրեաբս, և բոլոր գեղանի տիկնայք և օրիորդք՝ որոց գեղեցկութիւն գրաւէր զմայլումն ամենից՝ ներկայ էին ի խրախճանի անդ, և պատուասէր հիւրընկալութեամբ մեծարեալ լինէր ա՛ոք և գայր, միայն թէ չէր նա ի Մօնտէգիւ ընտանեաց։ Յայսմ խրախճանի ներկայ էր Ռօզըլին՝ զոր սիրէր Ռօմիօ՝ որդի ծերունի Մօնտէգիւ սեպուհոյ, և թէ և յոյժ վըտանգաւոր էր վասն Մօնտէգիւի միոյ երևիլ յայսմ խրախճանի, սակայն Բէնվոլիօ՝ մին ի բարեկամաց Ռօմիօի հաւանեալ էր զնա ծպտել զինքն և ներկայանալ անդ, որպէս զի կարասցէ տեսանել զսիրեցեալն իւր Ռօզըլին, և տեսանելով զնա համեմատել զգեղեցկութիւն նորա ընդ ոմանց չնաշխարհիկ գեղուհեաց վերջնայ, որոյ՝ ասաց նա, իմանալոց էր յայնժամ «Թէ կարապ իւր ոչինչ էր քան սագ միայն»։ Ռօմիօ՝ թէև չընծայէր հաւատ բանից Բէնվոլիօի՝ սակայն եւ այնպէս ի սակս սիրոյ Ռօզըլինայ համոզեցան գնալ, քանզի անկեղծ և եռանդնատ էր կաթոգնութիւն նորա առ օրիորդն, և այնպէս միանգամայն յափշտակեալ էր սիրով նորա՝ զի չկարէր ննջել. հեռացեալ մեկուսացեալ էր բնաւին յընկերակցութենէ, և զօրն ողջոյն "չ այլ ինչ ի մտի ունէր՝ այլ միայն զՌօզըլին։ Բայց Ռօզըլին չտիրէր գնա, վարէր ընդ նմա անտարբերութեամբ և բնաւ չցուցանէր խուն ինչ փոխադարձ կաթոգնութիւն, և սմին իբր Բէնվոլիօ ցանկալով բուժել զՌօմիօ ի հարուածոյ անփոխադարձ սիրոյն՝ երբեր գնա ի հանդէս ընթրեացն՝ ցուցանել նմա զայլ նորա-

նոր գեղեցիկ տիկնայս և զբաղել զմիաս նորա յընկերակցութեան նոցա։ Ահա ի ներքոյ այսպիսի հանգամանաց էր զի պատանին Ռօմիօ և երկու բարեկամք նորա Բէնվոլիօ և Մերկուշիօ ծպտեալ զինքեանս՝ ներկայ գտան ի խրախճանի ընթրեաց կապիւլէա Սեպուհոյ։ Ծերունի սեպուհն պատուասիրեալ սաստկապնոսա և զուարճաբանութեամբ իմն ասաց թէ ոչ ոք ի տիկնանց՝ որ չունէր կոշտս ի մատունս ոտիցն՝ ղչանալոց էր պարել ընդ նոսա։ Ջուարճ էր սիրա ծերունւոյն և խանդ և ծիծաղ յաչս նորա, և տեսեալ զլիմակաւորութիւն նորիկ հիւրից իւրոց, «ես ևս» ասաց ժպտելով, «կրեալ եմ պիմակ ի պէմս, յորժամ պատանի էի, և գիտէի իսկ յայնժամ սրպէս հմայել զդողարիկ՝ անուշիկ խօսս յունկն գեղապէմ տիկնոջ միոյ»։ Ջկնի այսորիկ պիմակաւոր հիւրքն պարել սկսան, այլ մինչ այս մինչ այն՝ յանկարծ աչք Ռօմիօի միանգամայն բեւեռեցան ի տես մատաղատի տիկնոջ միոյ՝ որ պարէր նոյնպէս ի գահլըճի անդ, եւ ո՛վ, քանի՛ սքանչելի էր գեղ նորա։ Պայծառութիւն այնորիկ շլացուցանէր զլոյս նոյն իսկ ճրագացն լուցեալ։ Նման էր այն մեծագին փայլուն գոհարի ինչ՝ կրեալ ի պարանոց սևամորթ Աֆրիկեցւոյ միոյ — գեղ իմն շատ չքնաղ համարիլ մարդկային, շատ գեղացանց համարիլ երկրաւոր։ Թուէր նա Ռօմիօի որպէս ձիւնափայլ ագռաւի մի յերամ ագռաւուց — այնչափ յափշտակիչ էր գեղեցկութիւն նորա, այնչափ սքանչելի կատարելութիւնք չնորհալի անձինն՝ յորժամ ի համեմատութիւն ածէր զնա ընդ ընկերաց իւրոց։ Միանգամայն այլ յայլմէ եղեալ՝ մինչ Ռօմիօ այսպէս առանձնախօսէր զզգացմունս սրտի իւրոյ, Թայբալտ եղբօրորդի կապիւլէայ՝ լուեալ զխօսս նորա՝ ծանեաւ զնա ի ձայնէ նորա, եւ զի Թայբալտ էր այր մի պիւրտղիս և կատաղի, գժգոհեցաւ յոյժ և չկարէր տա-

նել այնմ՝ զի Մօնառէգիւ մի՝ պատրուակաւ պիմակիի՝ մուտ գործեալ էր անդ ծաղրել և ծանակել (որպէս ասէր) զկոչունս և զկոչնականս իւրեանց։ Ուստի յանդիմանիս բարկացեալ անդէն և անդ հարկանելոց սպառնալից էր զՈօմիօ, բայց հօրեղբայր նորա՝ ծերունին Կապիւլէա՝ արգել եղ, և ոչ թոյլ եա նմա առնել վնաս ինչ՝ նախ ի պատիւ հրաւիրականաց իւրոց, և միւս եա զի Ռօմիօ վարեալ էր ամենայնիւ վայելչութեամբ և ազնուաբար, և գրեթէ չկայր բերան ի վերօնա քաղաքի որ ոչ խօսէր զոլեսաիւ զնմանէ որպէս առաքինի և բարեբարոյ պատանի մի։ Թայլբալա այսպէս սոխալեալ՝ պարտաւորեցաւ զսպել զինքն առժամ, սակայն երդուաւ ի միտս իւր, զի ի գտանելն միւսանգամ պատեհութիւն՝ չէր խնայելոց տալ զարժանին պատուհաս անպիտան Մօնառէգիւի այնմիկ վասն յանդգնութեան իւրոյ ի մտանել ի տուն իւրեանց։

Յաւարտել պարուն, Ռօմիօ նշմարեալ զտեղին ուր կայր տիկինն՝ մերձեցաւ առ նա, և ի շնորհս արտուղութեան պիմակաւորութեան իւրոյ, որով նենգիլ լինէր նմա մտամբ համարձակութիւն իւր, մեղմով կալաւ զձեռանէ նորա և կոչելով զնոյն նշխար սրբազան, «եթէ» ասէ «հպելով իմ յայս՝ ամպարիշտ ինչ գործեմ, ուրեմն որպէս չերմեռանդն ուխտաւոր համբուրելոյ զայն ի թոյլութիւն ձեղացս»։ «Ով բարեպաշտ ուխտաւոր» պատասխանեաց տիկինն, «չերմեռանդութիւն քոյ՝ յաւէտ որպէս պատուասէր քաղաքավարութիւն պալատականի միոյ թուի ինձ, բայց արժան է քեզ պիտել զի սուրբք ունին ձեռս՝ յորս ուխտաւոր մի հասուպ մատչել կարէ, այլ ոչ համբուրել»։ Բայց ոչ ապաքէն սուրբք ունին շրթունս՝ նոյնպէս և ուխտաւորք», ասաց Ռօմիօ։ «Այո», պատասխանեաց տիկինն, «ունին շրթունս, այլ ի կիր արկանին զայն միայն վասն աղօթելոյ»։ «Ուրեմն ով դու պահապան

սուրբ իմ», ասաց Ռօմիօ, «լուր աղօթից իմոց և շնորհեա ինձ զաղաչանս իմ, եթէ ոչ բաժին իմ յուսահատութիւն եղիցի»։ Եւ մինչ այսպիսի փոխաբերական բանիւք և սիրալիր լռելեայն խնամուիւք զբուցէին նոքա ընդ միմեանս, մայր սիկնօրն կոչեաց զնա առ ինքն։ Եւ Ռօմիօ հարցուփորձ առնելով թէ ով էր մայր նորա, տեղեկացաւ թէ չքնաղ սիկինն, որոյ աննման պեղեցկութեամբ այպէս յափշտակեալ էր սիրտ իւր, էր մատաղատին Ջուլիէտ՝ դուստր և ժառանգ կապիւլէա սեպուհոյ՝ մեծ թշնամւոյ Մօնառէգիւ ընտանեաց, և վասն որոյ անգիտութեամբ ահա հարեալ էր ի սէր թշնամւոյ իւրոյ։ Այս՝ մասամբ իւիք՝ խռովել սկսաւ զմիտս նորա, այլ տարահամոզել զնա ի սիրելոյ չկարաց։ Ջուլիէտ ևս ոչ սակաւ շփոթեցաւ, յորժամ գիտաց թէ զրուցակից իւր էր Ռօմիօ և Մօնառէգիւ մի, քանզի իւր զոզարիկ սիրտ ևս սառցեալ էր յանկարծակի զմիւնոյն հարուած սիրոյ որպէս Ռօմիօին, և արդարև յոյժ զարմանալի ինչ թուէր այս ամօթխած օրիորդին, զի սիրել միայր նմա զթշնամի իւր, և զկատարեան կաթողիկութիւն իւր այսպիսւոյ միւսմ նուիրեալ էր, զոր՝ ի պատճառս թշնամական զգացմանցն՝ որ սիրէր ի մէջ երկուց ընտանեացն, յաւէտ ատել արժան էր ինքեան քան սիրել։

Ի հասարակել գիշերոյ Ռօմիօ և ընկերք իւր մեկնեցան ի բաց. այլ փոքու զկնի Ռօմիօ անհրաժեշտութեամբ ի միջոյ ընկերացն, քանզի չկարելով հեռանալ ի տանէն՝ ուր թողեալ էր զսիրտ իւր, վերադարձաւ առ կողմն պարտիզին՝ որ կայր յետկոյս տան Ջուլիէտայ և սատեաւ որմոյն ի ներքս ի պարտէզն։ Այսպէս հազիւ թէ սակաւ ինչ ժամանակ զբաղեալ էր ի վաղցը եւ ի հանդիսական մտածութիւն սիրոյ, յորժամ Ջուլիէտ երեւեցաւ ի վեր ի պատուհան սենեկի իւրոյ։ Զքնաղ գեղ գիմաց նորա երեւէր որպէս հրաշափառ ծագումն

արիւնոյն յարևելս, և լոյս լուսնին՝ որ առժամն փայլէր
ի վերայ պարտիզին՝ թուէր յաչս Ռօմիօի պալկահար
և ազօտ ի սքանչելի պայծառութենէ նորոյ արեգա-
կանն: Եւ յորժամ կոյսն գեղանի եկեալ զծնօտ իւր
ի վերայ ձեռին՝ յեցեալ էր ի պատուհան անդ, հա-
ռաչանօք սիրոյ փափագէր Ռօմիօ զոլ թաթպան մի
քնքուշ ձեռին նորա զի հպեսցի այնու ի վարպագեղ
այս նորուն: Այլ Ջուլիէտա ի բոլոր ժամանակի կարծե-
լով թէ առանձին էր ինքն, ի վերջոյ ի խորոց սրտի և
նա հառաչեաց, «ո՜հ, աւաղ ինձ»: Ռօմիօ՝ ի լսել զայս
այլ յայլմէ եղեալ բոլորովին հմայեաց յոյժ մեղմով
անլուր ի կուսէն, «խօսեա՛ ով լուսագեղ հրեշտակ,
զի երևիս ի բարձրութենէ այդմիկ որպէս թևաւոր
պատգամաբեր մի՝ առ որ մահկանացուք՝ յետս լնկըր-
կեալ հայեին ապշութեամբ»: Ջուլիէտա չգիտեալով թէ
կայր ունկնդիր ոք բանից իւրոց, և քնքուշ սիրտ իւր
ի նորածին սիրոյն՝ զոր ներշնչեալ էր ի նա գէպք
այդը գիշերոյ, կոչեաց յանուանէ զսիրահար իւր (զոր
ի հարիւ բացակայ կարծէր առժամն) ասելով. «ո՜հ,
Ռօմիօ, Ռօմիօ, աւաղ, ընդէ՞ր Ռօմիօ ես դու. ու-
րացիր զհայր քոյ, և ի բաց առ զանունդ ի սակս
սիրոյ իմոյ, կամ եթէ զայդ չառնես, երդուիր տալ
ինձ զսէր քոյ և ահա ոչ ևս եղէց ես Կապիւլէտ»:
Ռօմիօ ի բանից առաի ոչ սակաւ խրախուսեալ, փոքր
մի և ահա խօսելոց էր և ինքն, այլ զսպեաց զլեզու
իւր, ըստ որում ըղձայր լսել թէ զինչ այլ ևս ասել
ունէր նա. և Ջուլիէտա շարունակեալ զթել (կարծեցեալ)
առանձնախօսութեան իւրոյ, զարձեալ սոգասանէր
զՌօմիօ վասն գոլոյ Ռօմիօ և Մօնթէգիւ, և փափագէր
զի զայլ ևս և ոչ զայդ անուն կրէր նա, և կամ
մերժէր բոլորովին զայդ առնէլի անուն, որ չէր իսկ
մասն ինչ անձին իւրոյ, և ի փոխարէն՝ զինքն ոչ մա-
սամբ, այլ բոլորովին իւրացուցանէր: Ցայսոցիկ սիրա-

լիր բանից ոչ ևս զսպել կարաց զինքն Ռօմիօ, եւ
խօսեցաւ որպէս թէ առ ինքն ուղղեալ էին բանք կուսին
գեղանւոյ, և ոչ թէ խոհմունք էին այնք մտաց նորա:
Աղաչէր զնա կոչել զինքն սէր, կամ տալ նմա զայլ
ո՛ և իցէ անուն զոր ցանկայր նա, քանզի անուն իւր
յայնմհետէ չէր այլ ևս Ռօմիօ՝ եթէ առելի էր նմա
այն: Ջուլիէտա միանգամայն շփոթեալ յիրկիւղէ ի լսելն
զձայն առն միոյ ի պարտիզի անդ, յառաջն չկարէր
իմանալ թէ ո՛վ էր այն, որ այնպէս զմտութիւն գի-
շերոյն ապաւէն արարեալ իւր, մտեալ էր անդ գողուզի
և վկայ եղեալ ի ծածուկ խոստովանութեան սիրոյ իւ-
րոյ՝ այլ յորժամ կրկին խօսեցաւ նա, թէև ականջք
նորա դեռ չեն արբեալ էին զքաղցրիկ օշարակ քանի մի
սիրանոյշ բառից, սակայն այնպէս սուր է լսողութիւն
սիրոյ՝ զի խոհոյն ծանեաւ թէ պատանին Ռօմիօ էր
այն, և սկսաւ յանդիմանել զնա վասն այնպէս զանձն
ի վտանգ գնելոյ՝ գալով ի պարտէզ անդ, քանզի եթէ
գտանէր՝ ասէ՝ մի կամ միւս յազգականաց իւրոց զնա
անդ, անշուշտ մահ էր լինելոց այն նմա: «Աւաղ»,
պատասխանեաց Ռօմիօ, «գոյ մեծ ևս վտանգ յաչս քոյ՝
քան ի սուտերս քառասնից նոցա: Հաճեաց միայն նայել
առ իս քաղցրութեամբ, ով սիրելին և ահա չիք ինձ
փոյթ վասն թշնամութեան նոցա: Ընտրելի համարիմ
ևս, զի առելութիւն նոցա վախճան գիցէ կենաց իմոց՝
քան առեցեալ կեանք իմ երկարեսցի և ապրեցայց
առանց սիրոյ քոյ»: «Բայց գիարդ կարացեր գու-
դալ ասա և ո՞յր առաջնորդութեամբ» եհարց Ջուլիէտա:
«Աստուածոյ զիս սէր», պատասխանեաց Ռօմիօ,
«չեմ ես նաւուղիչ՝ սակայն եթէ հեռի էիր գու յինէն
որչափ հեռաւորագոյն ի ցամաքաց՝ զոր լուանայ
ծով աշխոյժ խրովք, գեռ ևս համարձակեի նաւել ի
խնդիր այսպիսի մեծագին ստացուածոյ»: Վարպագեղ
կարմրութիւն իմն սփռեցաւ յերեսս Ջուլիէտայ, թէև

անտեսանելի ի մեծութեան գիշերոյն, յորժամ ի միտ
ած թէ որպէս արտայայտեալ էր զսէր իւր վասն Ռո-
միոյ, · թէ և առնէր զայն չէր եղեալ երբէք մտապրու-
թեամբ: Այո՛, ցանկալոց էր նա յետս կոչել զբանս
իւր, բայց արդ անհնար էր այն: Ցանկալոց էր ըստ
ձիսի ընկերական կենաց՝ ի բացեայ պահել յինքենէ
զտարփածու իւր և չտալ նմա քաջալերս մտերմական
յարաբերութեան, որպէս խոհական սիրեցեալք սովոր են
առնել, որք խոժոռեն զհայեցուածս, բարձրացուցանեն
զյօնս, կամակորութեամբ մերժեն զողջոյնն և զնախըն-
ծայս կաթողնութեան նոցա՝ զոր սիրեն իսկ, վարին
ընդ նոսա խորթութեամբ, կեղծեն սաստիկ պատկառա-
ւութիւն կամ պաղ անփոյթութիւն, զի մի գուցէ կար-
ծեսցեն նոքա թէ յոյժ զիւրաւ գրաւեցին զսէր իւրեանց.
քանզի որչափ զժուարութեամբ ի ձեռս բերի ինչ, այն-
չափ մեծագնի համարի այն, բայց Ջուլիէտայ չէր
հնար առնել և ոչ մի յայտոցիկ, ոչ ուրանալ կարէր
զսէր իւր, ոչ ցուցանել զանտարբերութիւն, և ոչ ի
գործ դնել զայլ զայնոսիկ կեղծիս և յապաշմունս՝ որք
սովորաբար ի կիր արկանին ի քնքուշ սեռէ առ սի-
րուղս իւրեանց: Ռոմիս լուեալ էր միւթ իսկ բերանոյ
զխոստովանութիւն սիրոյ իւրոյ առ նա, թէ և ոչ եր-
բէք երազեալ էր իւր թէ ներկայ էր նա անդ և լսէր
զայն. վասն որոյ անկեղծ պարզմտութեամբ իւճ, զոր
ներելի առնէր հանգամանք իրին, վերահաստատեաց
զճշմարտութիւն խոստովանութեան իւրոյ՝ կոչելով զնա
յանուանէ՝ քաղցրիկ Մօնտէկիս (սէր քաղցրացուցանել
կարէ և զանախորժ անուն մի) և ազաչել սկսաւ զի մի
այնպէս պիւրաւ զընկճուիս իւր ի սիրոյ անամօթիա-
ծութեան կամ անպարկեշտ մտաց վերագրեսցէ, այլ
մեղապիր լիցի (եթէ էր ինչ մեղապրութեան արժանի)
սաբօրինակ անցից գիշերոյն, որով այնպէս ըստ պի-
պաց ի յայտ եկեալ էին խոհմունք մտաց իւր նմա:

Յաւել նաև՝ զի թէ և յաւէտ անխոհեմ ինչ էր հա-
մարելի բարք իւր և ոչ բաւական սիկնավայել՝ ըստ
կանոնաց բարուց սեռի իւրոյ, սակայն գտանելոց էր
նա զսէր իւր, առաւել անկեղծ և ճշմարիտ քան զբազ-
մաց այլոց, որոց խոհեմութիւն՝ կեղծաւորել էր, և ա-
մօթխածութիւն՝ ճարտարարուեստ խորամանկութիւն:

Ռոմիս խոհոյն սկսաւ վկայ կոչել զերկինս, զի
ոչինչ այնչափ հեռի էր ի մտածութենէ իւրմէ՝ որչափ
խուն ինչ իսկ ապատանս կամ սասւերաչափ իմն ան-
պատուութիւն վերագրել այնպիսի արժանապատիւ սիկ-
նոջ. այլ Ջուլիէտ վկայ նա բանից նորա և ազաչեաց
զնա չերկնուլ քանզի՝ ասէ՝ «թէ և բերկրեալ է սիրտ
իմ ի քեզ, սակայն խոստովանութիւն սիրոյ մերոյ՝
յայսմ գիշերի՝ չերկրեցուցանէ զիս. շատ յանդուգն
է այն, շատ անխոհեմ, շատ յանկարծ »: Բայց Ռոմիս
սահպեալով զնա հաստատել ի միջի փոխադարձ ուխտ
սիրոյ, անդէն և անդ Ջուլիէտ պատասխանեաց թէ
արդէն յառաջ քան զինդրել նորա՝ պարզեւեալ էր նմա
զսէր իւր , նշանակել կամելով զլռելեայն ունկնդիր
լինելն նորա սիրալիր բանից իւրոց. բայց եթէ ցան-
կայր նա, յետս կոչելոց էր, ասէ, զոր պարզեւեաչն էր
յայնժամ, միայն վասն բերկրութեան կրկին պարգեւե-
լոյ զայն, քանզի սէր իւր անսահման էր որպէս զծով,
և որպէս զծով խոր իսկ: Յայսմ սիրալիր զրուցաբա-
նեալ Ջուլիէտ ի բաց կոչեցաւ ի դայեկէ իւրմէ՝ որ
նստէր ընդ նմա ի տխուր սենեկի, և կարծէր թէ ժա-
մանակ էր արդ գնալոյ յանկողին, քանզի մերձ էր
արշալոյս. բայց Ջուլիէտ գնալով ի սենեակն անդէն
վերադարձաւ և խօսեցաւ պարձեալ քանի մի բառս առ
Ռոմիս, խնամս որոց էր, զի եթէ իրապէս անարատ
էր սէր նորա՝ և պիտուն նորա ամուսնութիւն, ուրեմն
ի վաղիւ առաքելոց էր Ջուլիէտ զրոյց առ նա և որո-
շելոց զօր հարսանեացն, յորում աւուր առ ոտս նորա

37020-62

ունէր գնել սիրով զոլոր ճոխութիւն իւր, և յայնմհետէ հետևելոց էր նմա՝ որպէս տեառն իւրոյ ընդ աշխարհ բոլոր՝ եթէ այնպէս էին կամք նորա: Մինչդեռ զրուցին նոքա զայսմ պայմանագրութենէ, կրկին կոչէր պայեակն զՋուլիէտ ի ներքս և Ջուլիէտ կրկին և կրկին մտանէր ի սենեակն և ելանէր, քանզի այնպէս նա խանձուրը երևէր ընդ բաժանումն Ռոմիօի յինքենէ՝ որպէս մատղաշ աղջիկ մի ընդ թռչնիկ իւր, որում թոյլ տայ փոքր մի ոստոստել ի բաց, այլ սակայն քարշէ գնա թոթռալով առ ինքն՝ մետաքսեայ թելովն ի ձեռին: Եւ Ռոմիօ ևս անյօժար էր նոյնպէս ի Ջուլիէտայ բաժանել, քանզի վասն տարփածուած քաղցրագոյնն ի բոլոր երաժշտութենանց է ձայն սիրելիր ըզուցից նոցա ևս ի վերջոյ բաժանեցան նոքա, մաղթելով իրերաց քուն քաղցր և հանգիստ անոյշ:

Ծագէր առաւօտ յորժամ բաժանեցան նոքա, եւ Ռոմիօ՝ որոյ ուշ և միաք այնպէս միանգամայն զբաղեալ էին մտածութեամբ զսիրուհւոյ իւրոյ և զբաղցր տեսակցութենէ միմեանց, զի չկարէր ննջել. փոխանակ պառնալոյ ի տուն, գնաց ի մերձակայ վանք մի տեսանել զբեղայն Լաբէնս: Բարի արեզակն արդէն պարապէր յառաւօտեան պաշտամունս ազօթից, բայց տեսանելով զպատանին Ռոմիօ անդ այնպէս կանուխ, գուշակեաց իսկոյն թէ ի պատճառս պատանեկային տարփական հետաքրքրութեան լինէ՝ յարմնութեան անցուցեալ էր զգիշերն: Ուղիղ էր գուշակութիւնն նորա, զի պատճառ անքնութեան նորա էր սէր, այլ սխալ ի մասին առարկայի սիրոյ նորա, քանզի կարծեաց նա թէ սէր Ռոզըլինայ էր, որ բարձեալ էր զբուն յաչաց պատանւոյն: Սակայն, յորժամ Ռոմիօ յայտնեաց նմա զնորածին և զմեծ տարփանս սրտի իւրոյ առ Ջուլիէտ, և խնդրեաց զի սատար եղեալ ամուսնացուցէ զինքեանս յայն օր, բեղայն բարի ի վեր ահբարձ զաչս իւր և

զձեռս ի զարմանաց իւրոց ընդ այնպէս յանկարծ փոփոխումն զգացմանց Ռոմիօի, քանզի չէր անտեղեակ սիրոյ նորա առ Ռոզըլին, և բազում անգամ լուեալ էր զանգամանս զնմանէ իբր թէ արհամարհէր զսէր իւր, վասն որոյ նշմարեաց սուրբ այրն՝ թէ յիրաւի սէր պատանեաց յաչս էր միայն և ոչ ի սրտի: Բայց Ռոմիօ պատասխանելով թէ աբեղային ինքն բազմիցս յանդիմանեալ էր զնա վասն այնպէս անձնանուէր լինելոյ իւր Ռոզըլինայ՝ որ ոչինչ փոյթ ունէր վասն իւր, մինչդեռ Ջուլիէտ ոչ միայն գրաւեալ էր զսէր իւր՝ այլ և փոխարինէր զայն կաթողնութեամբ. ընդ այս, բարի այրն սկսաւ մեղմանալ և համոզիլ, և մտածելով թէ ամուսնական միաւորութիւն Ռոմիօի և Ջուլիէտայ՝ իցէ թէ բարեբախտապէս վախճան գնել կարիցէ թշնամութեանն ի մէջ ընտանեաց նոցա, ընդ որ ոչ ոք այնչափ ցաւէր՝ որչափ ինքն բարի աբեղայն, որ բարեկամ էր երկուց ընտանեացն իսկ. և բազմիցս՝ այլ ի զուր միջնորդ էր լեալ ի հաշտութիւն ածել զնոսա, ի վերջոյ համոզեալ մասամբ յայտ շարժառիթ՝ և մասամբ քանզի սիրէր յոյժ զպատանին Ռոմիօ և հաւիս կարէր ղշանալ նմա ինչ, ծերունի վանականն հաւանեցաւ զուգել զնոսա ի կապ ամուսնութեան:

Երիցս երանեալ կարծէր այժմ զանձն իւր Ռոմիօ, և Ջուլիէտ ի ձեռն ծածուկ և հաւատարիմ անձին, զոր ըստ խոստման՝ որպէս բանիբեր առաքեալ էր առ նա, տեղեկանալով զանցս բանին, անյապաղ ներկայացաւ ի խուց աբեղային, ուր անդէն և անդ կատարեցաւ խորհուրդ ամուսնութեանն, և բարի վանականն կարպալով զօրհնութիւն երկնից ի վերայ սիրակցորդ ամուլիցն՝ բարեմաղթեաց չկրմեռանդութեամբ զի շնորհիւ միաւորութեան մատաղատի Մօնտէկիւի եւ Կապիւլէտայ բարձցի խաչատ ի միջոյ հին թշնամութեան երկուց ընտանեացն:

Յետ այսորիկ Ջուլիէտ փութացաւ ի տուն եւ անհամբեր սպասէր միայն ժամանման գիշերոյ. քանզի Ռոմիո խոստացեալ էր հանդիպիլ նմա ի պարտիզի անդ՝ ուր արդէն տեսակցեալ էին ընդ միմեանս յանցեալ գիշերի, և այդ օր յաչս նորա այնչափ երկար երեւէր և դանդաղ առ երեկոյանալ, որպէս գիշեր մի երեւի երկարաւոր՝ մանկան միոյ, որ գիտէ թէ զվճռուլ ունի յառաւօտու՝ զարգարուն հանդերձ ինչ։

Ի միջօրէի մի և նոյն աւուր, Բէնվոլիօ և Մերկուշիօ բարեկամք Ռոմիոի ի գնալն իւրեանց ի միւսմ ի փողոցաց վերծնա քաղաքի՝ հանդիպեցան քանի մի անձանց ի կապիւլէա ընտանեաց, ընդ որս կայր՝ որ պէս գլուխ և առաջնորդ նոցա՝ նաև Թայբալա։ Այս մինոյն պիւրապրիա և զայրացկոտ Թայբալա էր, որ կամէր կռուել ընդ Ռոմիոի ի խրախճան ընթրեացն ի տան Կապիւլէայի, և ի տեսանելն զՄերկուշիօ՝ բերութեամբ իմն յանդիմանել սկսաւ զնա վասն ընկերակցելոյ ընդ Ռոմիոի՝ Մոնտէկիւի միոյ։ Մերկուշիօ, որոյ արիւն ոչ սակաւ բորբոքուն էր քան զԹայբալտայն՝ պատասխանեաց բանից յանդիմանութեան նորա խաղութեամբ, և թէեւ Բէնվոլիօ բազում ինչ առաջ առ ի հանդարտել զնոսա ի խաղաղութիւն, սակայն յայնժամ էր ի թանձրանալոյ վէճն, և յայսմ ժամուս Ռոմիօ ինքնին՝ ըստ պիպաց անցանելով առ տեղեաւն, կատաղեալն Թայբալա՝ խոզվով խոհոյն զՄերկուշիօ՝ գարձաւ առ նա և կոչեաց զնա ի խայտառակ և յաղթալի անուն՝ սրիկայ։ Ռոմիօ ցանկացաւ խորշիլ ի կռուելոյ՝ յատկապէս ընդ Թայբալտայ, որ ազգական էր Ջուլիէտայ և յոյժ սիրելի նմա, և մանաւանդ զի ինքն թէև Մոնտէկիւ մի, սակայն չէր այնչափ զգածեալ ի հշնամական յարաբերութիւնս երկուց ընտանեացն՝ գոլով ընտելութեամբ հնդ և խաղաղասէր, և նաև առնոյ կապիւլէա՝ որ էր այժմ անուն սիրուհւոյ իւրոյ,

կարծէր կախարդիչ զօրութիւն իմն ունել պարտի՝ յաւէտ ամոքել և խաղաղացուցանել զկատաղութիւն կրից և զանհնդութիւն՝ քան բորբոքել զկապ և զկռիւ. վասն որոյ սկսաւ ջանալ համոզել զԹայբալա, բարեկամաբար կոչելով զնա « իմ լար կապիւլէա », որպէս թէ քաղցր էր ինքեան արտասանել զանունն այն. այլ Թայբալա՝ որ ի խորոց սրտի սատանիկ ատէր զբոլոր Մոնտէկիւս, ոչ անսալով բանից համոզանաց նորա, մերկեաց զսուր իւր ի պատենէ, և Մերկուշիօ՝ որ ոչ պիտէր զծածուկ շարժառիթն՝ որով Ռոմիօ ջանայր քաղցրութեամբ խաղաղացուցանել զԹայբալա. և կարծէր թէ համոզական բանք նորա յաւէտ արհամարհ ընկճման և հպատակութեան էին նշան, սատանիկ քամահական բանիւք զրգռեաց զԹայբալա զառնալ և մենամարտիլ ընդ ինքեան. և Թայբալա և Մերկուշիօ, յարձակեալ կատաղութեամբ ի վերայ իրերաց, անկաւ Մերկուշիօ՝ ընկալեալ զմահացու վէրս մի, այնինչ Ռոմիօ և Բէնվոլիօ գուն գործէին որոշել զնոսա ի միմեանց։ Ռոմիօ տեսեալ զմահ Մերկուշիօի, ոչ ևս կարաց զսպել զինքն, այլ գարձեալ առ Թայբալա կոչեաց զնա սրիկայ, յոյս տալով նմա զխայտառակ անունդ՝ որով անուանեալ էր նա զինքն, և երկոքին սաքա ի վերայ յարձակեալ միմեանց՝ մարտեան և սպանաւ Թայբալա։ Այսոքիկ արիւնահեղ կռիւք զտեղի կալեալ ի լոյս միջօրէի ի քաղաքամիջի անդ, յորժամ թօթափել սկսաբանեցաւ զարհուրելի լուր այնորիկ, և մեծ բազմութիւն քաղաքացեաց ժողովեցաւ առ տեղեաւն, ի մէջ որոց կային երկու ծերունի սնոտւհքն Կապիւլէա եւ Մոնտէկիւ՝ հանդերձ կանամբք իւրեանց. և փոքու զինի ի վերայ եհաս նաև իշխան քաղաքին, որ գոլով ազգական Մերկուշիօի՝ զոր սպան Թայբալա, և տեսանելով զի այսոքիկ մշտական կռիւք և կռիւք Մոնտէկիւից և Կապիւլէտից անպատար շփոթեն զխաղաղու-

թիւն քաղաքին, հաստատեաց ի մոի խոսիւ պատու-
հասել ըստ օրինաց վայրացուորն։ Բէնեղէիս՝ որ ակա-
նատես էր եղեալ ամենայնի, հրամայեցաւ յիշխանէ
քաղաքին պատմել զծագումն և զանցս կռուին, և
սա կամելով ուրչափ և հնար էր չհետանալ ի ճշմար-
տութենէ՝ առանց ի վանդիկ գնելոյ զՌօմիս, պատ-
միեաց զհանգամանս իրին, մեղմացուցանելով ըստ կա-
րելոյն և անսպիւտ առնելով զարարս բարեկամի իւ-
րոյ։ Տիկինն Կապիւլէա՝ որոյ այնչափ կսկիծ ընդ
մահ ազգականի իւրոյ բորբոքեալ էր զգառն և զխոտ
վրէժխնդրութիւնն ի սիրտ նորա, աղաչել սկսաւ զիշ-
խան քաղաքին ի գործ գնել զսուր արդարութեան
ընդդէմ Ռօմիսի և չչնել ունկն բանից Բէնեղէիսի՝ որ
բարեկամ գոլով նորա և ինքն Մօնտէգիւ մի՝ խօսէր
կողմնակցութեամբ։ Եւ այնպէս սիկինն Կապիւլէա՝
իբր անգութ գառնասիրտ մի՝ զմահ փեսայի իւրոյ խնդրէր,
այլ չգիտէր զի փեսայ էր նա իւր և ամուսին գառն
իւրոյ Ջուլիէտայ։ Ի միւսոյ կողմանէ ամբառնայր ա-
ղաղակ աղերսանաց Մօնտէգիւ սիկնոջ՝ վասն կենաց
զաւակի իւրոյ, որ ասէր՝ և մասամբ արդարացի իսկ,
թէ որպի իւր ոչնչով գործեալ էր արժանի պատժոյ ի
սպանանելն զԹայբալտ, քանզի արկէն զառաջարար էր
նա մահու, սպանանելով իւրով զՄերկուշիս։ Բայց
իշխանն չլսելոյն արարեալ զազ·ակ երկուց կանանցն,
և զգուշաւոր քննութեամբ հասու եղեալ հանգամանաց
անցիցն, արձակեաց վճիռ՝ տարապրել զՌօմիս ի սահ-
մանաց վերոնայ։

Դառն և տխուր լուր էր այս վասն Ջուլիէտայ,
որ ի քանի մի ժամուց հետէ հարսնացեալ միայն, ահա
այսու վճռով՝ որպէս թէ յանխնայ բաժանիլ ճեպր
նմա ի փեսայէ իւրմէ։ Յորժամ եհաս լուրն յականջս
նորա, նախ առաջիկս զայրացաւ ընդդէմ Ռօմիսի՝ որ
սպանեալ էր զազգական իւր։ Ակսաւ կոչել զնա գեղե-

ցիկ բռնաւոր, հրեշտակակէմ չար ոգի, գիշախանձ
ազատնի, գառն՝ կատաղի որպէս զգայլ, սիրտ խոյ-
նման ծածկեալ ծաղկափայլ դիմօք, և յայլ այսպիսի
հակասական անուանս, որ ցուցանէր թէ արդէն մի
զմիով եւևել առնէին ի սիրտ նորա սէր և վրէժխնդ-
րութիւն. բայց ի վերջոյ սէր յաղթական գտեալ, ար-
տասուքն զորս հեղեալ էր ի սրտմտութենէ վասն սպան-
ման ազգականի իւրոյ, փոխեցան ի կաթիլս հրճուանաց
առ այն՝ զի առնսին իւր կենդանի էր, զոր Թայբալտ՝
եթէ չէր անկեալ ինքնին՝ սպանանելոց էր անխափան։
Ապա նոր ի նորոյ թափել սկսան արտասուք յաչաց
նորա, արտասուք սրտմտութեան վասն տարապրութեան
Ռօմիսի, որոյ կսկիծ առաւել գառն էր քան զմահուան
Թայբալտայ։

Ռօմիս յետ մահապիտ վճռոյն, ապաս-
տան անկեալ էր ի խուց Լարէնս աբեղայի, և անդ էր
զի լուաւ զառաջինն զվճիռ իշխանին, զոր համարեցաւ
առաւել զարհուրելի քան զմահ։ Թուէր նմա թէ չէք
աշխարհ վասն իւր արտաքոյ պարսպաց Վերոնա քա-
ղաքի, և թէ անհնար էր վասն իւր կեալ ի բացեայ
ի տեսութենէ Ջուլիէտայ։ Անդ միայն կայր երկինք՝
ուր կայր Ջուլիէտ, և արտաքոյ այնորիկ քաւարան էր
միայն, առնջանք և զժոխք։ Բարի աբեղայն խրատէր
զնա մխիթարել զինքն սփոփանօք փիլիսոփայութեան,
այլ զառանցեալ պատանին ոչ ունկն գնելով բանից
նորա՝ որպէս խելացնոր ոմն փետէր զհեր գլխոյն,
գլորեալ տարածէր զինքն ի վերայ գետնոյն՝ առ ի
որոշել (որպէս ասէր) զչափ գերեզմանի իւրոյ։ Ցայսմ
անվայելուչ վիճակէ մտաց՝ փոքր մի զգաստացաւ սա-
կայն՝ յորժամ հասեալ բանբեր մի յայտնեաց նմա
զրոյցս լինչ ի սիրելի սիկնոջէ իւրմէ, և աբեղայն
տեսեալ զայս, իսկոյն պատեհ էառ՝ յանդիմանել վասն
անմարդավայել սկարամտութեան՝ զոր ցուցեալ էր

այնպէս վայրկի մի յառաջ: Սպանեալ էր նա զԹայբալա, ասէր, բայց արդեօք և զանձն իւր սպանանել կամէր, և նաև սպանանե՞լ զՋուլիէտ զքաղցրիկ աղուսին իւր՝ որոյ կեանք զիւրոյ կենաց կախէր արդ: Եթէ կերպարան մարդոյ՝ ասէր, է որպէս ի մահոյ ձեւակերպեալ, և հաստատութիւն մատաց է որ կազմէ զայն ամուր և հզօր: Օրէնք մեզմութեամբ վարեալ էր ընդ նմա, քանզի փոխանակ մահու՝ որում դատապարտէր կացուցեալ զանձն՝ բերանով իշխանի քաղաքին վճռեալ էր նմա տարագրութիւն միայն: Սպանեալ էր նա զԹայբալա, բայց Թայբալա ևս սպանանելոց էր զնա — կայր յայսմ սիրտիանք ինչ: Ջուլիէտ կենդանի էր և (բնաւին արտաքոյ ակնկալութեան իւրոյ) էր ահա սիրելի կին իւր. և յայսմ կայր մեծագոյն ևս սիրտիանք: Զայսոսիկ ամենայն բարիս, զորս աբեզայն ապացուցանել չկարաց, թէ իցեն բարիք եւ ոչ այլ ինչ, Ռօմիօ որպէս կամակոր և անհաւատ՝ աղջիկ մի մերժէր և ոչինչ գրէր, վասն որոյ յայտնեաց նմա աբեզայն զգուշանալ, քանզի նոքա, ասէ, որք մատնեն զանձն յանյուսութիւն, մեռանելոց են թշուառաբար: Ապա յորժամ փոքր մի անդորրացաւ Ռօմիօ ի միտս իւր, ա֊բեզայն խրատ ետ նմա՝ յայսմ գիշերի գնալ եւ ի ծածուկ տալ Ջուլիէտայ զողջոյն հրաժեշտի, և ապա անտի գնալ ուղղակի առ Մանտուա, յորում քաղաքի բարւոք էր ամենեցուն՝ հաստատել զբնակութիւն իւր և ձեալ անդ, մինչ կարիցէ ինքն (աբեզայն) գտանել զբարեպատեհ ժամանակ՝ առ ի հրատարակել զամուսնութիւնն նորա, որ գուցէ (ասէ) լիցի երջանկաւորիմ միջոց ի հաշտութիւն բերելոյ զընտանիս նոցա, եւ աներկբայ էր ինքն, զի իշխան քաղաքին ևս զթացեալ ներելոց էր նմա, և յայնժամ վերադառնալ կարէր նա ի տարագրութենէ իւրմէ՝ քանզի պատիկ առաւել ուրախութեամբ քան որչափ տխրութեամբ բաժանիլ

ունէր արդ: Ռօմիօ հասու եղեալ ի վերջոյ խմաստուն խրատուց աբեզային, հրաժարեցաւ ի նմանէ գնալ տա֊սանեալ զտիկին իւր, մտագրեալ ճշալ ընդ նմա յայն գիշեր, և կանուխ ի ծագել առաւօտու՝ շարունակել միայնակ զճանապարհորդութիւն իւր առ Մանտուա, ուր աբեզայն խոստացաւ երբեմն երբեմն հասուցանել նմա թուղթս և յայտնել զհանգամանս իրաց ի տան:

Ռօմիօ անցոյց զայդ գիշեր ընդ սիրելի կնոջ իւրոյ, ի ծածուկ մուտ գտանելով ի սենեակ նորա՝ ի պարտիզէն ուր լուեալ էր զխոստովանութիւն սիրոյ նորա յանցեալ գիշերի: Անցեալն եղեալ էր գիշեր մի՝ լի յափշտակիչ զմայլմամբ և բերկրանօք. այլ զուարճալի հաճոյք այսր գիշերոյ և հրճուանք սիրոյ՝ զորս վայե֊լեցին յընկերակցութեան միմեանց մատաղ ամլքն, աւաղ, չէր անխոհն ի սխրութենէ մօտալուտ բաժան֊ման իրեանց ի միմեանց և մահարեր անցից աւուրն անցելոյ: Անհաճոյ էր նոցա ծագումն առաւօտու, եւ թուէր այն կանուխ քան զսովորականն. և յորժամ Ջուլիէտ լուաւ զառաւօտեան զայլայլիկ արտուտ թռչնոյ, համոզել ցանկայր զանձն թէ էր այն գիշերահաւազ երգ սոխակի. սակայն իրապէս արտուտն էր որ եր֊գէր, և քրքմագոյն ազօտ ճառագայթք լուսոյ ցոլեալ յարևելս, յայտնեցին անսխալ թէ ժամ էր ահա բա֊ժանման սիրելեացն: Բաժանեցաւ Ռօմիօ ի կնոջէ իւրմէ՝ սիրա իւր ծանրացեալ արամութեամբ, խոստա֊նալով թղթակցել ընդ նմա ի տարագրութեան իւրում՝ ի բոլոր ժամս աւուրն. և յորժամ էջ ի վայր ի պա֊տուհանէ սենեկի նորա, և կանգնէր անդ ի սաստիկ, այնպէս ճնշեալ էր գոգարիկ սիրա Ջուլիէտայ ի սքրտա֊մութենէ, մինչ զի ի հայելն ի վայր առ նա, թուէր նմա որպէս թէ քաղցրիկ ամուսին իւր իցէ անկենդան մարմին մի եղեալ ի գերեզմանի: Սիրտ Ռօմիօի եւ լի էր աննկարագրելի թախծութեամբ և երկիւղիւ մօ֊

տալուա վանդի ինչ, այլ սակայն սոխպեցաւ փու-
թալ ելանել անտի, քանզի մահ էր նմա՝ եթէ գտա-
նէին զնա ի քաղաքի անդ յետ ծագման արեւու:

Բայց, աւաղ, միայն սկիզբն էր այս ազետալի
արկածից վատաբախտիկ սիրազդի առնլիցս: Զի էին
անցեալ աւուրք յոլովք, յետ բաժանման Ռօմիօի,
յորժամ ծերունի սեպուհն Կապիւլէա՝ կոչեալ ԶՁու-
լիէա գուստր իւր՝ յայտնեաց նմա թէ ընտրեալ էր վասն
նորա փեսայ մի, ընդ որում ամուսնանալ պարտէր
նա: Այլն ընտրեալ, որ ի հարկէ անծանօթ էր բնաւ
թէ արդէն ամուսնացեալ էր Զուլիէա, էր կոմսն
Պարիս—պատանի մի գեղեցիկ, հնարհալի և ազնուաբա-
րոյ և սէր անարժան փեսայանալոյ Զուլիէայ՝ եթէ չէր
նորա յառաջագոյն տեսեալ զՌօմիօ:

Զուլիէա զարհուրեալ մեծապէս եւ անկեալ
յանհնարին շփոթութիւն մտաց՝ ընդ առաջարկու-
թիւն հօրն, առաջի եղ զանազան պատճառանս, ասելով
թէ յոյժ մատաղահասակ էր ինքն տակաւին վասն ա-
մուսնանալոյ, թէ յետ այնպէս ի նորոյ սպանման
Թայբալտայ ազգականի իւրոյ, որով մաշեալ էր սիրտ
իւր ի արտութենէ, անվայելուչ էր լինելոց կապիւ-
լէտից ունել զհանդէս հարսանեաց, այն ինչ հազիւ
վերջացեալ էր հանդէս թազման նորա, և յուշ ածէր
զամենայն ո՛ և իցէ ձեռնարկութիւնս և պատճառս՝
թողեալ վերական պատճառ բանին — թէ արդէն ա-
մուսնացեալ էր ինքն: Այլ սեպուհն Կապիւլէտ ոչ ունէր
մատուցեալ բանից նորա՝ վճռաբար հրամայ եւ թէ
պարտ էր նմա պատրաստ գտանել և ամուսնանալ ընդ
Պարիսայ ի հետեւեալ հինգշաբաթիջ աւուր, ի վերայ
բերելով թէ ընտրեալ գոլով իւր զիսեսայացու մի հա-
րուստ, մատաղատի և ազնուագին, զոր գեղեցկագոյնն
և ազնուագոյնն իսկ յօրիորդաց վերջնայ խնդութեամբ
հաւանելոց էր ունել իւր ամուսին, չկարէր ահա ի

պատճառս կեղծ ամօթիածութեան ինչ և կամակոր
յամառութեան, թոյլ տալ նմա խափան գնել անձնա-
կան օգտի և բարեբախտութեան գտեր իւրոյ:

Ցայսմ ծայրայեղ գժուարութեան, փութացաւ Զու-
լիէա առ բարեկամ իւր՝ աբեղայն, որ միշտ խորհըր-
դատու էր նմա յամենայն յայտնիսի տագնապալից
դէպս, և աբեղայն ևհարց զնա թէ կարի՞ր արդեօք
յանձն առնուլ զկարի գժուարին և զյանդուգն ձեռնարկ
մի: Ի պատասխանին Զուլիէայ թէ յաւէտ ընտրելոց
էր կենդանւոյն ի գերեզման իջանել քան ամուսնանալ
ընդ Պարիսայ, մինչդեռ կենդանի էր իւր սիրելի ամու-
սին. աբեղայն խրատ ետ նմա գտանել ի տուն և ցու-
ցանել զինքն զուարճ և ուրախ, և յայտնել թէ հաճոյ
էր ինքեան ամուսնանալ ընդ Պարիսայ որպէս ցան-
կայր հայր իւր, և ի միւսում գիշերի, այն է՝ ի գի-
շերի յառաջ քան զօր հարսանեացն, ըմպել զ պարտէր
նմա զպարունակութիւն փոքրիկ սրուակին՝ զոր յայն-
ժամ աբեղայն ետ նմա, և որոյ ներգործութիւն՝ ասէ,
այնպիսի ինչ էր, զի զկնի ըմպելոյ զայն Զուլիէա,
ժամս քառասուն և երկու լինելոց էր որպէս գի ան-
կենդան պագեալ և անշունչ, և յորժամ գայր փեսայ
յառաւօտու տանել զնա ի բաց, գտանելոց էր զնա
ըստ երևութի մեռեալ, և յայնժամ ըստ սովորու-
թեան անդայն եդեալ զնա ի բաց, գագաղ մի տանելոց
էին ամիրսիել ի տոհմերկրեայ գերեզմանատան ընտանեաց
իւրոց: Այլ եթէ կարէր ի բաց գնել զամենայն կա-
տացի երիվիզ, և վտահանալոց էր յանձն առնուլ
զգարհուրելի և գժուարին փորձն այն, յայնժամ յետ
քառասուն և երկու ժամուց (քանզի այնպէս ճիշդ էր
չափ ներգործութեան դեղոյն) զկնի ըմպելոյ զայն, ան-
խափան արթնանալոց էր որպէս յերազոյ ինչ, և յա-
ռաջ քան զարթնանալ նորա՝ ծանօթս տալոց էր ինքն
ամուսնոյ նորա զանցից իրին, որ եկեալ ի նոյն գի-

շերի տանել ունէր զնա ի բաց առ Մանսուա: Սէր Ռոմիոի և երիվզ ամուսնանալոյ ընդ Պարիսայ՝ ներշընչացաւ յժ և քաջութիւն ի սիրտ Ջուլիէտայ, յանձն առնուլ զձեռնարկն ահաւոր, և առնել զսրտաւակ արեւզային, խոստացաւ նմա ամենայնիւ հետևել առաջնորդութեան նորա:

Ի վերադառնալն Ջուլիէտայ ի վանացն ի տուն, հանդիպեցաւ ի ճանապարհի հոմանի Պարիսայ, և ամօթխածութեամբ կեղծաւորեալ խոստացաւ հարսնանալ նմա: Ջնծալից լուր թուեր էր այս ծերունի սնապուճ հոյն Կապիւլէտայ և կնոջ իւրում, և երիկը ներշնչել զպատանեկական առուգութիւն ի սիրտ ծերունւոյն, որ թէ և զժկամակեալ էր յառաջն վասն զլանալոյ Ջուլիէտայ ամուսնանալ ընդ Կոմսին, այլ այժմ տեսեալ զհնազանդութիւնն նորա կամաց իւրոց՝ կրկնապատիկ գորովով սիրէր զնա: Ընտանիք տանն բոլորովին ի շարժման կային, զբաղեալ ի պատրաստութեան հարսանեացն, և ոչ իւիք խնայութիւն լինէր ծախուց առ ի պատրաստել զայնպիսի մեծահանդէս թուի խնջոյս եւ հրճուանս, զորոյ նման պիտ չէր տեսեալ ոք ի վերոյ:

Ի գիշերի առուր չորեքշաբաթու էարք Ջուլիէտ զկեղն: Նախ յոյժ կասկածէր ի մտի թէ մի գուցէ արեզայն վասն զերծ պահելոյ զանձն ի մեզապրանաց ամուսնացուցանելոյ զինքն ընդ Ռոմիոի՝ տուեալ էր թոյն, բայց ապա մտածէր թէ հաւարբէր նա միշտ բարի և սուրբ այր մի: Մտածէր նաև, զի եթէ արթնացու լինքն ի մահանման թմրութենէ իւրմէ յառաջ քան զգալն Ռոմիոի, արկեօք սարսափ և զարհուրանք գերեզմանատանն՝ որ լի էր ոսկերօք մեռելոց կապիւլէտից, և ուր ի նորոյ սպանեալ արիւնաշաղախ մարմին Թայբալտայ նիրեր ի պատանս իւր, չունէին միանգամայն խելացնոր առնել զնա: Յուշ

ածէր նաև զսոլոր պատմութիւն զորս լուեալ էր ի վերայ հոգւոց մեռելոց, և թէ երբէք յաճախեն նոքա ի տեղիս ուր իւն մարմին և ոսկերք նոցա. բայց սէր իւր առ Ռոմիո և պիգանք առ Պարիս արծարծեալ ի սիրտ նորա, ի բաց վարեցին զամենայն երկիւղ ի մտաց և արրեալ զկեղն ձեռաց անզգայացեալ:

Յորժամ ի վաղիւ յառաւօտուն եկն պատանին Պարիս նուագածուօք և երաժշտականօք առ ի զարթուցանել զհարսն իւր, փոխանակ գտանելոյ զկենդանի Ջուլիէտա մի, անդ էրատեսանել ի սենեկի զդի նորա անկենդան: Մե, որպիսի՛ մահ յուսոյ փեսային, և զինչ պղծուկ և շիտիթ ի տան անդ: Տարաբախտն Պարիս ողբաց աղեսալի կսկծանօք զհարսն իւր՝ զոր անպուճ մահ ի բաց խլեաց այնպէս ի նմանէ՝ այն ինչ պես չէր նոցա ձեռն ձեռին տուեալ ի միութիւն ամուսնական: Սակայն առաւել սրատաշարժ և ցաւալի էր լսելն զկոծ և զպղպակ ծերունւոյն Կապիւլէտայ և կնոջ իւրոյ, որք՝ ունելով զայս մի ևեթ զաւակ կենդանի ի սփոփանս ծերութեան իւրեանց, ահա յափշտակեաց այսպէս անողորմն օրհաս ի գրկաց նոցին, ի ժամու յորժամ մերձ էր արժանանալ նոցա տեսանել զհարսնութիւն նորա և զբարեբաստութիւն կենաց: Ուրախութիւն բոլորից զարձաւ ի սուգ, ցնծալի պատրաստութիւնք հանդիսի հարսանեացն փոխեցան ահա ի սևազգեաց հանդէս յուղարկաւորութեան, խրախճանք հրճուանաց՝ ի հայկերոյթ թաղման, հիմնք հարսանեաց՝ յեղերերգութիւն, ցնծալից ձայն երաժշտական նուագարանաց՝ ի սխուր հնչիւն զանգակաց, և ծաղկունք որք զճակատս հարսին զարդարել ունէին՝ սփռեցան ահա ի վերայ գիական նորա: Փոխարէն քահանայի միոյ առ ի լինել պսակադիր՝ ահա հարկաւոր էր այլ մի ի թաղել զնա. և այս, տարեալ եղև նա յեկեղեցի՝ սակայն ոչ ի լրումն յուսոյ և ի ցնծութիւն կենդանեաց, այլ Բաւելուլ զթիւ մեռելոց:

Համբաւ տրամադրին՝ որ փութով ևս տարածի քան աւետաւուր, եթէ հասոյց յականջս Ռօմիոի ի Մանտուա զգոյժ մահուան Ջուլիէտայ՝ յառաջ քան զժամանել առ նա թղթոյ արհեզային՝ յորում յայտնեալ էր արհեզն թէ բոլոր անցք մահուան և թաղմանն կեղծ էին, և թէ սիրելի տիկին իւր ճնաղոց էր ի գերեզմանատանն սակաւ ինչ ժամանակ միայն, և թէ յորժամ զայր նա, ազատելոց էր զնա իսկոյն և առնելոց ընդ իւր ի բաց: Փոքու յառաջ քան զայս, սիրտ Ռօմիոի ուրախ էր և զուարճ՝ անսովոր ինն բերկրութեամբ: Երազեալ էր նա ի գիշերի, որպէս թէ մեռեալ էր ինքն (զարմանալի երազ, որ թոյլ տայ մեռելոյն իսկ մտածել) և զի սիրելի կին իւր եկեալ և տեսեալ զինքն մեռեալ, համբուրիւ շրթանց իւրոց ներշնչեալ էր այնպիսի առուգութիւն ի մարմին իւր, զի վերակենդանացեալ, գտեալ էր զինքն գոլ կայսր մի: Եւ արդ յորժամ եհաս աւուրհանգակ մի ի Վերօնա քաղաքէ, կարծեաց նա թէ բերեալ էցէ անխափան զուարթ լուր ինչ ի լրումն երազոյ իւրոյ: Բայց յորժամ լուաւ զի բնաւին յուսահատ էր լուրն և հակառակ երազոյ իւրոյ, և զի սիրելի կին իւր էր՝ որ իրապէս մեռեալ էր և զոր չկարէր ինքն կենդանացուցանել համբուրիւ իւրով, հրամայեաց պատրաստել զձի իւր, հաստատեալ ի մտի՝ յայրմ գիշերի գտնել առ Վերօնա և տեսանել գոնէ զդի հնոջ իւրոյ ի գերեզմանի: Եւ զի տարաբախտաբար յայսմիսի վէպս՝ յորժամ բնաւին սիրէ սրտի մարդոյ յուսահատութիւն, սազան մուտս գործեն մտածութիւնք վնասակար ի միտս նորա. յուշ ած Ռօմիո առժամն զաղքատ գեղագործ մի, առ որոյ խանութիւն սակաւ առուրբք յառաջ՝ գկպ էր եղեալ նմա անցանել, և տեսեալ զմշուտս գէմս առն՝ որ երևէր որպէս կիսամահ ի սովէ, և նշմարեալ զշար քանի մի պատարկ սրուակաց յաղքատիկ խանութի

անդ, ասացեալ էր առ ժամն ի միտս իւր «եթէ հարկաւորեսցի ումեք գնել թոյն», որոյ վաճառումն պատուհասիւ մահու արգելեալ էր ի Մանտուա «չկարէ գնալ առ այլ յարմարագոյն անձն օք, քան առ գազգործն այն»: Այս մտածութիւն իւր յուշ եկն նմա արդ, և որոնեալ զգեղագործն, որ նախ բազում կեղծ պատճառանօք չկարէր՝ ասէր՝ և չհամէր վաճառել զոր խնդրէրն Ռօմիո, ի վերջոյ յորժամ Ռօմիո ետ նմա ոսկի զրամս ինչ, յաղքատութենէ իւրմէ չկարացեալ այլ ևս գիմադրել փորձութեանն, վաճառեաց նմա զթոյն ինչ, որ ասացյ թէ յրմպկէն ուրուք զայն, եթէ էր նմա ոյժ և զօրութիւն քան զարանց իսկ, անյապաղ մահացուցանելոց էր զնա:

Զայս թոյն առեալ ընդ իւր, յուղի անկաւ առ Վերօնա վերջին անգամ մի տեսանել զսիրելի կին իւր, հաստատեալ ի մտի զի յետ տեսանելոյ զդի նորա՝ ըմպելոց էր զթոյնն առ մարմնով նորա, զի թաղեսցի ընդ նմին ի նոյն գերեզմանի: Եկն ժամանեաց նա ի Վերօնա ի մէջ գիշերի և որոնեալ եգիտ զհանգստարանն, ի մէջ որոյ կայր սառերկրեայ գերեզմանատունն Կապիւլէտ ընտանեաց, և զի բերեալ էր ընդ իւր զճրագ մի, զրահ և զմուրճ, մինչդեռ աշխատէր ի վեր առբառնալ զկափարիչ գերեզմանատանն առ ի մտանել ի ներքս, յանկարծ լուաւ զձայն մի որ ասէր, «զազարիա յանօրէն գործոյդ, ոչ անառակ Մօնտէգիւ.»: Պատանին Պարիս էր որ խօսեցաւ զայս, եկեալ էր նա առ գերեզման Ջուլիէտայ ի տարաժամու անդ գիշերոյ առ ի ցանել ծաղիկ և ոչխալ ի վերայ շիրմի նորա: Ի հարկէ չէր նա ծանօթ թէ սրպիսի ինչ էր յարաբերութիւն Ռօմիոի ընդ մեռելոյն, այլ գիտելով զի Մօնտէգիւ ոմն է նա, և (որպէս կարծէր) երդուեալ թշնամի մի կապիւլէտից, համարեցաւ թէ եկեալ էր նա ի մեռելեան գիշերոյն գործել զանարժան ինչ յանարգութիւն մեռե-

լոցն, վասնորոյ բարկութեամբ հրամայն նա նմա զկայ առնուլ. և քանզի որպէս սճրագործ մի պատապարանակ էր Ռօմիս յօրինաց վ. երօնա քաղաքի, և եթէ երեւէր ուրեք ի քաղաքի անդ՝ մեռանելոց էր. Պարիս փութաւ թացաւ կալանաւորել զնա: Ռօմիս ոտիկաց զնա յոյժ ի բաց զնալ իւրմէ, և զդուշացոյց զնա չզերծանել զբարկութիւն իւր՝ յուշ ածելով զմահ Թայլբալտայ որ թաղեալ էր անդ, «զի մի գուցէ» ասէ, «ի վերայ ածից զլխոյ իմոյ զայլ մեծ մեզք մի՝ սպանանելով և զքեզ»: Այլ կռմայն քաջահանօք մերժեաց զբանս նորա, եւ կալանաւորել կամէր զնա իբր եղծանագործ ումն, եւ զէմ եկեալ Ռօմիսի՝ երկոքեան սկսան մարտնչիլ և անկաւ Պարիս: Յորժամ Ռօմիս եկեալ՝ զնոսիկ սկսաւ լուսով ճրագին տեսանել թէ ո՛վ էր սպանեալն, եւ եգիտ զի Պարիս էր՝ որ (որպէս լուեալ էր ի Մանուա) ամուսնանալ պարտէր ընդ Ջուլիէտայ. կալաւ զձեռանէ անշունչ պատանւոյն որպէս զբախտակից միոյ ի տարաբախտութեան իւրում, «Թազեցից զքեզ» ասէ, «ի գերեզմանի յաղթանակութեան.», նշանակել կամելով զգերեզման Ջուլիէտայ: Բացեալ ապա զգերեզմանն, եաս եգեալ անդ զմարմին կնոջ իւրոյ, զոյ զղէմս, զգոյն երեսաց և զգեղեցկութիւնն՝ մահ անգամ անկարող էր զառեալ փոփոխել, թուեալ որպէս թէ ահռելի ուրուականդ մահ՝ ինքնին զբաւեալ ի սէր նորա՝ պահէր զնա անսրաա յիւր զուարճութիւն, քանզի երեւէր նա այնպէս թարմ և ծաղկագեղ՝ որպէս յոյժ ժամ էարը զգեղն և անկաւ ի խոր թմրութիւն քնոյն: Ո՛չ հեռի ի Ջուլիէտայ եգեալ կայր Թայբալտ յարիւնաշաղախ պատանս իւր, զոր Ռօմիս ի տեսանելն, ա՛ զաչեաց ներողութիւն յանկենդան գիոյն, և վասն սիրոյ Ջուլիէտայ կոչեաց զնա սիրելի ազգական իւր, ասելով թէ ահա պատրաստ էր առնել նմա զնորհ իմն, սպանանելով զթշնամի նորա: Յայնժամ Ռօմիս նա

զվերջին համբոյր իւր շրթանց կնոջ իւրոյ, ընդ նմին թօթափեաց յանձնէ զծանր բեռն տարաբախտութեանց իւրոց՝ ըմպելով զթոյնն զոր զեղագործն վաճառեալ էր նմա, և որոյ ներգործութիւն իրաւան և մահացու էր, և ոչ կեղծ նման այնորիկ զոր Ջուլիէտա էարբ: Ջօրութիւն զեղոյն՝ զոր Ջուլիէտա էարբ՝ գրեթէ սպառեալ այժմ, ժամ էր նմա սթափիլ ի թմրութենէն, և սրբարձնջել գուցէ զի Ռօմիս կամ դեռ չէր ժամանեալ կամ եկեալ էր կանուխ յոյժ:

Հասեալ գոլով ահա ժամն, յորում որպէս խոստացեալ էր արեզային, արթնանալոց էր Ջուլիէտա, եւ արեզային լսելով թէ թուղթ իւր՝ զոր առաքեալ էր առ Ռօմիս ի Մանտուա՝ տարաբախտ դիպուածով ինչ յապեալ ի ճանապարհի՝ չէր հասեալ իձեռն նորա, եկն ինքնին հանդերձ բրչաւ և լապտերաւ միով արձակել զարիկին ի գերեզմանատանէն, բայց զարմացաւ տեսանել արկէն ճրագ մի լուցեալ անպանօր՝ և զսուսերս և զարիւն և նաև զանշունչ մարմինս Ռօմիսի և Պարիսայ:

Բայց դեռ հազիւ ի վերայ հասաքեալ էր զմիտս իւր՝ առ ի գիտել թէ գիւթով զաեզի առեալ էին այսոքիկ մահաբեր արկածք, սթափեցաւ Ջուլիէտա ի մահանման թմրութենէն, և տեսանելով զարեզայն առ իւր, յուշ ած խոկոյն զտեղին ուր էրն և զպատճառ լինելոյ իւրոյ անդ, և եհարց զարեզայն թէ ուր էր Ռօմիս, այլ արեզայն լսելով զձայն ինչ, պատուիրեաց նմա եւանել փութով ի մահատարսաւ տեղւոյն, քանզի անպեհապրելի զօրութիւն իմն՝ ասէ, ի նոսին կացուցեալ էր զնպատակ իւրեանց, և ինքն երկուցեալ իձայնից մարդկան՝ որք երեւէին մերձենալ առ տեղին՝ ել փախեաւ ի բաց: Յայնժամ Ջուլիէտա եաս զարուսակ թուսոյն ի ձեռին դիակնացեալ ամուսնոյ իւրոյ, զուշակելով թէ ի սակս սիրոյ իւրոյ թուսաւորեալ

էր նա զանձն ի մահ, փութացաւ ըմպել և ինքն ի սրտաւիէն, այլ թափուր գտեալ զայն, համբուրել սկըսաւ զտակաւին ջերմ շրթունս նորա՝ գուցէ ձծել կարիցէ ի բերան իւր զթոյնն, բայց լսելով զձայն սրեղբոյն արտաքոյ, աճապարեալ մերկեաց զպաշտօն մի՝ զոր կրէր ի ներքոյ զգեստուց, և մխեալ զայն ի սիրտ իւր՝ անկաւ առ մարմնով սիրազոհ սիրեցեալոյն իւրոյ Ռօմիոլ։

Պաշտօնեայք ոստիկանութեան քաղաքին հասեալ էին ի տեղին ահա, քանզի պատահեցան Պարիսայ, որ ականատես էր լեալ արիւնահեղ կռուոյն ի մէջ տեառն իւրոյ և Ռօմիոլ, փութացեալ յայտնեալ էր զլուրն, որ իսկոյն տարածեալ ի քաղաքին՝ յարուցեալ էր շշուկ մեծ և բազմութիւն քաղաքացեացն խմբեալ ի փողոցսն, յամենայն բերանոց լսէին Ռօմիոլ, Պարիս, Ջուլիէտ, քանզի պետ չէ հասու եղեալ էին՝ իրապէս անցից իրացն. և այս ազմուկ խռովութեան վարեալ արտաքս յանկողնոյ իւրեանց զերկու ծերունի սեպուհն Կապիւլէտ և Մօնտէկիւ և զիշխան քաղաքին, փութացան և սոքա տալոյ զպատճառ խռովութեանն։

Ոմանք ի պաշտօնէից ոստիկանութեանն տեսեալ զարեզայն յիշանէն նորա ի գերեզմանատանէ անտի՝ զի էայր, կոծէր և հառաչէր կատիածելի իմն եղանակաւ, կալանաւորեալ էին զնա, և մեծ ամբոխ իմն ժողովրդոց հաւաքեալ արդ առ պամբարանաւ Կապիւլէտ, հրաման եա իշխանն արեզային յայտնել զոր ինչ տեսեալ էր և գիտէր՝ վերաբերութեամբ տարօրինակ պատահարի արկածիցն պատահելոց։

Եւ յայնժամ անպտուղ ի ներկայութեան Մօնտէկիւ և Կապիւլէտ տեղուոյ՝ հաւատարմապէս և ճըշմարտութեամբ պատմեաց արեզայն զպատահարի վէպ սիրոյ վաղամեռիկ զաւակաց նոցա։ Պատմեաց թէ ո՛րպէս գոլեալ ընդ Ջերմութիւն փոխադարձ սիրոյ նոցա ա-

մուսնացուցեալ էր զնոսա, յուսալով թէ վերանալ ունի այնու ի միջոյ՝ վաղաժամանակեայ խէթ և թշնամական տեղութիւն երկուց ընտանեացն. յայտնեաց զի Ռօմիո՝ որ գնէր անդ ահա զի անկենդան՝ էր ամուսին Ջուլիէտայ, և Ջուլիէտ՝ որ առաջի կայր նոցա իբր ծաղիկ իմն թառամեալ՝ էր հաւատարիմ հարսն նորա։ Պատմեաց թէ ո՛րպէս յառաջ քան զգտանելն զպատահումն յայտնելոյ գծածուկ ամուսնութեան նոցա, հայր Ջուլիէտայ առաջի արարեալ էր նմա զխիս փեսայ մի, և թէ ո՛րպէս առ ի խափանել զապօրէն ամուսնութիւն՝ խրատեալ էր ինքն զՋուլիէտ ըմպել զգինն, որով բոլորեքեան կարծեցին զնա մեռեալ։ Թէ ո՛րպէս գրեաց առ Ռօմիո՝ գալ և ի բաց առնել զնա, այլ տարաբախտ պիպաւածով իմն թուղթ նորա չգործեաց ժամանի ի ձեռս Ռօմիոլ։ Երկարել քան զայս զթել բազմազէտ անցիցն չկարաց այլևս արեզային, այլ միայն թէ ի գալն իւր ի բաց առնել զՋուլիէտ ի գերեզմանէ անտի, գտեալ էր զՌօմիո և զՊարիս արդէն սպանեալ առ տեղեաւն։ Զմեացորդ իրացն եղելոց՝ պատմեցին պատանեակ Պարիսայ՝ որ ականատես էր եղեալ մենամարտութեան Ռօմիոլ և տեառն իւրոյ, և ծառայ Ռօմիոլ՝ որ եկեալ էր ընդ նմա առ վերջնա, և որում Ռօմիո տուեալ էր թուղթս ինչ՝ յանձնել հօր իւրոյ ի դէպ մահուան իւրոյ. և յորում թղթի յայտնէր հօրն զամուսնութիւն իւր ընդ Ջուլիէտայ, և նաև զի բերէր ընդ իւր զթոյն մահաբեր՝ զոր գնեալ էր յաղքատ դեղագործէն՝ առ ի մեռանել այնու և թաղիլ ընդ ամուսնոյ իւրոյ սիրեցելոյ։ Ակյսոքիկ անցք ի զուգորդութիւն ածեալ իրերաց՝ ցուցին ևս ճշգրտիւ և պարզապէս զճշմարտութիւն բանից արեզային և զանմեղութիւն նորա յահռելի գործոց սպանութեանցն, քան որչափ բարի դիտաւորութիւն նորա ի անօրինելն զանցս իրացն՝ երբէք ցուցանել կարէր։

Ասա ահա՝ պարձուցեալ իշխանին զերեսս իւր առ ծերունի սեպուհն՝ նախատեաց զնոսա խոսիւ վասն զաղանական կառաւղի թշնամութեան նոցա. եցոյց նոցա թէ սրպէս ահագին էր պատուհաս երկնից վասն այսպիսի յանցանաց, որ ի ձեռն սիրոյ զաւակաց նոցին՝ ահա պատժէր զնոսա ի սակս անօգոքելի անբնական առնելութեան նոցա առ միմեանս: Եւ ընդ այս երկու հին նախանձաւոր սեպուհքս՝ ո՛չ այլեւս թշնամի իրերաց՝ խոստացան թաղել յամենայնի, զանձնային վէճ՝ զկռիւ և զառնելութիւն ի գերեզման անդ զաւակաց իւրեանց, և սեպուհն կապիւտէա խնդրեաց ցնցել զձեռն Մօնտէգիւի՝ կոչելով զնա եղբայր, ի ցոյց հաճութեան ընտանեկան միաւորութեան իրերաց՝ ամուսնութեամբ զաւակաց նոցա, և ասէ, ասէ, կա՛ մէր սրպէս օժիտ վասն զառն իւրոյ՝ քան միայն զձեռն բարեկամութեան նորա. և սեպուհն Մօնտէգիւ պատասխանէր թէ ոչ միայն առնելոց էր զայդ, այլ առաւել ևս կանխեալոց էր նա արձան մի ի զուտ ոսկւոյ վասն հարսին որդւոյ իւրոյ. և որչափ կանգուն կայր վէրօնա քաղաք, ոչինչ այնչափ պրաւել կարէր զյարդ և զմայրումն մարդկան՝ որչափ հնարարութիւն ճարտարութիւն և զեղ արձանի հաւատարիմն Ջուլիէտայ: Սեպուհն կապիւլէա ևս, պատասխանէր ի փոխարէն, թէ ինքն ևս կանխեալոց էր զարձան մի ի մէշատակ Ռոմիօի, և այսպէս երկոքին թշուառ սեպուհքն ջանային մի զմիով անցանել ի փոխադարձ բարեկամական ցոյցս, մինչդեռ այնպէս մահաբեր և զառն էր լեալ առելութիւն նոցա յանցեալ ժամանակաց, մինչ զի զառնագէտ մահ զաւակաց իւրեանց միայն (ողորմելի զոհք թշնամութեան նոցա) կարաց ի բաց խլել զարբառացեալ խէթ և զնախանձ երկուց ազնուատոհմ ընտանեացն:

ՎԵՆԵՏԿԱՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ

Բնակէր ի վենետիկ, Հրէայ ոմն Շայլակ անուն: Էր սա փոխատու գրամոց, և յոյժ ծանր տոկոսաւք ի փոխ առլով գրամս Քրիստոնեայ վաճառականաց՝ ժողովել էր հարստութիւն բազում: Շայլակ էր այր մի խստասիրտ և անգութ, և պահանջէր զվճար գրամոցն զորս ի փոխ առեալ էր՝ այնպիսի անողոքելի խստութեամբ, զի բոլոր բարեմիտ մարդիկ ատէին զնա, և առաւել քան զամենեսեան ատէր զնա Անտոնիօ վենետացի պատանի վաճառական մի: Շայլակ ևս ո՛չ սակաւ ատէր զԱնտոնիօ, քանզի փոխ տայր նա գրամս կարօտելոց և ո՛չ երբէք առնոյր տոկոս վասն գրամացն ի փոխ առեալ, և ամէն իրի կայր թշնամութիւն մեծ ի մէջ վաշխառու Հրէին և բարեսիրտ Անտոնիօ վաճառականի: Յո՛ և իցէ ժամանակի՝ յորժամ Անտոնիօ պատահէր Շայլակայ ի հրապարակի վաճառականաց՝ սովորաբար յանդիմանէր և նախատէր զնա վասն ծանր տոկոսառութեան նորա և չարաչար եղանակի գործառնութեան. և թէև Հրէային միայր լուռ և երեսր սրպէս թէ համբերութեամբ տանէր նախատանացն, սակայն ի ծածուկ երկնէր ի սրտի վրէժխնդրութիւն:

Անտոնիօ էր յոյժ քաղցրասիրտ այր մի, բարեմիտ և բարեսէր, և ոչ երբէք զպարբեր ի ցուցանելոյ պատուասիրութիւն և յարգանս ամենից. և արդարև, Հոռմէական հին պատուասիրութիւն երեսր ի նմա՝ առաւել քան յայլ ոք ի բոլոր տարածութեան իտա-

լիոյ։ Յոյժ սիրելի էր նա բոլոր քաղաքակցաց իւրոց, բայց քան զամենայն ազնուագոյնն՝ և սերտիւ սիրեցեալ և սրտակիցն ի բարեկամաց նորա՝ էր Բասանիս, որ գտեալ թեթև ինչ միայն ժառանգութիւն հայրենի, և ի պատճառս մեծածախ կենցաղավարութեան իւրոյ (որպէս սովոր են ունել ազնուատոհմ պատանիք) գրեթէ սպառեալ զայն, յորում ժամանակի և հարկաւորէր գրամոյ, Անտոնիս միշտ պատրաստ էր ընձեռել նմա, և թուէր որպէս թէ երկոցունց սոցա՝ միայն մի սիրտ էր և մի քսակ։

Յաւուր միում Բասանիս՝ եկեալ առ Անտոնիս՝ յայտնեաց նմա թէ կամելով բարւոքել զբախտ իւր և զպրամական վիճակ, մտապրեալ էր ամուսնանալ ընդ հարուստ աղիկնոջ միոյ՝ զոր սիրէր յոյժ, և որոյ հայրն ի նորոյ վախճանեալ՝ թողեալ էր զնա ժառանգ մեծ և ճոխ իմն կալուածոյ։ Յայտնեաց նաև թէ ի կենդանութեան հօր աղիկնոջն՝ սովոր էր այց առնել նմա ի տան նորա, և թուեալ էր ինքեան յայնժամ, որպէս թէ աղիկինն՝ երբեմն երբեմն գեղանի աչօք իւրով արձակեալ էր առ ինքն՝ անբաբբառ՝ այլ խօսուն հայեցուածս ինչ. և կարծէր զի չունէր նա ներհակիլ առ ի ընդունել զինքն՝ որպէս ազնիւսուրբ սիրոյ և ձեռին նորա. այլ քանզի ի սակս կարօտութեան գրամոյ, չկարէր ներկայանալ առաջի նորա այնպիսի հանդերձանօք՝ որպէս վայելէն էր ճոխ և ազնուագգի աղիկնոջ միոյ, վասն որոյ խնդրէր յԱնտոնիսէ՝ ի վերայ բոլոր նախկին չնորհածութեանց իւրոց՝ տալ նմա ի փոխ երեք հազար դահեկանս։

Անտոնիս չունէր առ ժամն գրամ ի պատրաստի, առ ի տալ բարեկամի իւրում որպէս ցանկայր նա. այլ ակնկալելով փութով ժամանման նաւուց ինչ բեռնաւորեալ վաճառօք, առաց թէ գնացեալ առ Էրէսոն Շայլակ՝ ի փոխ առնլոց էր ի նմանէ զգումարն՝ ի վերայ գրաւականի առացեալ նաւուցն։

Անտոնիս և Բասանիս ի միասին գնացին առ Շայլակ, և Անտոնիս յայտնեաց Էրէսին, թէ կամէր ի փոխ առնուլ ի նմանէ երեք հազար դահեկանս առևօք։ և յետս վճարելոց էր զգումար պարտուցն ի գնոյ վաճառաց նաւուց իւրոց՝ որք կային յայնժամ ի ծովու։ Ընդ այս՝ Շայլակ խորհել սկսաւ ի միտս իւր և ասէր, «Ահա եթէ անգամ մի ընդ բռամբ արկից զսա լաւապէս, արդարև զովացուցանել կարեմ յայնժամ զհին ծարաւ վրէժխնդրութեան իմոյ։ Ահէ սա զազգ իմ, զրամ ի փոխ տայ առանց տոկոսաց, և առաջի վաճառականաց երդիծանէ զիս բանիւք նախատանաց՝ վասն քաջ սակարկութեանց իմոց՝ զոր տոկոս կոչէ նա. անիծեալ լիցի ցեղ իմ՝ եթէ ներեցից նմա վասն այսոցիկ ամենայնի»։ Անտոնիս տեսեալ զի ի խոհմտութեան կայ Էրէսին, և չպատասխանէ բանից իւրոց՝ ասաց անհամբերութեամբ, «Շայլակ, լուար զոր ասացի քեզ, կամիս փոխ տալ ինձ զդրամն»։ Ա՛ւ այս պատասխանեաց Էրէսին։ «Սիրելիս Անտոնիս, բազմիցս անգամ ի հրապարակի վաճառականաց ծաղրեալ եւ հշտամբեալ ես զիս զիս՝ վասն ի փոխ տալոյ զրամս և վաշխառու լինելոյ, և ես ոչինչ ասացեալ եմ՝ այլ համբերութեամբ տարեալ բանից քոց, քանզի համբերութիւն նշանաւոր յատկութիւն իմն է բոլոր տոհմի իմոյ։ Նաև կոչեալ ես զիս անհաւատ, խաժամուճ շուն, և թքեալ իսկ ի Էրէսական զգեստ իմ, և աքացեալ զիս՝ որպէս թէ էի ես շուն մի անպիտան։ Բայց ահա զի որպէս երևի՝ կարօտ ես օգնականութեան իմոյ, գաս առ իս և ասես՝ Շայլակ տուր ինձ զրամս ի փոխ։ Շուն մի կարէ՞ տալ զրամս, հնարք է անպիտան շան միոյ փոխ տալ երեք հազար դահեկանս։ Նաւաստահիս ինչ համարիսցի՞ ինձ արդեօք, եթէ զարձեալ առ քեզ ասացից՝ Ազնիւ Պարոն, թքեցեր զու յերեսս իմ յանցեալ չորեքշաբաթիս աւուր. յայլ ինն աւուր կոչեցեր

դու զիս շուն, և արժա՞ն է արդեօք վասն այսոցիկ քաղաքավար պատուասիրական գործոց տալ քեզ վրամ ի փոխ»: Անտոնիո պատասխանեաց, թէ շատ հաւանական էր վի ժամենոյն բան առնելոց էր կրկին, թքանելոց էր ի նա և նաև աքացնելոց, «բայց եթէ կամիս» առէ, «տալ ինձ ի փոխ զվրաճն, տուր զայն ո՛չ որպէս բարեկամի միոյ, այլ որպէս թշնամւոյ, և վնր պայման ինչ պատուհասի կամ տուգանաց՝ եթէ վրժեցի խոստման իմում, յետս վճարել քեզ զգումարն յիւրում ժամանակի»: «Ո՛հ, ընդե՞ր զայրանաս այսպէս», ասաց Հրէային, «ցանկալի է ինձ՝ բարեկամ ունել ինձ զքեզ և վրաւել զսէր քոյ. մոռացայց ես զանարգանսն տուեալ ինձ ի քէն և տաց քեզ փոխ զգումարն առանց վաշխի»: Այս լսա երևելւոյ բարեկամական ցոյցք Հրէին մեծապէս զարմացոյց զԱնտոնիո, և Շայլակ կեղծաւորելով քաղցրասրտութիւն, և ցուցանելով որպէս թէ առնէր զամենայն ինչ՝ միայն վասն շահելոյ զսէր նորա, կրկնեաց վարձեալ թէ տալոց էր նմա զերկք հազար դահեկանն՝ առանց պահանջելոյ վաշխ ինչ, միայն խնդրէր զի Անտոնիո գնացեալ ընդ իւր առ օրէնսգէտ մի, սուկ որպէս զուարճալի կատակ ինչ, ձեռնագրեսցէ զմուրհակ մի այնու պայմանաւ, իբր զի եթէ չվճարէր նա յետս զգումար պարտուցն ի նշանաձեալ աւուր ինչ, յայնժամ պարտ էր նմա թոյլ տալ կեալ աւուր ինչ, յորմէ մանէ մարմնոյ իւրոյ փոխառուի իւրոյ՝ կարել՝ յօրմէ մասնէ մարմնոյ իւրոյ և ցանկայր նա՝ զվիար մի մսոյ: «Շատ բարի», ասաց Անտոնիո, «ձեռնագրեցից զայդ մուրհակ, և համարեալոց եմ թէ վնս կայ մարդասիրութիւնն ի սիրտ Հրէի միոյ:

Բասանիո սակայց զԱնտոնիո՝ չձեռնագրել զայնպիսի մուրհակ ինչ, սակայն Անտոնիո պնդէր կամաւորութեամբ թէ ձեռնագրելոց էր. քանզի ասէր՝ յաոաջ քան զբռնալ պայմանագրեալ ժամանակի նաւք իւր

պատնաշոց էին բեռնաւորեալ բազմապատիկ առաւել ճոխութեամբ՝ քան որչափ էր գումար պարտուցն:

Շայլակ լսելով զվէճն ի մէջ երիւ բարեկամացն, «Ո՛վ Հայր Աբրահամ», ազազակեաց նա «որչափ կատիաճամիա են Քրիստոնեայքս այսօրիկ, ինքեանք խստասիրտ և անողոք գոլով ի տուրիատս իւրեանց, այնու ուսանին երկբայել և կասկածաւոր լինել ընդ բարեմտութիւն այլոց: Աստ ինձ, ազաչեմ, Բասանիո, եթէ ի ժամադրեալ աւուր չվճարեացէ Անտոնիո զվրաճն, զինչ օգուտ է լինելոց ինձ պահանջել զկատարումն պայմանին: Լաւ մի մարդկային մսոյ՝ առեալ ի մարմնոյ մարդոյ, չունի այնչափ արժէս և ո՛չ պիտանութիւն իսկ, որչափ նոյն քանակութիւն մսոյ ոչխարի կամ կովու: Ես առ ի շահել զսէր նորա միայն՝ յանձն առնում կատարել զայս գործ բարեկամական. արդ՝ իւր կամք, եթէ հաճոյ նմա, շատ բարի, եթէ ո՛չ, ուրեմն մնայք բարեաւ»:

Ի վերջոյ ընդդէմ համոզմանց Բասանիոյ, որ ի հեճուկս բոլոր բարեկամական բանից Հրէին, զբաժակաճակէր ընդ յանձնառութիւն բարեկամի իւրոյ գնելոյ զանձն ի վտանգ այնպիսի զարհուրելի, Անտոնիո ձեռնագրեաց զմուրհակին, կարծելով թէ իրապէս՝ ոչինչ էր սարսափելի պայման այնորիկ՝ քան միայն ծաղրալի կատակ ինչ:

Հարուստ ասիկինն, ընդ որում Բասանիո ցանկայր ամուսնանալ բնակէր ի մերձակայս վենետիկ՝ ի տեղւոջ ինչ կոչեցեալ Բելմոնտ: Աննուն նորա էր Պօրշիա, և չնորհալի գեղով անձինն և մեծաւոր կատարելութեամբք ոչինչ պակասէր քան զհռոմանուն իւր Պօրշիա, որ որպէս տեղեկանամք ի պատմութենանց, էր դուստր Կատոնի և կին Բրուտոսի Հռովմայեցւոյ:

Բասանիո լցուցեալ արդ զկարօտութիւն իւր ի մասին պրամոյ՝ չնորհիւ Անտոնիո բարեկամի իւրոյ

այնպէս ի վանդ կենաց նորա, յուզի անկաւ առ Բէլմոնտ շքեղ հանդերձանօք, ուզեկից ունելով իւր որպէս սպասաւոր զԳրաշիանս ոմն, և յաջողեալ նմա գրաւել զսիրտ սիրուհւոյ իւրոյ. Պօրշիա՝ զկնի սուղ ժամանակի ինչ՝ եա զհաւատիւն իւր հարսնանալ նմա:

Բասանիս չծածկեաց զաղքատութիւն իւր, այլ յայտնեաց Պօրշիայի, զի հարստութիւն իւր և պարծանք էին բարձր սերունդ իւր միայն և ազնուատոհմութիւն. և առ այս, Պօրշա՝ որ սիրէրն զնա անկեղծ կաթողնութեամբ վառն գովելի բարուց նորա և արժանեաց, և որ ունէր ինքնին հարստութիւն բաւական՝ առ ի սէ փոյթ ունել թէ ասուսին իւր չէր ճոխ, շնորհալի համեստութեամբ իմն պատասխանեաց, զի երանելի համարիցոյ էր զանձն՝ եթէ էր ինքն հաղարիցս աւելի գեղեցիկ և հազարիցս առաւել ճոխ քան որչափ էրն, առ ի գոլ նմա հարսն արժանի, և ապա նազելի վայելչութեամբ գործել սկսաւ զանձն իւր՝ իբր զի անկիրթ և անուս աղջիկ մի էր ինքն, անփորձ և ոչ այնչափ կատարելութեամբք զարդարեալ, սակայն գոլով մատաղատի՝ կարէր ուսանել և կրթիլ, և թէ զհնար կամս և զմիտս իւր յանձնելոց էր յամենայնի նորուն առաջնորդութեան, «և ես ինքն» ասէ, «և որ ինչ իմ է՝ քոյ եմք յայսմհետէ և ընդ քոյով իշխանութեամբ: Միայն յերեկի՝ աէր էի ես գեղեցիկ տանս, թագուհի անձին և ազատութեան խնդ, և սիրկին բոլոր ծառայից այսոցիկ. այլ արդ՝ տուն՝ ծառայք և ես քոյ եմք բոլորովին, աէր իմ, և ընծայեմ զայնս քեզ ընդ մատանւոյս այսորիկ», տալով ընդ բանիցն՝ զմատանի մի Բասանիոյ:

Բասանիս, այնպէս այլ յայլմէ եղև միանգամայն յերախտապիտութենէ և ի զարմանաց ընդ շնորհալի եղանակին, որով ճոխ և գեղանին Պօրշիա ընկալաւ զինքն —

այր մի այնպէս յաղքատ վիճակի, զի չկարէր արտայայտել զցնծութիւն սրտին և զվարկ իւր և զյարգանս մեծ առ սիրելի սիկինն, քան միայն կցկտուր սիրալիր և շնորհակալու բանիւք լինէ. և առանալով զմատանին, ուխտեաց ոչ երբէք ի ձեռաց տալ զայն, որչափ կենդանի էր:

Գրաշիանս, և Նէրիսա նաժիշտ Պօրշիոյ, ներկայ էին ի սպասու տեառն և սիկնոջ իւրեանց, յորժամ Պօրշիա այսպէս շնորհալի համեստութեամբ խոստացաւ լինել հլու և հնազանդ կին Բասանիոյ, և Գրաշիանս մաղթելով տեառն իւրում և պատուարժան սիկնոջն զերջանիկ և զուարճ կեանս, աղաչեաց զթոյլտուութիւն նոցա, որպէս զի ի միասին ընդ նոսա ամուսնացի և ինքն:

«Շատ բարի», պատասխանեաց Բասանիս, «եթէ գտանել կարիցես քեզ զհարսնացու մի»:

Յայնժամ Գրաշիանս ասաց, թէ սիրէր ինքն զգեղեցիկ նաժիշտ Պօրշիա սիկնոջ՝ զՆէրիսա, և զի խոստացեալ էր նա՝ զի եթէ սիկին իւր հաճեսցի ամուսնանալ ընդ Բասանիոյ, ինքն ևս ամուսնանալոց է ընդ իւր: Եւ յորժամ Պօրշիա եհարց զՆէրիսա թէ ճշմարի՞տ էր բանն, Նէրիսա պատասխանեաց «այո՛, սիկին իմ, եթէ հաճեսջիք շնորհել զթոյլտուութիւն ձեր»: Պօրշիա յօժարութեամբ զիջեալ ի խնդիր նորա, Բասանիս ևս խօսեցաւ զուարճաբանութեամբ առ Գրաշիանս ասելով. «հանդէս հարսանեաց մեր՝ արդարև՝ մեծապէս պատուեսցի ձերով հարսանեօք»:

Այլ յանկարծ ցնծութիւն սոցա ամենից՝ փոխեցաւ ի տրտմութիւն սաստիկ, ընդ հասանել սուրհանդակի մերոյ, որ բերէր զթուղթ մի յԱնտոնիոյէ պարունակելով զսարսափելի լուր ինչ: Յորժամ Բասանիս ընթերցաւ զթուղթն, այնպէս այլայլունեցան զէմք նորա զի Պօրշիա կարծեաց թէ բերեալ էր թուղթն զմահապարտ՝ յոյժ սիրելի բարեկամի մերոյ, և հարցանելով թէ զինչ էր

լուրն արամաւրէի՝ որ այնպէս շփոթեալ էր զնա, «Ո՛հ, քաղցրիկդ իմ Պօղշիա», ասաց Բասանիս, «ասա ահա կան ի թզթիս բանք ինչ՝ առաւել ցաւալի և արտա- զին քան որ երբէք պրոշմեցան ի թզթի։ Ազնիւ ա- կին, յորժամ պառաջինն յայտնեցի քեզ զսէր իմ, ան- կեզծութեամբ պատմեցի նաև, զի ճախութիւն իմ միայն աղնուատոհմութիւն իմ էր. բայց արժան էր ինձ յայտ- նել զի ոչ միայն բոլորովին ազքատ էի, այլ և ընդ պարտուք»։ Յաղնժամ Բասանիս պատմեաց մանրա- մանաւաբար, որպէս յիշատակեցաւ ի վեր, զփոխադրու- թիւն իւր Աքնաօնիսէ, և թէ որպէս Աքնաօնիս ի փոխ առեալ էր զդրամն ի Շայլակ Հրէէ՝ առեալ նմա պար- տեմագիր այնպիսի պայմանու, զի եթէ չվճարեսցէ զփոխն ի նշանակեալ աւուր ինչ, կորուսանել ունի զվիար մի մոյ ի մարմնոյ իւրմէ. և ապա ընթերցաւ Բասանիս զթուղթ Աքնաօնիսի որ պարունակէը զհե- տեւեալ. «Քաղցրիկդ իմ Բասանիս, բոլոր նաւք իմ ընկղմեալ են ի ծովս, ժամանակ մուրհակի իմոյ ա- ռնելոյ. «Քաղցրիկդ իմ Բասանիս, բոլոր նաւք իմ Հրէայն՝ անցեալ է արդէն, և ըստ օրում կրնէն իմ զպատուհասն յիշատակեալ ի մուրհակին, եզերելոց է զկեանս իմ. յոյժ ցանկալի է ինձ տեսանել զքեզ վեր- ջին անգամ՝ յառաջ քան զմահ իմ. բայց և այնպէս, հաճութեան կամաց քոց թողում, եթէ սէրն՝ զոր ու- նիմ առ քեզ չհամոզեսցէ զքեզ գալ, թուղթս չառիսցէ քեզ գալ, թուղթս» ։ «Ո՛հ, սէր իմ քաղցրիկ», ասաց զթա- սիրան Պօղշիա, «փութացիր ի պարբառատութիւն և դնա անյապաղ. ասց ևս քեզ ասկի բաւական ի հատուցա- նել քանիցս անգամ՝ եթէ հարկաւոր՝ զդումար մուր- հակին, քան կորուսանել զայսպիսի հաւատարիմ բա- րեկամ մի, որչափ թանկագնի իցես ինձ, փեսայդ իմ, այնչափ առաւել սիրեցից ևս զքեզ»։ Բայց Պօղշիա ցան- կացաւ զի կատարեսցի ամուսնութիւն իւրեանց, յառաջ- քան զբաժանիլ նորա. քանզի ասէ, գոցէ այնու Բա-

սանիս ըստ օրինաց իրաւունս ի վերայ ճախութեան իւրոյ, և ի նոյն աւուր ամուսնացան նորա. նոյնպէս և Գրաշիանս և Ներիսա, և իսկոյն յետ հարսանեացն՝ Բասանիս և Գրաշիանս յուղի անկան առ Վենետիկ, ուր Բասանիս եղեալ զԱքնաօնիս ի բանտի։

Օր վճարման մուրհակին անցեալ գոլով արդէն, անգութ Հրէայն զլանայր ստանալ զդումար պարտուցն՝ զոր վճարել կամէր Բասանիս, և պնդէր առնուլ միայն ըստ բանի պայմանին զվիար մի մոյ Աքնաօնիսէ։ Այս ի քննութիւն ածել զայս զարհուրելի գաս առաջի դքսի Վենետկոյ, որոշեցաւ օր մի, և Բասանիս անհնարին անձկանօք սպասէր տեսանել զեղս իրին։

Պօրշիա ի բաժանիլն իւրում յամուսնոյ իւրմէ, սրատապնդել և խրախուսել սկսաւ զնա, և պատուիրեաց նմա՝ ի գառնալն իւրում յետս, բերել ընդ իւր զսիրելի բարեկամ իւր, սակայն և այնպէս երկնչէր նա ի միտս իւր՝ թէ ի մեծ վտանգի կայր Աքնաօնիս, և յորժամ ի բաց գնաց Բասանիս, Պօրշիա՝ թէ և այնպէս հզու և աներնաւոյել հեզութեամբ յայտնեալ էր նմա, թէ հպատակելոց էր նմա յամենայնի և մնալոց ընդ խնա- մուն առաջնորդութեամբ նորա միայն, սակայն տեսեալ արդ զպատահ ամուսնոյ իւրոյ և զկեանս ազնիւ բարե- կամի նորա ի վտանգի, պատրաստեցաւ իսկոյն ի գործ. և ոչ երկբայեալ բնաւ ընդ կարողութիւն անձին իւրոյ, և լոկ յուղիով և ի կատարեալ զաւոդութիւն իւր ապա- ւինեալ, եպ ի մահ ինքնին անձամբ անձին գնալ ի վե- նետիկ և խօսել յատենի առ՝ ի չատագովութիւն Աք- նաօնիսի։

Ունէր Պօրշիա ազգական մի՝ որ էր տաճնաբան օրինաց. և առ սա, որոյ անուն էր Բէլարիս՝ գրեաց իսկոյն, և առաջի եղեալ զրոլոր հանգամանս իրին՝ խնդրեաց ի նմանէ տալ զխորհուրդ և զկարծիս իւր, և նաև առաքել զպաշտօնական լօրիկ իւր՝ զոր զգենոյր

ի պատարանի յատենաբանէն իւրում. և յորժամ պարձաւ բանքեր նորա, եբեր զԹուղթ մի ի Բէլարիօէ՝ որով խրատէր զնա, թէ զինչ առնել արժան էր նմա, և նաև զկեանն պաշտօնական։

Պօրշիա ծպտեալ զինքն և զՆէրիսա նաժիշտ իւր ի զգեստ առնացի, և զգեցեալ նաև զպաշտօնական լօրիկն և առեալ զՆէրիսա ընդ իւր որպէս նօսար իւր, յուղի անկան անդէն և անդ և եկեալ հասին նոքա ի վենետիկ, յաւուր անդ քննութեան պատին։ Չպիւ թէ սկիզբն եղեալ էր պատին յատենի դքսին և սինկղիտոսաց վենետկոյ, յորժամ եմուտ Պօրշիա ի պատարան անդ, և մատոյց զԹուղթ մի ի Բէլարիօէ, յորում հանճարեղ աստենաբանն յայտնէր զքսին՝ զի թէև մտադրեալ էր իրովի ներկայանալ անդ՝ սա ի չատագովել զԱնտոնիօ, այլ հիւանդութիւն արգել եղեալ նմա, խնդրէր ի զքսէն՝ թոյլ տալ պատանի բարեկամի իւրում՝ քաջահմուտ Բաղտասար աստենաբանի՝ ի փոխարէն իւր խօսել և վարել զպատն յատենի իւրում. և զուքսն առանց ներհակութեան ինչ՝ շնորհեաց զԹոյլտուութիւնն. միայն զարմացեալ էր յոյժ ի մտա իւր ընդ մատադութիւն հասակի օտարականին, որ ծպտեալ ի լօգիկն պաշտօնական և ի մեծ կնճռամ մի ի գլուխ իւր, առաջի ընծայէր կերպարան իմն տարօրինակ՝ թէ ոչ նուազ շնորհալի։

Եւ ահա սկսաւ պատն, և Պօրշիա նայեցեալ շուրջ զիւրև, նաեւ զանդրդրմ Հրէային, և նաև զԲասանիօ, որ տխրագէմ և անձկալից կանգնէր առ ժամն՝ մերձ առ Անտոնիօ բարեկամ իւր, և որ չկարաց ճանաչել զնա ի պատճառս ծպտեալ լինելոյն նորա։

Մեծ կարևորութիւն ձեռնարկի իւրոյ, շնչեաց արդ ի գողարիկ սիրտ սիկնոջն, զաներկիւղ վստահութիւն իմն, և ազատ համարձակ յառաջ մատեաւ նա հնուլ զպարտիս իւր զոր յանձն առեալ էր։ Նախ՝ ուղղեաց

զբան իւր առ Շայլակ, յայտնեաց թէ՝ արդարև՝ ըստ օրինաց վենետկոյ պատապարտ էր Անտոնիօ կրել զպատուհաս խոստումնազանցութեան իւրոյ յիշատակեալ ի մուրհակին, բայց այնպէս քաղցր և սրատուչ բանիւք սկսաւ փաստաբանել նա զմարդասիրութենէ, զողորմածութենէ և զվճիռ, և թէ քանի գերազոյն և ազնուագոյնն էին այնք ի մարդկային զգացմանց, զի բանք նորա ամոքելոց և մեղմացուցանելոց էին զսիրտ, բաց ի սրտէ անգութն Շայլակայ։ «Գաւթ» ասէ, «է իբր հեզիկ կաթիլ անձրևոյ, որ իջանէ յերկնից ի վերայ սաւրնաբնակ արարածոցս, և ողորմութիւն, կրկնակ բարիք իմն՝ զի մխիթարէ զսիրտ աւազին և սփոփէ նոյնպէս զստացող այնորիկ, և նաև թէ որպէս վայելուչ էին այնք թագաւորաց՝ առաւել ևս քան զթագ նոցա, քանզի սաւրոգիկիք էին նոքին՝ նոյն իսկ բարձրելոյն Աստուծոյ, և թէ երկրաւոր իշխանութիւն նմանել կարէր երկնաւորին՝ միայն ըստ չափու մեղմութեան արդարութեան նորին ի քաղցրութենէ գթոց»։ Եւ նաև ասաց ցՇայլակ յուշ ածել զի «եթէ ամենեքին մեք ապաչեմք զողութիւն երկինից, նոյն ազաչանք ուսուցանել պարտին մեզ՝ գոլ գթած և մարդասէր»։ Սակայն Շայլակ ի պատասխանի այսոցիկ ամենայնի, երկնեաց թէ ոչինչ յաւել խնդրէր ինքն քան զպատիժ անխտացութեանն յիշեալ ի մուրհակին։ «Մինչ չկարե՞ փոխառու քոյ յետս վճարել զդրամ պարտուց իւրոց», հարց Պօրշիա։ Ընդ այս Բասանիօ յառաջ մատուցեալ յայտնեաց Հրէին՝ զի պատրաստ էր ինքն հատուցանել վերին հազար պահեկանն՝ ոչ միանգամ՝ այլ բազմից սրչափ և ցանկայր նա. այլ Շայլակ զլացեալ սատնալ, պնդէր պարձեալ գտանել զվիճ միայն ի մարմնոյ Անտոնիօի։ Բասանիօ՝ արդ ազաչել սկսաւ զհանճարեղ աստենաբանն, եթէ հնար, փոքր մի սեղմել և թեքթեքել զօրէնսն գուցէ մարթասցի փրկել զկեանս բարեկամի

իւրոյ. բայց Պօղշիա լըջմաւելեամբ պատասխանեաց, թէ օրէնք՝ անգամ մի հաստատեալ, անհնար էր փոփոխել զայնս կամ թիւրել: Շայլակ լսելով զայս, թէ օրէնք չկարեն փոփոխել, երևեցաւ նմա որպէս թէ խօսէր նա յօդուտ իւր, և սմին իրի, ակնարկեալ առ Պօղշիա ասաց, «Ահ, ահա Դանիէլ ումն եկեալ է առ ի գատել զիրաւունս իմ. անչափ է ակնածութիւն իմ և յարգ առ քեզ. և թէև հասակ քոյ մատաղ է, սակայն ծերոյ են բանք քոյ և խնամատութիւն»:

Ապա Պօղշիա խնդրեաց տեսանել զմուրհակն, և յորժամ ընթերցաւ զայն՝ ասաց. այս պայման ուխտի յիշեալ ի սմին զրժեալ է, և վասն որոյ Հրէայն համեմատ օրինաց՝ ունի իրաւունս պահանջելոյ զլիար մի մսոյ, զոր կարել կարէ նա ի մարմնոյ Անտոնիոյ մերձ ի սիրտ նորա: Հրէայն անդադրմ, ոչինչ առնքեալ պես, «երդնում ի հոգի իմ», ասէ, «ոչինչ համոզել կարէ զիս փոխել զմիտս իմ». վասն որոյ Պօղշիա դարձեալ առ Անտոնիո, «ուրեմն», ասէ, «պատրաստեա զքեզ բանալով զլանջդ». և մինչդեռ Շայլակ սրէր զսուր իւր մեծաւ լըշխակաթռիչեամբ ի կարել զլիար մսոյն, հարց Պօղշիա զԱնտոնիո՝ թէ ունի՞ր ասել ինչ: Անտոնիո անխոսալ լեաւ, ապա յուսութեամբ պատասխանեաց թէ ոչինչ ունէր ասել, և պատրաստ էր ի մեռանել. և դարձեալ առ Բասանիո, «տուր ինձ զձեռն քոյ», ասէ, «ճնա բարեաւ, մի վշտանար արտմութեամբ զի անկայ ես յայս տարաբախտութիւն վասն սիրոյ քոյ. մատո զկարգանս իմ աղնիւ սիրնոջ քոյ, և յայտնեա նմա թէ որչափ մեծ էր սէր իմ առ քեզ»: Ընդ այս Բասանիո խորին թախծութեամբ պատասխանեաց «Անտոնիո» ասէ, «ամուսնացեալ եմ ես ընդ կնոջ միոյ՝ որ առաւել պատուական է ինձ, քան զկեանս իմ և քան զբոլոր աշխարհ. սակայն սակաւ համարիմ զնորա արժէս համեմատութեամբ կենաց քոց, և լաւ համարէի

զոհել զամենայն վիճս այսմիկ՝ միայն թէ կարէի փրկել զքեզ»:

Պօղշիա լսելով զայս, թէև տիկնոջ քաղցրասիրտ չվիրաւորեցաւ ի սիրտ իւր, ընդ այսպիսի ոճով յայտնելն ամուսնոյ իւրոյ զսէր իւր առ ճշմարիտ բարեկամ իւր Անտոնիո, սակայն չկարաց զսպել զինքն յասելոյ ցԲասանիո թէ «կին քոյ ոչ այնչափ յոյժ հնարհակալ էր լինելոց, եթէ ներկայ եղեալ առա՝ լսէր զբանս քոյ»: Դրաշիանո ևս, որ միշտ սիրէր օրինակել՝ զոր ինչ առնէր տէր իւր, խորհեցաւ ի միտս թէ բարւոք էր լինելոց զի և ինքն արասցէ համառօտ բանախօսութիւն ինչ. ուստի ի լուր Նէրիսա, որ զգեստաւորեալ իբր նօտար և նստեալ մերձ առ Պօղշիա, գրէր առ ժամն, ասաց, թէ «ունիմ և ես կին մի զոր խնամեմ և սիրեմ յոյժ. այլ յիրաւի ցանկանալոց էի ես թէ յերկինս էր նա, միայն եթէ կարէր աղերսել զմիջնորդութիւն ուրուք առ ի մեղմացուցանել զանողորմ սիրտ անիծեալ Հրէիս այսորիկ»: Առ այս պատասխանեաց Նէրիսա թէ, «բարւոք է զի ասես՝ զոր ասես՝ յաններկայութեան կնոջդ. եթէ ոչ, ոչ սակաւ աղմուկ յարուցեալ տեսանէիր ի տան քում»:

Շայլակ սկսաւ արդ աղաղակել անհամբերութեամբ՝ թէ ի զուր կորուսանէին նոքա զժամանակ, և աղաչէր զպատասխանն արձակել զվճիռ իւրեանց: Եւ յայնժամ սարսռելի լռութիւն իջեալ տիրեաց յատենի անդ, և սիրտ բոլորից՝ լի էր տրամութեամբ վասն Անտոնիոյ:

Պօղշիա հարցեալ թէ պատրաստ էր կշիռ, առ ի կշռել զմիան, դարձաւ առ Հրէայն և ասէ. «Շայլակ, պարտ է քեզ ածել ասա զվիրաւորյոյժ մի, զի մի գուցէ ի յորդութենէ հեղման արեան պատճառեսցի մահ»: Այլ Շայլակ՝ որոյ նպատակ այն էր զի իրապէս ի հեղմանէ արեան մեռցի Անտոնիո, պատասխանեաց թէ ի մուրհարկի անդ՝ չկայր յիշատակեալ այդպիսի ինչ: «Բայց

չէք փոյթ, եթէ չկայ յիշատակեալ», ասաց Պօղշիա, «սակայն այսչափ ինչ կարես առնել զէթ յաղօրմածուԹենէ սահպեալ»: Ու այս՝ մի միայն պատասխանին՝ զոր ետ Շայլակ, էր, զի չկարէր գտանել ինքն վիրաբոյժ, և ոչ էր յիշատակեալ այն ի պարտեմագրին: «Ուրեմն», ասաց Պօղշիա, «իրաւունք է քեզ առնուլ զչիար մի ի մսոյ Ինաօնիօի. օրէնքն Թոյլ տայ քեզ առնել զայդ, և պատաւորքն ևս վճռել ունին զայն»: Ընդ այս, կրկին աղաղակեաց Հրէայն, «Ո՛հ, քանի արդար է պատուհասն քոյ. արդարև Դանիէլ մի կայ ի միջի մերում ահա», և ապա կրկին սկսաւ սրել զերկայն սուր իւր, և հայհոյով ետ Ինաօնիօ, «Եկ», ասէ, «պատրաստեա զքեզ»:

«Համբեր վայրկի մի, ո՛վ Հրէայ», ասաց Պօղշիա, «արժան է քեզ դիտել դի մուրհակս այս չտայ քեզ իրաւունս գտանելոյ և ո՛չ իսկ կաթիլ մի արեան, այլ միայն զչիար մի մսոյ. վասն որոյ ի կարելն զչիար մսոյն, եթէ հեղուցուս զկնի մի արեան քրիստոնէի, յայնժամ ըստ օրինաց՝ կալուածք և բոլոր այլ ստացուածք քոյ զրաւել ունին յարքունիս վճռեակոյ: Եւ արդ բանդի բնաւին անհնար էր Շայլակայ՝ հատանել զչիար մի մսոյ՝ առանց Թափելոյ զարիւն Ինաօնիօի, այս խնդասուն խելամտութիւն Պօղշիայի բանից մուրհակին, Թէ իրաւունք Հրէին էր գտանել զմիս միայն և ոչ զարիւն, ազատեաց զկեանս Ինաօնիօի, և բոլորեքին զարմացեալ ընդ սքանչելի հանճար պատանեակ առեւնարանին, որ այսպէս յայտ ած զայս հնար փրկութեան, յամենայն կողմանց դատարանին սկսան լսելի լինիլ ձայնք գովեստից, և կրկնեցան յամենայն բերանոց նոյն իսկ բանք Շայլակայ՝ Թէ ահա Դանիէլ ոմն կայր ի մէջ նոցա, Դանիէլ մի, որ եկեալ էր առնել արդարութիւն:

Շայլակ տեսեալ Թէ անհնար էր յայտմհետէ յար-

դիանս ածել զանողորմ նպատակ իւր, ապայոյս գիմօք ասաց, Թէ ուրեմն տառապեալոյ էր զղրամս փոխառուԹեանն, և Բասանիօ յափշտակեալ ի ցնծութենէ սրտին ընդ անակնկալ փրկութիւն Ինաօնիօի, աղաղակեաց, «Եկ տո, ահա պատրաստ են զրամքն»: Սակայն Պօղշիա արգել զայս, ասելով ցԲասանիօ, «Հանդարտեսց, մի շտապեր. Հրէային գտանել պարտի ոչինչ առաւել քան միայն որ ինչ իրաւունք է իւր», և դարձեալ առ Հրէայն «Շայլա՛կ», ասաց, «Եկ յառաջ, կարեա զմիտն, այլ զդոյշ լեր չթափել զարիւն, և նաև զդուշացիր չկարել խուն ինչ յաւել կամ պակաս՝ քան զմի լիտր. քանզի եթէ ցուցցէ կշիռ մազաչափ ինչ զանազանուԹիւն, ըստ օրինաց վճռեակոյ պատապարտիլ ունիս դու, և յարքունիս գրաւեսցին բոլոր ստացուածք քոյ և ճոխութիւն»: «Տուք ինձ զդրամս իմ, և Թոյլ տուք ինձ ի բաց գնալ», ասաց Շայլակ. ընդ որ Բասանիօ խոհոյն պատասխանեաց՝ Թէ ահա պատրաստ էր այն, և յօժար էր վճարել նմա:

Շայլակ ձգեալ էր զձեռն իւր առնուլ զդրամն, յորժամ Պօղշիա զկայ ետ նմա ասելով, «Սպասեա վայրկի մի, ո՛վ Հրէայ. անպՀութեան քոյ զպատուհաս գիս կրել պարտիս: Ըստ օրինաց վճռեակոյ ճոխութիւն քոյ գրաւեսցի յարքունիս, քանզի յանդգնեցար գտանել ընդդէմ կենաց վճռեակացի քաղաքացւոյ միոյ, և կեանք քոյ իսկ կախի միայն զողորմածութենէ դքոյն. վասն որոյ ծնրեա իսկոյն և աղաչեա զնա զի խնայեսցէ ի կեանս քոյ»:

Յայնժամ ասաց գուքսն ցՀրէային Թէ՝ առ ի ցուցանել նմա որպէս տարբեր է ոգի Քրիստոնէութեան ի Հրէական հոգւոյ, առանց խնդրանաց իսկ շնորհելոց էր նմա գկեանս նորա. այլ կէս ստացուածոց նորա պարտէր գնալ առ Ինաօնիօ, և միւս կէս գրաւել յարքունիս:

Սակայն Անտոնիո՝ քաղցրասրտութեամբ յայտնեաց, թէ չկամէր ինքն զիւր բաժին սաստկութեանն, եթէ Շայլակ յանձն առնոյր ձեռնագրել անդէն և անդ զթուղթ մի՝ այնու պայմանաւ՝ զի զկնի մահուան իւրոյ ճեռագէ այն՝ ժառանգութիւն գասիր իւրոյ և ամուսնոյ նորա. քանզի Անտոնիո տեղեակ էր զի ունէր Հրէայն զմիածին զուստր մի, և ի պատճառս ամուսնանալոյ նորա ընդդէմ կամաց հօրն՝ ընդ Լօրէնզո անուն քրիստոնեայ պատանւոյ միւսի, որ բարեկամ էր Անտոնիոյ, զայրացեալ՝ անժառանգ արարեալ էր զնա բնաւին:

Հրէայն հաւանեցաւ ընդ այս, և այսպէս վրիպեալ ի յուսոյ վրէժխնդրութեան իւրոյ, և զրկեալ ի սաստուածոց, ասաց թէ հիւանդ է ինքն, և թոյլ խնդրեաց գնալ ի տուն, և անդ ձեռնագրել ունէր զթուղթ պայմանին, և տալոց զկէս ճոխութեան իւրոյ գասիր իւրում: «Գնա՛ ուրեմն», ասաց դուքսն և ձեռնագրեա՛ զայն, և եթէ ապաշաւեսցես վասն անզթութեան քոյ և գարձցես ի Քրիստոնէութիւն՝ ներելոց եմ քեզ գաւազանով՝ վերաբերութեամբ միւս կիսոյ սաստուածոցդ»:

Յետ այսորիկ դուքսն արձակեալ զԱնտոնիո, փակեաց զատեանն, և յայնժամ մեծապէս գովասանել սկսաւ զիմաստութիւն և զխորհուրդ հանճար մատաղ տեառն բաւնաբանին. և հրաւիրեաց զնա ի պալատ իւր ընթրել ընդ իւր: Բայց Պօրշիա՝ որ ցանկայր գտանել առ Բէլմոնտ յառաջ քան զամուսին իւր, պատասխանեաց թէ խոնարհաբար շնորհակալ էր յոյժ վասն հրաւիրանաց զքսին. այլ վասն գործոյ իրիք՝ սպասել էր խնդրն ի բաց գնալ: Դուքսն յայտնեալով թէ յոյժ սիրէր լսել, զի չունէր ժամանակ ընթրել ընդ իւր, գարձեալ առ Անտոնիո ասաց ցնա, «լաւագոյն վարձատրել արժան է քեզ զպարտսդ, քանզի որպէս թուի ինձ ոչ սակաւ երախտապարտ ես դու նմա»:

Դուքսն և Սինկղիտոսք իւր ի բաց ելեալ յատենէն

Բասանիո՝ ասաց ցՊօրշիա, «Ազնիւ և մեծարոյ Պարոն, ես և Անտոնիո բարեկամ իմ՝ երկոքին այսօր խաստութեամբ քով և հանճարով ազատեցաք ի զարհուրելի պատուհասէ. վասն որոյ ազաչեմ զքեզ սառնալ զայսոսիկ երիս հազար դահեկանս՝ որ վճարելի էր Հրէին. և թողեալ զայս ճեղոց եմք մեք առ քեզ՝ յիրաւի՝ շնորհապարտ և երախտագէտ մինչև յաւիտեան»:

Պօրշիա, ոչինչ եղանակաւ համոզեցաւ սառնալ զպրամն. այլ ի սոխակէն Բասանիոյ զնա ընդունել գոնէ զո՛ և իցէ վարձատրութիւն ինչ, Պօրշիա ասաց տալ ինքեան ուրեմն զթաթպատնս ձեռաց իւրոց, զորս ի յիշատակ բարեկամութեանն նորա զգենուլ ունէր: Բասանիո ի բաց էառ ի ձեռաց իւրոց զթաթպատնան. Պօրշիա նաեւ զմատանին զոր ինքն առեալ էր նմա, և կամեցաւ ի բաց գառնել զայն ի նմանէ՝ որպէս զի ի տեսանելն միւսանգամ զԲասանիո, զուարճալի կատակ մի յարդարեսցէ ընդ նմա, և այլ էր պատճառ զի նախ խընդրեաց զթաթպատնան: Յորժամ նաեւ զմատանին, ասէ, «և վասն յիշատակի բարեկամութեան կրեցից ի մատին զայլ մատանի քոյ»: Բասանիո մեծապէս խոովեցաւ ի միտս իւր ընդ այս խնդիր առնեալ. քանզի խնդրէր նա զայնպիսի իր մի՝ զոր չկարէր տալ. վասն որոյ չիմեալ զիմաք՝ ասաց ցնա՝ թէ սխուր էր զի չկարէր տալ զմատանին, քանզի պարզև էր այն կնոջ իւրոյ և ուխտեալ էր սէ երբէք ի ձեռաց տալ զայն, բայց հաճելոց էր խնդութեամբ տալ նմա զայլ մատանի մի՝ զլաւագոյնն՝ զոր հնար էր գտանել ի վենետիկ: Ընդ այս՝ Պօրշիա երեսեցաւ սրտնեղեալ, և սկսաւ ի բաց գնալ ասելով, «ուսուցեր ինձ դու, Պարոն, թէ զինչ է ընդհանրապէս պատասխանին՝ զոր ընդունի աղաչաւոր ոք»:

«Սիրելիդ իմ Բասանիո», ասաց Անտոնիո, տուր նմա զմատանիդ, թող սէր իմ, և անդնդահատելի

ծառայութիւնն զոր մատոյց նա մեզ՝ լիցի արիաւոր ահաճութեան կնոջ քոյ. և Բասանիս ամաչեալ զի գուցէ ապերախտ համարիցի, զիջաւ ի բան բարեկամի իւրոյ և եա զմատանին Գրաշիանս ծառայի իւրում՝ առնել և տալ Պօրշիահ։ Նօտարն Ներիսա տեսանելով զայս, ըստ որում ինքն ևս առեալ էր մատանի մի առն իւրում, խնդրեաց ի նմանէ ընծայել զմատանին ինքեան, և Գրաշիանս կամելով ըստ սովորականին հատուցանել օրինակի տեառն իւրոյ, եա նմա զմատանին, և ի վերադառնալն առ տուն՝ Պօրշիա և Նաժիշա իւր ոչ սակաւ ծիծաղեցան. և միայն անձկանօք սպասէին գարձի ամուսնոց իւրեանց՝ առ ի հարցուփորձ առնել թէ ուր էին մատանիք նոցա, և նեղիլ գնոսա ասելով թէ անխոհան տուեալ էին նոքա կնոջ ուրուք։

Յորժամ Պօրշիա զառնայր ի տուն, սիրա նորա այնպէս լի և զեղուն էր խնդութեամբ, որպէս ամենայն ուրուք սովոր է լինել՝ յորժամ առնէ զբարի ինչ կամ զծառայութիւն իմն օգտաւէտ, զի զգայր անպատում իմն վայելս հրճուանաց յամենայն ինչ՝ զոր տեսանէր։ Երեկէր նմա՝ որպէս թէ ոչ երբէք այնպէս պայծառ էր լեալ փայլ լուսնի որպէս յայնժամ. և յորժամ սքօղէր լուսինն զերեսս իւր յեա կոյս ամպոյ ինչ, յայնժամ լոյս ճրագին զոր տեսանէր ի բացուստ փայլեալ ի պատուհանէ սենեկի իւրոյ, այնպէս յափշտակէր զերեսա կայութիւն նորա, զի զարձեալ առ Ներիսա ասէր, «ճրագն՝ զոր տեսանեմք՝ վառի ի պահլճի տան մերոյ. և տես ցորքան հեռաւորութիւն՝ լոյս վառեալ մոմոյ միոյ տարածել կարէ, այսպէս փայլէ և բարի գործ մի յանբարի յաշխարհի միում»։ Եւ լսելով զձայն նուագատանի ի տանէ իւրոյ, «արդարև», ասէ, ձայնէ այն քաղցր ևս ի գիշերի»։

Եւ յորժամ Պօրշիա և Ներիսա հասին ի տուն, ի բաց առեալ զառնացի հանգերձն, և զգեցեալ զիւրեանց պատմուճանս, սպասէին ժամանման ամուսնոց իւրեանց, և փութով եկեալ հասին և նոքա, ունելով ընդ իւրեանս և զԱնտօնիօ, և Բասանիս. և Ծանօթացուցանելով զսիրելի բարեկամ իւր կնոջ իւրում, այն ինչ զեա Պօրշիա շնորհաւորէր և հիւրընկալ մեծարանօք ողջունէր զգալուստ Անտօնիօի, ահա տեսին զի Ներիսա և այր իւր առանձնացեալ յանկիւն մի՝ վիճէին ընդ միմեանս։ «Այսպէս փութով կոխ, ահա» ասաց Պօրշիա, «զինչ է պատահեալն»։ Գրաշիանս պատասխանեաց «ոչ տիկին, բոլոր վէճն է ի պատճառս չնչին ոսկեզօծ մատանւոյ միոյ, զոր Ներիսա տուեալ էր ինձ, և յորոյ վերայ քանդակեալ կային, որպէս տեսանելի է ի կարացս ինչ և ի գանակս, բառքս՝ սիրեա զիս և մի ի բաց լքաներ զիս»։

«Ո՞վ փոյթ ունի վասն քանդակեալ բառիցն կամ գնոյ մատանւոյն», ասաց Ներիսա ցԳրաշիանս. «երդուար դու ինձ, յորժամ ետու քեզ զմատանին թէ պահելոց ես զայն մինչ ցմահ քոյ. և այժմ ասես թէ տուեալ ես նօտարի օրէնսգիտին. գիտեմ ես զի տուեալ ես զայն կնոջ ուրումն»։ «Երկնում ի գլուխ իմ», ասէ Գրաշիանս, զի ետու ես զայն փոքրիկ գնուձ պատանեկի միոյ, որ չէր հասակաւ բարձր քան զքեզ, և էր նօտար պատանի Օրէնսգիտին, որ ճարտարամտութեամբ իւրով ազատեաց զկեանս Անտօնիօ Պարոնի, և այս շատախօս պատանեակ՝ յոյժ թախանձեաց զիս աղաչանօք տալ նմա զմատանին՝ որպէս վարձ աշխատանաց իւրոց, և չկարացի զչնորհել նմա զայն»։ «Մեղապրեալ ես դու», ասաց Պօրշիա ցԳրաշիանիս, «վասն տալոյ զմատանին այլում, մինչդեռ առաջին պարզև էր այն կնոջ քոյ և յիշատակ սիրոյ։ Ես ևս տուեալ եմ Բասանիս տեառն իմում զմատանի մի. և հաւատամ եմ զի չունի նա բաժանել յայնմանէ՝ եթէ շահեցի այնու զաշխարհ ամենայն»։ Ընդ այս Գրաշիանս՝ որպէս թէ

ի ներողութիւն իւրում սխալութեան, ասաց թէ, « Բաանիս տէր իմ ես՝ եա զմաանի իւր աւենաբանին. և վասն այսորիկ էր՝ զի նոսար նորա վասն վաստակոց իրոց՝ ազաչեաց և առացաւ զիմ մաանի »:

Պօրշիա ի լսելն զայս կեղծեաց սաստիկ բարկութիւն, սկսաւ կշտամբել զԲաասանիս վասն ի բաց տալոյ զմաանին, և ասաց թէ Նէրիսա ուղիղ էր ի զուշակութեան իւրում և հաւաստեաւ կին ոմն սաացեալ էր զայն: Բաասանիս՝ որ սաստիկս արամեալ էր ընդ այսպէս վշտացուցանելն զսիրին իւր, ինքն ես սկսաւ բազում թախանձանօք պնդել. և երդուեալ ի պատիւ իւր ասէր թէ ո՛չ կնոջ ուրուճն առեալ էր զմաանին, այլ օրէնս զիտի միոյ, որ՝ ղէացեալ սաանալ զերիս հազար դահեկանս, խնդրեալ էր միայն զմաանին, « զոր յորժամ չկամեցայ ես տալ », ասէ, « գնաց ի բաց գժկամակեալ. և զինչ կարէի առնել, քաղցրիկդ իմ Պօրշիա. այնպէս ամաչեցայ ընդ ապերախտութիւն իմ, զի պարտաւորեցայ առաքել նմա զմաանին. և եթէ դու ներկայ էիր անդ, հաւաստի եմ, դու ինքնին խնդրէիր էիր յինէն տալ նմա զմաանին »:

« Աւաղ », ասաց Անտոնիս, « ես տարաբախտ եմ պատճառ բոլոր այսոցիկ վիճից և գժկամակութեանց »: Այլ Պօրշիա՝ խնդրեաց յԱնտոնիոէ չնեղասրբարիլ և չցաւիլ ընաւ. ի վերայ ամենայնի, ասէ, ուրախ էր ինքն զի ի նոսա սակս էր զի ի բաց տուեալ էր մաանին: Եւ Անտոնիս ի վերայ երեր առելով թէ, « անդամ մի գրաւ եղի ես զմարմին իմ վասն Բաասանիսի, և եթէ չէր հասեալ օգնութիւն նորա՝ որում ամուսին քոյ ես զմաանին, ահա չէի ես կենդանի. այժմ զհոգի իմ պարաւանդեցից որպէս երաշխաւոր, զի ամուսին քոյ ո՛չ այլ ես յայմհետէ լիցի երբէք ուխտազանց առ քեզ »: « Ուրեմն եթէ այսպէս երաշխաւոր ես նորա », ասաց Պօրշիա, « առ զայս մաանի և տուր նմա, և

պատուիրեա նմա լաւ ես զգուշանալ այրմիկ յետ այսորիկ »:

Յորժամ Բաասանիս էառ զմաանին՝ մեծապէս պրանչացաւ տեսանել՝ թէ մի և նոյն էր այն՝ զոր ինքն ի բաց տուեալ էր. և յայնժամ Պօրշիա յայտնեաց նմա զի ինքն էր աւենաբանն և Նէրիսա՝ նոսար իւր. և ի մեծ ուրախութիւն և ի ցնծութիւն սրտի իւրոյ՝ զիտաց Բաասանիս թէ սիրելի Տիկնոջ իւրոյ քաջասրտութեամբ և իմաստութեամբ էր զի կեանք Անտոնիսի զերծեալ էր ի մեծ վտանգէն:

Յայնժամ Պօրշիա կրկին ողջունեաց զգալուստ Անտոնիսի, և եա նմա թուղթս ինչ, որ ըստ զիպաց անկեալ էր ի ձեռս նորա, որով յայտնիւր զի նաւք Անտոնիսի չէին ընկղմեալ ի ծովս, այլ արդէն անվրաանդ և անխորձ կային ի նաւահանգստի: Եւ այսպէս ցուաբէին՝ սկիզբն պատմութեան ճոխ վաճառականիս այսորիկ՝ եղերեցաւ անակնկալ բարեբախտութեամբքն, որք ի վերայ հասին նմա, և ժամանակ եղև ահա նոցա ծիծաղելոյ ընդ ծաղրալի անցսն, վերաբերութեամբ մաանեացն. և այն զի երկու ամուսնքն չկարացին ճանաչել զկանայս իւրեանց. և Գրաշիանս երգելով իմն սկսաւ երգնուլ թէ որչափ կենդանի էր ինքն՝ յո՛չ իմիքէ երկնչելոց էր այնչափ յոյժ՝ որչափ յանզգուշանալոց առ ի ապահովի պահել զմաանի կնոջ իւրոյ:

ՕԹԷԼԼՕ

Բրաբանշիո՝ հարուստ Վենկիտոս վենետիկ քաղաքի՝ ունէր զկնգեցիկ դուստր մի — հեզարնոյսին Դէսդեմոնա։ Բազում անձինք պէտս էին վիճակի կենաց և առաքինանի, ցանկացեալ էին ամուսնանալ ընդ նմա, ո՛չ միայն վասն գեղոյ և բազմապատիկ կատարելութեանց նորա, այլ և վասն հարստութեանն՝ զոր ժառանգէր էր ի հօրէ իւրմէ. այլ ի միջոյ բազմաց այսոցիկ աշխարհակոց իւրոց, որոց գոյն և սովորութիւն բարուց նոյն էին ընդ իւրոյն, չկարէր գտանել զոք համեմատ հաճոյից իւրոց. քանզի ազնուատոհմ ազիկնոս այս՝ առաւել մեծարելի համարէր զգեղ և զկատարելութիւն մտաց քան զմարմնոյն. ամէն իրի եզակի լինն հակառակութեամբ, առաւել զմայլման արժանի քան օրինակելոյ, ընտրեալ էր առարկայ գորովոյ և սիրոյ իւրոյ՝ զսամարթ Եթովպացի մի, զոր պատուէր և սիրէր հայր նորա, և բազմիցս հրաւիրէր զնա ի տուն իւր։

Սակայն և ո՛չ իսկ միանգամայն մեզապրելի էր Դէսդէմոնա, վասն անպատշաճութեան ընտրելոյ՝ զայնպիսի տարիածու մի վասն իւր։ Քանզի, թէ և սամարթ էր Օթէլլո, այլ ակնուարարոյ Եթովպացին ոչինչ իւիք թերի էր յայսոցիկ ամենայն կատարելութեանց՝ որք գրաւել կարէին զսէր՝ յոյժ պատուականագունիցն անգամ ի սիկնանց։ Զինուոր էր նա, և զինուոր մի քաջ սիրտ. և քաջագործութեամբք իւրով ի բազում արիւնահեղ պատերազմունս ընդդէմ Տաճկաց՝ ամրարձեալ

էր յաստիճան սպարապետութեան, ի զինուորական ծառայութեան վենետկոյ, որոյ քաղաքական իշխանութիւն ևս՝ ունէր առ նա հաւատս և վարկ մեծ։

Օթէլլո, արարեալ էր բազում ճանապարհորդութիւնս առ պանդղան տեղիս. և Դէսդէմոնա (որպէս սովոր են առնել սիկնայք), սիրէր յոյժ լսել ի նմանէ զվէպս վիպասացոյն պատահելոց նմա, և զայսոսիկ զէպս պատմէր Օթէլլո մանրամասնաբար, ի կանխագոյն յիշողութենից անտի մտաց իւրոց, զանցս պատերազմաց, զպաշարմանց, զվիպասացոյ՝ որք հանդիպեալ էին ինքեան. զվտանգաց՝ ընդ որովք անկեալ էր յանցանելն ի ծով և ի ցամաք. զմազապուրք զերծմանց իւրոց ընդ զրաւելն զքաղաք ինչ՝ կամ ի յառաջելն առ բերան թնդանօթից, և թէ որպէս գերի վարեալ էր ի խրոխտ թշնամեաց և վաճառեալ ի սարկութիւն. և ապա թէ որպէս յետ վարելոյ զանարգ պաշտօն սարկի՝ զերծուցեալ էր անտի զանձն։ Ի վերայ այսոցիկ ամենայն վիպասացոյ, յաւելոյր նաև զնկարագրութիւն նորանոր և զարմանալի իրաց՝ զորս տեսեալ էր ի զանազան օտար աշխարհս, զահագնատարած մինուոր այրից, զքարանձաւաց, զժայռից, զլերանց ծածկեալ ամպով ի գագաթան, զբարբարոս ազգաց, զմարդակեր մարդկան, և զցեղի միոյ մարդկան ի մէջ Աֆրիկոյ՝ որոց գլուխ վտխանակ ի վերայ ուսոց՝ ի ներքոյ ուսոցն բուսանէր։ Եւ այսոքիկ վէպք անցից՝ տեսարանաց և ճանապարհորդութեանց, այնպէս միանգամայն գրաւէին, յափշտակէին զմիտս Դէսդէմոնայ, զի եթէ հարկ լինէր նմա խոսն ինչ ժամանակ ի բաց գնալ վասն գործոյ ինչ տնտարարութեան, ամենայն փութով աւարտեալ զայն՝ դառնայր իսկոյն որպէս ծարաւի ոք՝ ունկն գնել գարձեալ բանից Օթէլլոյ։ Եւ անգամ մի, Օթէլլո, պատեհ առեալ ինքեան զհամբոյր և զպիւրանոց կամս նորա, ճարտարամտութեամբ սպրեաց նմա, առ ի խնդրել

յինքենէ պատմել զբոլոմպակ անցս կենաց իւրոց յաջորդաբար, զոր մինչ ցայնժամ լուեալ էր նա միայն կցկտուր. և ի հաճիլն ընդ այս ասկնոջն, քամեաց Օթէլլո յաչաց նորա զբազում կաթիլս արտասուաց, նկարագրելով զցաւալի վէպս ինչ՝ որովք տագնապեալ էր հասակ պատանեկութեան նորա:

Յաւարտիլ պատմութեանն, Դէսպէմոնա՝ որպէս թէ ի վարձատրութիւն աշխատանաց նորա, ի խորոց սրտի արձակեաց քանի մի հառաչս, և սիրուն երկմտիմբ իմն խոստովանեցաւ՝ թէ արդարև սարօրինակ և զարմանալի էր ամենայն, զարմանալի և սրտաշարժ: Յանկայր, ասաց, թէ չէր լուեալ զայն ամենայն. սակայն անդէն ցանկայր թէ երկինք սահեցեալ էր վինքն զայդպիսի այր մի, և ապա շնորհակալ եղև զնմանէ, և ասաց՝ եթէ էր ինքեան բարեկամ մի՝ որ սիրէր զնա՝ միայն եթէ ուսուցանէր նմա պատմել այնպէս զանցսն սրտաշարժ, հաւատաւոր զրուիչոց էր և զիւր սէր: Եւ ընդ այս լռելեայն ակնարկութիւն, խօսեցեալ այնչափ պարզմտութեամբ՝ որչափ ամօթխած համեստութեամբ, և ընկերեալ սրտագրաւ լուռ արտայայտութեամբ սիրոյ և շառագնութեամբ վիճաց, և որոյ անհնար էր Օթէլլօի գոլ անզգայ, սաստկաւ վերջինդ քաջալերութիւն խօսել զսիրոյ՝ ևս համարձակապէս. և ի բարեպատեհ ժամուս յայսմիկ՝ հանդուցեալ զբազդը կամս նորա, ընկալաւ զհաւանութիւնն Դէսպէմոնայ, ի ծածուկ ամուսնանալ ընդ ինքեան:

Սակայն ոչ զոյն մարմնոյ Օթէլլօի և ոչ ճոխութիւն նորա այնպիսիք էին՝ որով հնար լինէր յուսալ՝ թէ Բրաբանչիո հաւանեալոց էր ընդ փեսանալ նորա զսաեր իւրումն: Ի մասին ամուսնութեանն՝ շնորհեալ էր նա ազատութիւն Դէսպէմոնայ, սակայն ակնակալէր՝ թէ ըստ սովորութեան ազնուագոյն սիկնանց վենետկոյ ընտրելոց էր ինքեան ամուսին, ի կարգէ հարուստ սինկղիտոսաց քաղաքին, այլ վրիպեցաւ նա յայսմ ակնկալութենէ իւրմէ. քանզի Դէսպէմոնա սիրէր միայն զԹովլաացին և լծայեաց բոլորովին զսիրա իւր և զպարզևս բանաի իւրոյ՝ քաջարի առնակութեանց նորա. և այսպէս համանգամայն նուաճեալ ի սիրոյ, բոլորովին անձնանուէր եղև նա ընտրեալ փեսայի իւրոյ. և գոյն մարմնոյ նորա իսկ՝ որ յաչս բոլոր սիկնանց անհրաժեշտ արգել ինչ համարել ունէր, առաւել ընտրելի երևէր նմա, քան զշուշանափայլ սպիտակ գոյն մորթոյ բոլոր պատանեհասակ ազնուականաց, որք ի խնդիր էին ամուսնանալ ընդ իւր:

Ամուսնութիւն նոցա՝ թէ և զտեղի առեալ ծածուկ, անհնար էր այնմ ձեալ ընդ երկար ի ծածուկ. և յորժամ Բրաբանչիո գիտաց զայն, խոհոյն ժողով կազմեալ սինկղիտոսաց, դատախազ եղև զՕթէլլօէ, իբր զի կախարդական հնարիւք իմն գրաւեալ էր զսէր զսեր իւրոյ և հրապուրեալ զնա ամուսնանալ ընդ իւր՝ առանց հաւանութեան հօր նորա. և ընդդէմ պարսուց հիւրընկալութեանն՝ զոր վայելեալ էր ի նմանէ:

Յայս կէտ ժամանակի, այնպէս պատահեցաւ՝ զի զինուորական իշխանութիւն վենետկոյ անհրաժեշտ հարկաւորութեամբ կարօտէր ծառայութեան Օթէլլօի. քանզի լուր հասեալ էր թէ Տաճիկք՝ պատրաստեալ զհսկայն նաւախումբ մի՝ խազային առ կիպրոս, վերաստանալ զայդ յոյժ կարևոր և պիտանի կղզի ի վենետկացւոց. և ի սոսկալական հարկիս յայսմիկ, ընտրեաց իշխանութիւնն զՕթէլլօ, որպէս մի միայն պատշաճ զօրապետ առ ի պաշտպանել զկիպրոս ի ձեռաց Տաճկաց: Վասն որոյ՝ ի գալն Օթէլլօի առաջի առեան սինկղիտոսացն, ներկայացուցանէր զինքն միանգամայն՝ որպէս ընդունակ մեծ իմն իշխանական պաշտօնի, և նաև որպէս ամբաստանեալ զի՝ առ ի արկարացուցանել զանձն ինչ, որոյ պատուհաս՝ ըստ օրինաց քաղաքին՝ էր մահ:

Ի պատճառս հասակի ծերութեան Բրաբանչիօի և բարձր ասպետական նորա՝ որպէս մին ի սինկղիտոսաց, լրջամիտ առնան ծերակուտին՝ նա բանից նորա երկար և համբերատար ունկնդրութիւն. այլ զայրագնեալ հայրն՝ ի բանս ամբաստանութեան իւրոյ, խօսեցաւ այնչափ անժուժկալ և ի չափազանց ձև, յառաջ բերելով խառն ի խուռն և անհաւանական ապացոյցս, մինչ զի յորժամ կոչեցաւ Օթէլլօ ջառագոմիլ զանձն, և պատմեաց պարզ ի պարզոյ և առանց աքօղելոյ ինչ զրոյր անցս իրին՝ որպէս յիշատակեցաւ ի վեր, և պատմեաց զամենայն միանգամայն անսեթևեթ ճարտարախօսութեամբ (որ ճշդիւրիս ապացոյց է ճշմարտութեան), զուքան՝ որ նա՝ խազահ էր առնէին, չկարաց՝ քան խոստովանիլ թէ՝ գործակալ մի՝ այնպէս սրատուչ եղանակաւ պատմեալ, գրաւելոց էր զսէր՝ նոյն ինքն իւրոյ դստեր. և թէ կարծեցեալ հնարք և միջոցքն կախարդական՝ ի գործ եղեալ՝ երևէին գոլ ոչինչ քան միայն ճշմարիտ և անկեղծ սրտի և սիրոյ արտայայտութիւնք՝ տարփածուի միոյ առ սիրուհի իւր։

Բանք Օթէլլօի, հաստատեցան վկայութեամբ նոյն ինքն Դէսդէմոնայ տիկնոջ, որ ներկայացաւ առաջի առնէին, և խոստովանեալով զմեծ շնորհապարտութիւնն զոր ունէր առ հայր իւր՝ վասն անուշանելոյ և կրթելոյ զինքն, ինչուէրբ թողութիւն ի նմանէ, յայտնել զի քան զորդիական պարտիս, կայր ինքեան յայնժամ այլ բարձրագոյն իմն պարագ՝ առ ամէր և ամուսին իւր. նմանապէս՝ որպէս մայր իւր նախամեծար ընտրեալ էր զամուսին իւր՝ (զԲրաբանչիօ) յիւրմէ հօրէ։

Ծերունի Սինկղիտոսն, անկարող գտեալ շարուսնակել այլ ևս զամբաստանութիւն իւր, կոչեաց զԵթովպացին առ ինքն՝ ցուցանելով ոչ սակաւ արտունչ և արամութիւն. և որպէս թէ յանհրաժեշտ հարկէ ստիպեալ, յանձն արար նմա զդուստր իւր, ասելով եթէ

ազատ լեալ էր նա ի կաշկանդանաց ամուսնութեան՝ անշուշտ զլանալոց էր տալ զնա նմա. և ուրախ էր զի ունէր միայն զայդ մին և ոչ այլ զսոսերս. քանզի այս ընթացք Դէսդէմոնայ՝ առնելոց էր զինքն բռնակալ մի՝ գնել զնոսա յոտնակոխս և արգելուլ զնոսա ի բաց գնալոյ, որպէս գնաց Դէսդէմոնա։

Այս գժտարութիւն բարձեալ ի միջոյ, Օթէլլօ՝ սրտմտութիւն և վաստակ պատերազմական կենաց՝ այնչափ սովորական և բնական ինչ էր՝ որպէս կերակուր և հանգիստ վասն այլոց, յօժարութեամբ յանձն էառ զիշխանութիւն պատերազմին ի Կիպրոս. և Դէսդէմոնա նախամեծար համարելով զպատիւ առն իւրոյ, (թէև կցեալ ընդ վտանգաց) քան զպարապորդ զուարճութիւնն, յորս ի նորոյ ամուսնացեալ ամոլք՝ սիրեն ծախել զժամանակ իւրեանց, յօժարութեամբ հաճեցաւ ընդ գնալ նորա, և գնաց և ինքն ընդ նմա։

Փութով զկնի ժամանման Օթէլլօի և տիկնոջ իւրոյ ի Կիպրոս, եհաս համբաւ թէ սաստիկ փոթորիկ մի ի ծովու՝ ցրուեալ էր միանգամայն գնաւատորմիղ Տաճկաց. և սմին իրի, ապահով էր կղզին առ ժամն ի մօտաւոր վտանգէ յարձակման թշնամեաց։ Սակայն, աւաղ. պատերազմն, յոր կայր մեծագոյնն ի վտանգից՝ վասն (Թէլլօի, սկիզբն առնէր արդ. և թշնամիքն՝ զորս պիտական իմն նախանձ զրգռեալ էր ընդդէմ անմեղ տիկնոջ նորա, ցուցին զինքեանս գոլ առաւել մահարեր, քան զօտարականն և զհեթանոսս։

Ի մէջ բոլոր բարեկամաց Օթէլլօ սպարապետի, ոչ մին այնպէս միանգամայն գրաւեալ ունէր զմտերմութիւն, զսէր և զհաւատարմութիւն նորա, որպէս Միքայէլ Կասիօ։ Էր սա պատանեհասակ գինուոր մի, ծնեալ ի Ֆլօրէնտիա, զուարճ, կայտառ, ցանգ հակամէտ ի տարփան սիրոյ, և շնորհալի ի դէմս իւր և ի բարս — որպիսութիւնք՝ միշտ հաճելի տիկնանց։ Գե-

զեցիկ էր նա կերապարանօք և ճարտարարան. և բոլոր բոլորովին այնպիսի անձն մի, ընդ որ յոյժ հաւանա-
կանաբար՝ այր մի միջահասակ (որպէս Օթէլլօ էր), ու-
նելով զմատաղաստի և զգեզեցիկ կին մի, կարէր գոլ
նախանձաւոր: Սակայն Օթէլլօ այնպէս ազատ էր բնա-
ւին ի նախանձաւորութենէ, որպէս բնաւորութիւն նորա
էր վեհ և ազնիւ. և այնչափ անկարող կասկածաւոր
լինելոյ ի միտս, որպէս անկարող էր նուաստացուցանել
զանձն՝ յանարդ գործ լինչ: Յառաջ քան զամուսնանալ
իւր, պիտոյացուցեալ էր զբարեկամական ծառայութիւն
Կասիօի, ի յարաբերութիւնս սիրոյ իւր և Դէսդէմոնայ.
և Կասիօ եղեալ էր բազմից բանտաւ և բանբեր ի մէջ
նոցա. քանզի Օթէլլօ երկուցեալ՝ զի իցէ թէ վրէպ
իցէ ինքն յայնոցիկ հնդ և հարկոյր խօսակցութենանց՝
որք հաճելի են սիրելոց, և գանալ զբարեկամ իւր
քաջայարմար առ այն, բազմից առաքէր զնա՝ առ Դէս-
դէմոնա խօսել յիւրմէ կողմանէ զրոյցս սիրոյ. և այս
անկասկած պարզմտութիւն, արդարև՝ յաւէտ պատիւ
քան սոգտանք լինչ էր քաջարի Եթովպացւոյն: Վասն
որոյ ոչինչ զարմանալի էր՝ զի բաց յՕթէլլօէ, (և այն
համեստ ակնածութեամբ, որպէս վայել է առաքինա-
բարոյ կնոջ միոյ) առաւել քան զամենայն ոք սիրէր
ազնուաբնոյնն Դէսդէմոնա զհաւատարիմն Կասիօ: Եւ
ոչ իսկ ամուսնութիւն սիրազոյգ ամոլիցն, առեթաց
տարբերութիւն լինչ ի վարս նոցա առ բարեկամ իւ-
րեանց, որ միշտ յառաջէր ի տուն նոցա, և զուարճ
ճառատանք նորա և ընտանի զրուցաբանութիւն, հա-
ճոյական իմն նորութիւն էր միշտ նոյն իսկ Օթէլլօի,
գոլով ինքնին բնութեամբ լուրջ և ծանրաբարոյ. և զի
այսպիսի բնութիւնք բազմից զգան հրճուանս ի հակա-
ռակէ իւրեանց՝ որպէս առժամանակեայ ազատութիւն
իմն ի ճնշողական խոհմանց մտաց իւրեանց, ամին իրի
Դէսդէմոնա և Կասիօ, սովոր էին զրուցել ի միասին՝

ծիծաղել և զուարճանալ, որպէս առնէին յաւուրսն՝ յորս
Կասիօ ի կողմանէ Օթէլլօի, գնայր զրուցել ընդ նմա
բանս սիրոյ:

Օթէլլօ, ի նորոյ ամբարձեալ էր զԿասիօ ի պաշ-
տօն տեղակալութեան իւրոյ — պաշտօն իմն մեծի հա-
ւատարմութեան և հզաւորագոյն պաշտօնի սպարապե-
տութեան: Յագօ՝ զնաւուր մի առաւել հինաւուրց քան զԿասիօ, ժժկամակեալ զայրացաւ յոյժ ընդ այս. քանզի
կարծէր ևս յաւէտ, թէ արժանի էր ինքն քան զԿասիօ
ի գահանել զպաշտօնն. և վասն որոյ բազմիցս ծաղրէր
զԿասիօ՝ որպէս այր մի՝ միայն պատշաճ ընկերակցելոյ
ընդ տիկնայս. և որ՝ ասէր, գիտէր այնչափ ինչ զպա-
տերազմական իրաց, կամ զկարգելոյ զօրս ի ճակա-
տամարտ, որքան աղջիկ մի: Յագօ որչափ առաւր զԿա-
սիօ, առաւր նոյնչափ և զՕթէլլօ, ոչ միայն վասն ցուցա-
նելոյն շնորհ Կասիօի, այլ և վասն անառակի և անհիմն կա-
կածանաց լինչ՝ զոր յղացեալ էր ի մտի, իբր զի Օթէլլօ
հարեալ էր ի սէր Էմիլիա կնոջ իւրոյ, և զղուեալ յայսո-
ցիկ երևակայական անիրաւութենանց, խորամանկ միաք
Յագօի, խորհեցաւ զառաքելի միջոց մի վրէժխնդրու-
թեան, որով երիքին Կասիօ, Եթովպացին և Դէսդէմոնա՝
զբոլոսցին համանգամայն ի կործանումն անկանգնելի:

Յագօ հմուտ ոմն էր ի հնարս չարեաց. և խո-
րագնին գոլով մարդկային բնութեան՝ գիտէր զի ի բո-
լոր առաւպանաց որք առնային կարեն զմիաս մար-
դոյ, (առաւել քան զի և իցէ մարտաւոր վիշտ) անառա-
նելին և սաստկագոյնն քան զամենայն էր տագնապ
նախանձու, և պատնազին խայթ այնորիկ. վասն որոյ,
կարծէր, զի եթէ մարթանայր նմա սերմանել զսերմն
նախանձու՝ ի սիրտ Օթէլլօի՝ ընդդէմ տեղակալի իւ-
րոյ, արդիւնաւորելոց էր այնու, զգեզեցիկ իմն վրէժ-
խընդրութիւն, որով իցէ թէ պատճառէր զմահ Կասիօի
կամ Օթէլլօի, կամ զինչ փոյթ՝ եթէ երկոցուն ևս:

ի հասանելն սպարապետին և սիկնոջ Իւրոյ ի Կիպրոս, և լուեալ Թէ ցրուեալ էր հաւատքսմբ Քրիստոսեան, սկսան վայելել ի կղզւոջն՝ յայլ օր՝ զժամանակ Իւրեանց ի զբօսանս զուարճութեանց. և ամենայն ոք զբաղեալ էր ի խրախութեան և ի խնջոյս, յորս հեզոյր զինի առատութեամբ և անթոյլ, և ըմպեալ լինէին յամենայն կողմանց, բաժակք յառողջութիւն կենաց սեամորթին Օթէլլօի և զեղանի Դեսդեմոնայ սիկնոջ նորա:

Վերակացութիւն խմբի պահապան զօրաց՝ յայմ գիշերի՝ յանձն եղեալ էր Կասիօի. և յառակսէս պատուիրեալ էր նմա Օթէլլօ զգուշանալ զօրականացն՝ զի մի արբցեն անպէտ քան զչափ, որով մի գուցէ ծագեսցի ազմուկ լինի կամ շփոթ, արկանել երկիւղ ի սիրտ բնակչաց կղզւոյն, կամ զգուեցուցանել զնոսա ընդ ժամանումն բանակի զօրացն անդ: Եւ յայմ, գիշերի՝ Իագօ սկիզբն արար նենգահնար գործոյ զաւճանութեան Իւրոյ: Պատրուակաւ սիրոյ և հաւատարմութեան առ սպարապետ Իւրեանց՝ հրապուրեաց զԿասիօ, կրկնել յաճախ քան զարժանն զվայելումն բաժակի (սխալութիւն մեծ վասն վերակացուի պահապան զօրաց), և Կասիօ առժամանակ մի զոպեաց զինքն. այլ ապա չկարացեալ զէմ դնել՝ (որպէս Թուէր ինքեան), անկեղծ բարեկամական մտերմութեան Իագօի՝ յոր կարէր նա ծպատել զինքն յորժամ կամէր, սկսաւ քաշել բաժակ զկնի բաժակի (քանզի անպատար զեղուն պահէր զըմմանակ նորա Իագօ) և չերեսցեալ ի գլուխ Իւր, ճառատել սկսաւ լիզու նորա՝ զգովեստս Դեսդեմոնայ. և կրկին և կրկին էարր յառողջութիւն նորա, ասելով, Թէ էր նա անմեղն և չքնաղ սիրին մի, և ի վերջոյ Թըշնամին՝ որ մտեալ էր ընդ բերան նորա, զոզացաւ զուղղ գլխոյն, և գրգռեալ ի բանից ան ուրուք, որում Իագօ ուսուցեալ էր առ նմա գրգիռն, մերկացուցին

սուրբ ի պատենից, և Մօնտանօ՝ արժանապով գնդապետ մի՝ ի ջանալն խաղաղացուցանել զնոսա՝ վիրաւորեցաւ: Յայնժամ շփոթ խռովութեանն սկսաւ տարածիլ յայլսն, և Իագօ՝ որ սկզբնապատճառ էր ամենայնի, ինքն եղև առաջինն համբաւել զազմուկն, հրաման տալով հնչեցուցանել զանգակ բերդին, որպէս Թէ ծագեալ էր ապստամբութիւն խիստ ի զօրսն. այն ինչ անց իրին՝ իրապէս ոչինչ քան կապ խմի էր արբեցելոց: Յայն զանգակին զարթոյց զՕթէլլօ, որ փութով զգեստաւորեալ եկն արտաքս. և հասեալ ի տեղի խռովութեանն, սկսաւ հարցուփորձ առնել զԿասիօ՝ զպատճառ անցիցն: Կասիօ՝ որ զգաստացեալ էր արդ փոքր մի յարբեցութենէ իւրմէ, յամօթոյ Իւրոյ չկարէր պատասխանի առնել. և Իագօ, կեղծելով որպէս Թէ բարեսիրին ընկերմէ էր կասկած Իւրոյ՝ ամրասատանել զԿասիօ, այլ միայն պարտաւորիւր առնել ի բանից Օթէլլօի, որ պնդէր զնշխարաւորութիւն իւրին. պատմեաց զանցս բոլոր եղելութենան, (լռելով ի հարկէ ի մասին Իւրոյ արարմանց, զորս կասիօ յարբեցութենէ իւրմէ չկարէր յիշել) այնպիսի եղանակաւ, որով այն ինչ ըստ երևութի ջանայր ցուցանել զյանցանս կասիօի՝ ոչ այնչափ մեծ, իրապէս երևեցուցանէր զայն յոյժ մեծ՝ քան օրչափ էրն: Եւ հետևանք էրին էր զի Օթէլլօ՝ որ խիստ կարպապահ ոմն էր, պարտաւորեցաւ ի բաց առնուլ զպաշտօն սենեկապետութենան ի կասիօէ:

Այսպէս, առաջին հնար նենգութեան Իագօի՝ կատարեալսէս յաջողեցաւ: Մինչդեռ զանարգութիւն առնէի նախանձորդի Իւրոյ՝ ձգեաց զնա ի պաշտօնէ Իւրմէ. այլ այսչափ միայն չէր բաւական շինջացանել զծարաւ առնելութեան նորա, զանցս աղետալի գիշերոյն. զեռ յայլ չարաշնար գործութիւնս պիտոյացուցանել ունայր նմա:

Կասիօ՝ որ ի ձախող պետութեան անտի հասեալ

ի վերայ իւր, արքէն լըջացեալ էր կատարելապէս, սկսաւ այժմ ողբալ և աւազել զանձն առաջի Յագօ՝ կարծեցեալ բարեկամի իւրոյ՝ վասն մեծ յիմարութեան իւրոյ, որով այնպէս ցածուցեալ էր զինքն ի վիճակ անասնական: Իւրովի ի կորուստ մատնեալ էր, ասէ, զինքն բոլորովին, և վհատրէր նմա ապաչել զսպատ իւր շնորհել ինքեան վերստին զպաշտօն իւր, որ իրաւամբ ասէլոց էր՝ թէ մոլեալ ումն էր նա յարութեան: Ո՛հ, քանի արհամարհելի էր կացուցեալ նա զանձն իւր: Բայց Յագօ կեղծաւորեալ՝ թէ ոչինչ այնչափ ծանր էր յանցանք նորա, ըստ որում ամենայն ոք հնարեալ էր երբեմն ի զէպս ինչ՝ ըմպել փոքր մի յաւել քան զչափն, ասաց ցնա. արժան էր նմա արդ առնել ի ներքոյ հանդամանաց իրեն զայն ինչ՝ որ բարեզոյն էր և յուսալի: Կին սպարապետին էր, ասէ, որ իրապէս սպարապետ էր այժմ. և կարէր զինչուգանել զայր իւր ի կամս իւր, որպէս և հաճէր. և ամէն իրի բարւոք էր առնելոց կասիօ՝ առ նա պիտել սպաշաւոր, և միջնորդ կարգել զնա առ ամուսին իւր: Եւ քանզի քաղցրասիրտ և սպառամիտ ումն էր նա, և միշտ հակամէտ ի բարեբարել, յօժարութեամբ յանձն առնելոց էր զգործ միջնորդութեանն և համոզելոց զսպարապետն, վերստացուել նմա զպաշտօն իւր, և այնու սէր բարեկամութեան նորա՝ որ խղճալ արդ՝ կրկին հաստատել առնէր ևս զինդպատն քան յառաջն: Արդարև՝ խրատ բարի էր այս, զոր ետ Յագօ, եթէ չէր այն վասն չար նպատակի ինչ, որպէս երևեսցի ապա:

Կասիօ արար ըստ խրատուն զոր ետ նմա Յագօ. և պիտեաց սպաշաւոր առ Տիկինն Դէսդեմոնա, զոր և պիւրութեամբ շահեցաւ առ իւր կողմն: Դէսդեմոնա խոստացաւ կասիօի ինքնին ազերաւոր լինել առ առն իւր, և զի յաւէտ մեռանելոց էր քան լքանելոց, ասէ, զնա ի վիճակի անդ անպատուութեան: Զայս զործ միջնոր-

դութեան խոկայն ի կատար ածել փութացաւ նա այնպիսի եռանդեամբ, և այնպէս քաղցրահամոզ բանիւք՝ զի Օթէլլօ՝ որ այնչափ սաստիկ վիրաւորեալ էր ի սէրս ընդ արարս կասիօի, չկարաց մերժել զինդպիր միջնորդութեան նորա: Եւ յորժամ Օթէլլօ կամէր յապաղել՝ զոնէ ժամանակ մի, քանզի ասէր շատ կանուխ էր նեռնէն այնպէս փութով այնպիսի յանցաւորի միւսում, Դէսդեմոնա փարեալ զնովաւ զարձեալ ազաչէր զի նեռնացէ նմա ի նոյն իսկ գիշերի, կամ ի վաղիւ յառաւօտս, կամ զոնէ յերկրորդում առաւօտս: Եւ յայտնէր ապա նմա թէ սրչափ ապաշաւեալ էր և արամեալ խղճիկն կասիօ՝ ընդ արարս իւր, և թէ չէր նա այնպիսի խիստ յանց պատժոյ արժանի: Սակայն այն ինչ Օթէլլօ զժուարէր զեռ ընդ կատարումն խնդրոյ նորա, «Զի՞նչ, Տէր իմ», պատասխանէր Դէսդեմոնա, «չէսո՞» այսչափ ազաչանաց խնդ վասն կասիօի բարեկամի մերոյ, այլ Միքայէլ կասիօի, որ զրուցել գայր առ իս ի կոպմանէ քոյ բանս սիրոյ. և բազմիցս յորժամ խօսէի ես ինչ ի պարսաւ քոյ, անկեղծութեամբ սրտի չատազովէր զքեզ: Թերեւ ինչ համարիմ զայս, զոր խնդրեմ արդ, ի կամէն փորձել զսէր քոյ, ևս ծանրագոյն առաջի առնել իցէ ինձ քեզ խնդիր գալ: Օթէլլօ անկարող գտեալ զլանալ ինչ երբէք այսպիսի քաղցրիկ ազաչսրի մէջ, և միայն խնդրելով զի Դէսդեմոնա դատողութեան իւրում՝ թողցէ զորոշումն ժամանակի ներողութեանն. խոստացաւ նմա առանձ զկասիօ կրկին՝ սրքան կարելին էր՝ փութով ընդ շնորհաժութեամբ իւրով:

Պատահեցաւ զի Օթէլլօ և Յագօ մանն ի միասին ի սենեակն՝ ուր կայր Դէսդեմոնա՝ յայնմ կեանի, յոր Կասիօ յետ ազաչելոյ զմիջնորդութիւն Դէսդեմոնայ սիկնոջ, ելանէր անտի ընդ այլ դուռն մի. և Յագօ՝ որ լի էր պատճառն հնարիւք՝ տեսեալ զայր, մեզմ ձայնիւ ասաց՝ որպէս թէ խօսէր առ ինքն. «Ոչ հաճիմ ես

ընդ այդ »։ Օթէլլօ լուաւ զբանն, այլ ոչինչ փոյթ առ-
բաւ առ ժամն. մանաւանդ թէ զլոյցքն՝ որք անդէն
զանգի կալան ի մէջ իւր և սիկնոջ իւրոյ՝ մոռանալ
նմանն նմա զայն բոլորովին. սակայն ապա յուշ եկն
նմա այն։ Քանզի, յորժամ Դէսդէմոնա եկ ի սենեկէն,
Իագօ կեզծեալ՝ որպէս թէ միայն վասն բաւարարելոյ
զմիաս իւր առնէր զայս, եհարց զՕթէլլօ, թէ յառաջ
քան զամուսնութիւն իւր, Միքայէլ Կասիօ գիտէ՞ր ար-
դեօք թէ սիրէր ինքն զաղկինն Դէսդէմոնա։ Օթէլլօ
պատասխանեալ առ այս թէ այո՛, գիտէր, և բազմիցս
ի յարաբերութիւնս սիրոյ իւրեանց՝ Կասիօ բանբեր լեալ
էր ի մէջ իւր և սիկնոջ իւրոյ, Իագօ կնճռեալ զյօնս
իւր՝ որպէս թէ նոր ինչ զարհուրելի յայտնութիւն ծա-
գեալ էր ի միաս իւր, « յիրաւի՝ այդպէս է », առաց։
Ա՜յա, յուշ ած խոհգն Օթէլլօի՝ զբանն զոր խօսեցեալ
էր Իագօ ի մտանելն ի սենեակն և ի տեսանելն զկա-
սիօ առ ընդ Դէսդէմոնա սիկնոջ. և սկսաւ խորհել ի
միտս թէ գուցէ կայր ծածկեալ նշանակութիւն ինչ
յայնմ ամենայնի. քանզի կարծէր Օթէլլօ, թէ Իագօ
իրաւախոհ և բարեմիտ ումն է, և լի սիրով և հաւա-
տարմութեամբ առ ինքն, և ամենայն ինչ՝ որ ի տեսիս
և ի գաւառան անձն մի երևելոյ էր գոլ յայտնի խոր-
հրդաւորութիւն, երևէր ի նմա որպէս բնական ծնունդ հա-
ճոյս և տաքնութեան մտաց, լի այնչափ ծանր կարևորու-
թեամբ՝ մինչ զժուարանալ նմա յայտնել զայն։ Վասն
որոյ Օթէլլօ ապաչեաց զնա խօսել՝ զոր ինչ գիտէրն և
յայտնել ինքեան գիտարկութս մտաց իւրոց։ « Բայց ո՛վ
գիտէ, գուցէ խորհուրդք ինչ », ասաց Իագօ, « մուտ
գործեալ եցեն ի միտս իմ, քանզի յիր անգի անմա-
քուր և զգիր իրք չգործեն մուտ »։ Եւ ապա սկսաւ
շարունակել զբան իւր Իագօ՝ ասելով թէ ասդ, քանի
ցաւալի իցէ, եթէ ծագեացին միշտ և անձուկ մտաց
վասն Օթէլլօի՝ ի պատճառս բարեգէս չնշմարելոյ նորա

զամենայն ինչ. և եթէ յայտնէր ինքն զխորհուրդս մտաց
իւրոց, իցէ թէ, խոսվելոց էին այնք՝ զանգորրութիւն
մտաց Օթէլլօի, և թէ չէր արժան արասել զբարի անուն
ուրուք միայն, ի պատճառս իրրև կասկածանաց. և
յորժամ հետամտութիւն Օթէլլօի սկսաւ առատանալ՝
յայտոցիկ լռելեայն ակնարկութեանց և ի կգկատուր կաս-
կածոյզ բանից, Իագօ որպէս թէ բարեկամական խրա-
տուք՝ զգուշացուցանել կամելով զնա ի խռովելոյ զմիաս
իւր, « հետի կաց », ասաց, ի նախանձաւորութենէ. և
այսպէս ապիրատ և խորամանկ բանիւք իւրով՝ անօրէն
պատճառս այս՝ զրգռեաց ի միաս Օթէլլօի զայդ բոց
նախանձու, յորմէ կեզծաւոր համոզանօք զգուշացուցա-
նէր զնա ի բաց կալ։ « Գիտեմ ես » ասաց Օթէլլօ,
« զի կին իմ գեղեցիկ է, սիրէ զընկերակցութիւն և
զխրախութիւնս և զհնճոյս, ազատ է ի խօսս իւր, երգէ,
պարէ գեղեցիկս. սակայն յորժամ հանճար և առաքինի
է անձն մի, առաքինի է և համիստ զոր ինչ առնէ նա.
և նախ, արժան է գտանել ապացոյց, և ապա կասկա-
ծել կամ երկբայել՝ զառաքինութենէ նորա և զպարկեշ-
տութենէ։ Յայնժամ Իագօ, կեզծելով, որպէս թէ ու-
բախ էր յայժ՝ զի Օթէլլօ չկամէր հաւատալ չար ինչ
կամ կասկածելի զկնոջէ իւրմէ, բացարձակապէս խոս-
տովանեցաւ թէ ունէր ինքն և ոչ մի ապացոյց. այլ
խրատեաց զՕթէլլօ ուշադիր հսկել կնոջ իւրում, յորժամ
գտանէր զկասիօ յընկերակցութեան նորա. չպէ՛ նա-
խանձաւոր, բայց և չմնալ բնաւին անփոյթ. քանզի
ինքն, (Իագօ) լաւ ևս ծանօթ էր բնաւորութեան Իտա-
լացի սիկնանց, որք քաղաքակիցք էին իւր՝ քան զՕ-
թէլլօ. և զի ի վճռաւորիկ ամուսնացեալ սիկնայք՝ բա-
զում ինչ առնէին ի տես երկնից, զորս չհամարձակէին
բնաւ առնել ի տես ամուսնոց իւրեանց։ Այսպա խորա-
մանկութեամբ սպրդել ջանայր ի միտս Օթէլլօի զկրո-
ղութիւնն, զի Դէսդէմոնա յամուսնանալն ընդ ինքեան,

խաբեալ էր զհայր իւր, և այնպէս ծածկութեամբ կառավարեալ էր զամենայն. զի խղճիկ ծերունի հայր նորա կարծէր, թէ կախարդութիւն ինչ ի գործադրութիւն բերեալ էր առ այն: Ընդ այս բան Օթէլլօ ոչ սակաւ շփոթեցաւ ի միտս իւր. քանզի տեսանէր ահա զանցս իրին ճշմարիտ գունով իւրով, և խորհէր զի եթէ կարաց Դէսդէմոնա խաբել զհայր իւր, ընդէ՞ր չկարէր խաբել և զայր իւր:

Յազօ սկսաւ ներոգութիւն խնդրել՝ վասն պատճառելոյ անհանգստութիւն ի միտս նորա. այլ Օթէլլօ կեղծեալ անտարբերութիւն եմն, մինչդեռ իրապէս տագնիկ շփոթեալ և տրամեալ էր ընդ բանս Յազօի, խընդրեաց ի նմանէ շարունակել զխօսս իւր, և Յազօ կատարեաց զխնդիր նորա, կրկին հայցելով ներոգութիւն, և ցուցանելով որպէս թէ յայժ ընդդէմ էր կատաց իւրոց, խօսել ինչ ընդդէմ կասիօ բարեկամի իւրոյ: Ապա լաւ ևս պարզելով զիմաստ բանից իւրոց, և խօսելով զբուն նպատակէ իւրոյ, յուշ ած նա Օթէլլօի, թէ որպէս մերժեալ էր Դէսդէմոնա զբազում ևս պատշաճաւոր անձինս՝ գունով և այլով որպիսութեամբք՝ համանըման ինքեան, որք յօժարեալ էին ամուսնանալ ընդ նմա. և ընտրեալ էր ինքն զԵթովպացի մի, որ յայտնի ապացոյց էր թէ որչափ էր կամակորութիւն նորա և յամառութիւն, և զինչ զարմանալի էր թէ, ապա յորժամ հասու եղեալ էր սխալութեան իւրոյ, բնականաբար համեմատել ունէր նա զդեղեցիկ դէմս և զպայծառ սպիտակ գոյն մորթոյ՝ Իտալացի համազգեաց իւրոց, ընդ ամուսնոյ իւրոյ: Եւ ի վերջոյ, եզերեաց զբան իւր, իրաւեղով զՕթէլլօ յապաղել այլ ևս փոքր մի՝ զվերահաստատումն կասիօի ի պաշտօնի իւրում, և տեսանել թէ որչափ ինչ թախանձանօք զարձեալ ազաչասուր էր լինելոց Դէսդէմոնա վասն նորա. քանզի ասաի, բազում ինչ հնար էր գուշակել: Եւ այսպէս վիճակեալ

կեղծաւորութեամբ և արուեստիւք, այս անօրէն սրիկայ, հնարել ջանայր զկործանումն հեզ և քաղցրիկ սիկնոջ Դէսդէմոնայ, պատրաստելով նմա որոգայթ մի՝ առ ի թակարդել զնա նոյն իսկ գործով բարերարութեան և զթասրտութեան նորա. նախ համոզելով զկասիօ՝ աղերսել զմիջնորդութիւն նորա, և ապա ի ձեռն նոյն իսկ գործոյ միջնորդութեան՝ արուեստակելով հնարս վասն կորստեան նորուն:

Աւարտեցաւ ասա խօսակցութիւն նոցա. Յազօ ազաչելով զՕթէլլօ անմիջ համարել զկին իւր տակաւին, որչափ չունէր ապացուցութիւն ի ձեռին՝ առ ի ընդհակառակն կարծել. և Օթէլլօ խոստացաւ սպասել համբերութեամբ. այլ յայտմ վայրկենէ՝ բարձաւ վրացաւ խնդառ ի գտանէն Օթէլլօէ՝ անդորրութիւն և հանգիստ մտաց: Ո՛չ մեկն, և ո՛չ այլ ամենայն քնաբեր լսմպելիք յաշխարհի, կարէին յայնմհետէ երբէք տալ նմա զայն քաղցր հանգիստ և պիրութիւն սրտի՝ զոր վայելեալ էր յերեկի միայն: Զբաղմունք նորա ծանրացան նմա՝ որպէս բեռն մի. և ոչ այլ ևս զինուց և զինուորութեան փոյթ ունէր: Միայն նորա՝ որ զարթնոյր, կայտռէր ի տես զնդի զօրականաց, զրօշակաց, և հանդիսի ճակատու, որ թմղայր ոտոտաէր ընդ ձայն թմբկի և փողոյ կամ ընդ վրնջիւն ռազմական նժուժի. երբէր ցամաքեալ և թարշամեալ, և հոգի զինուորական պարծանաց և փառասիրութեան մեռեալ թուէր ի նմա: Երբեմն կարծէր թէ անմիջ էր կին իւր, և երբեմն կարծէր ընդհակառակն. երբեմն ուղիղ և արդար համարէր զբանս Յազօի, և երբեմն կասկածաւոր և անհիմն. ապա խնայր՝ զի լաւ էր եթէ չէր երբէք լուեալ զբանսն. քանզի զինչ փոյթ՝ եթէ սիրէր կին իւր զկասիօ, որչափ անտեղեակ էր ինքն այնմիկ: Եւ այսպէս մինչ միաբք նորա տարուբերեալ տատանէր՝ իբրև նաւ հողմակոծ՝ ի տագնապալից խորհրդոց անտի, անդամ

մի բուռն հարեալ սասակութեամբ զկոկորդէ Իագոի, հրամայէր նմա կամ առ ապացոյց յանցաւորութեան Դէսդէմոնայ կամ խնդրելոց էր զնա անդէն։ Իագո՝ ընդ կեղծ՝ զայրացեալ յոյժ ընդ այս, զի հաւատարմութիւն և բարեմտութիւն իւր ի չարեաց համարչէին ի սակի, եհարց ցՕթէլլո՝ թէ տեսանէ՞ր արդեօք նա զթաշկինակ մի ծաղկանիշ ասղնագործ՝ ի ձեռին կնոջ իւրոյ. և յորժամ Օթէլլո պատասխանեաց՝ թէ ինքնին տուեալ էր զայնպիսի թաշկինակ մի նմա, և թէ առաջինն էր այն ի պարզեաց իւրոց՝ տուեալ կնոջ իւրում, «ուրեմն՝ դոյն այլ թաշկինակ», ասէ Իագո, «տեսի ես ի ձեռին կասիոի, և որով սրբէր զերեսս իւր»։ «Եթէ այդ այդպէս է, որպէս ասես», պատասխանեաց Օթէլլո, «ոչ առից ես հանգիստ՝ մինչ զերկոսին զնոսա կլանել տաց՝ յանդգնել ինձ ահագին վրէժխնդրութեան. և արդ նախ որպէս նշան հաւատարմութեան քոյ, ակնկալեմ՝ զի դու ինքնին յառաջ քան զլրանալ երից աւուրց՝ սպանցես զկասիո. իսկ ի մասին զեղապէմ դիւր այնմիկ, (նշանակել կամելով զկին իւր), խորհելոց և հնարելոց եմ ես զարագ միջոց ինձ՝ բաժին մահու առնել զնա»։

Ջնչին և թեթև իրք — թեթև որպէս օդ — յաչս նախանձաւոր՝ երևին որպէս ապացոյցք անժխտելի։ Այն զի թաշկինակ մի կնոջ իւրոյ՝ երևեալ էր ի ձեռս կասիոի, համարէր բաւական շարժառիթ վասն տարաբախտ պատրեալն Օթէլլոյ, հաւանել վճիռ մահուան, ի վերայ երկուց նոցա, առանց զննելոյ թէ արդեօք եղանակաւ գտեալ էր կասիո զթաշկինակն։ Դէսդէմոնա չէր երբէք տուեալ նմա զայն ի պարգև, և ոչ իսկ առաքինասէր և հաւատարիմ սիկինն՝ բնաւ առնելոց էր զայնպիսի անվայել գործ մինչ, տալ պարգև այլում՝ յանպատուհասիւն ամուսնոյ իւրոյ. և երկոքին Դէսդէմոնա և կասիո անմիով էին բոլորովին, և ոչ զմտաւ ածեալ անգամ առնել չարիս մինչ կամ վնաս ընդդէմ Օթէլլոյ. այլ

գործոն Իագո էր, որ միշտ հակամէտ ի գործել զանմեղս տեսակս եղեռնութեանց, համոզեալ էր զամուսին իւր — բարի այլ տարաբախտ կին մի — գողանալ զթաշկինակն ի Դէսդէմոնա սիկնոջէ, խաբելով զկին իւր՝ իբր զի կամէր օրինակել զծաղկանիշ նկարս այնորիկ. այլ իրապէս կամելով ի վայր ձգել զայն ի տեղւոջ մինչ, որպէս զի կասիո տեսեալ առցէ զայն, և արասցէ զայս ինքն առաջի Օթէլլոյ՝ որպէս ապացոյց յանցանաց Դէսդէմոնայ, իբր զի Դէսդէմոնա տուեալ էր զայն կասիոի ի պարգև։

Օթէլլո, փութով զկնի հանպիսեալ կնոջ իւրում, կեղծեաց՝ իբր թէ ցաւէր գլուխ իւր — և չէր զարմանալի թէ իրապէս ցաւէր այն. — և խնդրեաց ի նմանէ տալ զթաշկինակ իւր՝ առ ի պատել զայն զճակատով իւրով։ Դէսդէմոնա ևս իսկոյն զթաշկինակ իւր. այլ «ոչ զայս մին», ասաց Օթէլլո, «տուր ինձ զթաշկինակն զոր ես ետու քեզ»։ Դէսդէմոնա չկարացեալ տալ նմա զայն, քանզի որպէս արդէն ասացաւ՝ գողացեալ էր թաշկինակն. «որպիսի՞ ինչ է այս», ասաց Օթէլլո, «զթաշկինեակդ այդ Եգիպտացի կին մի ևս մօր իմում. և կինն այն էր վհուկ մի և գուշակել կարէր զխորհուրդս մտաց մարդկան. և նա յայտնեաց մօր իմում, զի ցորչափ ունէր նա զթաշկինակն, սիրելի և հաճելի էր լինելոց հայր իմ յոյժ սիրելոց էր զնա. բայց ի կորուսանելն զայն, կամ ի տալն այլում՝ փոփոխելոց էին զդայմունք հօր իմոյ, և որչափ յառաջն սիրէր՝ այնչափ ապա գարշելոց էր ի նմանէ։ Ի վեռանել իւրում, մայր իմ ևս լինձ զայն, և պատուիրեաց՝ զի թէ երբէք ամուսնացայց ևս, պարգևեցից զայն կնոջ իմում։ Պարգևեցի ևս քեզ զթաշկինակն. և յուշ ած, արժան է քեզ համարիլ զայն որպէս կարի յոյժ մեծագինն և պատուականագոյնն յամենայն իրաց, և պահել զգուշութեամբ՝ որպէս զաչն քոյ»։

«Յիրաւի այդ այդպէս է», ասաց Դէսդէմոնա, զահի հարեալ: «Ա՜յ, ճշմարիտ է բանդ», պատասխանեաց Օթէլլօ. «Թաշկինակդ այդ, ունի կախարդական զօրութիւն իմն. բազմասաց ամն՝ որ եկեաց երկերիւր ամաք յառաջ քան զայս, մարգարէական մտածանգուիծամբ իմն՝ ասղնագործեաց զայն. շերամքն որք կազմեցին զկերպաս այնորիկ, էին սուրբ և նուիրական. և ներկեցաւ այն, մումիաւով սրտի՝ կոյս աղջկան միոյ»: Դէսդէմոնա լսելով զզաբանալի որպիսութիւնս թաշկինակին, յերկիւղէ խրոյ մերձ էր ի մեռանիլ. քանզի գիտաց սաստիկ, թէ կորուսեալ էր զայն, և որպէս կարծէր, կորուսեալ էր ընդ նմին և զսէր ամուսնոյ իւրոյ: Յայնժամ Օթէլլօ՝ յուզեցաւ յոյժ, և երևէր որպէս թէ գոհել կամէր, վասնզաւուր լինչ. և սկսաւ զարձեալ պահանջել զթաշկինակն. սակայն Դէսդէմոնա՝ անկարող գտեալ տալ նմա զայն, փութացաւ չգնալ ի բաց զարձուցանել զմիտս ամուսնոյ իւրոյ՝ յաստարկայէ անոի, և խրախուսէմ ասաց ցնա թէ՝ կարծէր լինքն թէ այլ ամենայն զոյացք վերաբերութեամբ թաշկինակին, միայն պատճառանք էր ի կոչմանէ նորա, առ ի յետաձգել զկատարումն ազաչանաց իւրոց՝ ի մասին Կասիօի, և սկսաւ գովել զնա. ընդ որ Օթէլլօ խոժոռեալ ի զէմս և ևս սաստիկ յուզեալ՝ փութացաւ արտաքս ի սենեկէն: Եւ յայնժամ Դէսդէմոնա, թէև յանմայիցս, զատաջինն սկսաւ կասկածել, թէ այլ իւր ատձէր նախանձ ի սրտի:

Թէ զինչ էր ատիթ նախանձու նորա և որպէս պատճառեալ, Դէսդէմոնա չմարթեցաւր գիտել. այլ քաղցրաբարութեամբ սկսաւ մեղադրել նա զինքն, վասն նոյն իսկ կասկածանաց իւրոց զառնէ խրմէ. և ասէր ի միտս իւր, թէ ոմն գիտէր գուցէ լուեալ էր նորա զանախորժ լուր լինչ ի վենետկոյ, կամ գժուարութիւնք լինչ քաղաքական կառավարութեան սրանեղէին զնա. և

նմին իրի բնաւորութիւն նորա չերևէր այնպէս քաղցր և ամոք՝ որպէս միշտ: «Մարտիկ», ասէր ի միտս իւր, «չեն ասառւածք. և չէ արժան կանանց նոցա՝ ակնկալել վիճնոյն ջերմութիւն սիրոյ և զհանդակաթուիթիւն, զորս ցուցին նոքա ի հարսանեկան աւուրսն ամուսնութեան իւրեանց». և սկսաւ զարձեալ մեղադրել զանձն վասն այնպէս նուազ սիրով գտանելոյ՝ զնուազութիւն սիրոյ ամուսնոյ իւրոյ:

Յորժամ Օթէլլօ և Դէսդէմոնա՝ կրկին անգամ հանդիպեցան միմեանց, զարձեալ Օթէլլօ սկսաւ ևս յայտնապէս բանիւք մեղադրել զԴէսդէմոնա, իբր զի անհաւատարիմ էր լեալ, և սիրէր զայլ ոք. բայց չգիտեաց թէ ով էր զոր սիրէր նա. և այնչափ շփոթեալ էր Օթէլլօ, զի սկսաւ լալ: «Ա՜հ, որպիսի գառն օր է այս», ասաց Դէսդէմոնա, «ընդէր լաս, սիրելիս իմ»: Յայնժամ Օթէլլօ ասաց ցնա՝ թէ առնել կարէր նա ամենայն տարաբախտութեանց և արկածից բախտի՝ քաջութեամբ — աղքատութեան, հիւանդութեան և անարգութեան. այլ անհաւատարմութիւն նորա՝ բոլորովին սրտաբեկ արարեալ էր զնա. և նմանեցոյց զԴէսդէմոնա ծաղկան միոյ՝ որ երևէր գեղեցիկ և զմայելի. այլ հոտ այնորիկ այնչափ քաղցր՝ մինչ առատակեցուցանել զզգայարանս. և երանելի էր համարիլոց զանձն, ասէր, եթէ բնաւ չէր տեսեալ զնա: Եւ ապա յորժամ թողեալ զնա ի բաց զնաց Օթէլլօ, առնել սիկինն միանգամայն ընդարձակեալ յայրութենէ՝ ընդ անհիմն կասկածանս ամուսնոյ իւրոյ՝ զհաւատարմութենէ իւրմէ, ծանր թմրութիւն իմն սրպէս քնոյ՝ անկաւ ի վերայ նորա, և արբսմեալ և շուարեալ՝ հրամայեաց ազախնոյ իւրոյ սպառասել զանկողին իւր՝ բանալով ի վերայ այնորիկ զհարսանեկանն սաւան, և մրմնջէր ասելով. յորժամ ուսուցանէ սք ինչ մանկան միոյ՝ առնէ զայն քաղցրութեամբ և հեզիկ. և Օթէլլօ նմանպէս կարէր առնել.

քանզի արդարև զինչ էր ինքն՝ քան մանուկ, յորժամ կշռաւմբէր զնա այլ իւր: Եւ ապնիւ և հեզաբնոյմն Դէսդեմոնա ոչ այլ ինչ քան այսչափ միայն ցուցանէր արասունջ:

Դէսդեմոնա գնացեալ յանկողին, և ակնկալելով թէ առաւօտն իւր ևս հանելոց է ինքեան, փութով ի սխրաւթենէ սրան իւրոյ եմուտ ի քուն. և Օթէլլօ եմուտ ի ննջարան անդ, միաք իւր լի խաւարային մահաբեր խորհրդովք՝ սպանանելոյ զսիկինն: Սակայն, յորժամ նաես թէ ննջէր նա, ասէ ի միտս իւր, թէ չէր հեղոյց զարիւն նորա, և ոչ վիրաւորելոց զսպիտակ մարմն նորա. որ առաւել սպիտակ էր քան զալաբաստր. բայց և այնպէս՝ հառաւաեալ էր ի մահ թէ մեռանիլ պարտէր նա. քանզի եթէ կեայր նա, (որպէս ասէր), խաբելոց էր զայլս ևս, որպէս խաբեալ էր զինքն: Յայնժամ նա նմա զվերջին հարկայր մի, և այնչափ քաղցր թուեցան հարկայրն, զի հարկուրեցաց զնա կրկին, և եւս. այլ այն արտասուք ասէր ոչ գիտելեան՝ այլ անգթութեան են արտասուք:

Ի հարկուրելն անտի, զարթեաւ Դէսդեմոնա. և հայեցեալ յերես առն իւրոյ, եաես զի խոժանէր նա զշրթունս իւր, և աչք նորա թաւալէին ի կապիճս իւրեանց. և գիտէր նա զի միշտ մահագուշակ ինչ էր, յորժամ երևէր նա այնպէս. և Օթէլլօ ասաց ցնա՝ պատրաստել զանձն ի մահ. և քանզի չկամէր կարուսանել և զհոգի նորա, թոյլ էր տալոց նմա ապօթել: Խղճիկ անմեղ սիկինն սկսաւ յայնժամ պաղաչել զնա գթալ ի վերայ իւր, յայտնել գնէ թէ զինչ էր սխալութիւն իւր. և յորժամ Օթէլլօ յիշեաց զանուն կասիօի, և գիտաչինական, զոր (որպէս կարծէր) առեալ էր նմա, այնինչ անմեղն Դէսդեմոնա փութայր արդարացուցանել զանձն, յանկարծակի զկայ առեալ բանից նորա, չկամէր լսել նմա. և ձգեալ զվերմակս անկողնոյն գնալ՝ խափան եղ հնչելոյ նորա և խեղդեաց գնա:

Ի սոյն իսկ վայրկենի, կասիօ բերաւ ի տուն վիրաւորեալ և արիւնաթաթաւ. քանզի Իագօ սպրեալ էր միւսմ ի հետևողաց իւրոց, սպանանել զնա պատճառութեամբ. այլ սա չյաջողեալ ի սպանանել, այլ միայն սաստիկ վիրաւորեալ զնա, ինքնին սպանեալ էր յիագօ, որպէս զի չյայտնեսցի իրն. սակայն գտեալ թուղթք ինչ ի ծոց սպանելոյն, յայտնի եղեալ էին եղեռնութիւնք Իագօի և անմեղութիւն կասիօի. և կասիօ եղեռնութիւնք Իագօի և անմեղութիւն կասիօի. և կասիօ ակնեալ էր այժմ առ Օթէլլօ, հարցանել թէ վասն որո՞յ յանցանաց սրամտեալ էր նա, զի գիագօ գործի կալեալ էր ինքեան սպանանել զնա:

Աչսոքիկ յայտնութիւնք էին, որպէս ահագնորոմն կայծակն մի ի չքնաղ ի գլուխ Օթէլլօի, որ եաես ահա պարզապէս զի ոչինչ քան ահաւոր մարգապան ումն էր ինքն, և թէ կին իւր խղճիկ՝ անմեղն Դէսդեմոնա՝ միշտ հաւատարիմ և սիրօղ էր լեալ ինքեան. և խիստ ապաշնալ և սրտմտիլն սրտի իւրոյ ընդ այս ամենայն, անսանելի կացուցեալ նմա զկնատես իւր, անկեալ ի վերայ սրոյ իւրոյ՝ գլսրեցաւ առ մարմնով անկրաւեալ սիկինոյն, և փչեաց զհոգի իւր:

Սոյն մոլեգնի գործք՝ առիթ եղեն մեծի զարհուրանաց և զարմացման ի անասդան. քանզի Օթէլլօ լեալ էր միշտ բարեհամբաւ այր մի, և յաւաչ քան զգործադրելն անօրէնն Իագօի գնեռնութեան իւրոյ՝ ընդ որ ամենս բնութիւն Օթէլլօի չեռ նմա թոյլ կասկածել, լեալ էր նա խանդագաստ և անձնանուէր ամուսին մի կնոջ իւրում: Սիրեալ էր զնա արդարև՝ ոչ խնամանաբար՝ այլ այնչափս յոյժ. և յորժամ գիտաց զսխալանս իւր՝ յանկեզծ ի սրտէ եղաց, և եղաց գառնագէս և ապիոգորմ. և հեղան արտասուք յաչաց նորա առաւել յորդութեամբ, քան սրչափ ծառք Արաբիոյ առաւել յորդութեամբ, քան սրչափ ծառք Արաբիոյ հասնն գնեւժ իւրեանց: Եւ յորժամ միտաւ նա, բոլոր արժանիք նորա և քաջագործութիւնք յիշատակէին միշտ:

Եւ յայնժամ յաջորդի նորա ձնաց առնել ոչ այլ ինչ, քան ածել զարժանին պատուհաս ի վերայ Խազօի, զոր հրաման եա չարաչար առնջանօք սպառանել, և զլուր ողբալի անցիցն և մահաւան երևելի սպարապետին՝ առաքել առ վենետիկ:

ԶԳՕՆԱՑՈՒՑԱՆԵԼ ԿԻՆ ԺԱՆՏԱԲՆՈՑԹ

Կառաւարիչ՝ անուանեալն Ժանտաբնոյր՝ էր երէց դաւսար Բապախաա, հարուստ վաճառականի միոյ ի Պատուա: Օրիորդս այս՝ ունէր զայնպիսի ոգի իմն անզսպելի և վիրագրկիս, բնաւորութիւն մի՝ այնպէս զայրացկոտ և կռուասէր, լեզու մի այնպէս շաատխօս, սուր և պատրաստ ի կշտամբել, զի ի բոլոր Պատուա ծանօթ էր ամենից, միայն անուամբ՝ Ժանտաբնոյր կառաւարիչ: Բոլորովին անհաւանական, կամ լաւ ևս ասել՝ անհնար ինչ երևէր՝ թէ երբէք գտանիւր այր ոք, որ համարձակեալց էր ամուսնանալ ընդ օրիորդիս. և վասն որոյ հայր նորա Բապախաա՝ մեզապրէր յամենից, վասն յետաձգելոյ զամուսնութիւն հեզիկ և ազնուաբնոյթն Բիանկայ՝ երկրորդ զաւեր իւրոյ, ընդ որում բաղում պատուելի և արժանաւոր փեսայացուք պատրաստ էին, և ըղձակեր առ ի ամուսնանալ. և առ որս՝ Բապախաա ասէր միշտ, թէ յորժամ երէց քոյր նորա ամուսնացեալ ի բաց գնայր, յայնժամ ապա թոյլ տայց էր և Բիանկայ ընտրել վասն իւր՝ զարժանաւորագոյն ոք ի փեսայութիւն:

Սակայն և այնպէս զկայ եղև զի ազնուական ոմն

անուն Պէարուշիօ՝ եկն յայնոսիկ աւուրս ի Պատուա քաղաք, զիամամբ որոնելոյ զօրիորդ մի, առ ի կին ածել ինքեան. և ոչ ինչ վհատեալ կամ՝ երկուցեալ ի համբաւոյն՝ տարածեալ ի մասին բնաւորութեան նորա, և լսելով թէ զկայիկ էր զիմօք և ձոխ սատցուածով, հաստատեաց ի մտի հարսնացուցանել ինքեան, զոյն իսկ համբաւաւոր ժանտաբնոյրն կառաւարիչ, և զգօնացուցանել զնա և առնել հեզ և հլու ամուսին մի: Եւ յիրաւի, ոչ ոք այնչափ լաւապէս պատշաճ էր յանձն առնուլ զայս ծանր և զժուարին գործ, որպէս նոյն ինքն Պէարուշիօ, որոյ բնաւորութիւն ոչ միայն չէր նուազ եռանդնոտ և բորբոքուն՝ քան զկառաւարիչնայն, այլ և էր յոյժ հնարիմաց, զուարճամիտ և կատակասէր, և ի վերայ ամենայնի էր նաև ուշիմ և ուղիղ ի պատուղութեան իւրում, և զիաէր կեղծել սաստիկ և կատաղի զայրոյթ, մինչդեռ ի սրտի իրապէս զգայր առ ժամն՝ խանդ և հաճութիւն, և ծիծաղել կարէր ընդ նոյն իսկ կատաղութիւն իւր. քանզի բնական որպիսութիւն բաբուց նորա՝ էր քաղցր, անհոգ և զիւրահաճ. և վասն որոյ յետ ամուսնանալոյ ընդ կառաւարչնայ, այն ամենայն խռովայոյզ արարք և շփոթք, զորս պատճառեաց նա, կեղծ և յաւէտ՝ որպէս թէ ընդ կատակս էին. կամ լաւ ևս ասել, խոհական պատուղութեամբ ի գործ եղ զայն, առ ի նուաճել և ի բաց բառնալ այնու՝ զժանաւութիւն բնաւորութեան կառաւարչնայ:

Պէարուշիօ գնաց ահա զկառաւարչնայ գրաւել զսիրտ և զսէր. և նախ իւրովի խնամախօս եղեալ առ հայր նորա, խնդրեաց թոյլութիւն ի նմանէ, առաջարկել ամուսնութիւն քաղցրիկ և հեզարոյթ զաւեր նորա, չքնաղ իմն պարզմտութեամբ ասելով, թէ՝ լուեալ իւր զպատահառս ամօթխածութենէ նորա և զհեզիկ բարուց, յատկապէս եկեալ էր ի Պատուա՝ աղերսել զսէր և զհաճութիւն նորա՝ վասն հարսնանալոյ ինքեան: Հայր

Կաւարինեայ, թէպէտ և ի սրտէ փափագէր՝ ղի ամուսնացեալ գուսան իւր, այլ պարտաւորեցաւ խոստովանիլ ղի Կաւարինէ չէր այն ինչ զոր կարծէր նա. և յայսմ կեանէ, որպէս իրական ապացուցութիւն ինչ, թէ յորպիսի ազնուութեանց բազկանայր բնութիւն Կաւարինեայ, երաժշտական ուսուցիչ նորա՝ յարձակեալ ի ներքս ի սենեակ անդ՝ ուր կային Բապախոսա և փեսայացու իւր, գանգատել սկսաւ, թէ ի պատճառս ուղղելոյ զսխալանս ինչ ի նուագածութեան նորա, հեզիկն Կաւարինէ արհպոմն զոր նուագէր, հարեալ վիրաւորեալ էր զդլուխ իւր: Սակայն յորժամ Պէարուշիօ լուաւ զայս, ոչ միայն չեցոյց ի դէմս ահաճութիւն ինչ, այլ գովել սկսաւ զԿաւարինէ ասելով, «Ո՜հ, արդարև, անվհներ և քաջասիրտ աղջիկ մի է նա. սիրեմ ես զնա վասն այսորիկ՝ առաւել քան ոչ չափ յառաջն սիրէի, և յանչափս փափագիմ զրուցել ընդ նմա: Եւ սակայնզի զծերունին Բապախոսա, տալ վաղվաղ պատասխանի իմն առաջարկի խնամախօսութեան իւրոյ, ասէ. «Ես չկարեմ յամենայն աւուր գալ կամ ծախել ժամանակ երկար, ի սովորական նախընդանս սիրոյ, յառաջ քան զամուսնութիւն: Ծանօթ էիր զու հօր իմոյ. մեռեալ է նա՝ ժառանգ թողեալ զիս բոլոր կալուածոց իւրոց և ճոխութեան. վասն որոյ միայն յայտնել խնդրեմ ինձ զի եթէ գրաւեցից զսէր զսաներ քոյ, ոչ՞րչափ ինչ է՝ զոր հաճելոց ես տալ նմա օժիտ հարսանեաց»: Բապախոսա՝ զայս նոր օրինակ ձև խնամախօսութեան՝ փոքր մի տարօրինակ և բիրտ կարծեաց թէև, այլ ցնծացեալ ի սիրտ իւր յաւուղ ամուսնութեան Կաւարինեայ, պատասխանեաց թէ յօժար էր տալ նմա որպէս օժիտ՝ քսան հազար դահեկանս, և զկէս կալուածոց իւրոց՝ յիւ մահուան իւրոյ. և ընդ այս բոլոր բովին հաճոյ գտեալ Պէարուշիօի, անդէն և անդ կնքեցան խոստմունք յերկուց կողմանց. և Բապախոսա

զնաց ծանօթս տալ զայրացկոտն Կաւարինեայ, զգալըստենէ փեսայացուին, և առաքել զնա առ ի խօսակցել և լսել զբանս սիրոյ նորա և զառաջարկ ամուսնութեան:

Իսկ Պէարուշիօ, յայսմ ժամանակի որոճել սկսաւ ի միտս իւր, թէ զիա՛րդ և ո՛րպիսի եղանակաւ արժան էր լինքեան՝ մատչիլ առ սիրուհի իւր և գտանել զհաճութիւն նորա: «Գրաւեցից», ասէ, «զսէր նորա ո՛չ սակաւ եռանդեամբ և յիմ կողմանէ, յորժամ գայ նա՝ եթէ ծաղրեսցէ զբանս իմ՝ ասացից թէ երգէ նա քաղցրաձայն որպէս զսոխակ մի. եթէ կնճռեսցէ նա զդէմս իւր՝ ասացից. նմանի նա պայծառ վարդի միոյ՝ զոր ի նորոյ լուացեալ է ցօղ առաւօտու: Եթէ լուռ կացեալ ո՛չ խօսեսցի ինչ, գովեցից զճարտարութիւն լեզուի նորա, և եթէ հրամայեսցէ ինձ ի բաց գնալ, այնպէս չկրմռանդութեամբ շնորհակալ եղէց զնմանէ, որպէս թէ խնդրէր յինէն ճնալ առ նմա շարաթ մի»: Նազաճեաւն Կաւարինէ եհաս այժմ ի սենեակն. և Պէարուշիօ ողջունեաց զնա ասելով. «Բարի լոյս, կի՛ա. քանզի, որպէս լսեմ, այլ է անուն քոյ»: Կաւարինէ ոչ հաճեալ ընդ այս ընտանի ձև անուանակոչութեան, արհամարհօք ասաց. «Նորա որք խօսին ընդ իս, Կաւարինէ կոչեն զիս և ոչ կիա»: «Սուտ խօսիս», պատասխանեաց փեսայացուն. «քանզի բոլորն ես կոչեն զքեզ Կիա, բարի և լաւ Կիա, և երբեմն ժանտաբնոյթ Կիա. բայց ես կարծեմ ի մէջ բոլոր աշխարհի քաղցրագոյն և ամենագեղեցիկ Կիան ես գու. և սմին իրի, Կի՛ա, լսելով զգովեստս հոգ և ազնիւ բնութեան քոյ յամենայն տեղիս, եկի ես աղերսել զսէր քոյ, և ածել զքեզ ինձ ի հարսնութիւն:

Տարօրինակ իմն սիրելութիւն էր՝ զոր ահա ցուցանել սկսան երկոքին սոքա միմեանց: Կաւարինէ խօսէր բարձրաձայն և զայրագին բանիւք, ցուցանելով թէ քանի իրաւացի էր զի անուն առեալ էին նմա

ժանաաբնոյթ, մինչեռ տարփածու նորա գովէր զբանսն՝ որպէս յոյժ քաղցր և պատուասիրական. և ի վերջոյ, լսելով թէ գայր հայր նորա, (մտադրեալ աւարտական առնել զկրն՝ որքան հնար է փութով), «Քաղցրիկդ իմ կատարինէ», ասաց Պէարուշիս. «լաւ է մեզ ի բաց թողուլ զայսոսիկ անօգուտս զրոյցս, քանզի հայր քոյ արդէն տուեալ է զհաճութիւն իւր վասն հարսնացուացանելոյ զքեզ ինձ, թէ ուրչափ ինչ օժիտ է տալոց քեզ, այն ևս արդէն որոշեալ է. վասն որոյ թէ կամիս դու և թէ ոչ, ամուսնանալոց եմ ես ընդ քեզ»:

Եւ այժմ Բալախատա մտանելով ի սենեակն, Պէարուշիս յայտնեաց նմա, թէ դուստր նորա ընկալեալ էր զինքն կարի քաղցր ընդունելութեամբ և խոստացեալ էր ամուսնանալ ընդ նմա, յաւուր առաջիկայ Կիւրակէի: Զայս խոկդն ուրացաւ կատարինէ՝ ասելով թէ ցանկայր յաւէտ տեսանել զնա յառաջիկայ Կիւրակէի աւուր կախեալ զպարանոցէ, քան ամուսնանալ ընդ նմա. և սկսաւ կշտամբել զհայր իւր, վասն փափագելոյ սալ զդուստր իւր ի կնութիւն՝ այնպիսի խելագար՝ վայրենի առն միոյ, որպէս Պետրուշիս էր: Պէարուշիս իջուցեաց ի Բալախատա, չտանել փոյթ ինչ, բանից բարկութեան կատարինեայ. քանզի, ասէ, լռելեայն անօրէնութիւն իմն էր այն ի մէջ իւր և կատարինեայ, զի ըստ երևութի՝ ցուցցէ նա զինքն առաջի հօր իւրոյ ժխամակ և անհաւան, այլ յառանձնութեան իւրեանց գտեալ էր զնա յոյժ քաղցր և սիրալիր. և ապա զարձեալ առ կատարինէ, ասաց. «տուր լինի զձեզ քոյ, ազնիւ կէաս իմ, յայսմ խոկ աւուր գնալոց եմ ես ի վենետիկ գնել զհարսանեկան զգեստս և զպատմուճանս: Հայր, դու ևս պատրաստեա զինուոյս հարսանեաց, և հրաւիրեա զհոչնականսն: Լեր հաւատարմ, բերելոց եմ ես զմատանիս մեծագինս, զգոհարս, զշքեղ զարդս և զպատմուճանս զեղեցիկս, որպէս զի նազելի կատարինէ

իմ զարդարեսցի արժանապէս. վասն որոյ եկ համբուրեա զքո կէսն, սիրելի խօսեցեալդ իմ. և անխափան կատարեսցի հարսանիք մեր՝ յաւուր Կիւրակէի»:

Յաւուր Կիւրակէի ժողովեցան բոլոր հրաւիրականք ի տուն հարսին, այլ ընդ երկար ժամանակ սպասէին զպատանեան Պետրուշիսի. և կատարինէ ի բարկութենէ սրտին լայր, կարծելով թէ ընդ կատակս արարեալ էր նա զամենայն՝ միայն վասն այսն և ծանակ առնելոյ զնա: Սակայն ի վերջոյ երևեցաւ Պետրուշիս, բայց բերեալ էր ոչ զհարսանեկան պատմուճանս, և ոչ զարդ ինչ, և ոչ իսկ ինքնին զգեցեալ էր զհանդերձ հարսնեաց, այլ ունէր զձեռամբ զսաթօրթինակ գձուձ զգեստ ինչ, որպէս թէ յաւէտ ըղձայր խաղ առնել զլուրջ և զծանր խորհրդով պատկին. և նոյն իսկ ծառայ նորա և երկլաբք՝ յորս հեծեալ էին, յարդարեալ էին անհեթեթ կազմութեան և ծաղրալի իմն եղանակաւ:

Ո՛չինչ համոզել կարաց զՊետրուշիս փոխել զզգեստ իւր. «կատարինէ», ասէր, «ամուսնանալ ունէր ընդ ինքեան և ոչ ընդ հանդերձից իւրոց». և տեսեալ ամենեցուն թէ անօգուտ ինչ է տաւել ձեռնարկութեան և համոզ առ այս, գնացին յեկեղեցի, և Պետրուշիս վարէր ի բոլոր ժամանակի ըստ միտոյն խելագար գնացից: Յորժամ ըստ սովորականին եհարց ցնա քահանայն՝ թէ կամի՞ր զի ամուսնասցի ընդ Կատարինեայ, Պետրուշիս այնպէս ահեղաձայն գոչեաց «այո՛, պարտ է նմա ամուսնանալ ընդիս», զի ամենեքին զարմացան. և քահանայն սարսուցեալ՝ ի բաց եթող զմաշտոցն ի ձեռաց. և յորժամ կորացաւ առնուլ զայն, խելացնոր փեսայն այս ևս նմա այնպիսի բունցի մի, զի քահանայն և մաշտոցն երկոքին գլորեցան ի գետին: Եւ ի բոլոր ժամանակի անդ մինչեռ կատարեալ խորհուրդ պսակին, անդադար աքացէր նա զգետին, երդնոյր և հայհոյէր այնպէս, զի զայրացոյն կատարինէ իսկ՝

փոխանակ բարկութեան՝ զղայր յերկիւղ : Ձեռ կա-
տարման պատկին, և մինչդեռ յեկեղեցւոջ անդ էին,
հրամայեաց փեսային բերել զինի, և բարձրաձայն ազա-
ղակաւ էարբ զայն յառողջութիւն խրթի հանդիսակա-
նացն. և զիրիւսր զինւոյն ունացեալ ի յատակ բաժա-
կին, ձգեաց յերեսս ժամկոչի եկեղեցւոյն, զայս ինչ
պատճառ առեալ առաւօտինակ արարմանն, թէ մօրուք
նորա ցանցառ գոլով յոյժ, կարօտէր կարողութեան:
Զայսպիսի հարսանիք ո՛չ երբէք տեսեալ էր ոք ար-
զարև. բայց Պէարուշիս կեղծէր զայս ամենայն վայրե-
նութեամբ զիտամբ, որպէս զի յաջողութեամբ ի կատար
ածցէ զզաղափար՝ զգօնացուցանելոյ և ընտելացուցա-
նելոյ զկռուասէր բնաւորութիւնն կնոջ իւրոյ:

Բազախոսս պատրաստեալ էր զմեծաձախ իմն
ինջոյս հարսանեաց. սակայն ի գառնալն նոցա յեկե-
ղեցւոյ ի տուն, Պէարուշիս կալեալ զձեռանէ կատա-
րինեայ, յայտնեաց հօր նորա, թէ ածել կամէր զինին
իւր ի տուն անդէն և անդ առանց յապաղելոյ. և թէև
անձն նորա ընդդիմացաւ այսմ, կատարինէ բարկացաւ
յոյժ, այլ ոչ ընդդիմութիւն միոյն, և ոչ ցասմալից
բանք միւսոյն կարացին շարժել զնա ի մտադրութենէ
իւրմէ: Պահանջէր նա զամուսնական իրաւունս իւր,
առնել զկին իւր ա՛ւր և կամէր. առնել զինչ և կամէր.
և կամայ ակամայ տարաւ զկատարինէ ի բաց. քանզի
այնպէս յանդուգն և խիզախ էին շարժմունք նորա և
բարք՝ զի ոչ ոք համարձակեցաւ խաչ կալ նմա կամ
արգելուլ զգնալ նորա:

Հնձուցեալ զկին իւր ի վերայ նիհար և անշուք
երիվարի միոյ, զոր յատակապէս ընտրեալ էր առ այս
նպատակ, և ինքն և ծառայ իւր հեծեալ նմանպէս ի ձիս՝
ոչ նուազ նիհար և վատ, ճանապարհորդել սկսան ընդ
խորաւերտ և ընդ ազմալից ուղիս. և եթէ սայլաքէր
ոմն ձիոյ կատարինեայ, քանզի տառապեալ կենդանին

ի նիհարութենէ իւրմէ հազիւ կարէր յառաջել, Պէարու-
շիս՝ անհնարին կատաղութեամբ սկսանէր երդնուլ, և
նզովել զձին. այնպէս զի կարծելոց էր ոք, թէ էր նա
վայրագագոյն և անզուսպ այրն՝ որ երբէք ծնաւ յաշ-
խարհի:

Ի վերջոյ յետ երկար և յոյժ տարժանելի ճանա-
պարհորդութեան իմն, յորում ի բոլոր ժամանակի կա-
տարինէ լսէր ոչինչ քան կատաղի ազազակ և զայրագին
բանս Պէարուշիսի առ ծառայ իւր և առ տառապեալ
ձիսն, ժամանեցան ոքա ի տուն: Պէարուշիս բազում
քաղցրութեամբ ողջունեաց զզալուստս կատարինեայ ի
տուն իւր. այլ ի մէջ եղեալ էր՝ թոյլ չտալ նմա ունել
ո՛չ հանդիսս և ո՛չ կերակուր յայնմ գիշերի: Թէպէտև
պատրաստ էր սեղան, և խոհն բերեալ եղեալ ի վերայ
ընթրիք, այլ Պէարուշիս կեղծելով թէ մէն մի կերա-
կուր ունէր թերութիւն ինչ, ձգեաց զբոլորն ի գետին,
և հրամայեաց սպասաւորացն խոհն ի բաց տանել
զայնս. և զայս ամենայն առնէր, ասէ, ի սէր կատա-
րինեայ. քանզի չկամէր զի կերիցէ նա կերակուր՝ որ
չէր բարեպէս պատրաստեալ: Եւ յորժամ կատարինէ
խոնջեալ և քաղցեալ մեկնեցաւ ի տնջել. Պէարուշիս
նմանապէս ահաճ ցուցեալ զինքն՝ ընդ կազմութիւն
անկողնոյն՝ բարեութեամբ ի բաց ձգեաց զբոլոր բարձս
և զսաւանան, որով պարսաւուրեցաւ կատարինէ նստել
ի վերայ սեծաւոյ միոյ. և մինչ այնպէս նստեալ անդ
ընդ բոլոր գիշերն, եթէ երբէք փոքր մի նիհրէր ի քուն,
զարթնոյր խոհն ի բարձրագոչ ազազակէ առն իւրոյ,
որ անպատար՝ կատաղաբար կշտամբէր զծառայն, վասն
որ անպատար՝ կատարինեայ զհարսանեկան անկողին կնոջ
իւրոյ:

Ի վաղիւ անդ՝ շարունակեաց Պէարուշիս զմիևնոյն
ընթացս, բայց միշտ քաղցրութեամբ և սիրազարար
խօսելով ընդ կատարինեայ: Սակայն ի ժամ ճաշու

զարձեալ զամենայն ինչ՝ որ առաջի եղեալ նմա ուտել, համարելով վաղվարապէս պատրաստեալ, ձգեաց ի գետին զճաշն՝ որպէս արարեալ էր զընթերիան. և կատարինէ — ամբարտաւանն կատարինէ, ի վերջոյ սակաւ պնդացաւ խնդրել ի ծառայիցն՝ բերել նմա ի ծածուկ գոնէ՝ սակաւ ինչ կերակուր. այլ ծառայքն կանխապէս խրատեալ ի Պէարուշիոյ, պատասխանեցին թէ առանց գիտութեան և հրամանի տեառն իւրեանց՝ չկարէին տալ նմա ինչ: «Ո՛հ», ասէ, Կատարինէ. «ուրեմն ամուսնացաւ նա ընդ իս՝ սովամահ առնել զիս: Մուրացկանք եկեալ ի դուռն տան հօր իմոյ, գտանեն կերակուր. այլ ես՝ որ ո՛չ երբէք գիտէի զինչ էր ապաչէն զոք վասն իրի ինչ, ահա կարօտ ճեմ կերակրոյ, գլուխ իմ ցաւի յանդուտէնէ, աղաղակ և հայհոյանք՝ պահեն զիս արթուն. կերակուր իմ է կոխ և չիթոթ. և որ առաւել քան զամենայն վշտացուցանէ զիս, զայս ամենայն առնէ ամուսին իմ՝ յանուն և ի սակս սիրոյ իւրոյ առ իս, որպէս ասէ կեղծելով, իբր զի եթէ կերից ես ինչ կամ ննջեցից՝ լինելոց է՝ այն ինձ մահ վայրկենական»: Այսպէս ընդ միջնեցաւ առանձնախօսութիւնն նորա՝ մտանելով Պէարուշիօի, որ չգանկալով ի հարկէ՝ բաղդատել պահել զնա, բերեալ էր զփութը մի կերակուր: «Եւ ո՞րպէս է քաղցրիկ կատարինէ իմ», ասաց նա, «տես սիրելիդ, ո՛րչափ աշխատասէր ումն եմ ես, զի պատրաստեալ եմ կերակուր վասն քոյ իմով ձեռամբ. և հաւատա եմ՝ այս քաղցրութիւն իմ արժանի է շնորհակալութեան: Զինչ, և ո՛չ բաւ մի սիրոյ կամ շնորհակալեաց. ուրեմն չհաճիս ընդ կերակուրդ, և բոլոր նեղութիւն իմ ի զուր էր»: Այնժամ հրամայեաց ծառային, ի բաց տանել զփութ կերակրոյն: Սակայն սատկի քաղց կատարինեայ, որ ոչ սակաւ խոնարհեցուցեալ էր զամբարտաւանութիւն նորա, սակաւ ինչ զնա ասել՝ թէև զայրացեալ ի սրտի, «Շնորհ

հեա, թոյլ տուր ճաշել այժմ». բայց զայս ևեթ բաւական չհամարեցաւ Պէարուշիս, վասն որոյ պատասխանեաց թէ, «Նուազագոյնն իսկ ի ծառայութեանց՝ ընդհանրապէս արժանանայ շնորհակալեաց. ուստի և իմ ծառայութիւն, յառաջ քան ուտել քո զկերակուրդ, պահանջ պարտի գիւր արժանիս»: Ընդ այս կատարինէ պժուարութեամբ և որպէս թէ յակամայից ասաց, «շնորհակալ եմ առ իմ». և ապա թոյլ ետ նմա ամուսին իւր, ուտել զաղքատիկ կերակուրն, ասելով, «կո՛ր ազնիւ կատարինէ իմ, զփափկիկ սիրտ քոյ արծարծելոց է այժ. միայն փութացիր, քանզի պատնաշոց եմք ահա ի տուն հօր քոյ. և անդ խրախանաշոց ի վեր քան զամենեսին՝ ի կերպասեայ պատմուճանս մեր, ի գեղեցիկ գլխարկս, յոսկի մատանիս, ի շղարշս և ի թաւիշս, ի հովահարս և յայլ ամենայն գեղեցկութիւն զարդուց՝ զոյդ զոյդ ի բոլորէն». և կամելով հաւատացուցանել՝ թէ իսկապէս կամէր տալ նմա զայնոսիկ ամենայն փառաւոր իրս, կոչեաց իսկոյն զդերձակ և զկրպակաւորս, որք բերին զնոր զգեստ ինչ, ժպտալեն ևն. զորս պատուիրեալ էր վասն կատարինեայ յառաջագոյն. և յառաջ քան լցուցանելն կատարինեայ զբաղդ իւր, առեալ ետ զպնակս կերակրոցն՝ ծառային՝ տանել ի բաց, ասելով, «Քաղցրի՛կ իմ. ընդէ՞ր այդպէս սակաւ ինչ կերեր միայն»: Յայնժամ կրպակաւորն մատուցեալ առաջի զդլխարկ մի ասէ, «ահա զդլխարկն՝ զոր ազնուութիւն ձեր պատուիրեաց պատրաստել». բայց ընդ այս՝ զարձեալ Պէարուշիս ի սատկի կատաղութիւն բռնեալ, ագեղ և անպիտան է, ասաց, զդլխարկն, անշնորհ և փոքրիկ քան զկեզև ընկուզի. և զարձուցեալ զայն անդ կրպակաւորն, «ի բաց տար», ասէ, «և բե՛ր զլաւ և զմեծագոյն մի»: Եւ թէև կատարինէ ասաց, զի հաճեալ էր ինքն ընդ գլխարկն և ցանկայր առնել զայն, քանզի բոլոր ազնիւ տիկնայք կրէին

զայնպիսի գլխարկս. այլ Պէարուշիս պատասխանեաց՝ թէ կատարինէ ես ունել կարէր զայնպիսի գլխարկ, յորժամ նայնպէս և ինքն լինելոց էր ազնիւ, բայց ո՛չ յառաջ քան զայն: Կերակուրն՝ զոր եկեր, փոքր մի արծարծեալ զոգի կատարինեայ, ասաց. «ով աէր իմ, կարծեմ Թողութիւն ես առլոց ինձ խօսել. սակայն խօսելոց եմ՝ եթէ Թոյլ տացես կամ ո՛չ. չեմ ես մանուկ մի, և ո՛չ նորածին երեխայ, քաջագոյնք քան զքեզ պարտաւորեալ են ունկն դնել բանից իմոց. և եթէ չկամիս զու լսել, ուրեմն բարւոք է վասն քոյ խցանել զականջս»: Պէարուշիս չլսելոյն առնելով ըզբանս բարկութեան կնոջն, քանզի լաւագէս փորձառեալ էր, Թէ անօգուտ էր և ընդունայն հակառակելն ընդ նմա, ասաց. «յիրաւի ճշմարիտ է զոր ասես, զի ոգեղ և անվայելուչ է գլխարկդ. և սիրեմ ես զքեզ վասն չհաճելոյ քո ընդ այն»: «Սիրեա զիս կամ մի սիրեր», պատասխանեաց Կատարինէ. «ես հաւանեալ եմ ընդ գլխարկդ, և կամ զայդ գտանել պարտիմ, կամ ամենևին ո՛չ»: «Ջինչ ասացեր, քաղցրիկդ իմ», ասաց Պէարուշիս, կեղծելով Թէ չէր հասկացեալ զբան նորա, և խոհուն յառաջ կոչեաց զդերձակն ցուցանել զգեղեցիկ շրջազգեստ մի, զոր կարեալ էր վասն Կատարինեայ: Պէարուշիս, որ մտապրեալ էր Թոյլ չտալ նմա ունել՝ ո՛չ զզեստն և ո՛չ զգլխարկն, սկսաւ գտանել ո՛չ սակաւ Թերութիւնս և սխալանս ի շրջազգեստն ես. «ո՛հ, ոգորմած երկինք, զինչ է այս», ասէ, «զինչ կոչես զայս. Թէւ զգեստու, բարեաւ. ասել նմանի այն Թղպանօթի միոյ. ծամածուռ և Թեք է բոլոր մասին, անվայելուչ և անշնորհ»: Դերձակն պատասխանեաց, «զու պատուիրեցեր ինձ, Պարոն, կազմել զայն ըստ նորաձեւութեան արդի ժամանակի». Կատարինէ ես՝ ի վերայ բերելով, հաղիւ տեսեալ էր ինքն զզեստ ինչ՝ ես գեղեցիկ և վայելչագոյն քան զայն:

Բայց այս առաւել պնդացուցեալ զմտապրութիւն Պէարուշիոյ, հրաման տալով վճարել զդին զգեստու և գլխարկին. և ի ծածուկ ներողութիւն հայցելով ի դերձակէ և ի կրպակաւորէն՝ վասն տարօրինակ վարուց իւրոց, զայրագին հայեցուածով և բանիւք՝ վարեաց զնոսա արտաքս ի տանէն, և զարձեալ առ Կատարինէ ասէ. «չէք պոյթ, սիրելի կէա, ևկ զնաստուք միմեանց զգեստով զոր ունիմք արդ. և հրամայեաց պատրաստել իսկոյն զերիվարսն, ասելով Թէ ըստ որում ծօրեներորդ ժամ էր առաւօտու, յայնժամ, հասանելոց էին նորա ի տուն Բապտիստայ՝ ի միջօրէի ի ժամ ճաշու: Արդ՝ ո՛չ Թէ ծօրեներորդ ժամ էր առաւօտու՝ յորժամ ասաց զայս Պէարուշիս, այլ անցեալ էր արդէն կէսօր. վասն որոյ Կատարինէ համարձակեցաւ ասել, Թէև երկիւղածութեամբ լինչ. քանզի զրեթէ միանգամայն նուաճեալ էր սիրտ նորա, ի վայրագ և ի կատաղի բնաւորութենէ ատն իւրոյ. «Թոյլ տուր ինձ հաւաստեցուցանել զքեզ, աէր իմ, զի երկրորդ ժամ է այս զկնի միջօրէի, և չկարեմք ժամանել ի տուն հօր իմոյ՝ յառաջ քան զժամ ընթրեաց»: Այլ Պէարուշիս՝ հաստատեալ էր ի մտի՝ բոլոր բոլորովին նուաճել զԿատարինէ, ի հնազանդութիւն կամաց և բանից իւրոց, յառաջ քան ատնէն զնա ի տուն հօր իւրոյ. վասն որոյ, որպէս Թէ իշխող էր ինքն և աէր արեգական և ժամանակի ևս, ասաց Թէ չէր փոյթ ինքեան Թէ քանիերորդ ժամ էր, պարտէր այնմ չլինել նոյն ժամ՝ որպէս ինքն ցանկայր. և «որովհետև», ասէ, «տակաւին հակառակ ես զու ամենայնի՝ զոր ինչ ասեմ ես, չկամիմ գնալ ես այսօր. և եթէ երբէք գնալ ցանկացայց, գնալոց եմ միայն յոր ինչ ժամու՝ զոր ես ասացից Թէ է այն»: Յայլ

ամբարտաւան միաք կատարինեայ՝ նուաճեալ էր ահա բոլորովին ի հլուխին հնազանդութեան. և բնաւ չանցանէր անգամ ի միտս նորա, հակառակել բանից նորա: Եւ ի վերջոյ՝ յորժամ յուղի անկան գնալ առ Պաղտա, ի ճանապարհի անդ ևս մերձ ի մերձ էր կատարինէ գնել զինքն ի վանդ, վերադառնալոյ ի տուն. միայն յուշ ածելով ամուսնոյ իւրում թէ արեգակն էր այն. մինչդեռ Պէտրուշիո պնդէր թէ լուսինն էր՝ որ փայլէր այնպէս պայծառութեամբ ի միջօրէի անդ. «Լաւ, տիկին իմ», ասէ, «երբեմն յարև որուդ մօր իմոյ. և այդ ես եմ, որպէս գիտես, կամ ընդունիլ պարտիս զի լուսինն է այդ, կամ ասացեալք են, կամ այլ ինչ զոր ես ցանկամ, կամ վերադառնալոյ եմք ի տուն»: Եւ կսպծեաց որպէս թէ դարձուցանել կամէր զզուխս երիվարացն յետս: Բայց Կատարինէ, ոչ այլ ևս ժանտարնոյթ կատարինէ, որ էր երբեմն, այլ հնազանդ և հլու կին մի արդ, պատասխանեաց. «Թո՛ղ գնասցուք ազաչեմ, մինչդեռ բաւական ճանապարհ նկեալ եմք արդ. արեգակն է այն, կամ լուսին, և կամ որ ինչ և կամք են քոյ. եթէ հաճեսցիս կոչել իսկ զայն ճրագ մի մանեղէն, ուրեմն զի միևնոյն համարեսցի այն և ինձ»: Պէտրուշիո, առ ի սուտել զհաւատարմութիւն ուխտին, ասաց կրկին՝ թէ լուսինն էր այն»: Գիտեմ ես զի լուսինն է», պատասխանեաց Կատարինէ, «Սուտ խօսիս. փառաւոր արեգակն է այն», ասաց Պէտրուշիո: «Այո՛, ուրեմն փառաւոր արեգակն է», պատասխանեաց Կատարինէ: «Բայց յորժամ դու ասես արեգակն է, չկարէ այն զոլ արեգակն», ասաց Պէտրուշիո: «Ուրեմն զինչ կամիս կոչել զայն», պատասխանեաց Կատարինէ, «զոր ինչ անուն և համեսցիս տալ այնմ, Կատարինէ ես ևս, յայն անուն ունի միշտ կոչել զայն»: Այսպ թոյլ ետ նմա շարունակել զճանապարհորդութիւն. բայց առ ի կրկին փորձել և տես-

նանել թէ տակաւին էր արդեօք հլութիւն բնաւորութեան նորա, ի գնալն իւրեանց՝ հանդիպեալ ի ճանապարհի ծերունի առն միոյ, ուղղեաց Պէտրուշիո զբան իւր առ նա, որպէս թէ ծերունի այրն էր մատաղատի կին ումն, և ասէ. «Ողջոյն քեզ, ազնիւ տիկին», և դարձեալ առ Կատարինէ՝ եհարց թէ երբէք տեսեա՞լ էր նա զայնպիսի գեղեցիկ տիկին մի, և սկսաւ գովել զշուշանափայլ և զվարդակարմիր այտս նորա, համեմատել զաչս նորա՝ երկու շողշողուն աստեղաց. և կրկին ուղղեալ զբան իւր առ այրն՝ ասէ, «գեղանի և ազնիւ տիկին, կրկին ողջոյն քեզ». և առաց ցկատարինէ. «Փաղցրիկ իմ կատարինէ, մատո՛ր և զրկեալ համբուրեա զնա ի պատիւ չքնաղ գեղեցկութեան նորա»: Կատարինէ՝ որ այժմ բնաւին բոլորովին ընկճեալ նուաճեալ էր ի հլութիւն, խոկոյն համաձայնեալ կարծեաց առն իւրոյ, նմանօրինակ ձեւով խօսել սկսաւ առ ծերունի այրն ասելով, «Ո՛վ դու քաղցրիկ կոյս, որ նմանիս կիսաբաց կակոնի միոյ վարդի, և որոյ այդպէս գեղեցիկ են դէմք, և շնորհալի կերպարան, ո՛ւր երթաս և ո՞ւր է բնակութիւն քոյ. երանելի են ծնողք քոյ, որք ունին քոյանման չքնաղ զուսաւ մի»: «Բաւէ, զինչ խօսիս, Կատարինէ», ասաց Պետրուշիո. «միթէ մատաղատի ես լեալ. ծերունի այր մի է սա, նիհար և խորշոմեալ ի դէմս, և ոչ օրիորդ մի որպէս ասես»: Ընդ այս Կատարինէ՝ ասաց խոկոյն, «ներեա՛ ինձ ազաչեմ, ո՛վ այր ծերունի. աչք իմ այնպէս շլացեալ են ի լուսոյ արեգականդ, զի յոր ինչ և հայիմ, երևին այնք կանաչագեղ. տեսանեմ ահա, զի պատկառելի ծերունի ումն ես, և յուսամ ներելոց ես ինձ վասն սխալութեան իմոյ»: «Ա՛յ, ներեա՛, ո՛վ բարի նախահա՛ւ», ասաց Պետրուշիո. «և շնորհեա՛ յայտնել մեզ թէ ո՞ւր երթաս»: Ծերունի այրն պատասխանեաց, «Բարի պատանի, և զուարճախօս տիկին. այս նորօրինակ հանդիպումն

մեր իրերաց՝ ոչ սակաւ զարմացուցեալ է զիս: Այնուն իմ՝ Վլինսէնշիօ է. և զնամ ես յայցելութիւն որպէս իմոյ՝ որ բնակի ի Պադուա»: Յայնժամ Պէարուշիօ՝ ծանեաւ, զի այրն ծերունի՝ էր հայր Լուսէնշիօի՝ պատանւոյ միոյ, որ ամուսնանալ կամէր ընդ Բիանկայ կրասեր զաւեր Բապտիստայ. և ընդ այս՝ մեծապէս ուրախացոյց զսիրտ Վլինսէնշիօի, յայտնելով նմա թէ որպէ նորա՝ ամուսնանալ ունէր ընդ ճոխ օրիորդի միոյ. և ապա սկսան ի միասին ճանապարհորդել, մինչ եկին հասին ի տուն Բապտիստայ, ուր ժողովեալ կային մեծ բազմութիւն հրաւիրականաց, խրախճանականից գալ հանդիսի հարսանեաց Բիանկայ և Լուսէնշիօի. քանզի ծերունին Բապտիստա՝ ամուսնացուցեալ զկատարեալ, յօժարութեամբ հաճեալ էր այլ և ընդ ամուսնութիւն միւս զաւեր իւրոյ:

Բապտիստա՝ բազում ուրախութեամբ ողջունեաց զղաչուստ նոցա՝ ի հանդէս հարսանեացն, ուր ներկայ էին նաև այլ մի նորապսակ ամոլք:

Լուսէնշիօ՝ ամուսին Բիանկայ, և Հօրտէնշիօ միւս ի նորոյ ամուսնացեալ այրն, չկարէին զսպել զինքեանս ի խօսելոյ զդէպս բանս ինչ կատականաց, վերաբերութեամբ կռուատէր և ժանտ բնաւորութեան կնոջ Պէարուշիօի. և երկոքին սիրալիր փեսայդ՝ երևէին մեծապէս հրճուեալ ի սիրտ, զի ընտրեալ էին ինքեանք, զհեզաբնոյթ և զբազդրաբարոյ կանայս, ծիծաղելով ի վերայ ոչ այնչափ բարի ընտրողութեան Պէարուշիօի: Պէարուշիօ ոչինչ փոյթ առնէր՝ զկատակէ և զծաղուց նոցա. այլ յորժամ յետ կերակրոյն՝ ի բաց մեկնեցան աւկնայքն ի սեղանոյն, եաես նա զի Պադուիսա առնէր իւր ևս՝ միացաւ ընդ նոսա ի բանս կատականացն ընդդէմ իւր: «Ի զուր է քեզ ուրանալ, սիրելի փեսայ իմ», ասէր Պադուիսա. «զի թէև տխրելի է, բայց ունիս զու քեզ զյոյժ անհնազանդ և զկռուատէրն՝ ի

բոլոր կռուատէր կանանց»: «Դու այդպէս կարծես, բայց ես ասեմ ոչ», ասէ Պէարուշիօ. «և ի հաստատութիւն ճշմարտութեան բանից իմոց, թոյլ առաքեսցուք մէն մի կոչել իւրաքանչիւր զիւր կին՝ գալ ասա. և նա՝ որոյ կին ի լսելն զկոչումն՝ անպանդաղ հնազանդութեամբ գայ իսկոյն, ստանալոց է պարգև իմն, զոր միւս երկուք պարտաւորեսցին տալ նմա»: Նորապսակ երկու ամուսինքն՝ հաճեցան ընդ այս յօժարութեամբ. քանզի անկասկած էին միանգամայն, թէ հլու և հեզաբնոյթ սիկնայք իւրեանց, ցուցանելոց էին ևս առաւել շուտափոյթ հնազանդութիւն, քան զամբարտաւան և զկամակորն կատարելոյ. և վասն որոյ առաջարկեցին զրաւ իմն քսան գահեկանաց՝ գնալ պարգև որում արժանի գտանէր այնմ: Սակայն Պէարուշիօ՝ խնդամտութեամբ իմն յայտնեաց, թէ զայդչափ զրամս զրաւ արկանելոց էր ինքն, ի վերայ որսական բազէի միոյ կամ շան. այլ վասն կնոջն իւրոյ քսանիցս առաւել քան զայդ: Լուսէնշիօ և Հօրտէնշիօ՝ հաճեցան խոյն առնել զգումար զրաւոյն հարիւր գահեկանս. և կոչ առնել զնա գալ առ Բիանկա՝ նախ Լուսէնշիօ առաքեաց զծառայ մի առ Բիանկա՝ կոչել զնա գալ առ ինքն: Բայց ծառայն վերադարձաւ և ասէ. «տէր իմ. սիկնին ասէ, զբաղեալ է ինքն առ ժամս և չկարէ գալ»: «Զիո՞նչ. ասէ թէ զբաղեալ է, չկարէ՞ գալ», ասաց Պէարուշիօ. «այդպիսի՞ ինչ լինել պարտի պատասխանի կնոջ միոյ՝ առ այր իւր»: Սակայն ծիծաղեցան նորա ընդ Պէարուշիօ. և ասեն, բարեաւսր համարեսցի նա, եթէ չառաքեսցէ կատարելոյ, զվատթարագոյն ինչ պատասխանի քան զայն: Յայնժամ Հօրտէնշիօ՝ երկրորդն ի կարգի՝ առաքեաց կոչել զիւր կին: «Գնա՛», ասաց ցծառայն, «և աղաչանս զկին իմ գալ ասա»: «Ո՛հ, ո՛հ, աղաչելով կոչես զնա, ասաց Պէարուշիօ, ուրեմն գալոց է նա անխափան»: «Սակայն ես կարծեմ», ասէ Հօրտէնշիօ, «թէ կին

քոյ և ոչ աղաչանաց քոց ունի լսել »։ Այլ այս քա-
ղաքավար ամուսին՝ ոչ սակաւ այլազունեցաւ ապայու-
սութեամբ, յորժամ վերադարձաւ ծառայն՝ առանց տիկ-
նոջ իւրոյ. և ի հարցանելն թէ զինչ էր այն. ՚ուր էր
կին իւր. « ահ՛ր իմ », պատասխանեաց ծառայն,
« տիկին իմ ասէ, Թուի ինքեան թէ կոչես զինքն խաղ
ինչ առնել կամ կատակ, վասն որոյ չկամի գալ, և
պատուիրէ զի գու գնասցես առ ինքն »։ « Բարէ »,
ձայնեաց Պէտրուշիօ, « վաղվաղ և ես վաղվաղագոյն
է այս. և ապա ինքն առաքեաց զծառայ իւր ասելով,
« գնա՛ թշուառական և յայտնեա՛ տիկնոջ քոյ, զի հրա-
մայեմ ես նմա իսկոյն գալ առ իս »։ Բազմահանդէս
հաղիւ թէ ժամանակ ունէին խորհել անդամ ի մտի,
թէ չունի կատարինէ հնազանդել այնպիսի խիստ հրա-
մանի առն իւրոյ, յորժամ Բապտիստա բոլորովին ապ-
շեալ ի զարմանաց՝ աղաղակեաց, « բարէ, զինչ է այս.
տեսէ՛ք, գայ ահա կատարինէ ». և մտեալ կատարի-
նեայ ի սենեակն՝ մեզմով և հլութեամբ ասաց ցՊէ-
տրուշիօ, « զինչ են կամք քոյ, տէր իմ, զի առաքեցեր
կոչել զիս »։ « Ո՞ւր է քոյրդ և կին Հօրտէնշիօի »,
եհարց Պէտրուշիօ։ Կատարինէ պատասխանեաց՝ թէ նըս-
տեալ էին նոքա առ վաճառանաւ գահլճին, և զրուցէին
ընդ միմեանս։ « Գնա՛ ուրեմն բեր զնոսա ասա առ
մեզ », ասաց Պէտրուշիօ. և Կատարինէ առանց խօսելոյ
բան ինչ, եկ կատարել զհրաման առն իւրոյ։ « Եթէ
գոն հրաշք, ասա է տեսանել ահա հրաշք մի », ասաց
Լուսէնշիօ. « բայց զինչ նշանակէ արդեօք այս »։
« Զինչ նշանակէ », ասաց Պէտրուշիօ, « նշանակէ այդ
խաղաղութիւն, սէր և անդորր կեանք, հպատակութիւն
կնոջ բանից առն իւրոյ, կամ համառօտիւ ասել, նշա-
նակէ զայն ամենայն ինչ որ քաղցր է և երջանկաւէտ »։
Հայր Կատարինեայ՝ ցնծութեամբ հրճուեալ միանգամայն
ընդ զարմանալի բարեխոհութիւնն՝ զոր տեսանէր արդ

ի գաւառ իւրում, « որդեակ իմ Պէտրուշիօ, կեցցես
դու » ասէ. « յիրաւի և արդարապէս արժանի ես դու
ստանալոյ զպարգև գրաւոյն. բայց յաւելից և ես այլ
ևս քսան հազար դահեկանս՝ յօժիտ կատարինեայ.
քանզի այնպէս փոխակերպեալ է նա, զի չէ նա որ ինչ
էրն երբեմն, այլ նոր գուստր մի երեւի նա ինձ »։
« Համբե՛ր », ասէ Պէտրուշիօ. « ապացուցանել ունիմ
ես և ես լաւագոյն՝ զնորագիւտ հնազանդութիւն նորա,
և զիրաւունս իմ գտանելոյ զպարգևն ». և Կատարինէ
մտեալ արդ ի ներքս, հանդերձ երկու տիկնամբքն,
« տեսէ՛ք », ասէ Պէտրուշիօ, « գայ ահա նա բերելով
ընդ իւր զանհնազանդ կանայս ձեր՝ որպէս կալանաւորս՝
ի շղթայ քաղցրիկ համոզանաց իւրոց »։ Ապա գարձեալ
առ Կատարինէ, « Սիրելի՛դ իմ », ասէ, « գլխարկդ
այդ զոր ունիս ի գլուխ, չերեւի վայելուչ զիմաց քոց.
առ և ի բաց ձգեա զայն »։ Կատարինէ ի բաց առեալ
իսկոյն զգլխարկն՝ ձգեաց ի գետին։ « Ո՛հ, զինչ է
այս », աղաղակեաց կին Հօրտէնշիօի. « պատուհաս իմ
թո՛զ հառաչանք լիցի, եթէ երբէք խոնարհեցայց ես
առ այսպիսի յիմարական հնազանդութիւն »։ Բիանկա
ևս ձայնակից եղև վերջնոյդ՝ ասելով նմանապէս. « Ո՛հ,
որպիսի՛ յիմարական հնազանդութիւն է այս »։ Ընդ
այս ամուսին Բիանկայ պատասխանեաց, « երանի՛ թէ
դու ևս ցուցի՛ր էիր զայսպիսի յիմարական հնազան-
դութիւն. քանզի խնաստուն անհնազանդութիւն քոյ՝
պատճառ եղև ինձ կորուսանելոյ զմի հարիւր դահե-
կանս »։ « Այդ ցուցանէ թէ մեծ է յիմարութիւն քոյ »
պատասխանեաց Բիանկա. « զի գրաւ արկեր ի վերայ
պարտուց հնազանդութեան իմոյ »։ Ցայնժամ ասաց
Պէտրուշիօ առ կին իւր. « Սիրելի՛ իմ Կատարինէ,
պատուիրեմ քեզ ասել այսոցիկ կամակոր կանանց,
թէ զինչ են պարտաւորութիւնք նոցա՝ առ ամուսինս
իւրեանց »։ Եւ ի զարմանս և յապշութիւն բոլոր ներկայ

եղելոց անդ, բոլորովին բարեփոխեալ սիրկինս այս, խոսեցաւ կորովաբան ճոռոմութեամբ՝ ի գովեստ սիկնավայել հլութեան և պարտուց հնազանդութեան, որպէս արդէն ցուցեալ էր ինքն կամաց Պէտրուշիո առն իւրոյ։ Եւ այսպէս՝ կատարինէ միւսանգամ եղև անուանի և հռչակաւոր, ոչ որպէս մինչ ցարդ եղեալ էր կատարինէ Ժաճուտաբնոյր՝ անուամբ, այլ կատարինէ հլու, և հնազանդագոյնն ի բոլոր կանանց Պաղտա քաղաքի։

ՀԱՄԼԷՏ

Գրարուլ՝ թագուհի Դենեմարքայ՝ յանկարծական մահուամբ Համլէտ արքայի այրիացեալ, յառաջ քան զլրանալ ամսոց երկուց՝ ամուսնացաւ ընդ Կլավիոս տաղեր իւրոյ. և այս շուտափոյթ և վաղվաղ կրկնամուսնութիւն, համարեցաւ ի բոլոր ժողովրդոց՝ որպէս տարօրինակ և անխոհեմ գործ իմն, մանաւանդ հակառակ մարդկային աղնիւ զգացմանց, համ յոռեգոյն իսկ ինչ քան զայն. քանզի Կլավիոս ոչ իւիք երբէք բերէր գնահատութիւն հանդուցեալ ամուսնոյ նորա՝ թէ ըստ մտաւոր՝ և թէ ըստ անձնական որպիսութեանց իւրոց. այլ էր արչաւի քաջահռչակ ըստ արտաքին երեւութի, այնչափ և անարժան ըստ բուռոյ բնաւորութեան իւրոյ. և ի միտս ոչ սակաւուց սմանց կայր կասկած, թէ նա էր, որ ի ծածուկ առիթ էր եղեալ՝ մահուան եղբօր իւրոյ, առ ի ամուսնանալ ընդ կնոջ նորա, և ակրել աթոռոյ թագաւորութեանն, յափշտակելով զիրաւունս պատանւոյն Համլէտայ եղբօրորդւոյ իւրոյ, որ ըստ օրինի ժառանգ էր աթոռոյն։

Սակայն այս անվայելուչ արարք թագուհւոյն՝ ոչ ուրուք այնպէս խոր ապաւորութիւն արար ի սրտի, որքան մտատագաւ իշխանին՝ որդւոյ նորա՝ պատանւոյն Համլէտայ, որ հոգւով չափ սիրէր և մեծարէր զիշատակ հօր իւրոյ, և որ ունելով յոյժ պատուասէր և զգայուն բնաւորութիւն իմն, և սովոր գովով ինքնին յամենայն կէսս՝ գործել զամենայն ինչ անվրէպ վայելչասիրութեամբ, սաստիկ և չարաչար խոցեցաւ սիրտ նր, ընդ անվայելուչ և անարժան ընթացս Գրարուդայ մօր իւրոյ. այո՛, այնչափ չարաչար յոյժ, մինչ կի մտասմբ ի պատճառս սաստիկ արտմութեան ընդ մահ հօր իւրոյ, և մտասմբ ի սակս ամօթոյն՝ զոր զգայր ընդ ամուսնութիւն մօր, միայն նորա պատեալ պաշարեալ էր բոլորովին ի սաստիկ մելամաղձոտութեան, որպէս ի սուտեր իմն աղջամղջին։ Հատեալ էր ծիծաղ՝ յերեսաց նորա և գեղ պիմացն թարշամեալ։ Սովորական հաճոյք և զուարճութիւնն՝ զորս վայելէր յընթերցմանց գրոց, ի բաց լքան ի նմանէ. և իշխանավայել զբօսանք մարտիամարզից և որսորդութեան՝ պատշաճ հասակի պատանեկութեան նորա, ոչ այլ ևս քաղցր էին ի քիմս նորա։ Աշխարհ բոլորովին առեալ էր եղեալ նմա. քանզի թուէր նմա այն՝ որպէս պարտէզ մի փշալից, ուր բոլոր ծաղկունք հեղձեալ էին ի փշոց անտի, և ուր ոչ այլ ինչ քան մոլեխիղն և բոյսք վնասակար աճել կարէին միայն։

Ոչ թէ զրկումն իւր յաթոռոյ թագաւորութեան հօր իւրոյ Համլէտայ, որ արդար ժառանգութիւն էր նր, ծանրացեալ էր այնչափ ի վերայ մտաց պատանւոյն, թէև վասն վհատիա և պատանեկաց իշխանի միոյ չէր այս նուազ ինչ արհամարհութիւն, այլ որքան՝ զայն նուազ ինչ արհամարհութիւն, զոր ունայն առաւել պատճառագուշանէր զսիրտ նորա, և որ

բարձեալ էր ի նմանէ իսպառ զզուարճութիւն մտաց. այն էր՝ զի ի մոռացօնս եղ մայր իւր այնպէս փութով զյիշատակ հօր իւրոյ. և ահ, այնպիսի հօր միոյ, որ լեալ էր նմա քաղցր և սիրագորով ամուսին մի. և ինքն իսկ մայր իւր՝ ցուցեալ էր զանձն՝ գոլ նոյնպէս սիրագորով և հնազանդ կին մի, որ սովոր էր խանդագատել զնովաւ. որպէս թէ սէր իւր՝ իւրովի բղխէր առ նա. և ահա յառաջ քան զլրանալ ամսոց երկուց, կրկին ամուսնացեալ էր նա. — ամուսնացեալ ընդ տագեր իւրոյ, ընդ եղբօր մեռեալ ամուսնոյ իւրոյ, որ թէպ զի էր անվայելուչ և ապօրէն ամուսնութիւն՝ ի պատճառս մերձակայ ազգականութեանն, այլ և առաւել անվայելուչ և քամահելի էր այն, վասն անպարկիշտ շուառափութեանն՝ որով զանգլի առեալ էր այն, մանաւանդ զի մայր իւր ծանօթ էր անարքայավայել բարուց առնն՝ զոր ընտրեալ էր գոլ բաժանակից՝ աթոռոյ իւրոյ և անկողնոյ: Այս էր ահա, որ ի վեր քան զկորուստ բազում աթոռոց և թագաւորութեանց՝ կատէր զհոգի պատուասէր իշխանիս, և պատեալ էր այնպէս ամպով թախծութեան զմիտս նորա:

Ի զուր էր ամենայն ջան՝ զոր ի գործ եդին Գերտրուդ մայր նորա և թագաւորն՝ առ ի զբօսեցուցանել զնա և փարատել ի մտաց նորա՝ զանհնարին տրամութիւնն: Զգենոյր նա տակաւին զհանդերձս սուգ թոյր, ի նշան սգոյ ընդ մահ հօր իւրոյ. և զայս հանդերձ սգոյ՝ ոչ երբէք ի բաց եդեալ էր յանձնէ և ոչ իսկ ի պատիւ մօր իւրոյ՝ յաւուր հարսանեաց նորա, և ոչ համոզեալ էր նա՝ հանդիսակից իւիք խնճոյից և խրախճանաց, զտեղի կալեալ յայդմ՝ (որպէս թուէր նմա), ամօթալի աւուր:

Նաև, այն ինչ որ առաւել քան զամենայն ամբոխէր զմիտս պատանի իշխանին՝ էր չկարելն նորա առնել ճշդիւ՝ զնրպէս և զպիարդն եղանակի մահուան հօր

իւրոյ: Կլաւդիոս յայտնեալ էր, թէ իբ մի թունաւորեալ էր զնա. այլ Համլէտ կասկածէր, թէ Կլաւդիոս ինքնին իցէ իմն այն. կամ պարզ ևս ասել, թէ նա ինքն սպանեալ էր զհայր իւր, առ ի յափշտակել զաթոռ նորա, և զի նոյն իբ՝ արդ նստէր ի վերայ աթոռոյ նորա:

Արդ, թէ որչափ ինչ ուղիղ էին արդիօք կասկածանք իւր, և թէ արդիօք մայր իւր ևս համախոհ էր ի գործ սպանութեանն, կամ հաճութեամբ և գիտութեամբ նորա էր եղեալ՝ որ ինչ եղեալն էր. այսոքիկ էին ահա՝ որք անդադար խռովէին և ի շփոթի ունէին զմիտս նորա:

Շուտով իմն հասեալ էր յունկն Համլէտայ, իբր զի, զինուորք ոմանք ի պահպանութեան իւրեանց ի գիշերի, յերիս գիշերս յաջորդաբար, ի վերայ տագաւապարի որ առ պրան պալատի արքային, տեսեալ էին ի հասարակ գիշերի զուրուական երևոյթ իմն՝ յայժմհան մեռեալ արքայի՝ հօր իւրոյ: Երևէր տեսիլն յաճախ ընդ մենայն գիշերի՝ սպառազինեալ յոտից մինչ ցգլուխ ի միևնոյն զրահ, զոր սովոր էր կրել ի կենդանութեան իւրում. և տեսողքն՝ (յորոց մին էր Հօրէշիօ, սրտաբուխ Համլէտայ), բոլորեքին համաձայն էին կից բարեկամ Համլէտայ, ընդ որս եղանակի և թէ ի վկայութեան իւրեանց, թէ ի մասին եղանակի և թէ ի մասին տեղւոյ երևման այնորիկ. այսինքն թէ, երևէր այն ճշդիւ յընդմիջել գիշերոյ, թէ՛ երևէր այն զալկահար ի դէմս իւր և յաւէտ թախծեալ և տրամեալ քան բարկացեալ. թէ մօրուք նորա երևէր ահարկու, և գոյն այնորիկ սպիտակախառն տեսաւ, որպէս էրն ի կենդանութեան նորա. թէ յորժամ խօսեցեալ էին առ նա՝ չէր պատասխանեալ ինչ. թէև անգամ մի՝ որպէս թուեալ էր նոցա՝ ամբարձեալ զգլուխ իւր, արարեալ էր շարժմունս ինչ որպէս թէ կամէր խօսել. բայց յայդմ կէտի հաւ առաւօտու խօսեցեալ, փութացեալ էր այն իսկոյն ի բաց, և անհետութացեալ յաչաց նոցա:

Պատանի իշխանն, ոչ սակաւ յապշութիւն կրթեալ

ընդ տարօրինակ պատմութիւն իրին, որ՝ ի համաձայն վկայութեանց ոչ տեղի տայր երկբայելոյ, եղերեաց ի մահ թէ հոգի հօր իւրոյ էր, զոր տեսեալ էին նոքա. և հաստատեաց ի միտս իւր հսկել յայնմ պիշերի ընդ պահապան զինուորացն, որպէս զի գուցէ և ինքն տեսանել կարիցէ զայն. քանզի խորհէր յանձն իւր թէ այսպիսի երևոյթ մի՝ ոչ ի զուր տեսանելի առնէր զինքն, այլ թէ կամէր առնել զյայտնութիւն ինչ. և զի թէև մինչ ցայնժամ լուռ էր եղեալ, սակայն խօսելոց էր ընդ ինքեան. և սմին իրի, անհամբեր սպասէր ժամանման պիշերոյ:

Յորժամ ի վերայ եհաս պիշեր, հսկել սկսաւ նա ի միասին ընդ Հօրէշիս բարեկամի իւրոյ, և Մարսիլոսի միոյ ի պահապանաց պիշերոյն, ի վերայ տապատապարի անդ, ուր ուրուական երևոյթն՝ սովոր էր շրջել: Եւ պիշերն ցուրտ գոլով, և օդ յոյժ սառն, Համլէտ և Հօրէշիս և ընկեր նոցա, սկսան խօսակիցել զսաստկութենէ ցրտոյն. այլ յանկարծ Հօրէշիս լսեալ զթնդել բանին, յայտնեաց թէ մատչէր ահա տեսիլն ուրուական:

Համլէտ՝ ի տեսանելն զհոգի հօր իւրոյ, զառաջինն զգաց զսաստիկ զարմանս և զսոսկումն երկիւղի. և անդէն և անդ պատառել սկսաւ զօդնութիւն երկնից՝ ի պաշտպանութիւն անձին. քանզի չգիտէր բարի՞ ոգի էր այն թէ չար. ի բարւո՞յ մասին էր եկեալ նա՝ թէ չարի. սակայն սակաւ առ սակաւ սկսաւ սրտասնդիլ. և հայր իւր, (քանզի այդպէս թուէր նմա՝ թէ հայր իւր էր այն), սկսաւ նայիլ առ նա այնպիսի ողորմագին աչօք, որպէս թէ ցանկայր խօսել ընդ նմա. և այնչափ նմանէր նա ամենայնիւ ինքեան՝ յորժամ ի կենդանութեան. զի Համլէտ չկարաց այլ ևս զսպել զինքն, յուզեցեալ զրան իւր առ նա: Կոչեաց զնա յանուանէ Համլէտ թագաւոր, հայր, և սկսաւ աղաչել զնա յայտնել

ինքեան, թէ ընդէ՞ր թողեալ էր զգերեզման իւր՝ ուր հանգուցեալ էին զնա ի խաղաղութեան, և ի բաց եկեալ՝ այց առնել եկեալ էր զարձեալ, երկրի և փայլման լուսնի. և եթէ է՞ր ինչ զոր կարէին նոքա առնել ի հանգստութիւն հոգւոյ իւրոյ, պազատէր զնա յայտնել զայն: Ընդ այս՝ նշանացի արար հոգին առ Համլէտ, իբր զի ցանկայր զի հեռացին նոքա փոքր մի անտի, առ ի լինել առանձին. և թէև Հօրէշիս և Մարսիլոս տարահամոզել սկսան զպատանի իշխանն՝ չառնել այնպէս, քանզի երկնչէին, թէ գուցէ չար հոգի մի իցէ այն՝ և հեղձուցանիցէ զնա ի ծովու, որ չէր հեռի անտի. կամ տարեալ զնա ի գլուխ զարհուրելի սեպացեալ ժայռի ինչ՝ փոխակերպեսցէ զինքն առ այնպիսի ահռելի կերպարան ինչ, որոյ տեսութիւն՝ բոլորովին մտաթափ արասցէ զիշխանն. սակայն Համլէտ, ունկնդիրը եղև ոչ խրատուս և ոչ աղաչանաց նոցա. զի հազիւ փոյթ ունելով վասն կենաց իւրոց, չունէր և երկիւղ կորուսանելոյ զայն. իսկ վասն հոգւոյ իւրոյ, ասաց, զինչ կարէ առնել այնմիկ հոգի մի, մինչդեռ լինելութիւն այնորիկ չէ մահկանացու: Եւ զգալով զանձն քաջասիրտ և աներկիւղ՝ իբրև զահաճ մի, ել զերծաւ ի ձեռաց նոցա, թէև զամենայն ջան ի կիր եղին նոքա արգելուլ զնա. և սկսաւ գնալ ուր առաջնորդէր նմա ոգին:

Եւ յորժամ առանձնացան նոքա ի միասին, խզեաց յայնժամ հոգին զլռութիւնն, և յայտնեաց զի էր ինքն հոգի Համլէտայ հօր նորա. և զի անգթութեամբ սպանեալ էր նա. և պատմեաց իսկ զհանգամանսն սպանութեան: Ասաց զի եղբայր իւր էր՝ որ սպանեալ էր զնա՝ վասն իւրացուցանելոյ զաթոռ իւր և զանկողին: Թէ մինչ ննջէր նա ի պարտիզի պալատի իւրոյ, որպէս սովոր էր առնել յամենայն աւուր ի միջօրէի, այս պատճառաւ եղբայր՝ մատուցեալ գոլարար և մեղմով առ նա, հեղեալ էր յունկն նորա զհիւթ թունաւոր բուսոյ ինչ,

որ այնպէս մահաբեր է կենաց մարդոյ. զի երագ որպէս անդիկ սոխի այն յերակս մարմնոյ, շուտափոյթ ներգործութեամբ նեխէ զարիւնն, և տարածէ ի վերայ մարթոյ մարմնոյ, որպէս կեզև ինչ՝ զկոյս բորոտութեան: Այսպէս ի ննջելն իւրում, ասաց, ի ձեռն եղբօր իւրոյ զրկեալ էր նա յաթոռոյ իւրմէ, ի թագուհւոյ և ի կենաց. և վասն որոյ երկնեցոյց զՀամլէտ, զի եթէ երբէք սիրեալ էր զհայր իւր, ուրեմն պարտէր նմա վրէժխընդիր լինել՝ վասն սպանութեան նորա: Ապա ողբաց և աւաղեաց հոգին՝ առ որպի իւր, զի մայր նորա այնպէս անկեալ էր ի պատուոյ անձին և յառաքինութենէ, մինչ ամուսնանալ ընդ սպանողի նորա, և տակ ամուսնական սիրոյ իւրոյ առ նախկին այր իւր. այլ տակաւին զգուշացոյց զՀամլէտ, զի զօր ինչ միջոց վրէժխնդրութեան և ի ձեռն առնուցու նա ընդդէմ՝ հօրեղբօրն, հրաժարեսցի բնաւ ի վնասակար խիք անձին մօր իւրոյ, թողլով զնա պատասխանի երկնից և առաքեանց խայթի խղճմտանաց իւրոց: Եւ Համլէտ լուեալ զայս ամենայն՝ խոստացաւ հետևել ամենայնիւ պատուիրանաց հոգւոյն:

Ի մեկնիլն ուրուական երևութին ի բաց, Համլէտ անդանօր արար ի մտի խոստումն անդառնալի, զի զամենայն զօր ունէր ի յիշողութեան մտաց իւրոց, զամենայն զօր ուսեալ էր ի գրոց և ի նշմարանաց՝ բոլորովին տալոց էր մոռացութեան. և մի միայն և մի ինչ յուշի պահելոց էր ևս. և այն էր՝ զօր հոգի հօր իւրոյ առնել պատուիրեալ էր նմա երկնմէ: Եւ յորժամ գարձաւ նա առ ընկերսն իւր, պատմեաց զամենայն զօր խօսեցեալն էր և լուեալ՝ Հօրեղբօ բարեկամի իւրում՝ միայն, և պատուիրեաց երկոցունց՝ նմա և Մարսիլոսի միանգամայն՝ ի ծածուկ պահել զօր առեալ էին ի գիշերին յայնմիկ:

Սարսափն զօր զգաց Համլէտ՝ ընդ առնել ուրուական երևութին, այնպէս սաստիկ ներգործեալ էր ի նմա, զոլով նորա արկէն նուաղեալ ի սարսիլ և շփոթեալ ի միաս, զի մերձ ի մերձ էր կացուցանել զնա բոլորովին մտազուրկ. սակն իրի, երկնչելով թէ գուցէ յարատևեսցէ ներգործութիւնն այն, և հետևապէս գրաւեսցէ զուշացութիւն այլոց առ ինքն. և հօրեղբայր իւր կասկած առեալ ի մտի, թէ իրապէս առաւել ինչ գիտէր նա զանցից սպանութեան հօր իւրոյ, քան որչափ երևէր գիտել, և երկնչէր չարիս ինչ առնել նմա, որով հոգալոց էր ի հարկէ՝ զգուշանալ անձին իւրոյ, հաստատեաց Համլէտ ի մտի խորհուրդ իմն նոր և տարօրինակ. այն է՝ կեղծել զանձն որպէս թէ իրապէս խելագար իցէ լինի, կարծելով թէ զայս արարեալ՝ ազատ կացուցանելոց էր զհօրեղբայր իւր ի կասկածանաց, և ոչ թոյլ տալոց նմա երկմտիլ երբէք, թէ կարէր լինի հատուցանել ծանր վնաս ինչ անձին նորա. և նաև այսու՝ իրական շփոթ և խռով մտաց իւրոց ևս ծածկիլ ունէր ընդ պատրուակաւ կեղծաւորեալ լուսնոտութեանն:

Վասն որոյ, յայսմ օրէ հետէ սկսաւ Համլէտ ցուցանել թէ՛ ի զգեստս՝ թէ՛ ի բանս և թէ՛ ի վարս իւր՝ զանսովոր և զտարօրինակ այլանպակութիւն ինչ. և այնչափ կատարելապէս կեղծեաց՝ զնմանութիւն իրական լուսնոտի միոյ, զի երկոքին թագաւորն և թագուհին՝ խաբեցան այնու. բայց զարմանալի նորա ընդ հին՝ խաբեցան այնու. բայց զարմանալի նորա ընդ մահ հօր իւրոյ՝ բաւական առիթ չկարծելով այնմ, քանզի չէին ծանօթ երևման հոգւոյն, կարծեցին թէ խելագարութիւն նորա պատճառեալ էր ի տարիանաց սիրոյ. և թէ գիտէին իսկ ինքեանք, (որպէս կարծէին), թէ ոչ էր առարկայ սիրոյ նորա:

Յառաջ քան զհասանելն ի վերայ Համլէտայ՝ զնացիկ թախծութեանց, հոգոց և արտասուեանց, որք այնպէս վարակեալ էին զնա արդ, եառնպալից սիրով սիրեալ էր նա զգեղեցիկ օրիորդ մի, անուանեալ Օֆիլիա

լիա, դուստր Պղոնիոսի առաջին խորհրդականի արքայի: Առաքեալ էր առ օրիորդն Թուղթս և մատանի, յայտնեալ էր բազում ցոյցս սիրոյ և խանդագատանաց, և Թախանձեալ զնորա սէր՝ ի փոխարէն պիտամբ պատուասիրաբար առնելոյ զնա առուսին իւր. և Օֆիլիա ևս հաճեալ՝ և հաւատացեալ էր բանից և Թախանձանաց նորա. սակայն արտաւերիանն՝ որով արդ պահարեալ էր նա, կացուցեալ էր զնա ի վերջին ժամանակով՝ զանցառու և անփոյթ զնմանէ. և յօրէ անտի՝ յորժամ յղացաւ ի միտս իւր զխորհուրդ՝ կեղծելոյ զխնդագործութիւն, կեղծէր վարիլ ընդ նմա զժկամակութեամբ և բռատութեամբ ինչ. սակայն, քաղցրիկն Օֆիլիա, փոխանակ արտանջելոյ զնմանէ վասն անհաւատարմութեան սիրոյ, յաւէտ համոզէր զանձն հաւատալ, Թէ միայն հիւանդութիւն մատաց նորա էր և ոչ ժկամակութիւն կամ ցրտութիւն սիրոյ, որ արարեալ էր զնա նուազ զօրավոյժ և խանգակաթ առ ինքն, քան որչափ էր յառաջն: Եւ աղնուասիրտ օրիորդն, նմանեցուցանէր զաղնուախոհ և զսիրտ հանճար նորա, որ արդ այնպէս խոհրեալ էր ի խորին Թախծութեանցն՝ որք ճնշէին զնա՝ քաղցրաձայն զանգակաց, յորոց մէն մի լսատ ինքեան արտայրել կարէ զնուազ քաղցրանուագ. այլ՝ յորժամ զօդանջեալ խառնաձայն ի միասին, լսելի առնէ զհնչումն խիստ և անախորժ:

Թէպէտև զործն անհամբոյր՝ զոր ի ձեռին ունէր արդ Համլէտ՝ այն է՝ խնդրել զվրէժ սպանութեան հօր իւրոյ, չէր ի պատշաճի ընդ պարապելոյ ի տարփանս, կամ ի հաճոյս սիրոյ նուիրելոյ զանձն. սակայն չկարէր այն՝ խափան զոլ խսպառ անուշիկ խորհրդոց ինչ և զգացմանց, որք երբեմն երբեմն մուտս գործէին ի միտս՝ վերաբերութեամբ սիրելւոյն իւրոյ Օֆիլիայ. և ի միում յայսոցիկ վայրկենից, յոր կարծէր Թէ առաւել քան զչափն խստութեամբ վարեալ էր ընդ հզիկ աղջկունդն, գրեաց առ նա Թուղթ մի, լի առանդուն կրիւք և ի ձեւս չափազանցական՝ այլ խառն գորովով և սիրով կաթողնութեան, որ չկարէր քան ցուցանել ազնիւ օրիորդին Թէ ունէր նա տակաւին՝ խորին զգացումն խանդագատանաց ի սրտի առ ինքն: Գրեալ էր ի Թղթի անդ առ Օֆիլիա, Թէ երկբայել կարէր նա՝ ընդ հրեղէն գոյութիւն աստեղաց, երկբայել՝ ընդ շարժումն արեգական, երկբայել՝ Թէ սուտ է ամենայն ճշմարտութիւն, այլ չէր պարտ նմա երկբայել երբէք զսիրոյ իւրոյ, և նաև զայլ այսպիսի չափազանցական բանս: Եւ Օֆիլիա, որպէս պարկեշտ և հնազանդ զուստր մի, եցոյց զԹուղթն հօր իւրոյ. և ծերունի հայր նորա՝ պարտիք համարեցաւ անձին, յայտնել զայն Թագաւորին և Թագուհւոյն, որք խոհն կարծեցին Թէ խելագարութիւն Համլէտայ՝ պատճառեալ էր ի սիրոյ: Թագուհին բարեմտպեալ սկսաւ, զի որպէս գեղեցկութիւն Օֆիլիայ պատճառեալ էր զմտաթափութիւնն նորա, առաքինազարդ կատարելութիւնք և համեստութիւնն նորուն՝ նոյնպէս վերահաստատեսցեն զմտաթափութիւն մատաց Համլէտայ որպէս յառաջն. և բարերջանիկ ամուսնութեամբ՝ շքեղասցին ի պատուի և ի պերճութեան:

Սակայն վէր ցաւոց Համլէտայ՝ ևս առաւել խոր էր, քան որ լինչ կարծէր մայր նորա, և կամ զի կարէր այնպէս պիւրաւ բժշկիլ: Տեսիլ հոգւոյ հօր նորա՝ առաւել անպատշաճ արծարծէր ի յիշողութեան նորա. և նուիրական պատուէրն՝ ընկալեալ ի նմանէ առ ի վրէժխնդիր լինել մահուան իւրոյ, չապայ հանգիստ մատաց նորա, որչափ անկատար էր զեռ պատուէրն այն: Ապիտանաւորելն զգործ սպանութեան արքային, մինչդեռ շրջապատեալ կայր նա միշտ պահապանօք և թիկնակոչ իւրովք, զժուարութիւն մեծ առաջի ընծայէր նմա, մանաւանդ զի ներկայութիւն մօր իւրոյ՝ Թագուհւոյ ևս, որ միշտ մնայր ընդ արքային՝ արգել լինն էր, զոր բաւ-

նաև ի մէջոյ անկարող գտանէր։ Եւ թէղ զայսոսիկ, նոյն իսկ հանգամանք՝ զի յափշտակող աթոռոյ հօր իւրոյ՝ արդ ամուսին էր մօր իւրոյ, զարթուցանէին ի նմա խայթս խղճի, և յետս նահանջէին զնա ի նպատակէ իւրմէ։ Լոկ մահու մատնելն զրնուէնակից ոք, զարհուրելի և անբնական ինչ թուէր՝ հեղաբարոյ և քաղցրասիրտն Համլէտայ. և գառնագին արամութիւն և ճնշումն ոգւոյ նորա՝ զորս կրէր նա ի ժամանակէ ինչ հետէ, ի վերայ ածեալ էին նմա տատամսութիւն ինչ և յողդողդութիւն մտաց, որով տկարանայր յառաջել ցվերջին և ծայրագոյն քայլ՝ իրացուցանելոյ զվիճումն իւր։ Ի վերայ այսոցիկ ամենայնի, դեռ չկարէր մերժել ի մտաց, զերկուածս և զտարակոյս ինչ երբեմն՝ թէ արդեօք տեսիլն՝ զոր տեսեալ էր՝ էր իրապէս հոգի հօր իւրոյ, թէ չար և վիւսական ոգի ինչ, որ առնուլ կարէ զոր ինչ կերպարան և կամի. և որ գուցէ՝ առեալ էր զկերպարան հօր իւրոյ՝ միայն ի խաբել զնա, (զէպ պատեհ համարեալ զշփոթութիւն մտաց իւրոց) և վարել զնա ի սարսափելի գործ սպանութեանն։ Վասն որոյ հաստատեաց ի մտի սպասել տակաւին, զուցէ գտանել կարիցէ՝ եւս առաւգագոյն ապացոյցս և հաստատիմ վկայութիւնս, քան զրանս ուրուական երեւութին, որ գուցէ պատրանք էին միայն, կամ երեւակայական ցնորք։

Մինչդեռ այսպէս տարուբերեալ ծփէին միաք նորա յերկուասնս, եկին յայտնի աւուրս, ի պալատ արքայն՝ խաղարկուք ոմանք կամ կերասանք, ընդ որոց թատրոնական արարս, Համլէտ յառաջն զգացեալ էր հաճութիւն մեծ, մանաւանդ ի լսելն զողբերգական ճառ միոյ ի նոցանէ, որ պատմէր զգեհենալի մահ Ծերունւոյն Պրիամոսի՝ արքայի Տրոյացւոց, նկարագրելով ընդ նմին՝ զսուգ և զկսկիծ Հեկաբէ թագուհւոյ նորա։ Ոգջունեաց Համլէտ զթատրերգուն, սիրով և հիւրընկալութեամբ. և յուշ ածելով թէ որպիսի հաճութիւն մեծ

ընծայեալ էր ինքեան վերստացեալ ճառ, խնդրեաց ի կերասանէն կրկնել զայն. և զայս արար կերասանն՝ այնչափ գորովաշարժ եղանակաւ, պատմելով անգութ սպանութիւն՝ ահեղ և անզօր արքային, զհրաշալո կործանումն ժողովրդոց և քաղաքի նորա, և զհեծեծանս և զվիշտ ծերունի թագուհւոյն, որ բոկոտն վազվզէր ասա և անդ ի պալատին, ունելով փոխանակ ապարոշի՝ զցնցոտի պատառ ինչ ի վերայ գլխոց. և զմարմնովն՝ ի տեղի արքայական պատմուճանի՝ զասուի վերմակ մի միայն, զոր ի բաց խլեալ էր յանկողնոյ ի շտապ ատենապի անդ. զի ա՛չ միայն քամեաց նա արտասուս՝ յաչաց բոլոր ունկնդրաց իւրոց, որոց թուէր՝ որպէս թէ զտեղի առնոյր տեսարանն, ազեաւալի առաջի աչաց իւրեանց, այլ և նոյն ինքն կերասանի իսկ՝ զողդոջուն էր ձայն, և աչքն բիւրեզացեալ յարտասուաց, յորժամ խօսէր զճառն։ Ընդ այս խորհել սկսաւ Համլէտ ի միտս իւր, զի եթէ կերասանն այն, ինքնին այնպէս շարժեցաւ ի ձեռն մտացածին պատմութեան խմիք, մինչ անգամ արտասուել վասն ուրուք՝ զոր բնաւ տեսեալ չէր — վասն Հեկաբեայ, որ մեռեալ էր հարիւրաւոր ամօք յառաջ քան զայն։ — Ընդէ՞ր էր ուրեմն զի այն ինչ կայր ինքեան՝ իրական պատճառ գրգռութեան կրից, սիրա իւր միայր այնպէս անզգայ, և ոչ վրէժխնդրութեան համ համրեալ՝ ի մոռացօնս եգեալ էր զնպատակ իւր։ Եւ մինչդեռ այսպէս յածէին միաք իւր զգերօքն և զգեղասանօք, և զխոտ ներգործութենէն՝ զոր ազդել կարէ ճարտար կերասան մի՝ ի սիրտ ունկնդրաց իւրոց. յորժամ նկարագրէր ինչ կենդանի գունով իրականութեան, յուշ էած զդէպ ինչ, յոր մարդասպան մի տեսեալ զգործ սպանութեան ինչ, ձեռացուցեալ ի բեմ թատրոնի, միայն ի համանմանութենէ տեսարանին, այնպէս սասկիս զգացեալ էր ի սիրտ, զի անդէն և անդ խոստովանեալ էր զսպանութիւնն գործեալ յինքենէ։ Վասն որոյ խոր-

հնգաւ ձնացուցանել տալ պերասանիցս այսօրիկ՝ առաջի թագաւորին, զայնպիսի տեսարան մի, որ նման իցէ սպանութեան հօր իւրոյ. և զատել ի զիմաց և ի հայեցուածոց նորա, թէ արդեօք նա՞ էր առաւպատէս սպանող հօր իւրոյ թէ ոչ. և զայս առնել կարէր՝ զգուշութեամբ հսկելով՝ տեսանել թէ որպիսի ազդեցութիւն ունէցող էր այն ի վերայ հօրեղբօր իւրոյ: Ուստի հրաման եա պատրաստել զկեր իմն՝ որպէս ցանկայրն. և հրաւիրեաց զթագաւորն և զթագուհին ներկայանալ ի տեսարան այնորիկ:

Անդք թատերգութեանն էր սպանութիւն գքսի միոյ ի վիեննա: Անուն գքսին էր Գնզագօ, և կնոջ նորա Բապտիստա: Եւ Լուսիանոս՝ մին ի մերձակայ ազգականաց գքսին՝ թունաւորէր զնա ի մահ ի պարտիզի իւրում. և զկնի սակաւ ժամանակի զրաւեալ զգէր կնոջ Գնզագօի, ամուսնանայր ընդ նմա:

Ի ներկայացուցման տեսարանի այսորիկ, թագաւորն՝ որ անծանօթ էր որոգայթին լարեալ նմա, ներկայ գտաւ հանդերձ թագուհեաւն, և բոլոր պալատականօք իւրովք. և Համլէտ նիստ առեալ առ երի արքային, ամենայն ուշադրութեամբ հսկէր նշմարել զդէմս նորա: Սկիզբն եղև դերին՝ խօսակցութեամբ իմն ի մէջ Գնզագօի և կնոջ նորա, յորում սիկինն՝ խոստովանելով զանչափ և զանմոռաց սէր առ այր իւր, ոչ երբէք, ասէր, ամուսնանալոց էր ինքն կրկին, եթէ բնաւ հանգիպէր նմա տարաբախտութիւն այրիանալոյ: Անիծեալ լիցի ինքն, ասէր, եթէ առցէ բնաւ երկրորդ ամուսին. քանզի այնոքիկ կանայք միայն առնէին զայդ, որք սպանանէին զամուսինս իւրեանց: Ասա՝ ընդ այս բան, նշմարեցաց Համլէտ զփոփոխութիւն իմն ի դէմս արքային՝ հօրեղբօր իւրոյ, և թուէր որպէս թէ զառն և անախորժ էր այն ի քիմս իւր՝ որպէս և թագուհւոյն: Այլ յորժամ Լուսիանոս՝ ըստ կարգի գործողութեան դերին, ակն

թունաւորել զԳնզագօ, մինչդեռ նոքեքն նա ի պարտիզին. խիստ համամանութիւնն զոր առաջի ընծայէր այն իւրոյ եղեռնական գործոյ՝ զոր գործեալ էր ընդդէմ եղբօր իւրոյ՝ մեռեալ արքայի, զոր նոյնպէս թունաւորեալ էր ի ննջեցն նորա ի պարտիզին, այնպէս ներգործեաց խղճի մտաց նորա, մինչ զի անկարող գտաւ նստել և դիալ գոլ՝ շարունակութեան տեսարանին, այլ իսկոյն հրաման առեալ լուցանել զճրագունս սենեկի իւրոյ. և կեղծելով թէ զդայր ցաւ ինչ յանձն իւր, ընդոստ լինի եղանակաւ ել և մեկնեցաւ ի բաց ի թատրոնէն. և ի մեկնիլ արքային, վախճան եղաւ և թատրոնէն: Ահա Համլէտ տեսեալ և նշմարեալ էր բաւականաչափ՝ առ ի հաւաստել, թէ բանք հոգեղէն երեւութին, ճշմարիտ էին և ոչ ցնորք երեւակայութեան. և բերկրութեամբ լինի՝ զոր զդայ ոք յորժամ յանկարծ և բերկրութեամբ մի կամ երկբայութիւն փարատի ի մեծ տարակոյս մի կամ երկբայութիւն փարատի ի մտաց, զարձեալ առ Հօրէշիօ ասաց, թէ ի վերայ հաւաստի վկայութեանց ոսկւոյ՝ զրաւ արիանելոց էր ինքն, զի ուղիղ էին բանք հոգւոյն: Այլ չէ որոշեալ ի մտի՝ որպիսի միջոց կամ եղանակ ի ձեռն առնուլ՝ առ ի կատարել զվրէժխնդրութիւնն. այժմ զի հաւաստեաւ ծանօթացեալ էր, թէ հօրեղբայր իւր էր սպանող հօր իւրոյ. մայր նորա առաքեալ կոչեաց զնա ի սենեակ իւր, ունել ընդ նմա խօսակցութիւն առանձին:

Ըստ պատուիրանի թագաւորին էր՝ զի թագուհին առաքեալ էր կոչել զորդի իւր, և յայտնել նմա թէ ոչ պէս ընթացք նորա և բարք՝ յայնոսիկ աւուրս՝ անհաճոյ և գայթակղելի էին եղեալ երկոցունց նոցա. սակայն թագաւորն կամելով զի իրազեկ լիցի ամենայնի՝ որ ինչ զաղէի առնլոց էր ի խօսակցութեան մօրն և որ ինչ զաղէի առնլոց էր ի խօսակցութեան մօրն և որդւոյն. և կարծելով թէ մայրն գուցէ ոչ այնչափ ծրագրութեամբ ուշադիր եղեալ բանից որդւոյն, թերասցի զամենայն մի առ մի պատմել ինքեան, հրաման եա

Պոլոնիոս առաջինն նախարարի իւրոյ, գնալ և կանգնել լսելեայն յետկոյս վարագուրի ղրան սենեկի Թագուհւոյն, որպէս զի տեսցէ և լուիցէ զամենայն որ անցանէր անդ: Եւ այս խորամանկ լրտեսական գործ՝ կարի յոյժ յարմար էր հակամիտութեան Պոլոնիոսի, որ ծա- խեալ էր զբոլոր կեանս իւր ի ծառայութիւն շահիցն վարելոյ զգործս քաղաքականութեան երկրին. և որ միշտ հրճուէր յատկապէս ծանօթանալ իրաց և գիտել զգաղտնիս՝ անուղղակի և զաւահնար միջոցօք:

Համլէտ գնացեալ առ մայր իւր, վերջինդ ոչ սա- կաւ յանդիմանական բանիւք՝ յերես ածել սկսաւ նորա՝ զբարս և զգործս նորուն. և թէ քանի սրանեզութեան էին լեալ այնք առիթ՝ ինքեան և հօր նորա. հայր ա- սելով, զհօրեղբայր նորա նշանակել կամելով, զոր հայր Համլէտայ անուանէր արդ, քանզի ամուսնացեալ էր ինքն ընդ նմա: Համլէտ սաստիկս գժգոհեալ վասն տաղտ մօրն զսիրելի և զարժանապատիւ անունդ հայր՝ ապե- բաս առն միւսոյ այնպիսւոյ, որ սպանող էր հարազատ հօր իւրոյ, խոստութեամբ ինն պատասխանեաց ասելով. «Մայր իմ, շատ ինչ յանցաւոր ես և զու առ իմ հայր»: «Ա՛յդ մնոտի և անիմաստ պատասխանի ինչ է բանից իմոց», ասաց Թագուհին: «Այլ այնչափ պատ- շաճաւոր, որչափ հարցուածք քոյ», ի վերայ երեր Համլէտ: Յայնժամ Թագուհին հնարց, թէ մոռացեալ էր արդեօք՝ ընդ ո՛ւմ խօսէր նա: «Այո՛», պատասխա- նեաց Համլէտ. «երանի՛ թէ հնար էր ինձ մոռանալ: Թագուհի ես զու, կին եղբօր ամուսնոյ քոյ և նաև մայր իմ. այլ երանի՛ թէ չէիր որ ինչ եսդ»: «Եթէ չկարես» պատասխանեաց Թագուհին, «խօսել զու ընդ իս արժա- նին պատուով, ուրեմն առաքելոց եմ ես զայնպիսի ոմանս առ քեզ, որք խօսեսցին որպէս արժանն է». և փութայր ելանել արտաքս և առաքել առ նա զԹա- գաւորն և զՊոլոնիոս: Բայց Համլէտ ոչ թոյլ եառ նմա

գնալ. և ասէ զի էր ընդ նմա յատանձնութեան, եթ ի մտի փորձել, թէ հնար էր արդեօք խելամուտ առնել զնա ապիրատութեան գործոյ իւրոյ՝ ընդ ամուսնանալն ընդ տապիր իւրում. և բուռն հարեալ բրտութեամբ ինչ՝ զբազկէ նորա, բռնադատեաց զնա նստել: Թագուհին զահի հարեալ ընդ անհամբոյր վարս նորա, և երկու- ցեալ թէ գուցէ ի խելագարութեան իւրում չարիս ինչ հասուսցէ ինքեան, ճչեաց մեծաձայն. և անդէն և անդ լսելի եղև ազազակ մի յետկոյս վարագուրի ղրան սե- նեկին՝ որ կոչէր զմարդիկ յօդնութիւն Թագուհւոյն: Ի լսելն Համլէտայ զազազակն, կարծելով թէ Թագաւորն էր, որ Թագուցեալ էր զինքն անդ, մերկեաց կատա- ղութեամբ զսուր իւր, և մխեաց զայն այնպէս Թափով ընդ մէջ վարագուրին՝ առ տեղեաւն, ուր լսելի լինէր ազազակն, որպէս թէ մխէր նա զայն ի մուկն մի, որ ազազակն. և ի հատանել ձայնին՝ գիտաց Համլէտ թէ մեռաւ Թագաւորն: Սակայն յորժամ երաց զվարա- գայրն, եաես զի չէր այն արքայն, այլ Պոլոնիոս խոր- հրդական նորա, որ զօդեալ էր անդ յետկոյս վարա- գուրին՝ իբր լրտես: «Վա՛յ ինձ», ազազակեաց Թա- գուհին. «զի՞նչ սարսռելի և արիւնահեղ գործ է այս, զոր գործեցեր արդ»: «Այո, մա՛յր, գործ արիւնահեղ», պատասխանեաց Համլէտ, «այլ ո՛չ այնպէս անգութ և դաժան որպէս քոյն, որ սպաներ զթագաւոր մի վասն ամուսնանալոյ ընդ եղբօր նորա»: Եւ ահա շատ ինչ յառաջ գնացեալ ի բանս իւր, առ ի զկայ տալ այնմ այլ ևս, խօսել սկսաւ պարզ և բացայայտ բանիւք առ մայր իւր: Եւ թէ և արժան է զաւակաց քաղցրութեամբ ներողամիտ գոլ առ թերութիւնս և սխալանս ծնողաց իւրեանց, այլ ի դէպս մեծամեծ չարեաց և եղեռնագոր- ծութեանց, թուլասրտի է արդեօ՞ք մէկ խոկ, խօսել առ մայր իւր խոստութեամբ. քանզի նոյն խոստութիւն բա- րեմտութեամբ ի կիր արկանի՝ ի մասին բարեաց և օգտի

նորա, առ ի յետս դարձուցանել զնա ի ճանապարհաց իւրոց չարաց, և ոչ որպէս միայն կշտամբանք կամ յանդիմանութիւն: Վասն որոյ առաքինի իշխանս այս, աղղու և սրատեսիւ բանիւք առաջի եղ Թագուհւոյն, զղազրութիւն և զահաւոյնութիւն յանցանաց նորա, որով այնպէս անարգանօք մոռացեալ զհայր իւր յայնչափ սուղ ժամանակի, ամուսնացեալ էր ընդ եղբօր նորա, զորմէ ամենայն ոք կասկածէր սպանօղ զոլ նորա. և թէ այնպիսի գործ մի, յետ ուխտելոյ նորա առաջի Աստուծոյ՝ հաւատարիմ զոլ ամուսնոյ իւրոյ, բաւական էր առաքինի և խաբանք կացուցանել զամենայն խոսոմունս բոլոր սեռի իւրոյ. բաւական էր՝ զառաքինութիւն՝ կարծել տալ, սառպատիր կեղծաւորութիւն. զուխտ աստուածական՝ վաստիար ևս քան զերդումն զրամախաղացի միոյ, և զնոյն իսկ կրօն՝ ծաղրալի ինչ և սոսկ մոռաի ձև իմն բանից: Աստ թէ գործեալ էր նա զայնպիսի գործ ինչ, ընդ որ նոյն իսկ երկինք շառագնէր յամօթոյ, և երկիր պժգայր ընդ զազրութիւն այնորիկ: Եւ եցոյց նմա նաև՝ զերկուս պատկերս. մին՝ հօր իւրոյ մեռելոյ, և միւս՝ հօրեղբօր իւրոյ՝ երկրորդ ամուսնոյ նորա. և խնդրեաց ի մօրէն նշմարել թէ որչափ ինչ էր տարբերութիւն այնոցիկ: Որչափ շնորհալի էին զէմք հօր իւրոյ, որպէս հայեցուած նորա աստուածարեալ իմն: զանգուր հերաց նորա՝ որպէս Ապողոնի. ճակատ նորա՝ զերթ ճակատ Դիոսի, աչք նորա նմանէին աչաց Արէսի. և ի բոլոր կատարելութեան անձին՝ թուէր որպէս Հերմէս իջեալ յերկնաբերձ յարտաւան ինչ բլրոյ: Այս այր լեալ էր ամուսին նորա: Եւ ապա եցոյց նմա ոմն ոք, և որպիսի ինչ էր, զոր ընդ վերնոյն փոխանակեալ էր նա, զի նմանէր նա գալկան կամ խորշակի. և որպէս խորշակ մի գալկահար՝ խամրեալ էր զառոյգ կեանս եղբօր իւրոյ: Եւ Թագուհին ճնշէր ի սառաիկ ամօթոյ, զի որպի իւր սակէր զինքն այսպէս՝ զարձու-

ցանել զակնարկ իւր ի խորս սրտի իւրոյ, զոր տեսանէր ահա տեառ և մեղսալից: Եւ ևհարց զնա Համլէտ՝ թէ զիա՞րդ կարէր նա կեալ և բնակիլ ընդ առն այնմիկ և լինել կին նորա, որ սպանեալ էր զայր իւր առաջին, և որպէս գազ՝ գազացեալ զթագ նորա: Եւ մինչդեռ խօսէր նա այսպէս, երևեցաւ անդ յանկարծուստ հոգի հօր նորա, բոլորովին համանման՝ որպէս էր նա ի կենդանութեան, և որպէս ի նորոյ Համլէտ տեսեալ էր զնա. և ի մտանելն հոգւոյն ի սենեակն, Համլէտ սոսրսեալ և զարհուրեալ՝ եհարց թէ զի՞նչ խնդրէր նա. առ որ հոգին պատասխանեաց, թէ եկեալ էր մտաբերել նմա՝ զխոսոմումն նորա վասն խնդրելոյ զվրէժ մահուան իւրոյ, զոր թուէր թէ մոռացեալ էր նա. և ապա պատուիրեաց նմա հոգին խօսել ընդ մօր իւրոյ, եթէ ոչ արամութիւն և երկիւղ նորա պատճառելոց էին նմա մահ: Քանզի հոգին, որ միայն երեւէր Համլէտայ և ոչ այլ ումեք, և աներեւութացաւ ի միջոյ. և Համլէտ ոչ ցուցանելով զեղկին՝ յոր կայր հոգին. և ոչ նկարագրելով զանոսիկ այնորիկ՝ կարէր նշմարել տալ զայն մօրն. և թագուհին սաստիկ զարհուրեալ և ի զոլման եղեալ ի ժամուն ընդ բանս որդւոյ իւրոյ, որով երեւէր զառանցաբար խօսել առ աներևոյթ ինչ, կարծէր թէ ի խելագարութենէ մտացն առնէր զայն: Բայց Համլէտ խնդրեաց ի նմանէ՝ չմխիթարել այնու զվհատալից խիղճ իւր՝ իբր զի խելացնորութիւն իւր, այլ յանցանք մօրն էր՝ որ վերապարձուցեալ էր զհոգի հօր իւրոյ առ երկիր: Եւ նմա զդալ զերակ բազկի իւրոյ և տեսանել թէ որպէս խաղաղ և կանոնաւոր էր զարկ այնորիկ, և ոչ որպէս խելագարի միոյ. և արտասուալից աչօք պատեալ սկսաւ զնա՝ խոսոմալանել երկնից զյանցանս իւր անցեալս, և հրաժարիլ յապառնին յընկերակցութենէ թագաւորին և յանկողնոյ նորա. և յորժամ զայսոսիկ արարեալ՝ լինէր որպէս մայր բարի և առաքինի, և պա-

աուէր զյիշատակ հօր իւրոյ, յայնժամ աղերսելոց էր ինքն զմայրական օրհնութիւնն նորա: Եւ Թագուհին խոստանալով առնել ըստ բանից նորա, վախճան եղեւ անսակցութեան նոցա և բանից:

Յայնժամ Համլէտ պարապ գտեալ, փութացաւ խնդրել թէ ո՛վ էր անձն տարաբախտ, զոր սպանեալ էր ի զայրոյթ իւր. և յորժամ եկեալ եհաս թէ Պօլոնիոս էր այն, հայր սիրելոյ Օֆիլիայ, զոր այնչափ սերտիւ սիրէր նա, քարշեաց ի մի կողմն՝ զդիակն մերկեցոյց. և միաք նորա անդորրացեալ զոլով արդ փոքր մի, ողբալ սկսաւ ընդ գործն ազեաալի:

Այս չարաբաստ գործ սպանութեան Պօլոնիոսի՝ եղեւ պատճառանք լինի ի ձեռս արքային՝ տարագրել զՀամլէտ յաշխարհէ իւրմէ: Ցօժարութեամբ ի մահ մատնելոց էր զնա, այլ երկեաւ ի ժողովրդոց իւրոց, որք սիրէին յոյժ զՀամլէտ. և Թագուհին եա՝ բազոր թերութեամբ և յանցաւածովք իւրով՝ զեռ ևս հոգւով չափ սիրէր զորդի իւր: Ամէն իրի՝ խորամանկ Թագաւորն՝ պատճառանօք իրր զի ապահովել կամէր զՀամլէտ, զի մի կոչեսցի նա ի պատ, վասն սպանութեան Պօլոնիոսի, հրամայեա ի ծածուկ՝ առնել զնա ի նաւ մի, որ պատրաստ էր առագաստել առ Անգղիա. և կարգեաց նմա ինամակալ, զերկուս ի պալատականաց իւրոց, ի ձեռն որոց՝ առաքեաց Թուղթս առ արքունիս Անգղիոյ, որ յայնժամ հարկատու էր արքայի Դենեմարքայ, պատուիրելով զի ի սակս կարեւոր պատճառաց ինչ՝ կեղծեալ ի Թուղթսն, խնդրն ի ժամանակն նորա ի ցամաք՝ սպանցի անդ Համլէտ: Համլէտ կասկած առեալ թէ կայր գործ ինչ նենգութեան վասն իւր, ի գիշերի միում ի ծածուկ ի ձեռս բերեալ զԹուղթ Թագաւորին, և ճարտարութեամբ եղծեալ ի Թղթոյն զանուն իւր, ի փոխանակն այնորիկ եղ զանուանս երկու պալատականացն, որք կարգեալ էին նմա պահապան ածել զնա ի սպանումն. և կնքելով զԹուղթն, եղ վերստին ի տեղւոյն ուստի առեալ էր: Փութով գնի այսօրիկ՝ հէնք ոմանք ի վերայ յարձակեցան նաւու նոցա և սկիզբն եղև կռուոյ ի մէջ նոցա և նաւուորացն. և ի չփոթի անդ՝ Համլէտ կամեցեալ ցուցանել զքաջութիւն իւր և զկորով, սուր ի ձեռն միայնակ ի վեր եկ ի նաւ հինիցն, մինչդեռ իւր նաւ աւօթամբ երկչոտութեամբ սկսաւ փախչել հեռանալ ի բաց. և պահապանք իւր՝ երկու պալատականքն լքեալ զնա անդ այնպէս ի նաւ հինիցն, առաջնորդեցին առ Անգղիա, առնելով ընդ իւրեանս զԹղթոյն, յորս Համլէտ արարեալ էր զփոփոխութիւն անուանցն, յարժանին մահ անձին իւրեանց:

Հէնքն՝ որոց ի ձեռն մնայր արդ իշխանն Համլէտ որպէս կալանաւոր, վարիլ սկսան ընդ նմա ոչ այնչափ խիստ թշնամութեամբ. և գիտելով թէ ո՛վ էր ձերբակալ իւրեանց, այնու յուսով զի գուցէ արասցէ ինչ նոցա ի բարեաց մասին յարքունիս Թագաւորին՝ ի արիաւոր քաջգործութեանց ցուցեալ նմա, բերեալ զՀամլէտ իջուցին ի ցամաք, ի մերձակայ նաւահանգստից Դենեմարքայ: Գրեաց ասաի Համլէտ առ Թագաւորն ծանուցանելով նմա՝ զատաբօրինակ դէպս անցիցն, որով բերեալ էր նա յեաս ի հայրենիս իւր. և յայտնեաց զի ի յաջորդ աւուր՝ ներկայացուցանելոց էր զինքն առաջի Թագաւորին: Ցօրժամ վերադարձաւ նա յարքունիս անդ, առաջին ինչ զոր եաս՝ էր ախորդին և ցաւալի տեսարան մի:

Տեսարանն սգալի՝ էր հանդէս յուզարկաւորութեան զեղեցկին Օֆիլիայ, երբեմն սերտիւ սիրեցեալ սիրուհւոյ իւրոյ: Ցօրէ անտի մահուան հօր իւրոյ, միաք մատաղատի սիկնոյզ՝ սկսեալ էր պղտորիլ և սկարանալ. քանզի սպանութիւն հօրն ի ձեռաց իշխանին՝ զոր այնչափ գորովով սիրէր ինքն, այնպէս ներգործեաց ի վերայ գողարիկ մտաց նորա, մինչ զի ի վերջոյ՝ բոլո-

բովին խեչաթափ արար զնա: Յածեալ ի պալատ անդ, բաշխէր ծաղկունս սիկնանցն՝ ասելով թէ վասն հանդիսի թագման հօր իւրոյ էին այնք. երգէր զերգս իւրոյ և զեղերերգս ընդ մահ հօրն, և երբեմն զնուագս ինչ, որք բնաւ չունէին նշանակութիւն. և որպէս թէ յիշողութիւն նորա խահրեալ էր բնաւին և մոռացեալ զաժնայն՝ որ եղեալ էր երբէք: Ուստի մի կայր աճեալ ընդ շեղ ի վերայ գետակի միոյ, սաեղունք այնորիկ՝ տարածեալ ի վերայ ջրոյն. և առ այս գետակ եկն Օֆիլիա յաւուր միում՝ զերծեալ ի հսկողութենէ խնամածուաց իւրոց, ունելով ի ձեռին զոլորս և զփունջս ծաղկանց խառն ընդ շուշանաց և փշոց՝ ի ծաղկանց և յանպիսան բուսոց. և ի վեր եղեալ յուռենի անդ՝ առ ի կախել զոլորս ծաղկանցն յոստս ծառոյն, բեկաւ ոստն և գեղանի տարաբախտ աղջիկն գլորեցաւ ի վայր ի ջուր անդ, ուր հանդերձք նորա՝ ժամս ինչ պահեալ զնա ի տատանման յերեսս ջրոյն, գեղգեղէր տակաւին քաղցրաձայն՝ ինչ ինչ ի սովորական երգոց իւրոց, որպէս թէ չգիտէր բնաւ զվտանգ անձին. այլ չտեսեալ այս ընդ երկար, զի թացեալ զգեստուց նորա և ծանրացեալ՝ քարշեցին զնա ի վայր ի գեղգեղմանէ երգոցն ի մահ թշուառագին: Եւ ահա հանդէս յուղարկաւորութեան տարաբախտ օրիորդին էր, զոր կատարէր եղբայր նորա Լայերտէս. և թագաւորն՝ թագուհին և բովր պալատականք նոցա ներկայ էին, յորժամ ժամանեաց անդ և Համլէտ: Ընծայեաց էր նա իրողութեանն, և չգիտէր առ ինչ այն ամենայն շուք և հանդիսականաւորութիւն զտեղի ունէին. և չկամելով միջամուխ գոլ յայն, եկաց որպէս օտարական ոք ի մի կողմն: Եւտես նա զփոսումն ծաղկանց ի վերայ գերեզմանին, որպէս սովորութիւն էր առնել յայնժամ, ի թագմանս կուսից. և թագուհին ինքնին սփռեալ զայն՝ ասէր. «Ա՛հ ահա, կոյս քաղցրիկ, զքաղցր նուէր ծաղկանցս. ինձ թուէր զարկարել

ունէի ես նոքօք զառագաստ հարսանեացդ, և ո՛չ զգերեզման քոյ: Հարսնանալ պարտէր քեզ սիրելւոյն իմոյ Համլէտայ»: Եւ եղբայր խղճիկն Օֆիլիայ Լայերտէս՝ յանհնարին ցաւոց սրտին ի վայր ոսոսուցեալ ի գերեզմանն անդ, աղաչէր կատել հող իւր բլուր ի վերայ իւր, զի թագեսցի ի միասին ընդ քեռ իւրոյ: Յայնժամ սէր Համլէտայ՝ ես առ չքնաղն Օֆիլիա արթնացեալ ի սրտի, չհանդուրժէր տեսանել զայնչափ տրտմութիւն եղբօր նորա, մինչ զես կարծէր թէ սիրէր ինքն զկոյսն՝ առաւել քան զհազարաւոր եղբարս. ուստի յայտնելով զինքն՝ յառաջ մատուցեալ ոստեաւ և ինքն ի գերեզմանն, ուր կայր Լայերտէս, ո՛չ սակաւ այլ յայլմէ եղեալ ի տրտմութենէն քան զնոյն ինքն Լայերտէս. այո՛, առաւել քան զնա: Իսկ Լայերտէս՝ ի ճանաչելն զՀամլէտ, գիտելով թէ նա էր, որ պատճառեալ էր զմահ հօր իւրոյ և քեռ, բուռն եհար զպարանոցէ նորա՝ իբրեւ զթշնամւոյ միոյ. այլ հանդիսականք յուղարկաւորութեանն որշեցին զնոսա ի միմեանց, և Համլէտ ապա զինի թագմանն, խնդրեաց ներողութիւն՝ վասն այնպէս ձգելոյ զինքն ի գերեզմանն, որպէս թէ մրցել ընդ Լայերտեայ. և ասէր, թէ արար զայն միայն՝ քանզի չկարաց տանել այնմ, զի Լայերտէս ցուցցէ առաւել տրտմութիւն քան զինքն՝ վասն մահուան Օֆիլիայ. և այսպէս երկու ազնուական պատանիքն՝ առ ժամն ամոքեալ համոզեցան մնալ ի բարեկամութեան:

Բայց թագաւորն, ապիրատ և չարամիտ հօրեղբայր Համլէտայ, զարտմութիւն և զզայրոյթ Լայերտէսի ընդ մահ հօրն՝ պատեհ կալեալ ի ձեռին, ի մտի եղ ընդ մահ հօրն՝ պատեհ կալեալ ի ձեռին, ի մտի եղ հնարել այնու զկորուստ և զկործանումն Համլէտայ: Համոզեաց նա զԼայերտէս, պատրուակաւ հաշտութեան և սիրոյ, հրաւիրել զՀամլէտ ի փորձ բարեկամական և սիրոյ, հրաւիրել զՀամլէտ ի փորձ բարեկամական և սիրոյ, հրաւիրել զՀամլէտ ընկալեալ զհրաւէրն, հաստիճաւ օր և ժամ առ այն: Ի գինախաղու անդ՝

ներկայ էին Թագաւորն և նախարարք իւր. և Լայերտէս ըստ սովրանաց Թագաւորին՝ պատրաստեալ էր զԹուդհալիա սուր մի: Բազում մեծամեծ գրաւարկութիւնք զանգի ունէին ի մէջ պալատականաց արքային՝ ի վնասոյ եղից վնասարարութեանն, քանզի երկոքին Համլէտ և Լայերտէս ծանօթ էին բոլորից՝ զոլ յոյժ գերազանց ի կիրառութեան սրոյ. և Համլէտ առանց կասկածելոյ զղաւաճանութիւն ինչ ի կողմանէ Լայերտէսի և կամ քննելոյ զսուր նորա, ընարեաց զմին ի վազակացն առաջի մատուցեալ ինքեան, բայց Լայերտէս փոխանակ սովորական բթածայր վազակի, որ ի գործ ածի սովորաբար յայսպիսի մարզս վինուց, առեալ էր զսրածայրն և զԹունաւորեալ սուր մի: Ի սկսանել խաղոն նախ Լայերտէս կոմս Թոյլ եա. Համլէտայ շահիլ յաջողաձեռնութիւնս ինչ ի վերայ իւր, ընդ որ չարանենգ թագաւորն կեղծաւորութեամբ ծափահարել և գովել սկսաւ զՀամլէտ, և ընդել բաժակ ի յաջողութիւնն նորա. այլ զկնի քանի մի ճարպիկ շարժմանց սրոցն, Լայերտէս տակաւ տակաւ բորբոքեալ ի սիրտ, եհար յանկարծ Թունաւորեալ սրով իւրով զՀամլէտ և եա նմա վէր մահացու: Ընդ այս Համլէտայ ևս բորբոքեալ արիւն, բայց տակաւին ոչ բոլորովին իրազեկ գործոյ դաւաճանութեանն, ի շիտեի մրցմանն փոխանակեաց զանձնեաս սուր իւր ընդ մահաբեր սրոյ Լայերտէսի, և նոյն իսկ սրով նորին եհար խոցեաց զնա կարելւէր, Լայերտէս ընդունելով այնու՝ արդարացի հատուցումն դաւաճանութեան իւրոյ: Յայսմ կէտի արձակեաց Թագուհին ճիչ ինն սաստիկ՝ ասելով Թէ Թունաւորեալ էր ինքն: Աւրեալ էր նա անպիտանութեամբ ի բաժակէ մէջ, զոր պատրաստեալ էր Թագաւորն վասն Համլէտայ, որպէս զի ի մրցման անդ ի զգալն նորա ծարաւ ի ջերմութենէ, արբցէ զայն. և յայս բաժակ խառնեալ էր անօրէն Թագաւորն զմահացու Թոյն ինչ, առ ի աներկբայելի առնել զմահ Համ-

լէտայ, եթէ վէր սրոյ Լայերտէսի վրիպեսցի ի սպանանելոյ զնա. բայց մոռացեալ էր զգուշացուցանել զթագուհին ի բաժակէն, զոր արբեալ նորա ահա մեռաւ իսկոյն, ազազակելով մինչ ցվերջին շունչ Թէ Թունաւորեալ էր ինքն: Համլէտ կասկածեալ արդ, Թէ կայր ի միջի պատճառութիւն, հրամայեաց իսկոյն փակել զդրունսն, առ ի որոնել Թէ ո՛վ էր պատճառն: Լայերտէս՝ ընդ այս՝ յայտնեաց առանց յապաղելոյ Թէ չէր հարկ որոնել ընդ երկար, քանզի ինքն էր պատճառն. և զգալով արդ զի քաղէին ոպիք կենդանութեան իւրոյ ի վիրէն զոր եղեալ էր ի նմա Համլէտ, և զի մօտալուտ էր մահ իւր, խոստովանեցաւ բացայայտ զգործ պատճառութեանն, և Թէ ո՛րպէս զոհ եղեալ էր ինքն իւրում պատճառութեան. և նաև յայտնեաց Համլէտայ՝ զի Թունաւորեալ էր ծայր սրոյ իւրոյ, և զի չունէր նոյն ինքն Համլէտ կեալ երկար քան զկէս ժամ՝ վիրաւորեալ գոլով ի սրոյն. և ապա ներողութիւն հայցելով ի Համլէտայ՝ մեռաւ, ամբաստանելով զԹագաւորէն, որպէս առիթ բոլոր մահաբեր արկածիցն: Յորժամ Համլէտ զգաց Թէ մերձենայր ահա վախճան և իւրոյ կենաց, գիտացեալ Թէ զեռ կայ տակաւին մասն ինչ ի ժահրէն ի սուր անդ, յեղակարծառաս ի վերայ յարձակեցաւ ամբարիշտ հօրեղբօր իւրոյ և մխեաց զծայր սրոյն ի սիրտ նորա, ի լրումն խոստման իւրոյ զոր արարեալ էր հոգւոյ հօր իւրում. և սրոյ պատուէր՝ կատարեցաւ արդ, լուծեալ վրէժ սպանութեան ի սպանողէ անտի: Ապա զգացեալ Համլէտայ, Թէ սպառի շունչ իւր և ճրագ կենացն ի շիջման կայ, պարձոյց զաչս իւր առ Հօրէշիս բարեկամ իւր, որ ականատես էր լեալ մահաբեր անցից այնոցիկ, և ի վերջին շունչ իւր ազաչեաց զնա չվնասել անձին իւրում. (քանզի Հօրէշիս ևս ձեռն ի սուր արակեալ էր անձին առնել և ընկերել Համլէտայ ի մահուան իւրում) այլ կեալ և պատմել աշխարհի

զամենայն զոր տեսեալ էր. և Հօրէշիս խոստացաւ տալ ճշմարիտ նկարագիր բոլոր հանգամանացն՝ որոց ակա-նատես էր լեալ ինքն: Եւ ապա այսպէս բաւ արարեալ Համլէտայ իչեաց գհոգի իւր. և Հօրէշիս և բոլոր այլ ներկայ եղեալքն անդամօր, բազում ողբովք և արտա-սուօք մաղթեցին քաղցրիկ իշխանին հանդիստ և երանու-թիւն ի գաս հրեշտակաց: Բանզի արդարև, Համլէտ գորովագութ և հեզաբնոյթ իշխան մի էր, և յայժ սի-րեցեալ ի բոլորից՝ ի սակս ազնիւ և պատուասէր բնա-ւորութեան իւրոյ. և եթէ չէր խղեալ թել կենաց նորա վաղահաս մահուամբն, անկարկայ լինելոց էր նա թա-գաւոր մի վեհատիտ և արդար՝ ի վերայ աշխարհի իւ-րոյ Դենեմարքայ:

ԴԵՐ ՍԽԱԼԱՆԱՑ ԵՒ ՇՓՈԹԻ

Քաղաքական իշխանութիւնք Սիրակուսայ և Եփե-սոսի՝ գոլով ի թշնամութեան ընդ իրերաց, հասա-տեալ էր անգութ օրէնք մի Լեփեսոս, որ վճռէր զի եթէ վաճառական ոք Սիրակուսացի երևէր երբէք ուրեք Լեփեսոս քաղաքի, դատապարտիլ ունէր ի մահ, եթէ չկարէր վճարել գահեկանս հազար ի փրկանս անձին իւրոյ:

Էգիոն հինաւուրց վաճառական մի Սիրակուսացի՝ գտեալ յաւուր միում ի փողոցս Եփեսոսի, ածաւ խո-կոյն առաջի զբօսի տեղւոյն, կամ վճարել զծանր տու-գանսն ըստ օրինաց կամ ստանալ զվճիռ մահու:

Էգիոն չունէր գրամս առ ի վճարել զտուգանսն. և զուրկն՝ յառաջ քան զհատանել վճիռ մահուան նորա՝ ցանկացաւ գիտել զպատմութիւն անցից կենաց նորա. և թէ զինչ էր պատճառ համարձակելոյ նորա մտանել ի քաղաքն Եփեսոս, որ որպէս յայտնի էր ամենից, անշուշտ մահ էր Սիրակուսացի վաճառականի միոյ:

Էգիոն յայտնեաց՝ թէ չերկնչէր ինքն ի մահուա-նէ, քանզի վիշաք սրտի իւրոյ և արտմութիւն՝ տաղա-կացուցեալ էին զնա ի կենաց. և ոչ ինչ այնպէս ծանր էր ինքեան և ցաւալի, որպէս պատմելն զանցս տա-րաբախտ կենաց իւրոց: Բայց և այնպէս, սկիզբն արար պատմութեան կենաց իւրոց, ըստ հետևելոյ:

«Ծնայ ես, ասէ, ի Սիրակուս քաղաքի և սնայ ի վարժ արհեստի վաճառականութեան: Ամուսնացեալ ընդ սիկնոջ միոյ՝ բարեբախտ զտայ կեալ ընդ նմա երջանիկ և գոհ. այլ պարտաւորեալ ի պատճառս գոր-ծոյ ինչ՝ գնալ առ Իպիպամիրըմ քաղաք, յամեցայ անդ ի սակս գործոյն ամիսս վեց, և յետոյ անսանձելով թէ զեռ հարկ էր ինձ ճնալ անդ տակաւին այլ ժամանակ լինչ, կոչեցի զկին իմ գալ առ իս, որ փութով զկնի ժամանման իւրոյ՝ ծնաւ զերկու որդիս երկուորեակս. և որ յոյժ զարմանալի լինչ էր, այնչափ հանդիման էին նորածինն մանկունքն միմեանց, մինչ զի անհնար էր որոշել զմին ի միւսոյ: Ի մի և նոյն աւուր՝ յորում կին իմ մայրացաւ երկու ուստերացն, աղքատ կին մի ևս ի պանդոկի անդ՝ յոր էաք մեք, ծնանէր ևս նոյնպէս երկուորեակ ուստերաց, և սոյն երկուորեակ ևս մի և նոյնպէս հանդիման էին իրերաց՝ որպէս իմ մանկունք: Ծաղք մանկանցդ գոլով յոյժ աղքատ, գնեցի ես զեր-կուորեակ ուստերան և սնուցի զնոսա լինել սպասաւոր որդւոց իմոց»:

«Երկուորեակ որդիք իմ էին մանկունք գեղեցիկ և առոյգ. և կինս ոչ սակաւ պարծանս զբէր անձին

առնել զայնպիսի երկու ուսաներս, և փախագնալով նորա յոյժ օր մի յառաջ պառնալ ի առն՝ առ ազգականս իւր, յօժարութեամբ հաճեցայ ես ընդ այն, և ի չաբաթաստ ժամու իմն մտաք մեք ի նաւ, քանզի հազիւ թէ հեռացեալ էաք քանի մի մղոնս յիպիպաճիլըմ քաղաքէ, յորժամ յարեաւ ահագին փոթորիկ մի, որ շարունակեաց այնպիսի սաստկութեամբ, մինչ զի նաւաստիքն անհաւատ թէ չէք հնար փրկելոյ գնաւն, խուռն բազմութեամբ իջին ի նաւահան. կերծուցանել զանձինս իւրեանց, էքեալ զմեզ միայնակ և անօգնական ի նաւի անդ, զոր կաւազութիւն փոթորկին՝ յիւրաքանչիւր վայրկենի սպառնայր խորտակել և ջրասոյզ առնել բըլնաւին »։

« Անպատար ազբալ կնոջ իմոյ, և ազգրմելի ապազակ փոքրիկ մանկանցն, որք՝ գես չգիտեմով զերկիւղ, լայնի միայն՝ քանզի լայր մայր նոցա, միանգամայն այլ յայլմէ արարեալ էին գես՝ կացուցեալ ի գոգման և յերկիւղի, ընդ վտանգ կենաց նոցա, և թէև ես յիմ մասին չերկնչէի ի մահուանէ, այլ բոլոր ուշ և մտաց պրութիւն իմ պարապեալ էր միայն՝ ի հնարել զմիջոց իմն վասն փրկութեան նոցա։ Կապեցի ես զկրասեր որդի իմ ի ծայր փոքրիկ կայմի միոյ, զոր պահեն ի նաւս վասն պիտոյացուցանելոյ ի դէպս փոթորկի և մրրկաց, և ի միւս ծայր այնորիկ կապեցի զկրասերն յարծաթագին երկուորեակ սարկաց. և մինչ զայս առնէի ես, ցուցի կնոջ իմոյ նոյնպէս կապել զմիւս երկու մանկունսն յայլ կայմ մի, և այսպէս կին իմ յանձն առեալ զինամ երկուց անզրանիկ նորածնելոցն, և ես զկրասերացն, կապեցաք մեք զմեզ առանձին մէն մի ի մի ի կայմիցն, ընդ որ արդէն կանգնեալ էին մանկունքն. և լաւ էր զի արարաք զայս, եթէ ոչ բոլորեքեան կորուսանելոց էաք զկեանս մեր, քանզի փոքու զկնի ընդհարեալ նաւուն ի ժայռ մի, խորտակեցաւ այն ջախջախեալ ի մասունս, և մեք կոուեալ այնպէս ի փոքրիկ կայմին մնացաք ի սաստկման յերեսս ջուրց ծովուն, և ես ջանալով զգուշանալ երկուց մանկանցն՝ որք ընդ իմով խնամով, և անկարող գտանելով օգնել իւիք կնոջ իմոյ, բաժանեցաւ նա յինէն ընդ միւս երկու տղայոց. այլ տակաւին չէին հեռացեալ բոլորովին ի տեսութենէ իմէ, յորժամ ձկնորս մի կորնթացի էաւ զնոսա ի նաւակ իւր, և ես մնացի ի ծովու անդ, զամենայն ջան ի գործ գնելով ընդդէմ կատաղի կոհակաց ծովուն ի պահպանել զկեանս միւս որդւոյ իմոյ և փոքրիկ սարկի։ Ի վերջոյ մեք ևս զերծաք ի վտանգէն, նաւ մի ի վերայ հասանելով և ի վեր առնլով զմեզ, և նաւաստիքն ծանօթ գոլով ինձ, սիրով ստացան զմեզ և ընձեռեցին ամենայն օգնութիւն, և զերծ ի վտանգէ իջուցին ի ցամաք ի Սիրակուս. տակաւն յայլմ արտաքին ժամէ մինչ ցայսօր, անհնար է եղեալ ինձ գիտել թէ զինչ եղեւ կամ ուր գնաց կին—իմ և անզրանիկն ի մանկանց մերոց՝ որ ընդ նմա »

« Կրասեր որդի իմ՝ որ էր այժմ մի միայն մխիթարութիւն իմ և առարկայ խնամածութեան, յորժամ եղև ութ և տասն ամաց հասակի, սկսաւ հետաքրքրութեամբ հարցուփորձ առնել ի մասին մօր և եղբօր իւրոյ. և բազմիցս թախանձէր զես՝ թէ՛ տալ ինքեան՝ գնալ ընդ ծառայի իւրոյ (արծաթագին սարկին, որ զերծեալ էր ընդ նմա, և նմանապէս կորուսանել զեղբայր իւր) ի խնդիր նոցա. և թէ և առաքելով գնա ի գտանել զմայր իւր և զեղբայր, առաջի ինայր ինձ վտանգ կորուսանելոյ և գնա, սակայն ի վերջոյ, ըստ որում և ո՛չ սակաւ խղճ էր և ինձ գտանել լուր ինչ զկնոջէ և զմանկանէս, զժուարութեամբ և յակամայիցս թոյլ եաւ նմա գնալ, և ահա ետքն ամք են յորմէ հետէ բաժանեցաւ յինէն որդի իմ։ Զամս հինգ ճանապարհորդեալ եմ ես ի բոլոր սահմանս Ասիոյ ի խնդիր նորա, գնա-

լոլ մինչ ցվերջին ծագս Յունաստանի, և անտի վերադարձեալ նաւելով առ ծովեզերեայ աշխարհօք, իջի առա ի ցամաք Յեփեսոս. բայց չկամելով առանց սրտնեղոյ ի բաց գնալ յմ և իցէ տեղւոջէ՝ ուր բնակեն մարդիկ, յամեցայ առա յուսով լսելոյ զլուր ինչ, և ահա սրպէս երևի՝ այս վերջին օր է լինելոց կենաց իմոց, և աւարտ իսկ պատմութեան իմոյ. այլ երջանիկ համարելոց էի զանձն ի մահու իսկ, եթէ գիտէի սուտիւ թէ կեն իմ և մանկունք էին վեռ կենդանի»:

Խղճիկն Էգիոն վախճան եղ ահա առաւնօր պատմութեան տարաբախտութեանց իւրոց և արկածից, և դուքն ի գութ շարժեալ ընդ հայրն Թշուառ, որ արկեալ էր զանձն ահա յայնպիսի վտանգ մեծ՝ ի սէր կորուսեալ զաւակաց իւրոց, ասաց. զի եթէ չէր այն ընդդէմ օրինաց, զոր երդումն իւր և պատուհասիւթիւն անձին արգելոյր զինքն ի փոխոխելոյ, յօժարութեամբ ներելոց էր նմա. բայց և այնպէս, փոխանակ իսկոյն վճռելոյ զնա ի մահ, որպէս պահանջէր ի նմանէ օրէնքն, ժամանակ շնորհելոց էր նմա օր մի, որպէս զի զուն գործեսցէ կամ մուրալ կամ ի փոխ առնուլ զդրամն ի վճար առւպանացն:

Այս շնորհածութիւն առլոյ նմա օր մի ժամանակ, չէր քաղցրութիւն ինչ մեծ վասն Էգիոնի, քանզի չգոլով բնաւին ծանօթ ումեք յԵփեսոս, հազիւ առածէր յոյս ի սրտի, թէ օտարական ոք ի փոխ առլոց էր ինքեան պահեկանս հազար, առ ի վճարել զառյժն. վասն որոյ անճար և անյոյս ի գտանել ձեռնտուութիւն յումեքէ, եկ յերեսաց դքսին ի ներքոյ հսկողութեան բանտապետի միոյ:

Էգիոն կարծէր ի հարկէ, թէ ո՛չ ումեք ծանօթ էր ինքն Յեփեսոս քաղաքի. սակայն ի գոյն իսկ ժամանակի, յոր պաշարեալ էր անձն նորա ի վտանգ մահու, ի պատճառս գնալոյ ի խնդիր կրասեր որդւոյ իւրոյ, սոյն այս որդի, և նաև անդրանիկ որդի իւր՝ երկեքին կային Յեփեսոս քաղաքի:

Որդիք Էգիոնի՝ թէպէտ զի միանգամայն համանման էին երեսաց մարմնով և պիմօք, կրէին նաև զմի և նոյն անուն. երկոքին ևս կոչէին Անտիֆօլիս, և նոյն էին անուանք և երկուց սարկացն ևս՝ որք կոչէին Դրօմիօ: Կրասեր որդի Էգիոնի Անտիֆօլիս Սիրակուսացի, որոյ ի խնդիր եկեալ էր հայր իւր Յեփեսոս, ըստ պիպաց ի ցամաք իջեալ էր ընդ Դրօմիօ սարկի իւրոյ Յեփեսոս՝ յայտմ իսկ աւուր, յոր հայր նորա Էգիոն ժամանեաց ի քաղաքն: Եւ որդին ևս գոլով վաճառական Սիրակուսացի, անկանելոց էր ի մի և նոյն վտանգ, յորում կայր հայրն. այլ բարեբախտաբար հանդիպեալ նորա բարեկամի միոյ, յայտնեաց նմա վերջինդ թէ յորպիսի վտանգի մահու կայր առ ժամն ծերունի Սիրակուսացի վաճառական մի, և խրատեաց զնա ասել թէ պիպամնիացի վաճառական ոք է ինքն: Անտիֆօլիս ախորժաւ յոյժ գիտել զի մին ի քաղաքակցաց իւրոց՝ կայր ի վտանգի մահու, այլ ի հարկէ ո՛չ երբէք էանց զմտաւ նորա թէ ծերունի վաճառականն հայր իւր իցէ:

Երբ որդի Էգիոնի, (զոր արժան է կոչել Անտիֆօլիս Եփեսացի, առ ի որշել զնա յեղբօրէ իւրմէ Անտիֆօլիսայ Սիրակուսացւոյ), բնակեալ էր Յեփեսոս յանցեալ քսան ամաց հետէ. և գոլով այր ճոխ, յոյժ գիւրաւ կարէր վճարել զդրամ փրկանաց կենաց հօր իւրոյ, այլ չունէր նա բնաւ տեղեկութիւն ինչ ի մասին հօրն, քանզի ի կարի յոյժ մատաղ հասակի էր, յորժամ գերծաւ նա ի ծովէ ընդ մօր իւրոյ, ի ձեռն ձկնորսաց ոմանց, և յիշէր միայն թէ այնպէս գերծեալ էր ինքն, այլ ո՛չ մտաբերել կարէր զհայր իւր կամ զմայր: Զկնորսքն՝ որք փրկեալ էին զայս Անտիֆօլիս և զմայր իւր և գերէցին Դրօմիօ ի ծովահեղձ լինելոյ, ի բաց տարեալ էին գերկու մանկունսն ի տարաբախտ մօրէն, առ ի վաճառել զնոսա:

Զկնորսքն վաճառեցին զնոսա գքսին Մէլափնայ համբաւաւոր ռազմամարտի միոյ, որ էր հօրեղբայր գքսի Եփեսոսի, և սա տարաւ զմանկունսն յԵփեսոս ի գնալն իւր անգամ մի յայցելութիւն եղբօրորդւոյ իւրոյ:

Դուքս Եփեսոսի հաճեալ ընդ մանուկն Անտիփօլիս, յորժամ եհաս նա ի չափ հասակի, կարգեաց զնա գնդապետ ի զօրու իւրում. և յաղթական և համբաւաւոր կացուցեալ զինքն քաջագործութեամբ ի պատերազմունս ինչ, ուր անգամ մի փրկեաց իսկ զկեանս գքսին ի մեծ վտանգէ ինչ, ի վարձատրել զարժանաւորութիւն նորա, ամուսնացոյց զնա գուքսն ընդ Ագրիանա՝ Եփեսացի հարուստ տիկնոջ միոյ, ընդ որում կեայր և բնակէր նա ահա, (առնելով ի սպասաւորութեան իւրում տակաւին՝ զԴրօմիո՝ սորուկ իւր) յորժամ հայր իւր եկն յԵփեսոս:

Անտիփօլիս Սիրակուսացի՝ ի բաժանիլն իւրում ի բարեկամէն՝ որ խրատ եա ինքեան ասել, թէ եկեալ էր յԱպիլիաճեայ, եա Դրօմիո սորկի իւրում, զրամս ինչ՝ տանել ի պանդոկն՝ ուր մատակարեալ էր լսեալ յայտնի երեկոյի. և ինքն ի ծախել զմնացորդ ժամանակին գնաց շրջիլ ի քաղաքի անդ և նշմարել զտեսարանս տեղւոյն և զբարս ժողովրդոցն:

Դրօմիո սորուկ նորա՝ առնէր հաճոյական ընտրութիւն ինն. և ի տեսանելն զԱնտիփօլիս տէր իւր՝ երթեալ առուր կամ ի մեղամաղձոտութեան, սովոր էր կատակօք և զուարճաբանութեամբ զբօսնուլ գնա և զուարթացուցանել զսիրտ նորա. ամեն իրի Անտիփօլիս թուլատրէր նմա յաճախ առուել ազատութիւն՝ խօսելոյ և զբուցելոյ, քան որչափ սովորական է ի մէջ տեարց և ծառայից իւրեանց:

Յորժամ Անտիփօլիս Սիրակուսացի առաքեաց ընդ Դրօմիո սորուկ իւր առ պանդոկն, որպէս ասացաւ ի վեր, կանգուն առեալ փոքր մի առ տեղեաւն մտածել սկսաւ զմեռաւսր թափառմանց իւրոց, ի խնդիր մօր և եղբօր իւրոյ, զորոց՝ գեռ ոչ ուրեք երբէք կարացեալ էր գտանել լուր ինչ կամ ծանօթութիւն. և ասէր ի միտս իւր ախրութեամբ, «նմանիմ ես շղթի միոյ անձրևոյ յովկիանուս, որ սրընթեալ գտանել զընկերս իւր, կորուսանէ զինքն ի համատարած ծովու անդ: Ես ևս, ի տարաբախտութիւն իմ, ի չանալն գտանել զմայր իմ և զեղբայր, զիս ինքն կորուսանեմ»:

Մինչդեռ այսպէս սրոճայր նա ի միտս իւր զձանձրալի և զտաժանակիր ճանապարհորդութեանց իւրոց և զթափառմանէ՝ որ մինչ ցարդ ի նանիր և անպատուղ լեալ էր Դրօմիո սորուկ իւր՝ (որպէս կարծեաց նա) վերադարձաւ, և Անտիփօլիս զարմացեալ ընդ այնպէս արագ վերադարձ նորա, եհարց ցնա թէ ուր եղեալ կամ ընդ ո՞ւմ թողեալ էր զզբաղմունս: Սակայն, այս Դրօմիո, առ որ խօսէր նա, չէր իւր սորուկ, այլ երկուորեակ եղբայր այնր սորկի, որ վերաբերէր Անտիփօլիս Եփեսացւոյ եղբօր իւրոյ: Երկու Անտիփօլիս եղբարքն և երկու Դրօմիո սորուկքն, արդ ևս այնպէս համանման էին միմեանց, որպէս յորժամ էին նորա ի տղայութեան հասակի իւրեանց. ամեն իրի ոչինչ զարմանալի էր, զի Անտիփօլիս Սիրակուսացի կարծեաց թէ սորուկ իւր էր այն, որ վերադարձեալ էր. և եհարց թէ ընդէր այնպէս փութով վերադարձաւ նա: Դրօմիո պատասխանեաց թէ, «տիկին իմ առաքեաց զիս կոչել զտէրդ ի տուն՝ ուստի կերակուր. խորովս հաւք մեծ են խանձել, շամիրեալ միս խոզի թօթափի ի շամիրոց, և այլ կերակուրք բազումն պատրիլ ունին, եթէ չփութասցիս խոկոն զալ»: «Այսպիսի կատակ՝ անյարիր և անպատշաճ ինչ է արդ», պատասխանեաց Անտիփօլիս, «ուր թողեր զդրամն ասա ինձ»: Դրօմիո կրկնելով զնոյն բան, թէ տիկին իւր առաքեալ էր զինքն տանել զնա ի տուն՝ ուստի կերակուր, «զինչ կամ ուր տիկին»,

հարց Անտիփօլիս։ «Ո՞ր տիկին», պատասխանեաց Դրօմիս, «որ այլ տիկին քան տիկին ազնուութեան ձերոյ»։ Անտիփօլիս չգոլով ամուսնացեալ, բարկացաւ յոյժ ի վերայ Դրօմիսի և ասէ, «Որովհետև քաղցրութեամբ և մտերմաբար վարիմ ես ընդ քեզ երբեմն, համարձակիս դու կատակ առնել ընդ իս՝ այսպէս անվայելուչ ազատութեամբ»։ Դրօմիս ի լսելն զբանս տէառն իւրոյ, (քանզի կարծէր զնա գոլ տէր իւր) հաստարեալ թէև նա խօսի ընդ կատակս, յորժամ օտար ոմն համարէ զինքն, խնդամտութեամբ իմն ասէ, «ա՛ղաչեմ զքեզ, տէ՛ր իմ, արա՛ զուարճաբանութիւն որչափ և կամիս յորժամ նստցես ի սեղան. ես առաքեցայ միայն կոչել զքեզ ի տուն՝ ի սեղան կերակրոյ, ուր տիկին իմ և քոյր նորա սպասեն քեզ»։ Ընդ այս Անտիփօլիս՝ բոլորովին կորուսանել զհամբերութիւն իւր, գանեաց զԴրօմիս. և Դրօմիս ընթացեալ պատմեաց տիկնոջ իւրում, թէ տէր իւր զնացեալ զառնայր զառնալ ի տուն և ասէր, թէ չունի ինքն կին։

Ագրիանա՝ կին Եփեսացի Անտիփօլիսայ, զժգոհեալ զայրացաւ յոյժ, յորժամ լուաւ զբան ծառային, զի ամուսին իւր ասէր, թէ չունի ինքն կին. և քանզի ուներ նա նախանձաւոր բնաւորութիւն իմն, կարծեաց, թէ այր իւր նշանակել կամէր այնու՝ իբր զի սիրէր զայլ կին ոք՝ լաւ ևս քան զինքն, և վասն որոյ սկսաւ հոգալ և վարանիլ մտատանջութեամբ և խօսել բանս անհամբոյրս և կշտամբալից՝ ընդդէմ ամուսնոյ իւրոյ. և թէև քոյր նորա Լուսիանա, որ բնակէր ընդ նմա, ջանաց համոզել զնա, զերծ առնել զմիտս իւր յանհիմն կասկածանաց անտի նախանձաւորութեան, այլ ի զուր։

Անտիփօլիս Սիրակուսացի՝ գնացեալ առ պանդոկն, եգիտ անդ զԴրօմիս և զզրաման՝ որ ընդ նմա, յապահովի. և ի տեսանելն զնա Դրօմիս, (որ ի հարկէ չէր

այն, զոր գանեաց) զարձեալ կշտամբել կամէր զնա վասն անվայելուչ կատակի և զբաբանութեանց նորա, յորժամ Ագրիանա ի վերայ հասեալ, և ո՛չ կասկածեալ երբէք, թէ չէր նա ամուսին իւր, սկսաւ յանդիմանել զԱնտիփօլիս, վասն այնպէս խորթութեամբ նայելոյ առ ինքն, (որ ո՛չ առանց պատճառի էր, քանզի չէր նա բնաւ տեսեալ զտիկինն) և գանգատէր, թէ որչափ ջերմ սիրով սիրեալ էր նա զինքն, յառաջ քան զամուսնանալ իւրեանց. և այժմ սիրէր նա զայլ տիկին ոք՝ ի փոխարէն իւր. «և ընդէ՞ր է», սիրելի ամուսին իմ, ընդէ՞ր է այլ զի ցրտացեալ է սէր քոյ առ իս», ասէր տիկինն։ «Ձի՞նչ է զոր խօսիպ, ազնիւ տիկին», զարմանօք պատասխանեաց Անտիփօլիս. և ի զուր էր զի յայտնեաց նմա կրկին և կրկին, թէ չէր նա ամուսին նորա, և թէ երկու ժամք էին միայն, յորմէհետէ հասեալ էր ինքն յԵփեսոս. այլ ի վերայ այսր ամենայնի՝ թախանձանօք սաստկաց զնա տիկինն՝ գնալ ընդ իւր ի տուն. և Անտիփօլիս ի վերջոյ չկարացեալ զէմ դնել թախանձանաց և սաստկութեան նորա՝ չոգաւ ի տուն եղբօր իւրոյ, և սեղանակից եղեւ Ագրիանայի և քեռ նորա, յորոց մին, ի խօսակցութեան, կոչէր զնա ամուսին, և միւս՝ եղբայր. և Անտիփօլիս բոլորովին ապշեալ և զարմացեալ՝ կարծէր թէ գուցէ ամուսնացեալ էր ինքն մինչ ի քուն, կամ չէր յարթնութեան՝ այլ նընջէր առ ժամն։ Եւ Դրօմիս ոտրուկ նորա ևս, որ հետեւեալ էր տէառն իւրում, ո՛չ սակաւ ի զարմացման կայր, յորժամ խառնարար տանն, որ էր կին եղբօր իւրոյ, յառաջ մատուցեալ, ընդունէաւ զնա իբր իւր ամուսին։

Մինչդեռ այսպէս Անտիփօլիս Սիրակուսացի նստէր ի սեղան ընդ կնոջ եղբօր իւրոյ, իրական ամուսին վերջնոյն, ընդ Դրօմիս ստրկի իւրոյ զարձաւ ի տուն՝ ուսեալ կերակուր, այլ սպասաւորքն չբանային նմա ըզդուռն տան ի մտանել, քանզի տիկին նոցա պատուի-

բնակ էր՝ չաւալ մուտ այցելուի ուրուք. և յորժամ ան-
զգաստ բաղխէին նորա զդուռն, և ասէին, թէ Անաի-
ֆօլիս առնուաէր առնն և Դրօմիս սարուկ իւր էին՝ որք
կամէին մտանել, ազախնայքն սկսան ծիծաղել և պա-
տասխանեցին, թէ Անաիֆօլիս արդէն նոաէր ի սեղանի,
և Դրօմիս ևս էր ի խոհանոցի անդ. և թէև բաղխէին
նորա զդուռն՝ մինչ մերձ էին խորտակել զայն, սա-
կայն չկարացին գտանել մուտ. և ի վերջոյ Անաիֆօլիս
ի բաց գնաց յոյժ զայրացեալ, և ոչ սակաւ զարմացեալ
ընդ իրն տարօրինակ, զի օտարական ոք սեղանակից
էր ընդ կնոջ իւրոյ:

Յաւարտ կերակրոյն, այնպէս շփոթեալ էր ի միտս
իւր Անաիֆօլիս վասն անզգաստ կոչելոյ սիկնոյն զինքն
ամուսնին իւր, մանաւանդ թէ լուեալ զի և խոհարար
տանն պահանջէր զԴրօմիս գոլ ամուսին իւր, զի խո-
հոյն ընդ գտանելն պատեհութիւն, եկ գնաց ի բաց ի
տանէն. և թէև ոչ սակաւ հաճեալ էր ընդ Լուսիանա
«քոյր սիկնոյն, սակայն սիկնին ինքն — նախանձա-
բնոյնն Ագրիանա—բոլորովին անհաճոյ գտաւ նմին, և
ոչ իսկ Դրօմիս եղոյց հաճութիւն ինչ ընդ գեղուհի
իւր ի խոհանոցի անդ. ամին իրի՝ տէր և ծառայ՝ եր-
կոքին բազում խնդութեամբ էր, զի իրաց մեկնեցան
որչափ շատագաւ և կարէին՝ ի նորագիւտ կանանց իւ-
րեանց:

Հազիւ մեկնեալ էր ի տանէ անտի Անաիֆօլիս
Սիրակուսացի, յորժամ հանդիպեցաւ նա արծաթա-
գործի միոյ, որ սխալմամբ կարծելով գնա գոլ Ան-
տիֆօլիս Եփեսացի, որպէս Ագրիանա արարեալ էր,
յորջորջեալ գնա յանուն նորա, եա նմա զոսկի շղթայ
մի. և յորժամ Անաիֆօլիս զլացաւ առանալ զշղթայն,
ասելով թէ չվերաբերէր այն ինքեան, արծաթագործն
պատասխանեալ թէ կազմեալ էր զայն ըստ պատուի-
րանի նորա, և թողեալ զշղթայն ի ձեռին Անաիֆո-

լիսայ գնաց ի բաց: Անաիֆօլիս՝ ընդ այս՝ հրամա-
յեաց Դրօմիս սարկի իւրում խնդայն առնել զիրս իւր
ի նաւ, քանզի չկամէր յամել այլ ևս յայնպիսի քա-
ղաքի միում, ուր հանդիպեալ էին ինքեան այնչափ
տարօրինակ դիպուածք, և ուր՝ որպէս երևէր՝ կախար-
դական զօրութիւն ինչ շրջապատեալ էր զիւրև:

Արծաթագործն՝ որ սխալմամբ տուեալ էր զշղ-
թայն Անաիֆօլիսայ Սիրակուսացւոյ, փոխանակ տալոյ
եղբօր նորա, փութոյ զինի կալանաւորեցաւ ի պաշ-
տօնէից ոստիկանութեան, վասն չկարելոյ վճարել
զփոխառեալ զրամ ինչ. և Անաիֆօլիսայ Եփեսացւոյ
դէպ եղեալ անցանել առ տեղեաւն, ուր կալանաւո-
րէին զարծաթագործն, վերջինդ խնդրեաց ի նմանէ
վճարել զդին շղթային՝ զոր փոքու յառաջ կազմեալ
յանձնեալ էր նմա, առ ի հատուցանել այնու զպարտս
իւր և ազատիլ ի կալանաւորութենէն, զին շղթային
գոլով գրեթէ միևնոյն չափ՝ ոչխարի գումար պարտուցն
էր: Անաիֆօլիս ուրանալով, թէ երբէք առացեալ էր
ինքն շղթայ ինչ, և արծաթագործն պնդելով թէ միայն
սակաւ վայրկենիւք յառաջ տուեալ էր նմա զայն,
ժամս երկոքեան վիճել սկսան նորա ընդ միմեանս, եր-
կոքին իսկ ի հարկէ ուղիղ գոլով ի բանս իւրեանց.
քանզի Անաիֆօլիս զիաէր զի արծաթագործն չէր
տուեալ նմա շղթայն, և այնպէս յոյժ համառեան էին
երկու եղբարքն, զի արծաթագործն ևս առուգիւ կարծէր,
թէ ի նորան իսկ ձեռս տուեալ էր զշղթայն. և ի
վերջոյ պաշտօնեային ոստիկանութեան, առեալ տարաւ
զարծաթագործն ի բանս, վասն չկարելոյ վճարել
զպարտս իւր, այլ տանէն գնա ի բանտ. նա ևս կա-
լանաւորել եա զԱնաիֆօլիս վասն չհատուցանելոյ զդին
շղթային. որոյ հատոյ ամենայնի՝ Անաիֆօլիս և ար-
ծաթագործն երկոքեան՝ ածեալ եղեն ի բանտ:

Ի տանէն զԱնաիֆօլիս ի բանտ, հանդիպեցաւ

նա Դրօմիօ Սիրակուսացւոյ՝ սարկի եղբօր իւրոյ, և սխալմամբ կարծելով թէ իւր սարուկ էր այն, պատուիրեաց նմա գնալ առ Ադրիանա կին իւր, և ասել նմա առաքել զդուստր գրամոյն, որոյ վասն կալանաւորեալ էր ինքն։ Դրօմիօ զարմացեալ՝ ղի ոչ էր իւր առաքէր գնա կրկին առ օտար տունն, ուր կերին կիւրակուր, և այնչափ շտապաւ փութացան մեկնել անտի, թէև եկեալ էր նա յայտնել տեառն իւրում, զի պատրաստ էր նաեւ առագաստել, այլ չհամարձակեցաւ ասել ինչ, քանզի տեսեր էր իւր գոլ զժգոհեալ և յանհամբոյր բնաւորութեան առ ժամն։ Վասն որոյ գնաց ի բաց տրտնջելով ի միտս իւր՝ վասն սպիտակել լինելոյ վերադառնալ առ տուն Ադրիանայի, «ուր Դօզաբէլ», ասէր, «իւրացուցանել կամէր գիս, որպէս ամուսին իւր. բայց և այնպէս պարտիմ գնալ, քանզի ծառայք հնազանդել պարտին հրամանի տերանց իւրեանց»։

Ադրիանա եւս նմա զդրամն, և յորժամ վերադառնայր Դրօմիօ, հանդիպեցաւ նա Անտիփօլիսայ Սիւրակուսացւոյ բնիկ տեառն իւրում, որ տակաւին յապշութեան կայր ընդ զարմանալի դէպսն պատահեալ ինքեան յայն օր. քանզի եղբայր նորա հայնրածանօթ ոմն զոլով Եփեսոս, հաղիւ թէ այր ոք պատահէր նմա ի փողոցն որ ոչ ողջունէր զնա որպէս բարեկամ կամ վաղեմի ծանօթ մի, ումանք գՆամարել կամէին նմա զբամս՝ զոր առեալ էին ի նմա։ ումանք հրաւիրէին զնա ի տուն իւրեանց, և ումանք շնորհակալ լինէին զնմանէ, վասն բարեկամական քաղցրութեան ինչ ցուցեալ առ նոսա. բայց նա՝ սխալմամբ կարծելով ի հարկէ, թէ Անտիփօլիս Եփեսացի եղբայր նորա էր՝ ընդ որում խօսէին։ Դարձեալ մի, եցոյց նմա գկերպաս ինչ՝ զոր գնեալ էր վասն նորա, և սակայն զնա թոյլ տալ ինքեան առնուլ գչափ մարմնոյն, առ ի պատրաստել զգեստ վասն նորա։

Անտիփօլիս սկսաւ այժմ կասկածել իրապէս, թէ անկեալ էր նա ի մէջ ազգի մոլի կամ ժողովրդոց, որք բոլորեքեան կախարդք էին և գիւթք. և Դրօմիօ ևս ի զառնալն իւր առ նա, ոչ սակաւ յաւել զշփոթ մտաց նորա, հարցանելով թէ ո՞րպէս ազատեցաւ նա ի ձեռաց պաշտօնէին՝ որ տանէր զնա ի բանտ. և տալով նմա գբաւական գրամոցն զոր Ադրիանա առաքեալ էր ի վճարել զդէն շղթային։ Այսպիսի բանք Դրօմիօի գիտանաւորութենէ, զբանաէ, և զդրամոց զոր ունէր նա ի ձեռին, ևս առաւել ամբոխեցին զմիտս Անտիփօլիսայ, մինչ ասել, «այս սարուկ իմ Դրօմիօ ևս՝ անշուշտ խելագարեալ է. և սա ի քաղաքի յայսմիկ շրջմունք մեք, ի մէգ իմն մառաւոր պատրանաց և առ աչօք հրեւութիւ»։ և զարհուրեալ ընդ շփոթ իւր իսկ մտաց և խորհրդոց, ազաղակեաց, «Ո՛վ բարեբար երկինք, ազատեա և հան գիս ի տարօրինակ վայրէ սոսի»։

Յայսմ կիսի մերձեցաւ առ նա այլ օտարական ոմն, և էր սա սիկինն մի։ Սա ևս կոչեալ գնա Անտիփօլիս, խնդրէր տալ ինքեան զոսկի շղթային՝ զոր ի սեղանաւորէն ընդ նմա յայսմ աւուր ի տան իւրում, խոստացեալ էր ընծայել նմա։ Անտիփօլիս ի լսելն զայս, ոչ ևս համբերել կարացեալ, կոչեաց գնա վհուկ, ուրացաւ թէ երբէք մտեալ էր ի տուն նորա, կամ սեղանաւորեալ ընդ սիկինոջն, և կամ երբէք տեսեալ գերեսս նորա ի բոլոր կեանս իւրում։ Տիկինն պնդէր թէ անշուշտ սեղանաւորեալ էր ընդ նմա յայն օր ի տան իւրում, և խոստացեալ տալ նմա ոսկի շղթայ մի. և Անտիփօլիս կրկին և կրկին ուրանալով զայն, յաւել սիկինն, թէ տուեալ էր նմա ինքն զմեծագին մատանի մի. և ուրանալով թէ երբեք տեսեալ էր գնա կամ զմատանի նորա, փախեաւ ի նմանէ ի բաց, թողեալ զսիկինն ի մեծ զարմացման ընդ բանս և ընդ վայրագ կերպարան իւր, քանզի աներկեայ առաւելութեամբ գի-

աէր սիկինն զի գտեալ էր նա ի սեզան կերակրոյ ի տան իւրում յայն օր, և տուեալ էր նմա ինքն զմատանին՝ ի սրխտուր խոստման նորա՝ ընծայել ինքեան ոսկի շղթայ մի: Այլ ի հարկէ այս սիկին ևս՝ մինչ նոյնպէս սխալեալ էր որպէս այլքն, կարծելով զնա գոլ Անտիփօլիս Եփեսացի, ամուսնացեալ եղբայր նորա, որ իրապէս արարեալ էր զամենայն ինչ՝ զոր ասէր սիկինն:

Յորժամ ամուսնացեալն Անտիփօլիս, չեգիա թոյլ մատանել ի տուն իւր, (քանզի որպէս ասացաւ ի վեր, սպասաւորքն կարծէին թէ արդէն ի տան է նա), ի բաց գնաց նա ոչ սակաւ բարկութեամբ հաւատալով, թէ կին իւր ըմբռնեալ էր գործել կրիւք նախանձու, զոր բազմիցս սովոր էր ցուցանել. և յիշելով զի յոլով անգամ յանիրաւի ամբաստանեալ էր նա զինքնին, իբր թէ այլ առնէր այլոյ սիկնանց, ահա առ ի վրէժխնդիր լինել ի նմանէ սակս փակելոյ զդուռն տան յերեսս իւր, մտալրեաց գնալ և սեզանակցիլ ընդ ծանօթ սիկնոջ միոյ, և սիկինն ընկալեալ գնա մեծաւ պատուով և հիւրընկալութեամբ, մինչդեռ կին իւր այնպէս վշտացուցեալ էր զսիրա նորա, զշղթայն՝ զոր հրամայեալ էր կազմել, վիճամբ ընծայելոյ զայն կնոջ իւրում, խոստացաւ տալ սիկնոջն. և նոյն շղթայ էր այս, զոր սխալմամբ արծաթագործն տուեալ էր եղբօր նորա: Տիկինն ի լսելն զխոստումն Անտիփօլիսայ, որով զտանելոց էր զգեղեցիկ ոսկի շղթայ մի, այնպէս բերկրեցաւ հաճութեամբ, զի եա ամուսնացեալն Անտիփօլիսայ զմատանի մի, զոր ապա յորժամ Անտիփօլիս Սիրակուսացի, (զոր սիկինն սխալմամբ կարծէր գոլ եղբայր նորա), ուրացաւ թէ ստացեալ է, և այնպէս սրտմտութեամբ թողեալ գնա ի բաց գնաց. սիկինն կասկածել սկսաւ, թէ խելագարեալ իցէ նա, և վասն որոյ հաստատեաց ի մտի գնալ իսկոյն առ Ադրիանա

կին նորա և յայտնել նմա, թէ այր նորա ցնորեալ էր ի խելաց: Եւ մինչ պատմէր նա կնոջ նորա զբանն, ի վերայ եհաս ամուսին նորա հեռեալ ի պաշտօնէից ոստիկանութեան, որք թոյլ տուեալ էին նմա գալ ի տուն և վճարել զգումար պարտուցն, այն է զին շղթային, քանզի քսակ գրամոցն զոր Ադրիանա առաքեաց ի ձեռն Դրոմիո, եա վերջինք միւս Անտիփօլիսայ:

Ադրիանա հաւատալով բանից սիկնոջն, և կարծելով իրապէս, թէ այր իւր ցնորեալ էր ի միտս, քանզի ի տեսանելն զինքն՝ կշտամբել սկսաւ վասն փակելոյ զդուռն տան իւրոյ ընդդէմ իւր, և յուշ ածելով նմա, թէ ո՞րպէս ի ժամ կերակրոյն անպատճառ ասացեալ էր, թէ չէր ինքն ամուսին նորա, և թէ յառաջ քան զայն օր չէր նա լեալ երբէք Եփեսոս քաղաքի, միանգամայն հաստատեցաւ ի միտս իւր, թէ խելագարեալ էր ամուսին իւր, և վասն որոյ վճարեալ պաշտօնէից ոստիկանութեան զգին շղթային, և ի բաց առաքեալ զնոսա, հրամայեաց ծառայից իւրոց, կապել պարանոք զայր իւր, և եա տանել զնա ի մթին սենեակ մի, և առաքեաց կոչել բժիշկ՝ սա ի բուժել զնա ի խելագարութենէ իւրմէ: Անտիփօլիս, ի հարկէ բողոքել սկսաւ առաջին ոստիկ բարկութեամբ՝ ընդդէմ սուտ կարծեաց կնոջ իւրոյ, և անարպանացն՝ զոր համանութիւն իւր եղբօր իւրում այնպէս ի վերայ ածեալ էր նմա, սակայն ոստիկութիւն բարկութեան նորա և կատաղութիւն, եա յաւէտ հաստատէր զկարծիս շրջակայիցն, թէ անշուշտ խելագարեալ էր նա. և Դրոմիո սարուկ նորա ևս պնդելով նմանապէս ի բանս տեառն իւրոյ, զնա ևս ելին ի կապանս և առեալ տարան զնա ընդ տեառն իւրում:

Հազիւ թէ փակեալ էր Ադրիանա զայր իւր յարգելանս, յորժամ ծառայ մի փութացեալ յայտնեաց նմա, թէ Անտիփօլիս և Դրոմիո խզեալ զկապանս իւ-

բանց՝ ի բաց փախուցեալ էին, և երկոքին իսկ ահա
շրջէին ի փողոցի անդ։ Աղրիանա՝ ի լսելն զայս՝ խա-
կոյն փութացաւ հանդերձ քանի մի արամբք յետս պար-
ձուցանել զնոսա ի տուն. և քոյր նորա ևս գնաց ընդ
նմա։ Եւ յորժամ հասին ի տուն կուսանացի միոյ ի
միում ի մերձակայ փողոցաց, տեսին անդ զԱնաիփո-
լիս և զԴրօմիս, որպէս կարծէին, քանզի զարձեալ
խաբեայն համանմանութեամբ երկուսեանցն եղբարցն։

Անաիփօլիս Սիրակուսացի, տակաւին ապշեալ եւ
շփոթեալ կայր ի միտս՝ ընդ բոլոր տաբօրինակ անցսն,
զոր ի վերայ ածեալ էր նմա համանմանութիւնն իւր
եղբօր իւրոյ։ Ոսկի շղթային զոր արծաթագործն առեալ
էր նմա, կրկր ի պարանոցի, և արծաթագործն տե-
սեալ գնա, յանդիմանէր գնա առժամն, վասն ուրա-
նալոյ նորա թէ սացեալ էր զշղթային, և վասն զլա-
նալոյն ի վճարել զգին այնորիկ, և Անաիփօլիս բազո-
քէր ասելով, թէ արծաթագործն իւրովի և յօժարու-
թեամբ պարգեւեալ էր նմա զշղթային յայտմ առաւօ-
տու, և թէ յայնմհետէ չէր հանդիպեալ նա նմա
կրկին։

Ահա յայսմ պահու Աղրիանա ի վերայ հասեալ
ի բաց տանել կամէր զնեղչագար ամուսին իւր, որ ի
բաց զերծեալ էր, ասէր, յարգելանացն յորում կայր,
և յորժամ աբքն, զորս բերեալ էր ընդ իւր, մաղչէին
կալանաւորիլ զԱնաիփօլիս և զԴրօմիս, փախեան սոքա
ի ներքս ի կուսանոց անդ, և Անաիփօլիս ազաչեաց
զաբբատուհի վանացն՝ շնորհել ինքեանց տեղի ապաս-
տանի։

Եկն ահա արաւքս աբբատուհի կուսանոցին, առ
ի հարցուփորձ առնել զանցից իրացն, և զպատճառէ
խռովութեանն։ Էր սա ծանրաբարոյ և պատկառելի տի-
կին մի, և խնամոյն ի պատուոլութեան իւրում, և ոչ
դիւրաւ և փութով ի բաց տայր երբէք, զորս ապաս-

տան անկանէին ի վանս իւր. վասն որոյ մանրամաս-
նաբար և ճշիւ հարցանել սկսաւ ի կնոջէն, վերա-
բերութեամբ խնդագարութեան առն իւրոյ և ասէ, «Զի՞նչ
է պատճառ յանկարծ խնդագարութեան ամուսնոյ քոյ.
արդեօք կորո՞յս նա զճոխութիւն իւր ի ծովու թէ մահ
սիրելի բարեկամի ուրուք ցնորեաց զնա ի խնդաց»։
Աղրիանա պատասխանեաց, թէ ո՛չ մին յայդպիսեաց
էր պատճառ մտաւոր հիւանդութեան առն իւրոյ։ «Ու-
րեմն», ետուն աբբատուհին, «գուցէ գրաւեալ է նա ի
սէր այլոյ սիկնոջ ուրումն, և այդ է առիթ անկանե-
լոյ նորա յայդ վիճակ»։ Աղրիանա պատասխանեաց,
թէ ի բաղմաց հետէ կասկածեալ էր ինքն, թէ սէր
նորա առ այլ սիկին մի, պատճառ լինէր նմա բազ-
միցս բացակայ մնալոյ ի տանէ։ Այլ ո՛չ թէ սէր այ-
լոյ սիկնոջ՝ այլ ձանձրացութիւն նախանձաւոր բնաւորու-
թիւն կնոջ իւրոյ էր, որ յաճախ նեղասրտեալ պար-
տաւորէր զԱնաիփօլիս ի բաց գնալ ի տանէ. և աբ-
բատուհին (կարծիս առեալ ընդ այս՝ ի զայրալիր բանից
Աղրիանայ), առ ի տուգել զճշմարտութիւն իրին, ա-
սաց ցԱղրիանա, «Արժան էր քեզ յանդիմանել զնա
վասն այսորիկ»։ «Յանդիմանե՞լ. ո՛վ թէ չե՞մ յանդի-
մանեալ զնա», պատասխանեաց Աղրիանա։ «Բայց գուցէ
ոչ բաւականաչափ», ետուն աբբատուհին։ Աղրիանա
կամելով հաւաստեցուցանել զաբբատուհին զի առաւել
քան զբաւականն ասացեալ էր որինչ արժան էր՝ առն
իւրում, «անվերջանալի իմն առարկայ էր այլ», պա-
տասխանեաց, «խօսակցութեան մերոյ միշտ. յան-
կողնի իսկ թոյլ չտայի նմա ննջել՝ անպատար խօսելով
ընդ նմա զբանէդ, ի սեղան կերակրոյ արգելուի զնա
յուսեալ՝ յիշելով զնոյն բան. յորժամ յառանձնու-
թեան գտանէաք, զրոյց իմ ոչինչ էր քան զայլ, և
յայցելութեան բարեկամաց իսկ և ի մէջ ընկերակցու-
թեան՝ առնէի յաճախ ակնարկութիւնս առ այն և զնո

ևս ի վերայ բոլոր բանից և սրանջանաց իմոց. սեւ որքան չար և ապիրատ էր նա, զի սիրէը զայլ սիկին մի առաւել քան զիս զկին իւր»։

Աբբատուհին՝ այսպէս որպէս թէ ի բաց քարշեալ զայս բացարձակ խոստովանութիւն ի բերանոյ յաչագոտա և նախանձաբնոյթն Ագրիանայի, ասաց, «Ուրեմն արդարև, այդ է պատճառ խելագարութեան առն քոյ։ Թուենաւոր մշտակարկաչ սրտունջ նախանձաբնոյթ կնոջ միոյ՝ առաւել ևս մահացու է՝ քան զառաջն կատաղի շան միոյ։ Որպէս երևի, քուն նորա հատեալ էր յաչաց մշտական կծանող երկիծանութեամբք քոյ. և զինչ զարմանանք, թէ շիոթեալ է ուղիղ զլխոյ նորա։ Կերակուր նորա համեմեալ էր նախատանօք և կշտամբանօք, և այսպիսի կերակուր չկարէ՝ քան պատճառել անմարսողութիւն, և այդ ձգեալ է զնա յայս ջերմախտ մահաւոր։ Ասես զու, թէ ժամք հանգստեան եւ զբօսանաց նորա՝ զատնացեալ էին կռուով և ազազակաւ քրիմնջանաց քոց, և այսպէս զրկեալ նորա ի հաճոյական ընկերակցութենէ և ի զուարճութեանց կենաց, զինչ այլ հեռանալոց էր նմա քան մեղմադնոտութիւն և անմխիթար ապաչաւութիւն։ Ամէն իրի ասելի է, թէ նախանձաւորութիւն քոյ միայն՝ լեալ է պատճառ խելագարութեան նորա, և ոչ այլ ինչ»։

Լուսիանա փութացաւ չատապովել զքոյր իւր, ասելով զի, եթէ յանդիմանէը նա զամուսին իւր, միշտ առնէր զայն մեղմով և քաղցրութեամբ. և ապա զարձեալ առ քոյրն, «ընդէ՞ր լաս», ասէ, «զայսոսիկ բանս կշտամբանաց առանց պատասխանելոյ»։ Բայց աբբատուհին այնպէս պարզապէս առաջի եղեալ էր աչաց Ագրիանի զսխալանս իւր, զի միայն զայս ինչ պատասխանել կարաց թէ, «առղ յիմոյ բերանոյ, արդարացի պատապարաէ նա գիս»։

Ագրիանա՝ թէև մեծապէս զամօթի հարեալ էր

ընդ արարս իւր, սակայն տակաւին տիպէը զաբբատուհին յանձնել զամուսին իւր ի ձեռս իւր. այլ աբբատուհին ոչ թոյլ տայր ումեք մատնել ի վանս անդ, և ոչ իսկ հակամիտեալ էր յանձնել զատաբաթխա այրն՝ ի ձեռս նախանձոտ կնոջ իւրոյ, մտադրեալ ինքնին չանալ և քաղցր միջոցովք՝ եթէ հնար էր բժշկել զայրն. վասն որոյ մտեալ ի վանսն հրամայեաց փակել զդրունսն և չտալ ումեք մուտ ի ներքս։

Յընթացս այսր յոգնակիպուած աւուր, յորում տեղի կալեալ էին այսչափ վրէպք և սխալանք՝ ի պատճառս համամտանութեան երկուց եղբարցն, ժամանակն՝ շնորհեալ ի գքնէն ծերունին Լիմոնի, վասն ի ձեռս բերելոյ զդերամս աւազանացն՝ խնդարհէր ի վանճան, քանզի մերձ էր արևմուտս, և ի մտանել արեւու պարտ էր նմա մեռանել եթէ չկարէր վճարել զաւազանն։

Կախաղան սպանութեան նորա՝ էր առ երի կուսանացն. և եհաս ժամանեաց անդ ծերունին Լիմոն՝ փութով զկնի մտանելոյ աբբատուհւոյն ի վանս անդ։ Դուքսն ևս ընկերեալ էր նմա, որպէս զի եթէ ի վերջին կէտ անդ եկեցէ օգ վճարել զդերամս տայժին, ներկայ լինի իւրովի առ տեղեաւն՝ ներել նմա և զերծուցանել զնա ի մահուանէ։

Ագրիանա տեսեալ զդուքսն, յառաջ մատեաւ խնդայն, և ազազակ բարձեալ խնդրէր արդարութիւն, ասելով թէ աբբատուհին զանապայ յանձնել խնամոց նորա զլուսնոտեալ ամուսին իւր։ Այլ մինչդեռ խօսէր նա, Անաիֆօլիս իրական ամուսին իւր և սարսափ նորա Գրօմիօ, որք զերծուցեալ էին զինքեանս յարկելանաց խրեանց, հասին առ դուքսն, և Անաիֆօլիս ևս սկսաւ աղազակել և խնդրել զիրաւունս ի նմանէ՝ գանգատելով, թէ կին իւր կաշկանդեալ՝ յարկելանս եղեալ էր զնա, սաւթեամբ ամբաստանելով զնմանէ գոլ խելա-

գարեալ, յայտնելով նաև թէ որպիսի եղանակաւ յաջողեալ էր ինքեան զերծանիլ ի պահապանաց իւրոց։ Ապրիանա՝ միանգամայն յաղշութիւն կրթեալ, զարհացաւ տեսանել զամուսին իւր, որ՝ որպէս կարծէր, էր ի ներքս ի կուսանոցի անդ։

Էգիոն տեսեալ զորդի իւր՝ խնացաւ խոհոյն, թէ էր նա այն որդի իւր՝ որ գնացեալ էր ի խնդիր մօր և եղբօր իւրոյ. և խնդաց ի միտս իւր, զի խոհոյն վճարելոց էր նա արդ զրաման պահանջեալ ի փըրկանս կենաց իւրոց։ Վասն որոյ յառաջ մատուցեալ, սկսաւ խօսել խանդագատանօք ընդ Անաիփօլիսայ, յուսալով թէ ահա անշուշտ զերծանել ունի ի վտանգէ մահուանն յոր կայր։ Սակայն ի մեծ զարմանս Էգիոնի, ուրացաւ որդի նորա բոլորովին, թէ երբէք տեսեալ էր զնա կամ՝ ճանաչէր զնա, և ոչ իսկ սխալէր նա ի բանս իւր. քանզի այս Անաիփօլիս ոչ երբէք տեսեալ էր զհայր իւր ի ժամանակէ անտի՝ յոր բաժանեցաւ ի նմանէ ի փոթորկի անդ ի ծովու. և մինչ ողորմելին Էգիոն չանայր ծանօթս տալ զանձնէ որդւոյ իւրում, կարծելով թէ գուցէ վիշաք և անձուկ մտաց՝ այնպէս փոփոխեալ էին զդէմս նորա, մինչ չկարել ճանաչել զինքն, կամ գուցէ ամաչէր խոստովանիլ զնա հայր իւր ի Թշուառ վիճակի իւրում՝ յոր կայր. և յայսմ տարակուսի և յերկբայութեան, արբասուհին և միւս Անաիփօլիս և Դրօմիս սարուկ նորա, եկին արտաքս ի կուսանոցէն. և ահա յանկնարին հիացումն և յափշտութիւն իւր, եաս Ապրիանա առաջի իւր, զերկուս առմուխնս և նաև զերկու Դրօմիօս։

Եւ այժմ բոլոր շփոթութիւնք և վրիպանք, որք այնպէս մոլորեցուցեալ էին զմիտս բոլորից, ի վերջոյ պարզեցան ճշմիւ։ Ցորժամ եաս զուքն զերկոսին եղբարն և զերկոսին սարուկն՝ այնպէս միանգամայն համանման միմեանց, խոհոյն գուշակեաց ճշմիւ զբոլոր

զարմանալի եղելութեանց և զսխալանացն զպատճառս, յուշ ածելով զբանս Էգիոնի, զոր պատմեալ էր նմա յառաւօտու. և ասաց, թէ երկու Անաիփօլիք էին որդիք Էգիոնի, և երկու Դրօմիօքն երկուորեակ սարուկք նոցա։

Բայց ահա, այլ մի անակնկալ և ցնծալից յայտնութիւն միանգամայն կատարելագործեալ զպատմութիւն Էգիոնի, և վէպն՝ զոր պատմեալ էր յառաւօտու այնչափ ցաւօք և տրտմութեամբ և մինչ ի ներքոյ վճռոյ մահուան, եղերեցաւ ահա յառաջ քան զմտանել արեւու ի խնդալիր և յերջանիկ վախճան իմն. քանզի պատկառելի արբասուհի կուսանոցին, յայտնեաց զինքն զոլ վաղաժամանակեայ կորուսեալ կին Էգիոնի և մայր երկու Անաիփօլիսաց։

Երևեցաւ ապա, զի ձկնորսն որ էառ զնոսա ի նաւակ իւր ի ծովու՝ ի վտանգի փոթորկին, յորժամ առեալ ի բաց տարաւ զանպըրանկին Անաիփօլիս ի մօրէն, հանդերձ Դրօմիս սարկաւն, առ ի վաճառել զնոսա, մայր մանկանն եմուտ ի կուսանոց անդ, և իմաստուն և առաքինի վարուք իւրով, ապա կարգեցաւ արբասուհի վանացն. և ահա յայն օր ի կատարիլն իւր զպարտիս հիւրընկալութեան, ընդունելով զապերջանիկ այր մի ի վանս անդ, պաշտպան լեալ էր իւր իսկ հարազատ որդւոյ։

Խնդալիր շնորհաւորութիւնք և խանդագատալից համբոյրք սիրոյ և կաթողիկութեան, որ անպակաս եղեն ահա ի մէջ այսոցիկ՝ յերկար ժամանակէ հետէ ի միմեանց բաժանեալ ծնողաց և զաւակաց, մոռանալ եաւն բոլորից, զի Էգիոն տակաւին ճշմայր ընդ վճռով մահուան. այլ յորժամ փոքր մի մեղմացաւ աշխոյժ նոցա, Անաիփօլիս Եփեսացի յանձն էառ վճարել խոհոյն զդէն փրկանաց հօր իւրոյ. բայց զուքն զլացաւ առանալ զայն, և յօժարութեամբ ներեաց Էգիոնի զկեանս իւր, և ընկերեալ արբասուհւոյն և նորագիւտ ամուսնոյ նորա

և զաւակաց ի վանս անդ, ցանկացաւ լսել զպատմութիւն բոլոր անցից անցեալ ընդ նոսա, որ այսպէս ահա եղերեցաւ ի ցնծալից միաւորութիւն բոլորից: Եւ չէ արժան մոռանալ զհրճուանս երկու Դրօմիս եղբարցն իսկ. նոքա ևս՝ ըստ խոնարհ վիճակի իւրեանց՝ արժանացան շնորհաւորութեան և համակրութեան բոլորից, և մէն մի եղբայր փարեալ զմիւսով յայտնէր զհաճութիւն սրտի ընդ կերպարան միւսոյն, ո՛չ սակաւ պարծելով ի տեսանելն (որպէս ի հայելւոջ), յանձն իւր զնդբայր մի բարեհասիլ:

Աղբիանա ո՛չ սակաւ խրատեաց ի բանից սկսօրի իւրոյ, ո՛չ այլ ևս յայնմ օրէ հետէ եղոյց նախանձաւորութիւն լինչ կամ կասկած ընդ այր իւր, այլ եղեւ նմա կամոգին և սիրալիր ամուսին մի:

Անաիֆօլիս Սիրակուսացի, ամուսնացաւ ընդ զանուայն Լուսիանոսի, քեռ կնոջ եղբօր իւրոյ, և բարի ծերունին Էպիոն՝ ընդ կնոջ և որդւոց իւրոց՝ բնակեցաւ յԵփեսոս զամս բազումս: Եւ ո՛չ իսկ պարզմամբ և յայտնութեամբ վեր բոլոր սխալանաց, միանգամայն արգել եղաւ այնոց յոգատնին. այլ երբեմն երբեմն՝ որպէս թէ առ ի յիշեցուցանել նոցա զանցեալսն, ծաղրալի շփոթութիւնք և վրիպանք լինչ զանգի առնուին. մին Անաիֆօլիս կամ Դրօմիս՝ սխալմամբ ի փոխարէն միւսոյն առեալ, և որ պատճառէր ո՛չ սակաւ ծաղր և զուարճութիւն, առնելով զամենայն կատարեալ զեր մի շփոթից և սխալանաց:

ՄԱԿԲԷԹ

Յորժամ արքայն Դնկէն՝ անուանեալն Հեզաբարոյ՝ թագաւորէր ի վերայ Սկովտիոյ, կայր յայմ ժամանակի Թէն կամ Սեպուհ ոմն անուանեալ Մակբէթ, և այս Մակբէթ էր մերձակայ ազգական արքային, և մեծապէս պատուեալ և սիրեցեալ յարքունիս անդ, վասն քաջագործութեանց իւրոց ի պատերազմունս. զմին յորոց ի նորոյ ցուցեալ էր իսկ՝ նուաճելով զապստամբ գունդ մի զօրաց, որք միաբանեալ ընդ բազմաթիւ Նորմանդացի զօրականաց՝ ամբարձեալ էին զդրօշակ վտարանջութեան:

Երկու Սկովտացի քաջ զօրապետքն Մակբէթ և Բանկօ, գտնուելով այժմ յաղթական յայսմ մեծ ճակատամարտէ, անցանել ճայր նոցա ի ճանապարհի անդ ընդ լայնատարած խոպան անապատ մի, և աստ պիպեցան նոքա տարօրինակ երեւութից լինչ, որք բերէին զնմանութեան կերպարանաց՝ երից պառաւեալ կանանց, միայն թէ ունէին այնք մօրուս ի ծնօտս, և խորշոմեալ մորթ նոցա և անհեթեթ և վայրենի ձև զգեստուց երեւեցուցանէր զնոսա զոլ ո՛չ երկրաւոր լինելութիւն լինչ: Նախ Մակբէթ խօսեցաւ ընդ նոսա, այլ մէն մի յերեւութից որպէս թէ զժամանակեալ ընդ այն, ամբարձեալ զկմախանման չոր ու ցամաք մատն իւր, եպ ի վերայ շրթանց որպէս նշան լռութեան, և առաջինն ի նոցանէ սղջունեաց զՄակբէթ, որպէս Թէն կամ Սեպուհ Գլէմիսայ: Ո՛չ սակաւ զարմացաւ զօրապետն ընդ

այս, զի ինքն և սիրտս իւր՝ ծանօթ էին այսոցիկ սարօրինակ արարածոց. այլ ո՛րքան առաւելաւ զարմանք նորա, յորժամ երկրորդն ի ճիւաղիցն ողջունեաց զնա, որպէս Թէն կապօրայ, առ որ սիրտս չունէր նա բնաւ իրաւունս: Ողջունեաց զնա և երրորդն ասելով, «կեցցէ՛ — կեցցէ՛ արքայդ՝ որում կայ յայսմհետէ Թագաւորել»: Ակոլախի մարգարէական բան ինչ ողջունի, արդարև զարմացուցանել ունէր զՄակբէթ. քանզի գիտէր նա, Թէ ո՛րչափ կենդանի էին որդիք արքայի, ի զուր էր յուսալ ինքեան երբէք յաջորդել աթոռոյ նորա: Ապա զարձեալ ճիւաղացն առ Բանկո, մարգարէացան վասն նորա ևս, մերին և խորհրդաւոր բանիւք ինչ՝ ասելով, Թէ սաւրնագոյն է լինելոց նա քան զՄակբէթ, սակայն և մեծագոյն, ո՛չ այնչափ երջանիկ որպէս նա, սակայն երջանկագոյն. և զի Թէև չունէր նա Թագաւորել ինքնին, սակայն որդիք նորա նստելոց էին յաթոռ Ակոլախիոյ: Ցնա բանիցս այսոցիկ, ամբարձեալ ճիւաղացն յօդս, անհետութեացան յաչաց, որով խսկոյն զիտացին զօրապետքն, Թէ վհուկք էին այնք կամ քորք խաւարաշրջիկք:

Մինչդեռ զկայ առեալ՝ ձիային նոքա յարշաւեան ընդ վեպքն սարօրինակ, եկին հասին առ նոսա պատգամաւորք ի Թագաւորէն, որք բերեալ էին վասն Մակբէթայ՝ զշուք և զսիտոյս լինելոյ յայնմհետէ Թէն կապօրայ. և այս վազվազ և աքանչելի լրումն գուշակութեան վհկացն՝ այնպէս բոլորովին գրաւեաց զՄակբէթ յանհնարին զարմացումն, մինչ զի չկարէր պատասխանել բանից պատգամաւորացն, և առ ժամն զարԹեաւ՝ ամբարձաւ ի միտս նորա հրապուրիչ յոյս իմն՝ Թէ նոյնպէս լրանալոց էր Թեբեաս և երրորդն ի գուշակութեանց վհկացն, և զի ամբառնալոց էր ինքն յաւուր միում յաթոռ արքայութեան Ակոլախիոյ:

Դարձեալ ապա առ Բանկո, ասաց ցնա, «ահ-

սեալ քոյ ահա զայսպիսի արագ և զարմանալի լրումն գուշակութեանն զոր լուաք, չառածե՞ս և դու յոյս ի սրտի, Թէ սերունդք քոյ Թագաւորելոց են յաւուր միում»: «Ա՛յսպիսի յոյս», պատասխանեաց Բանկո, «բորբոքելոց է գուցէ զիս սրտի քոյ, նկրտիլ ի ձեռս բերել զաթոռ Թագաւորութեան. սակայն այսոքիկ խաւարային ոգիք՝ բազմիցս յայտնեն մեզ ճշմարտութիւնս յիրս Թեթևս, առ ի մղել զմեզ ի մեծամեծ և վտանգալիր հետևանս իրողութեանց»:

Սակայն չարահնար բանք վհկացն, շատ ինչ խոր տպաւորութիւն արարեալ էին ի միտս Մակբէթայ, առ ի Թոյլ տալ նմա շահիլ ի զգուշաւոր բանից Բանկո զօրապետի. և յայսմ օրէ հետէ բոլոր մտածութիւնք իւր և խորհուրդք, կեդրոնացեալ էին ի վերայ միոյ ևիթ նպատակի, այն է՝ Թէ ո՛րպէս իրացուցանել կարէր զաթոռ Թագաւորութեան Ակոլախիոյ:

Մակբէթ ի գառնալն ի տուն՝ յայտնեաց կնոջ իւրում զգուշակութիւն ճիւաղացն, և զմասամբ լրումն գուշակութեանցն. և կին նորա գոլով չարամիտ և փառասէր անձն մի, ուրախացաւ ընդ այն, և ըղձայր ի սրտի զի միայն հասցէ այր իւր մեծի իշխանութեանն, չէր փոյթ Թէ զնարկ կամ որով եղանակաւ: Վասն որոյ, սկսաւ գրգռել և մղել անդադար զայր իւր, ընդդէմ հակամիտութեան նորա՝ քանզի նահանջէր Մակբէթ ի գործոյ արիւնահեղութեան, և առաջի գնէր կնոջ իւրոյ, զի առաջին քայլ լցուցանելոյ զհաճոյական գուշակութիւն վհկացն՝ էր սպանութիւն Թագաւորին:

Եւ եղեւ զի յայսմ ժամանակի Թագաւորն, որ բազմիցս արքայավայել զիջմամբ, հաճէր այց առնել աղնուականաց իւրոց, եկն ի տուն Մակբէթայ հանդերձ Մէլքոմ և Դօնալբէյն երկու որդւովք իւրովք, և բազմաթիւ խմբով պալատականաց և պաշտօնէից. և զայս արար առ ի մեծ ևս ցուցանել պատիւ Մակբէթայ ի

սակս պատերազմական յաղթութենանց նորա և յաջողաձեռն քաջագործութենանց։

Ամրոց Մակբէթայ, ունէր զուարճալի և հաճոյական լին դրութիւն. օդ տեղւոյն գոլով քաղցր և առողջարար, որով ծիծառունք և այլ թռչունքդեղեցիկ՝ կազմեալ էին բոյս յանկիւնս և ի խորշս պարսպացն, կամ ուր ուրեք և գտեալ էր նոցա տեղի յարմար. քանզի ասի, թէ այսոքիկ թռչունք, յաճախեն և աճին յայնպիսի վայրս միայն՝ ուր մաքուր է օդ և բարեխառն։ Եմուտ թագաւորն անդ՝ ցուցեալ հաճութիւն մեծ ընդ տեղին, և ոչ նուազ հաճութիւն ընդ շքեղ ընդունելութիւն և մեծարանն՝ մատուցեալ ինքեան ի տիկնոջէն Մակբէթայ, որ ճարտար էր յոյժ ի ծածկել զդառնաճաշն խորհուրդ մտաց իւրոց՝ ի ժպիտ քաղցր, և ցուցանել զինքն իբր ծաղիկ մի վայելչագեղ, մինչդեռ իրապէս իժ մի էր, գարանեալ ընդ ծաղկամբ։

Թագաւորն խոնջեալ գոլով ի վաստակոց ճանապարհորդութենանն, հրաժարեցաւ գնալ յանկողին, կանուխ քան զսովորականն. և ի գահլիճ ննջարանի նորա՝ սենեկապանք երկու, (որպէս սովորութիւն էր յայնժամ), ննջէին ընդ նմա։ Առաւել քան զսովորականն հաճեալ և խնդամտեալ գոլով արքային ընդ ընդունելութիւն իւր յայն օր, յառաջ քան զհրաժարումն իւր յանկողին, բաշխեալ էր պարգեւս զլխաւոր պաշտօնէից, և նաև առաքեալ էր շքեղ ապահանդ մի տիկնոջն Մակբէթայ, հանդերձ ողջունիւ մեծարանաց՝ վասն քաղցր հիւրընկալութենան նորա։

Հասարակեալ էր արդ գիշեր, յորժամ բնութիւն ըստ մեծագոյն կիսոյ՝ ննայ որպէս մահացեալ, և երազք չար ամբոխեն զանդորրութիւն մտաց մարդկան. և յորժամ ոչ այլ ոք քան գայլք և մարդասպանք միայն շրջին արտաքոյ, և այս էր ժամն ահա, յորժամ տիկնին Մակբէթ զարթեաւ ի հնարել զսպանութիւն թագաւորին։ Զունէր նա յանձն առնուլ գուցէ զգործ ինչ այսպիսի, որ բոլորովին պժգալի է բնաւորութեան սեռի իւրոյ, այլ կասկածէր թէ սիրտ առն իւրոյ, որ չէր թափուր ի գթոյ մարդասիրութեան, լքանիցէ կատարել զզարհուրելի սպանութիւնն։ Գիտէր նա, զի այր իւր ևս փառասէր էր. այլ նաև գիտէր, զի պատկառէր նա ի խղճէ մտաց, և զեռ չէր ի պատրաստի, ձեռն արկանել յայնպիսի մեծ գործ եղեռնական, յոր մղել կարէ զդք՝ միայն անկոտոր խղճ փառասիրութեան։ Համոզեալ էր զկամս նորա ի գործ սպանութեանն, այլ կասկածէր զհաստատամտութենէ նորա, և երկնչէր, թէ բնական հակամիտութիւն նորա և բոյս բարուց, (որ առաւել մարդասիրական էր քան զիւր) խոչ անկեալ ի միջի՝ ապարդիւն առնիցէ զկէտ նպատակի իւրոյ։ Ամին իրի ինքնին ի ձեռն առեալ զդաշոյն մի սայրասուր, մերձեցաւ յանկողին արքային, նախապատրաստութեամբ՝ արդէն այնպէս յղփացուցեալ ի վայելս զինոյ զսենեկապանս նորա, մինչ զի ննջէին նոքա ի խոր քուն արբեցութեան, անփոյթ զպաշտօնէ պահպանութեան իւրեանց։ Ինդ տարածեալ ի վերայ անկողնոյն՝ ննջէր արքայն ի քուն թանձր, վաստակեալ ի ճանապարհորդութենէ իւրմէ. և մինչ յառեալ նշմարէր զկէտս նորա սիկինն Մակբէթ, թուէր նմա տեսանել ի կէտս նորա, յանդգնութեան անդ քնոյ, զնմանութիւն իմն հօր իւրոյ, և այս լքանէր զձեռս նորա և զքաջութիւն սրտի, ի գործել զոր կամէրն գործել։

Վերադարձեալ ի խորհրդակից ընդ ամուսնոյ իւրոյ, եաես զի և նա սկսեալ էր յողդողդիլ ի միտս, և յառաջ ածէր զծանր և զկարևոր պատճառս ընդդէմ կատարման ահռելի գործոյն։ Նախ՝ ասէր, ոչ միայն էր ինքն մին ի հպատակաց արքային, այլ և մերձակայ ազգական նորա. և նաև՝ զի յայդմ աւուր հիւր էր նա ի տան իւրեանց, որով պարտականութիւն էր նոցա՝

ըստ օրինի հաւրնկալութեան՝ զերծուցանել զկանոն նորա ի վտանգէ մահու, և ոչ թէ մերձենալ առ նա սուր ի ձեռին: Եւ ապա սկսաւ յիշել, թէ քանի՛ արդար և աղօրմած էր լեալ արքայն միշտ առ ամենեսին. թէ որպէս ոչ երբէք առիթ եղեալ էր իւիք անգթութեան կամ վնասու առ հպատակս իւր, թէ որչափ սէր մեծ ցուցեալ էր առ ազնուականս իւր, և մանաւանդ առ ինքն. և թէ որպէս երկինք առանձին խնամօք միշտ հսկեն կենաց այսպիսի ժողովրդասէր թագաւորաց, և հպատակք նոցա անդադրելի քինու վրէժխնդիր լինին մահուան նոցուն: Եւ թող զայս ամենայն, ասէր Մակբէթ, շնորհօք արքային վայելէր ինքն ահա վարկ մեծ յաչս բոլոր մարդկան, և վիճրդ կարէր եղծանել՝ արամաւորել զշուք իւր և զհամբաւ, այնպիսի սարսռելի գաւաճանական գործով սպանութեան:

Յայսոցիկ բանից՝ սիկինն Մակբէթ գիտաց, թէ այր իւր հակամիտեալ էր հետևել յաւէտ բարեզոյն ազգմանց սրտի իւրոյ, և կամէր կասել զոան իւր ի վտանգաւոր ընթացիցն: Այլ գոլով նորա կին մի, որ ոչ վիրաւ և վազվազ նահանջէ ի չար նպատակէ ինչ, սկսաւ հեղուլ յականջս նորա բանս այնպիսիս, որով մասամբ ներշնչել սկսաւ զթոյն ոգւոյ իւրոյ ի միտս նորա, բարկելով պատճառս ի վերայ պատճառաց՝ ի ցուցանել թէ ընդէ՞ր արժան էր նմա չնահանջել ի կատարելոյ զգործն: Ցուցանէր նմա, թէ որչափ վիրին էր այն, թէ որպէս յականն թօթափել հնար էր կատարել զայն, և թէ որպէս գործ միայն կարճատ և գիշերոյ խաւիք, ընդ բոլոր տիս և գիշեր՝ զամս յոլովս՝ տալոց էր նոցա իշխել աթոռոյ թագաւորութեան միոյ: Այսպա սկսաւ խօսել առ նա քաջահանդոյն, վասն յողոդողդութեան մտաց նորա, ամբաստանէր զնմանէ գոլ փոփոխամիտ և երկչոտ, և ասէր, թէ որպէս մայր մաւակարարեալ էր ինքն կաթն ի ստենից, և գիտէր իսկ,

թէ քանի քաղցր էր սիրել զմանուկն՝ որ սնանէր անաւի. սակայն մինչդեռ ժպտէր իսկ այն յերեսս իւր, ի բաց խլեալ զնա ի ստենից իւրոց և հարեալ զգետնի, ցրուելոց էր կուզեղ նորա, եթէ երդուեալ էր իւր այնպէս առնել, որպէս երդուեալ էր ամուսին իւր կատարել զսպանութիւնն: Ցետոյ յաւել ի վերայ, թէ որպէս զիւրին էր գնել զյանդգնս սպանութեանն՝ ի վերայ արբեցութեամբ թմրեալ պահապանացն: Եւ ի վերջոյ ուժով և ազդեցութեամբ անզգամ լեզուի իւրոյ, այնպէս մարակեալ զրգռեաց զվանդազութիւն մատրութեան նորա, զի վերստին անգամ ի վերայ հաւաքեաց նա զոյժ անձին ի գործն արիւնահեղ:

Վասն որոյ առեալ Մակբէթայ զսուրն ի ձեռին, մեզմով և գողաբար սողաց ի ներքս ի մթան անդ ի սենեակն, ուր ննջէր Դնկըն. և ի գնալն իւր թուէր նմա, որպէս թէ այլ սուր մի շողայր յանդիման իւր յօդ անդ՝ երակակալ սրոյն լարեալ առ ինքն, և յորոյ ծայրէ հոսէին շիթք արեան. բայց յորժամ լարեաց զբազուկ իւր ըմբռնել զայն, եգիտ ոչինչ այլ օդ միայն առ աչօք երևոյթ ինչ՝ յառաջ եկեալ ի խանգարեալ երևակայութենէ իւրոյ և յահռելի գործոյն առաջի իւր:

Թօթափեալ ի մտաց զսարսուռ երկիւղին, եմուտ ի ննջարան արքային, և միով սաստիկ հարուածով սրոյ իւրոյ սպան զնա: Իսկոյն յետ կատարելոյ զգործ սպանութեանն մին ի սենեկապանացն՝ որ ննջէր անդ՝ ծիծաղեցաւ յերազի, և միւսն ազաղակեաց բարձրաձայն, «սպանութի՛ւն», և այս զարթոյց զնոսա ի քնոյ. այլ երկոքին նոքա աղօթեալ վայրկեան մի, մին ի նոցանէ ասաց, «Ողորմեա մեզ Տէր», և միւսն պատասխանելով, «ամէն», կրկին ննջեցին: Մակբէթ՝ որ ունկն գնէր բանից նոցա, ցանկացաւ և ինքն ասել «ամէն», յորժամ սենեկապանն ասաց, «Ողորմեա մեզ Տէր». և թէև առաւել կարօտէր նա ողորմութեան քան այլ ոք, սակայն

կսկորգ նորա՝ որպէս թէ ի խեղդ անկեալ՝ չկարաց արտասանել զբառն։

Դարձեալ Թուէր նմա լսել ձայն ինչ որ ասէր, «Մի ևս ննջեր, Մակբէթ սպան ահա զքուն, զքուն անմեղութեան՝ որ մնուցանէ զկեանս». և շարունակէր ձայնն կրկնել, որպէս թէ առ բոլոր առնն, «Մի ևս ննջեր, Գլէմիս սպանեալ է զքուն, և վասն որոյ կապօր ոչ ևս ունի ննջել, Մակբէթ ոչ այլ ևս ննջելոց է»։

Այսպիսի սարսուռի խանգարմամբ երևակայութեան, գարձաւ Մակբէթ առ կին իւր, որ ունկն դնէր արտաքոյ սենեկին, և կարծէր թէ վրիպեալ էր նա ի կատար ածել զնպատակ իւր, և գործն արեան մնայր դեռ անկատար։ Եւ յորժամ եկն նա առ կին իւր, ամպէս զարհուրեալ և շփոթեալ, վերջինդ սկսաւ կշտամբել զնա վասն թուլամտութեան նորա, և առաքեաց զնա լուանալ զարիւնաշաղախ ձեռս իւր. և առեալ ինքն զդաշոյն՝ եմուտ ի ննջարանն, մտապրեալ շաղախել զերեսս սենեկապանացն արեամբ, առ ի երևեցուցանել զնոսա գոլ գաւապարտ՝ վասն անօրէն գործոյն։

Ի վերայ եհաս առաւօտ և ընդ նմին և յայտնութիւն սպանութեանն, զոր անհնար էր ծածկել. և թէև Մակբէթ և կին իւր կեղծմամբ լալ և կսծել սկսան մեծապէս, և արիւնաշաղախ զէմք սենեկապանացն ևս բաւական ապացոյց էր մեղապարտութեան նոցա, սակայն բոլորեքեան կասկածել սկսան զՄակբէթայ, որոյ շարժաւթէ առ այսպիսի գործ իմն, երևէր գոլ առաւել զօրաւոր քան որչափ երբէք լինելոց էր աղքատիկ և յիմար սենեկապանաց այնոցիկ. և երկու որդիք Դնկընայ՝ խոկոյն փախեան ի բաց։ Մէլքոմ՝ երիցագոյնն ի նոցանէ՝ ապաստան անկաւ յարքունիս Անգղիոյ, և Դոնալբէյն վերծաւ ի կղզի Իրլանդիոյ։

Որով արքային՝ որում յաջողել մնայր հօր իւրում, այսպէս փախստական գնացեալ, Մակբէթ որպէս

ժառանգ աթոռոյն՝ օծաւ թագաւոր, և կանխագուշակութիւն վէհացն, իրապէս լրումն էառ ահա։

Թէպէտև ամբարձեալ այժմ յայս աստիճան բարձրութեան, սակայն Մակբէթ և թագուհի իւր՝ չկարէին մոռանալ զդուշակութիւն վէհացն, որով յայտնեալ էին զի Մակբէթ ինքն թագաւորելոց էր այլ ոչ որդիք իւր. և սերունդ Բանկոի յաջորդելոց էին նմա, յաթոռ անդ։ Խորհէր և խոկայր նա զայսմանէ, և զի շաղախեալ էր զձեռս իւր յարեան, և գործեալ զայսպիսի ոճիր ահագին, միայն՝ վասն զսերունդս Բանկոի ժառանգ կացուցանել աթոռոյն, և այս խորհուրդ անպատար առնչելով և կեղեքելով զսիրտ նորա, ինքն և կին իւր հաստատեցին ի մտի, սպանանել նաև զԲանկո և զորդի իւր, առ ի խափան գնել լրման դուշակութեան խաւարաշրջիկ քերցն, որ ի մասին իւրեանց լրացեալ էր, այնպիսի նշանաւոր եղանակաւ։

Այսու նպատակաւ՝ պատրաստեցին նորա զմիջոհանդէս խրախճան ընթրեաց, առ որ հրաւիրեցին զբոլոր գլխաւոր թէնս և զազնուականս, և ի մէջ բոլորից յատուկ պատուասէր հրաւիրանօք իմն՝ նաև զԲանկո և զՖլէանս որդի նորա։ Ի ճանապարհին՝ ընդ որ անցանելոց էր Բանկո գալ առ պալատն արքունի, պատահամաւ արարեալ էր Մակբէթ վնասուք իմն արանց մարդասպանից, որք ի սեսանելն զԲանկո, ի վերայ յարձակեալ՝ վիրաւորեցին զնա ի մահ, այլ ի շփոթի անդ՝ վերծաւ Ֆլէանս որդի նորա։ Յայսմ Ֆլէանսայ ապա սերեցաւ հարստութիւն իմն թագաւորաց, որք իշխեցին յաթոռ Սկովտիոյ մինչ ցժամանակ Յակոբայ վեցերորդի, որ՝ ապա յորժամ միացաւ իշխանութիւն Սկովտիոյ և Անգղիոյ, թագաւորեաց յԱնգղիա որպէս Յակոբոս առաջին։

Ի խրախճան անդ ընթրեաց, թագուհին այնպիսի քաղցր և չնորհաշուք հիւրընկալութեամբ պատուասիրէր

զամենեսին, մինչ ամրակել և զրաւել զսիրտ բոլոր ներկայ եղելոց անդ. և Մակբէթ ևս յոյժ սիրով և մտերմաբար զրուցելով ընդ ազնուականաց իւրոց, ասէր, թէ բոլոր արժանաւոր և պատուական անձինք աշխարհի իւրոյ, ահա գտանէին ընդ յարկաւ իւրով, միայն եթէ ներկայանայր և լաւ բարեկամ իւր Բանկո, զոր յուսայր գեռ միայն յանդիմանել ունէր վասն յամեցման նորա, քան վրիպիլ ի յուսոյ ներկայութեան նորուն: Այլ վերջին բանքդ հազիւ թէ ելեալ էին ի շրթանց նորա, յորժամ Բանկո, զոր ի ձեռն անօրէն համախոհից սպանեալ էր արդէն, եմուտ ի սենեակն և նստաւ ի վերայ աթոռոյն, յորում Մակբէթ ինքնին նստել կամէր: Մակբէթ, թէև էր այր մի յանդուգն և աներկիւղ, և որ զիմաւորել կարէր նա իսկ զիւի միոյ՝ առանց սարսռելոյ, սակայն ընդ այս ահեղ տեսել՝ այլագունեալ զալիացաւ յերկիւղէ, և բոլորովին չքեալ ի զօրութենէ ձեաց կանգուն, բևեռեալ ունելով զաչսն ի վերայ հոգեղէն երեւութին: Թագուհին և բոլոր ազնուականք, որք չտեսանէին զերեւոյթն, ի նշմարելն զի յառեալ էին այնպէս աչք Մակբէթի առ աթոռն, կարծեցին թէ ծայր նա ի վայրկենական բացակայութեան ինչ մտաց. ուստի թագուհին մեղմով յանդիմանեաց զնա, հձձելով յունկն նորա, թէ պարձեալ միանգամ շփոթութիւն երեւակայութեան էր այն, որ ցուցեալ էր նմա զպաշտն մի յոգ անդ՝ յորժամ սպանանել կամէր զԴնկէն: Բայց և այնպէս Մակբէթ տեսանելով գեռ առաջի իւր զհոգեղէն երեւոյթն, և անփոյթ զբանից, զոր խօսէին ընդ նմա այլք, սկսաւ ուղղել զխօսակիշխութիւն բանս ինչ առ երեւոյթն, բայց այնպիսի խմաստաւոր բառիւք, մինչ զի թագուհին երկուցեալ, թէ գուցէ յայտնեսցի այնու՝ զարհուրելի ծածուկ իւրեանց, մեծաւ շուտափութիւնեամբ ի բաց արձակեաց զհրաւիրականսն՝ յայտնելով նոցա թէ հիւանդացեալ էր թագաւորն և բազմիցս վշտանայր նոյն իսկ հիւանդութեամբ:

Ահա ի ներքոյ այսպիսի զարհուրելի խանգարման երեւակայութեան ճնշէր Մակբէթ: Թագուհին և նա ոչ այլ ևս վայելել կարէին զքուն անպորը, քանզի երազք զարհուրելիք անդադար խռովէին զնոսա. և որչափ արիւն Բանկոի շիոթէր և կեղևքէր զհոգիս նոցա, այնչափ և փախուստ Ֆլիանսայ որդւոյ նորա զնոյն առնէր, քանզի ի նմա տեսանէին արդ զհայր սերնդոցն՝ որք յաջորդել ունէին աթոռոյ իւրեանց: Յայսոցիկ տագնապալից խորհրդոց՝ խաղաղութիւն և հանգիստ մտաց բարձեալ ի նոցանէ, ի վերջոյ Մակբէթ հաստատեաց ի մտի զնալ ի խնդիր քերցն վհկաց, առ ի սատուկել ի նոցանէ զվախճան իրին, թէ և չար իսկ էր այն՝ որպէս կասկածէին ինքեանք:

Որոնեալ եգիտ զնոսա յայրի միում, ի լայնատարած խոպանացեալ անապատի անդ, ուր կանխազիկոյց լեալ վհկացն զգալատենէ նորա, պարապեալ կային ի պատրաստութեան սարսռելի հմայից իւրեանց, որով սովոր էին կոչել զոգիս ժժխայինս՝ առ ի յայտնել ինքեանց զղէպս ապառնեաց: Զարհուրելի էին նիւթք հմայից նոցա. գորաք, ջղկունք և խիք, աչք գաժան զեռնոց և լեզու շան, սրունք մողէսի և թևք գիշերաթռիչ բուոց, մորթ վիշապի և առաւծ գայլոյ, խաշաց գիշատիչ գայլաձկան ծովու և մումիա վհկի, արմատ թունաւոր անկոյ ինչ (առ ի գտանել զազգեցիկ զօրութիւն, որոյ արժան էր քանզել զայն ի խաւար գիշերոյ) լեղի այծու և լեարդ Հրէի միոյ, առչեղք ուռենւոյ՝ որ արմատ հաստատէ ի գերեզմանս մեռելոց՝ և մատն մեռեալ սանդի մանկան: Զայսոսիկ ամենայն եգեալ էին ի կաթսայ մի՝ եռալ ի վերայ հրոյ. և քանիցս անգամ և եռայր, և բարձրանայր ճենճեր, սպղէին զայն արեամբ կապկի միոյ: Յաւելին յայս վհուկքն՝ նաև զարիւն վարազու միոյ, որ կերեալ էր զձագ իւր, և արկին ի բաց անդ՝ զճարպ հաւաքեալ ի տեղւոջէ

գլխատման մահապարտից: Եւ այսոքիւք հմայիւք էր, զի պարտաւորէին զհոգիան չար՝ պատասխանել հարցմանց իւրեանց:

Հարցեալ վհկացն ցՄակբէթ, թէ ընտրելոցդ էր արդեօք պարզել զկարծիս երկբայութեան իւրոյ, ի ձեռն իւրեանց, թէ ի ձեռն տեառց իւրեանց՝ չար ոգւոցն. Մակբէթ աներկիւղ ի զարհուրելի հմայագործութենէն՝ զոր տեսանէր առաջի իւր, համարձակապէս պատասխանեաց, «ասա՛ր են ոգիքն, թոյլ տուք ինձ տեսանել զնոսա»: Եւ վհուկքն կոչեալ զհոգիսն, որք նոյնպէս երեք էին թուով: Առաջինն ի նոցանէ՝ երևեցաւ ի նմա նութիւն եղջերաւոր գլխոյ մխոյ, և յորջորջեաց զՄակբէթ յանուն նորա, և հրամայեաց նմա զգուշանալ ի Թէնայ Ֆայֆայ, (այլ մի սեպուհ սկովտացի), առ որ շնորհակալ եղև Մակբէթ, քանզի արդէն կրէր նախանձ ի սրտի, առ Մակդըֆ Թէն Ֆայֆայ:

Երկրորդ ոգին՝ երևեցաւ ի նմանութիւն արիւնաթաթաւ մանկան մխոյ, և յորջորջեալ նոյնպէս զՄակբէթ յանուն նորա, հրամայեաց նմա չերկնչիլ բնաւ ի մարդկային ուժոյ, այլ քամահել և ծաղրել զայն, քանզի կանացածին ոք չկարէր երբէք վնասել նմա. և խրատեաց զնա լինել արիւնախանձ, յանդուգն և անյողդող ի միտս: «Ուրեմն կեանք քոյ խնայեսցի, ո՛վ Մակդըֆ», ազաղակեաց Մակբէթ. «զինչ փոյթ է ինձ զքէն, կամ զինչ երկիւղ մինչ չկարես դու վնասել ինձ. բայց և այնպէս առ ի բոլորովին անկասկած առնել զիս, մեռանիլ պարտ է քեզ, զի համարձակօրէն ասացից ցդալկապէմն երկիւղ, թէ սուտ խօսի նա, և զի ննջեցից անպորր և ի թնդմունս որոտմանց»:

Յաներևութանալ այսր ոգւոյ, ել յարեաւ այլ մի ի ձև մանկան մխոյ, ունելով պսակ ի գլուխ և ոստ ծառոյ ի ձեռին: Ցորջորջեաց և սա զարձեալ զՄակբէթ յանուն նորա, և հաւաստի արար զնա, թէ ազատ էր

ձեալոց ի զաւակրութենէ թշնամեաց, ասելով թէ ո՛չ երբէք պարիսպ կամ նաւաճիլ ունէր նա՝ որչափ անսասան Բրնամայ, որ ձգտէր մինչ ցբլուր Դնսինէնայ, չէր յառաջ խաղացեալ ընդդէմ իւր: «Բարի՛ նշանք, քաջդ գուշակութիւնք» ձայնեաց Մակբէթ, «ով կարէ տեղափոխ առնել զանտառ մի, կամ շարժել զայն՝ յորժամ հաստատեալ է յերկրի: վասն որոյ յայտնի է ահա, թէ ձգեսցի կեանք իմ ցսովորական երկարութիւն կենաց մարդկան, և ո՛չ խղեսցի թել այնորիկ, բուռն և վաղահաս մահուամբ: Սակայն սիրտ իմ սրոփէ՝ առ ի պիտել զայլ մի ինչ. ասա՛ ինձ եթէ կարես գուշակել և զայն, թէ արդեօք սերունդք Բանկօի նստելոցդ են երբէք յաթոռ թագաւորութեան երկրիս այսորիկ»: Ընդ այս բան, կաթսայ հմայիչ թաղեցաւ ի գետնի, և լսելի եղեալ ձայն ինչ երաժշտական, ութ տասնեւրակաւ երևոյթք՝ նմանութիւն ունելով թագաւորաց, եկին անցին առաջի Մակբէթայ, և Բանկօ՝ որ վերջինն էր ի սոցանէ՝ տեսանէր ի ձեռին գհայելի մի, յոր երևէին կերպարանք այլոց թագաւորաց. և Բանկօ բոլորովին արիւնաթաթաւ, գարձեալ առ Մակբէթ ժպտեցաւ առ նա, և մատնացոյց արար նմա զկերպարանսն որ ի հայելւոջն, որով գիտաց Մակբէթ, թէ էին այնք սերունդք Բանկօի, որք թագաւորել ունէին ի Սկովտիա: Եւ վհուկքն մեղմ և քաղցրաձայն երգով և պարելով, խոնարհեցուցեալ զգլուխս իւրեանց առ Մակբէթ, որպէս ի նշան ողջունի հրաժարման՝ անհետացան ի բաց: Եւ յայսմ ժամանակէ հետէ՝ խորհուրդք և մտածութիւնք Մակբէթայ՝ յածէին զարիւնահեղ և զարհուրելի գործովք մխայն:

Յելանեն Մակբէթայ ի քարայրէ վհկացն, առաջին լուր զոր լուաւ, էր, զի Մակդըֆ Թէն Ֆայֆայ փախուցեալ էր առ Անգղիա, յարիլ ի բանակ զօրուն, զոր Մէլքոլմ՝ անպրանիկ որդի նախկին թագաւորին՝

կազմէր առ ի մերժել զինքն յաթոռոյ հօր իւրոյ, և ահրանալ նմա որպէս հարազատ ժառանգ այնորիկ: Ընդ այս սաստիկս զայրացեալ Մակբէթայ, յարձակեցաւ կատաղութեամբ ի վերայ Մակդըֆ ամրոցի և մաշեաց ի սուր զկին և զմանկունս նորա, և զամենեսեան որք ունէին հեռաւոր ազգականութիւն իւր ընդ նմա:

Այս և այլ բազում սոյնօրինակ գործք, պատճառեալ պժգանս և զայրոյթ ի միաս զլխաւոր ազնուականաց նորա, խորշիլ՝ խորհրդանալ սկսան ի նմանէ. և նորա որք կարէին՝ լքեալ զնա փախեան ի բաց, միաբանիլ ընդ Մէլքուոմայ և Մակդըֆայ, որք այժմ յառաջ խաղային բազմաթիւ զօրու ւմն, զոր ժողովեալ էին Անգղոյ. իսկ որք ճնացինն, ի ծածուկ փափագէին ի սրտի յաջողութիւն զինուց նոցա, թէև յերկիւղէ Մակբէթայ՝ չկարէին թիկնակից լինիլ նոցա յայտնապէս: Ո՛չ այնչափ փութով զօրաժողով լինիլ մարթացաւ Մակբէթ ինքնին, քանզի ամենայն ոք առէր զբռնակալն. ո՛չ ոք սիրէր կամ պատուէր զնա, այլ ամենեքին կասկածէին և երկնչէին ի նմանէ. և Մակբէթ սկսաւ արդ նախանձելով երանիլ զվիճակ Դնկընայ, զոր սպանեալ էր, և որ արդ հնչէր ի քուն մահու ի գերեզմանի իւրում, ազատ ի գաւաճանութեանց և յերկիւղէ, և որում ո՛չ սուր, ո՛չ առեղութիւն և ո՛չ օտար ազգի զօր կարէր այլ ևս վնասել:

Մինչ այս մինչ այն, թագուհին, որ այնպէս համախոհ և մեղսակից էր լեալ առն իւրում՝ յամենայն գործս եղեռնութեան նորա, և ի ծոց որոյ միայն, երբեմն երբեմն գտանել կարէր Մակբէթ վայրկենական անպորրութիւն ինչ ի սաստափելի երազոցն՝ որով առանջիւր յամենայն գիշերի. մեռաւ, որպէս կարծիւր՝ անձին արարեալ իւրով ձեռամբ, անկարող գտանելով այլ ևս խայթից խղճի իւրոյ, և առեղութեան ժողովրդոց. և վասն որոյ, ճնաց Մակբէթ միայնակ, առանց ունելոյ

զոք երբէք փոյթ առնել ինքեան, կամ համակրել և կամ սիրել. և չճնաց նմա բարեկամ ոք, որում հաղորդել կարէր զչար խորհուրդս մտաց իւրոց:

Յուսահատիլ սկսաւ Մակբէթ արդ, անփոյթ գոլ զկենաց, և փափագել մահու, այլ և այնպէս լուր մօտալուտ ժամանման զօրաց Մէլքուոմայ, զարթոյց ի նմա որ ինչ տակաւին ճնայր ի սիրտ նորա, նշխար նախկին քաջութեան իւրոյ. և հաստատեաց ի մտի մեռանել (որպէս ասէր) «զրահ ի թիկունս և սուր ի ձեռին»: Թո՛զ զայս, սահմանք խոստմունք վհկացն ևս սրատպղծին զնա պատիր յուսապրութեամբ, և նաև յիշէր զբան չար ոգւոցն՝ զոր ասացեալ էին, թէ կանացածին ոք չկարէր վնասել նմա, և չունէր պարտիլ յուժեղէ, ցորչափ անտառ Բրնամայ չէր սեպաշարժ եղեալ առ Դնսինէն, զոր ի հարկէ բնաւին անհնարին ինչ կարծէր գոլ: Վասն որոյ փակեաց զինքն յամրոցի իւրում՝ որ բաւական անառիկ էր ընդդիմանալ պաշարման, և անդ սպասէր պատնագին հոգւով ժամանման Մէլքուոմայ:

Ցայսմ ժամանակի, յանկարծ յաւուր միում, եկն առ նա սուրհանդակ մի, յայնպիսի սաստիկ ահի և ի զողման, մինչ զի հազիւ կարէր յօդել բանս, առ ի յայտնել նմա զոր տեսեալն էր: Այլ ի վերջոյ յայտնեաց նա, զի մինչ հսկէր ի վերայ բլրոյ միոյ, պարձուցեալ զաչս իւր առ կողմն Բրնամայ՝ թուեալ էր ինքեան, որպէս թէ անտառն սկսեալ էր շարժել ի տեղւոջէ: «Ո՛վ զու ստախօս սարսուռ անարգ», ձայնեաց Մակբէթ, «եթէ սուտ իցեն բանք քո, կենդանւոյն կախեցիս զու ի միոյ ի ծառոց անտառին՝ մինչ մեռցիս ի սովոյ. և եթէ ուղիղ իցէ բան քո, չիք ինձ փոյթ, եթէ զնայն զու արասցես ինձ», քանզի Մակբէթ յողդողդիլ սկսաւ ի միաս իւր և երկբայել ընդ երկսայրի բանս չար ոգւոցն: Ասացեալ էին նորա չերկնչիլ երբէք, ցորչափ անտառ Բրնամայ չէր շարժեալ առ Դնսի-

նէն. և ահա որպէս երևէր, շարժեալ էր անտառն։ «Այլ վիճակ և իցէ», ասաց նա, «եթէ բան սուրհանդակին ուղիղ է, ուրեմն արժան է վինիլ և ելանել արտաքս, քանզի ընդունայն է փախչիլ ի բաց, կամ ինալ ասա ի ներքս. ձանձրացեալ է անձն իմ ի լուսոյ արեւու, և փափագելի է ինձ վախճան կենաց»։ Եւ այսպիսի բանիւք յուսահատութեան ի բերան, յարձակեցաւ նա արտաքս ի մէջ պաշարող զօրացն։

Տարօրինակ երևոյթն, որ կարծես տուեալ էր սուրհանդակին, իբր զի շարժի անտառն, վիրէն է բացատրել։ Ցորժամ զօրք թշնամեացն յառաջ խաղային ընդ մէջ անտառին Բրնամայ, Մէլքուէմ որպէս ճարտար և հնարամիտ զօրավար մի, հրաման տուեալ էր նոցա մէն մի հատանել զոսա մի ծառ և կրել ի ձեռին առաջի իւր, առ ի ծածկել այնու՝ զսոյդ թիւ համարոյ նոցա. և այսպէս բոլոր բանակն յառաջ խաղալով ոսա մի ի ձեռին իւրաքանչիւր զօրականի, ի հեռուստ երևեալ որպէս թէ շարժէր անտառն, զարհուրեցուցեալ էր զսուրհանդակն։ Բայց և այսպէս, գուշակութիւն չար ոչուզն ևս ընդոյր, թէև Մակբէթ յայլ միտս խմացեալ էր զայն, և վասն որոյ մեծաւ մասամբ յոյս ակնկալութեան նորա նահանջայր արդ։

Եւ ահա զօրավար էառ սասարիկ ճակատամարտ մի, յորում Մակբէթ՝ որ սաստար ունէր ինքեան՝ յաղամայիցս նուիրեալ սակաւ թիկնակցութիւն ոմանց, որք անուամբ ևեթ բարեկամ էին նորա, և հակամէտ առ կողմն Մէլքուէմայ և Մակդըֆայ, սկսաւ մարտնչիլ անհնարին կատաղութեամբ և ուժով, սրակոտոր առնելով զամենեսին յանդիման իւր, մինչ եկեալ եհաս առ Մակդըֆ։ Տեսեալ զՄակդըֆ, և յուշ ածեալ զբան չար ոգւոյն, որ ասացեալ էր զգուշանալ ի Մակդըֆայ՝ առաւել քան յայ և իցէ մարդոյ. ի բաց դառնալոյ էր ի նմանէ խոհոյն. այլ Մակդըֆ, որ հետամուտ էր հանդիպել նմա երես առ երես, ոչ եա նմա թոյլ դառնալ, և անդէն և անդ զտեղի էառ կատաղի մենամարտութիւն ի մէջ նոցա։ Մակդըֆ պարսեալ առ նա բազում խոստ և անարգ բանս նախատականս՝ վասն սպանանելոյ զկին և զմանկունս իւր, Մակբէթ, որոյ ձեռք արդէն բաւական շաղախեալ էին յարեան ընտանեաց նորա, տակաւին հրաժարել կամէր ի մենամարտութենէ. այլ Մակդըֆ, ևս խոստ բանս լուտանաց արձակեալ առ նա, կոչելով զնա բռնակալ, արիւնախանձ, շուն գժոխային և սրիկայ; սակայնամբ զրգռեաց զնա ի մարտ։

Ցուշ էած այժմ Մակբէթ զբան չար ոգւոյն, թէ «այր կանացածին չկարէր վնասել նմա», և միամտութեամբ իմն ժպտելով ասաց ցՄակդըֆ, «ի նանիր եղիցի վաստակ քոյ՝ Մակդըֆ. եթէ հարկանելով զօդ կարես ազդել ինչ այնմ, կամ վնասել, ապա և ինձ կարես վնասել։ Կեանք իմ կախարդեալ է, ապահովեալ է ի վատոգէ, այր կանացածին չկարէ սպանանել զիս»։

«Ի նանիր է կախարդութիւնդ, պատասխանեաց Մակդըֆ. նոյն ոգի չար, որ գուշակեաց քեզ զայդ, յայտնեսցէ Թո՛ղ քեզ, զի Մակդըֆ չէ ծնեալ ի կնոջէ, կամ լաւ ևս ասել՝ չէ ծնեալ ըստ սովորական օրինի, որով ծնանին մարդիկ, այլ ի տարաժամու ի բաց առեալ յարգանդէ մօր իւրոյ»։

«Անիծեալ լիցի լեզուն՝ որ յայտնէ ինձ զայս», ձայնեաց Մակբէթ զողալով, վերջին ճաճանչ յուսոյ նորա շիջեալ խոպոպ. «և Թո՛ղ յայսմհետէ չհաւատասցէ ոք սատպատիր երկսայրաբանութեանց կախարդից և վհկաց, որք խաբեն զմեզ բանիւք, որք ունին զերկուս խնամոս. և այն ինչ կատարեն զխոստմունս և զգուշակութիւնս իւրեանց ըստ երևութի, այլով մեկնութեամբ բանից իւրեանց՝ մահացուցանեն զյոյս սրտի մերոյ. ո՛չ կամիմ ևս մարտնչիլ ընդ քեզ», ասաց նա ի վերջոյ։

«Որեմն կեաց», պատասխանեաց Մակդըֆ, «առնելոց եմք զքեզ առարկայ տեսարանի վասն ժողովըրդոց, որպէս առնեն մարդիկ, յորժամ մեն ածեն ի հրապարակս զգազանս ի ցոյց հասարակաց, զրկեալ ի վերայ տախտակի մերոյ թէ, որ կամիցի տեսանել զբռնակալ ոք, կարէ տեսանել զքեզ»:

«Ո՛չ երբէք», պատասխանեաց Մակբէթ, որոյ յուսահատութիւն նեղշնչել սկսաւ ի նա քաջութիւն սրտի. «Ո՛չ կեցից ես», ասէ, «ծնրկել յառս Մէլքուսայ, և պախարակիլ յամբոխէ ժողովրդոց, եթէ անառաւ Բրնամայ իսկ շարժիցի առ Դնսինէն. և զու որ յանպիսման կաս իմ, չես ծնեալ ի կնոջէ, տակաւին փորձեցից զվերջին փորձ մի»: Եւ յարաստանէն զրանս զայոսակի, ի վերայ յարձակեցաւ կատաղաբար ընդդէմ Մակդըֆայ, որ զինի սասանիկ մեծամարտութեան պարտեաց զնա, և հատեալ զգլուխ նորա մատոյց ի նուէր պատանւոյն Մէլքուսայ, հարազատ ժառանգի աթոռոյ թագաւորութեանն: Յետ այսորիկ սասանձնեաց իսկոյն Մէլքում զիշխանութիւնն, յորմէ գաւառանութեամբ Մակբէթայ՝ յայնչափ ժամանակէ հետէ զրկեալ էր. և նստաւ յաթոռ հեզաբնոյթն Դնկընայ ի ձայն ծնցութեան և ծափահարութեան ազնուականաց և ժողովրդոց:

ՍԻՄԲԼԻՆ

Ա՛ւ ժամանակաւ Օգոստոս կայսեր Հռովմայ, սիրէր ի վերայ Անգղիոյ (որ յայնժամ Բրիտանիա կոչէր) թագաւոր մի, որոյ անուն էր Սիմբըլին: Առաջին կին Սիմբըլինայ մեռաւ, յորժամ երիքին մանկունք նորա (երկու ուստերք և դուստր մի) էին ի մատաղ հասակի: Դուստր նորա Իմօժին՝ անպրանիկն ի մանկանցն՝ մնաւ ի պալատս հօր իւրոյ. այլ տարօրինակ դիպուածով ինչ, երկու որդիք Սիմբըլինայ գողացեալ եղեն ի պալատէն, յորժամ մին ի նոցանէ էր միայն երեք ամաց հասակի և միւսն դեռ ի հասակի տղայութեան. և Սիմբըլին ոչ երբէք դիտել կարաց, թէ զինչ եղև նոցա, կամ ո՛վ էր որ գողացեալ ի բաց տարաւ զնոսա:

Սիմբըլին ամուսնացեալ էր երկիցս, և երկրորդ կինն նորա՝ էր չարամիտ և խորամանկ անձն մի, և անգութ խորթ մայր վասն Իմօժինայ՝ դստեր առն իւրոյ՝ ծնեալ յառաջին կնոջէ նորա:

Թագուհին թէև առէր յոյժ զԻմօժին, սակայն ցանկայր զի ամուսնացի նա ընդ Կլօսբէն որդւոյ իւրոյ, ծնեալ յառաջին առնէ իւրմէ (սա ևս ամուսնացեալ դոլով երկիցս) այսու յուսալով զի յետ մահուան Սիմբըլինայ՝ դիցէ զթագ արքայութեանն ի գլուխ որդւոյն. քանզի գիտէր նա, զի եթէ գողացեալ մանկունք արքային ոչ ի յայտ գային, Իմօժին լինելոց էր ժառանգ աթոռոյն: Բայց այսր փափագանաց թագուհւոյն՝ խափան եղ նոյն ինքն Իմօժին, ի ծածուկ ամուսնանալով առանց հաճութեան և գիտութեան հօր իւրոյ և թագուհւոյն:

Պօսթիւմոս (այս էր անուն ամուսնոյ Խօժինայ) էր զրագէտ և ամենայն կատարելութեամբ ճոխացեալ այր ժամանակի իւրոյ։ Հայր նորա սպանեալ ի պաշտ մարտի, մինչ մարտնչէր քաջութեամբ ի պատերազմունս Սիմբըլինայ. փոքու զկնի ծննդեան նորա՝ մեռեալ էր և մայր նորուն, սրտաբեկ ի տրամութենէ ընդ կորուստ առն իւրոյ։

Սիմբըլին զթալով ի վերայ ողբմելի վիճակի անօգնական որբոյն, էառ զնա ընդ հոգածութեամբ իւրով, (անուանելով զնա Պօսթիւմոս, քանզի ծնեալ էր յետ մահուան հօրն) և ետ դաստիարակել զնա և կրթել յուսմունս դիւութեան ի պալատի իւրում։

Խօժին և Պօսթիւմոս զոլով ի ներքոյ դաստիարակութեան մի և նոյն վարժապետաց, և ընկերակից ի խաղս և ի զբօսանս իւրեանց, սիրէին նոքա զմիմեանս կաթոգնութեամբ, մինչդեռ մանուկ էին. և սէր նոցա աճեալ ի միասին ընդ աճելութեան հասակի նոցա, յորժամ եղեն չափահաս, ի ծածուկ ամուսնացան ընդ միմեանս։

Ի մեծ ապայուսութիւն իւր, ոչ զկնի բազում ժամանակի, գիտաց Թագուհին զդաշնին, քանզի պահէր անդադար լրտեաս՝ հսկել գործոց և շարժմանց խորհ գաղտ իւրոյ, և իսկոյն յայտնեաց Թագաւորին զամուսնութիւն Խօժինայ և Պօսթիւմոսի։

Անհնարին և սաստիկ էր բարկութիւն Սիմբըլինայ, յորժամ լուաւ, թէ գուսար իւր մոռացեալ էր այնպէս զպատիւ աստիճանի իւրոյ, և ամուսնացեալ ընդ միւսի ի հպատակաց իւրոց. և հրամայեաց Պօսթիւմոսի ի բաց գնալ ի Բրիտանիոյ՝ յերկրէ ծննդեան իւրոյ՝ յաքսոր մշտնջենական։

Թագուհին՝ որ կեղծէր իբր զի զթայր մեծապէս ի վերայ Խօժինայ՝ ի սակս տրամութեան նորա ընդ զրկումն նորա յատնել իւրմէ, խոստացաւ տալ նմա պա-

տեհ ի ծածուկ հանդիպելոյ Պօսթիւմոսի վերջին անգամ մի, յառաջ քան զչուել նորա ի Հռոմ. քանզի զայլ քաղաք ընտրեալ էր նա, որպէս տեղի աքսորանաց իւրոց. և զայս ըստ երևութի քաղցրասրտութեան ցուցանէր թագուհին, որպէս զի ևս առաւել զիրաւ յաջողեսցի նմա առնել զոր կամէր յայնմհետէ ի մասին կլօալինայ որդւոյ իւրոյ. քանզի մտապրեալ էր յետ բաժանման ամուսնոյ նորա, համոզել զԽօժին, թէ ապօրէն էր ամուսնութիւն նորա, ըստ որում չէր զտեղի կալեալ այն հաճութեամբ թագաւորին։

Խօժին և Պօսթիւմոս հանդիպեալ միմեանց, բազում խանդաղատանօք և սիրով էր, զի ևսուն իրերաց զողջոյն հրաժեշտի։ Խօժին ետ առն իւրում զապահանգեալ մատանի մի՝ որ վերաբերէր մօր իւրում, և Պօսթիւմոս խոստացաւ ոչ երբէք բաժանիլ յայնմանէ, և ինքն ևս եղ ի բազուկ Խօժինայ զապարանջան մի, զոր ինդրեաց ի նմանէ պահել բազում զգուշութեամբ, որպէս նշան սիրոյ իւրոյ։ Ապա ողջունեցին զիրերաս վերջին անգամ, ուխտեալ միմեանց սէր անխուսափ և անպղտուկի հաւատարմութիւն։

Խօժին ճեաց մինուորս և անմխիթար ի պալատ հօր իւրոյ, և Պօսթիւմոս ժամանեաց ի Հռոմ՝ ի տեղի աքսորանաց իւրոց։

Ի Հռոմ, Պօսթիւմոս ընկերակցել սկսաւ ընդ օտարազգի զուարճասէր պատանեաց ամանց, որք սովոր էին զբուցել ազատապէս զսիկնանց, մէն մի գովեստ զսիկնայս իւրոյ աշխարհի, կամ զիւր կին, կամ սիրուհի. և Պօսթիւմոս՝ որ ցանգ ի մտի ունէր զիւր սիրեցեալ տիկին, յայտնեաց թէ կին իւր՝ գեղանին Խօժին՝ էր առաւել առաքինաբարոյ, խնամասէն և հաւատարիմ, քան զսէ և իցէ տիկին ի բոլոր աշխարհի։

Մին ի պատանեացն, որոյ անուն էր Եակիմօ, ոչ հաճեալ ընդ այն, զի Բրիտանացի տիկին մի գո-

վնասի որպէս զեր ի վերոյ ոք քան զքաղաքակիցս իւր՝ զաներկնայս Հռովմայ, զրզուեաց զՊօսթիւմոս՝ ցուցանելով երկբայութիւնն ընդ հաւատարմութիւն այնպէս բազմօք զրուաւեալ կնոջ իւրոյ. և ի վերջոյ զկնի բազում հաւճաւութեան, Պօսթիւմոս հաւանեցաւ ընդ առաջարկութիւն մի՝ զոր արար Եակիմօ, այն է, զի Եակիմօ գնացեալ ի Բրիտանիա, ջանասցէ գրաւել զսէր Իմոժինայ: Եւ գրաւ արկեալ առ այս, պայման եղեւ զի եթէ Եակիմօ ոչ յաջողեսցի ի չար նպատակ իւր, կորուսանելոց է զմեծ գումար ինչ զրամոյ. այլ եթէ կարասցէ գրաւել զհաճութիւնն և զսէր Իմոժինայ, և համոզեսցէ զնա առ ինքեան զապաւարանջանն, զոր Պօսթիւմոս այնչափ թախանձանօք խնդրեալ էր ի նմանէ պահել միշտ՝ որպէս յիշատակ սիրոյ իւրոյ, յայնժամ Պօսթիւմոս առլոց էր Եակիմօի զմատանին, զոր իբր նուէր սիրոյ առեալ էր նմա Իմոժինի, ի բաժանիլն իւրում ի նմանէ. քանզի աներկբայ էր Պօսթիւմոս ընդ հաւատարմութիւն Իմոժինայ, և կարծէր թէ ոչինչ կասկած կամ վանդ հնար է գոլ ի փորձ անդ, որով փորձէրն զպատիւ անձին նորա:

Եակիմօ՝ ի հասանելն ի Բրիտանիա, եգիտ ընդունելութիւն և պատիւ մեծ Իմոժինայ՝ զիտացեալ թէ բարեկամ է նա առն իւրոյ. այլ յորժամ սկսաւ արտայայտել զցոյցս սիրոյ, անդէն և անդ մերժեաց զայն Իմոժին քամահանօք, և Եակիմօ զիտաց հաւաստեաւ, թէ անյուսալի ինչ էր վասն իւր՝ հաստանել երբէք չար և լիրբ նպատակի իւրոյ:

Բայց ցանկալով Եակիմօյի շահել Իմոժինայ զպայման գրաւոյն եղեալ ընդ Պօսթիւմոսի, ձեռն էարկ ի հնարս խորամանկութեան՝ առ ի խաբել զնա: Ամէն իրի կաշառեաց զամանս ի սպասաւորաց Իմոժինայ, և ձեռամբ նոցա տարեալ ի ննջարան նորա՝ փակեալ ի մեծ արկղ միւսմ, ճեաց անդ այնպէս ծածկեալ, մինչ

Իմոժին հրաժարեալ յանկողին ի քուն եմուտ: Ցայնժամ եղեալ արտաքս յարկեղէն, նշմարեաց զսենեակն մեծաւ ուշադրութեամբ, և զրուշեաց ի թղթի զամենայն զոր եահս անդ, մասնաւորապէս նշմարեալ նաև զգեղաբիծ մի ի պարանոց Իմոժինայ. և ապա մեղմով ի բաց առեալ զապարանջանն, զոր տուեալ էր նմա Պօսթիւմոս, ի ձեռանէ նորա, եմուտ կրկին յարկղ անդ, և ի հանեալ աւուր զարձաւ առ Հռովմ մեծաւ փութով, և պարծանօք պատմեաց Պօսթիւմոսի, իբր զի Իմոժին նուիրեալ էր նմա զապարանջանն, և նաև թոյլ տուեալ էր նմա անցուցանել զգիշերն ի ննջարանի իւրում, սեթևեթելով զտուելիսն իւր, իբր թէ ննջարան նորա զարդարեալ էր ասղնագործ գեղեցիկ նկարուք, որք պատկերէին զպատմութիւն Կղէոպատրայ՝ յորժամ զառաջինն հանդիպեցաւ նմա Անտոնինոս — նկար սքանչելի և յոյժ ճարտարարուեստ:

«Այդ ուղիղ է զոր ասես», պատասխանեաց Պօսթիւմոս, «բայց գուցէ լուեալ ես զու զայն յայլոց, առանց տեսանելոյ»:

«Տիրանելոյդ վառարանին ես», ասաց Եակիմօ, «է ի հարաւակողման սենեկին. և ի վերայ բարաւորի վառարանին կայ պատկեր Անահիտայ՝ մինչ լողանայ նա ի ջուր, և չէ իմ տեսեալ պատկեր բարեգոյն ես քան զայն»:

«Զայս ես գուցէ նմանապէս լուեալ ես յայլոց», ասաց Պօսթիւմոս, «քանզի հռչակաւոր է պատկերդ ես բազումք խօսին զայնմանէ»:

Ապա Եակիմօ վիճակամայն ճշդիւ նկարագրել սկսաւ զձեղուն սենեկին, և յաւել ասելով, «մուտացայ ես յիշել զսխնական յերկոսին կողմանս վառարանին, որք ունէին զձև կուսիզոնի՝ ձուլեալ յարծաթոյ՝ մէն մի կանգնեալ ի վերայ, միոյ ոտին միայն»: Ցետոյ ցուցեալ նմա զապարանջանն, «ճանաչե՞ս», ասէ,

«պարոն, զզարդս այս, կին քոյ եա ինձ զայն իբրով ձեռամբ, էառ զայն ի բազկէ իւրմէ, թուի ինձ որպէս թէ տակաւին տեսանեմ զնա, և նազելի եղանակ պարզևելոյ նորա քաղցրագոյն ևս էր քան զպարգևն։ Եա նա ինձ զայն և ասաց, մեծագնի էր վասն իւր երբեմն»։ Հուսկ ամենայնի նկարագրեաց Եակիմօ նաև զզեզաբիծն՝ զոր տեսեալ էր ի վերայ պարանոցի Իմօժինայ։

Պոսթիւմոս՝ որ լսէր զայսոսիկ ամենայն սաս-պաւիր բանս ի տագնապ երկբայութեան, ի վերջոյ ո՛չ այլ ևս զսպել կարաց զինքն, այլ բորբոքուն կրիւք խօսել սկսաւ բանս նախատանաց՝ ընդդէմ Իմօժինայ, և եա զպատմանդեայ մատանին Եակիմօի, որպէս խոստացեալ էր տալ՝ եթէ գտանել կարէր նա զպարանջանն՝ զոր տուեալ էր ինքն Իմօժինայ։

Յայնժամ Պոսթիւմոս կատաղեալ նախանձու եւ բարկութեամբ, զրեաց առ Պիսանիօ՝ ազնուական ոմն Անգղիացի, որ էր մի ի պաշտօնատարաց Իմօժինայ, և որ ի բազմաց հետէ լեալ էր հաւատարիմ բարեկամ իւր, և յիա յայտնելոյ նմա զպատգուտութիւնն՝ զոր գտեալ էր ի մասին անհաւատարմութեան կնոջ իւրոյ, պատուէր եա նմա տանել զԻմօժին ի Ծովեզերեայ քաղաք մի յաշխարհի Կալլէսոց՝ անուանեալ Միլֆօրդ, և անդ սպանանել զնա։ Եաև ի միևնոյն ժամանակի զրեաց գտատպատիր թուղթ մի առ նոյն ինքն Իմօժին, պատուիրելով նմա գնալ ընդ Պիսանիօի. քանզի ասէր, տեսանելով զի չկարէր հանդուրժիլ կենաց այլ ևս, առանց տեսանելոյ զնա, թէ և պատուհասիւ մահու արդիլեալ էր գտանալ ի Բրիտանիա, սակայն գնալոց էր առ Միլֆօրդ, յորում տեղւոջ հանդիպել ունէր նմա։ Անկասկած և միամիտն Իմօժին, որ սիրէր զամուսին իւր ի վեր քան զամենայն ինչ, և կենօք չափ փափագէր տեսանել զնա, փութացաւ գնալ

ընդ Պիսանիօի, և ի գիշերի միևնոյն աւուր՝ յոր սաստացաւ զթուղթն, ուղևորեցաւ նա առ նպատակ իւր։

Այն ինչ մերձ էին հասանել ի տեղին, Պիսանիօ՝ որ թէև հաւատարիմ առ Պոսթիւմոս բարեկամ իւր, չէր սակայն հաւատարիմ ծառայել նմա՝ յայնպիսի զարհուրելի ոճիր ինչ, յայտնեաց Իմօժինայ զանգութ հրամանն՝ զոր գտեալ էր յառնէ նորա. և Իմօժին, որ ի փոխարէն հանդիպելոյ, որպէս ակնկալէր, սիրեցեալ ամուսնոյ իւրոյ, եաեւ զինքն զպատասպարեալ ի նոյն իսկ ամուսնոյ ի մահ, անկաւ ի սասպիկ և ի զառնագին տրտմութիւն։

Պիսանիօ համոզել սկսաւ զնա, թօթափել յանձնէ զտրտմութիւն և սպասել համբերութեամբ. քանզի ասէ, գալոց էր ժամանակ յորժամ Պոսթիւմոս հասու եղեալ անմեղութեան նորա, ստրջանալ ունէր վասն անիրաւութեան իւրոյ. սակայն Իմօժին ի տագնապ սրտի իւրոյ չկամելով վերապառնալ յարքունիս հօր իւրոյ, Պիսանիօ խորհուրդ եա նմա ծպտել զինքն ի զգեստ առնացի, որպէս զի առաւել ապահով լիցի ի վտանգէ ի ճանապարհորդութեան իւրում, և Իմօժին հաւանեալ ընդ այս, հաստատեաց ի մտի՝ այնպէս ծպտեալ գնալ ի Հռովմ և տեսանել զամուսին իւր, որ թէև յայժ անգթաբար վարեալ էր ընդ ինքեան, այլ տակաւին չկարէր ինքն մոռանալ կամ չսիրել զնա։

Պիսանիօ յեա մատակարարելոյ վասն Իմօժինայ զնոր զգեստն, պարտաւորեալ վերապառնալ յարքունիս թագաւորին, սակայնեցաւ թողուլ զԻմօժին՝ առաջնորդութեան բախտի նորա. այլ յառաջ քան զբաժանիլն իւր ի նմանէ, եա նմա զորուակ մի լի հնդանիւթով ինչ, զոր՝ ասէ՝ թագուհին տուեալ էր նմա, որպէս կարի ազգու զարման ի պէտս ս՛ և իցէ հիւանդութեան։

Թագուհին, որ առեր զՊիսանիօ, քանզի բարեկամ էր նա Իմօժինայ և Պոսթիւմոսի, տուեալ էր

նմա զայս սրտակ, կարծելով թէ պարտնակէր այն մահացու թոյն ինչ, քանզի բժշկի իբրեւ պատուիրեալ էր նա ընուլ զայն թռնով, ասելով թէ կամէր փորձել զայն ի վերայ անասնոյ ինչ. այլ բժիշկն սեղեակ գոլով նախանձաւոր և չար բնաւորութեան նորա, և չկամելով հաւատալ ի ձեռս նորա վիրական թոյն ինչ, տուեալ էր նմա զդեզ իմն, որ չունէր ազդել առաւել քան պատճառել թանձր մահամտան թմրութիւն իմն ի քանի մի ժամս: Զայս բաղադրութիւն, զոր Պիսանիս կարծէր գոլ բժշկարար դեղ ինչ նա Խոժինայ, պատուիրելով նմա ըմպել անաւ ի զէպս հիւանդութեան ի ճանապարհորդութեան իւրում. և բարեմաղթութեամբ և աղօթիւք վասն անխռով ուղեւորութեան և ազատութեան նորա ի նեղութենէ և ի վշտաց սրտի, բաժանեցաւ ի նմանէ:

Ժամչելապէս նախախնամութիւն երկնից այնպէս առաջնորդեաց զընթացս Խոժինայ, զի եկն եհաս նա ի բնակութիւն երկուց եղբարց իւրոց, որք գոզացեալ էին ի հասակի տղայութեան իւրեանց: Բէլարիոս՝ որ ի բաց տարաւ զնոսա՝ էր երբեմն մին ի պալատակատ նոց Սիմբըլին արքայի. այլ ամբաստանեալ ոմանց զնմանէ՝ յանցանօք դաւաճանութեան, աքսորեցաւ նա յարքունեաց անտի. և կամեցեալ վրէժխնդիր լինել, գոզացաւ զերկու որդիս թագաւորին, և գնաց ընդ նոսա յանտառ մի, ուր բնակէր ի ծածուկ յայրի միւսի: Թէև գոզացաւ նա զմանկունսն հոգւով վրէժխնդրութեան, այլ փութով ուսաւ սիրել զնոսա այնպիսի գթութիւն, որպէս թէ իւր հարազատ զաւակունք էին նոքա: Կըրթեաց զնոսա զգուշութեամբ և խնամով, և աճեալ զարգացան նոքա, և եղեն պատանիք ուշիմ և առոյգ, և անձնուէր ըստ միմեանց վաղուն արքայական արեան իւրեանց՝ ի յանդուգն և ի քաջ ձեռնարկս. և քանզի զկերակուր իւրեանց գտանէին որսորդութեամբ, էին

նոքա ճարպիկ, գործունեայ և սովոր զժուարակիր աշխատութեան. և անդադար թախանձէին զկարծեցեալ հայր իւրեանց, թոյլ տալ ինքեանց, գնալ ի խնդիր բախտի ի պատերազմական քաջագործութիւնս:

Ցայս քարայր՝ յոր բնակէին երկու պատանիքն, ղէպ եղև ահա ժամանել Խոժինայ: Մոլորեալ էր նա ի ճանապարհին ի մեծ անտառի միւսմ, ընդ որ անցանել հարկ էր նմա, առ ի գնալ հասանել ի ծովեզերեայ քաղաքն Միլփորդ (ուստի մտադրեալ էր նաւել առ Հռովմ), և չկարացեալ գտանել տեղի ինչ՝ ուստի գնել կարէր կերակուր, ի սովոյ և յաշխատութենէ թաչկացեալ բոլորովին՝ ձայր գրեթէ կիսամահ. քանզի միայն ունէին առնացի զգեստ չմարթացուցանէ զմտատաղտաի տիկին մի, տնեալ ի գրգռանս փափկութեան, տանել որպէս այր մի տարժանելի վաստակոյ թափառման ի մենաւոր անտառի: Վասն որոյ տեսեալ նորա զքարայրն եմուտ ի ներքս յուսով գտանելոյ անդ զոք, յորմէ մարթմանայր ի ձեռս բերել կերակուր ինչ: Եգիտ զայրն դատարկ, այլ հայեցեալ շուրջ զիւրմէ, նշմարեաց զպատ խորովուած ինչ մսոյ. և այնչափ սաստիկ էր քաղց նորա, զի ոչ սպասել կարաց հրաւիրի, այլ նստեալ խնդոյն սկսաւ ուտել: «Ո՜հ, ասէր նա, խօսելով ընդ անձին, տեսանեմ ահա, թէ արդեօք տարժանելի ինչ է կեանք առն միոյ. ո՜հ, արդեօք յոյժ վաստակեալ եմ ես: Ձերկուս գիշերս յաջորդաբար ննջեալ եմ գետնախշտի, և հաստատութիւն մտացս է միայն, որ դպատաստէ ինձ, եթէ ոչ հիւանդացեալ էի արդէն: Ցորժամ Պիսանիս եցոյց ինձ ի գլխոյ բլրոյն զքաղաքն Միլփորդ, որչափ յոյժ մօտ երևէր այն»: Ցայնժամ զարթեան ի միտս նորա մտածութիւնք զահաւոյ խրմէ, և յուշ եկն նմա անգութ պատուէրն նորա, և ասէր, «քաղցրիկ իմ Պոսթիւմոս, կեղծ և անհատատարիմ ոմն ես դու»:

Երկու եղբարք Իսօժինայ, որք ընդ Բէլարիոսի կարծեցեալ հօր իւրեանց, գնացեալ էին յոսոսրպուէթիւն, յայսմ ժամու վերադարձան ի տուն: Բէլարիոս առնուանեալ էր գնոսա Պալիպոր և Կապվալ. և կարծէին նոքա, թէև էին ինքեանք որդիք Բէլարիոսի, այլ իսկական անուանք արքայորդւոց էին՝ միոյն՝ Գուպերիոս և միսոյն Աբվիբագոս:

Նախ Բէլարիոս եմուտ յայրն, և տեսեալ զԻսօժին զկայ ետ պատանեացն ասելով, «Մի մուտ գործէք, զեռ ուստէ նա զկերակուր մեր, եթէ ոչ կարծելոց էի հրեշտակ մի է այն»:

«Չինչ է, զո՞րասեպ Հայր», հարցին պատանիքն: «Երկնում յարև Դիոսի», պատասխանեաց Բէլարիոս, «հրեշտակ մի իջեալ է յայր մեր, և եթէ չէ հրեշտակ, ուրեմն է երկրաւոր դիւցազն ոմն»: Ահա այսչափ գեղեցիկ երևէր Իսօժին յառնացի զգեստ նր:

Իսօժին լուեալ զձայն խօսիցն, ելին արտաքս յայրէն և ուղղեաց զդառն իւր առ նոսա այսպէս, «Ո՛վ բարի տեարք իմ, մի վնասէք ինձ աղաչեմ: Զառաջ քան զմատնելն իմ յայր ձեր՝ մտապրեալ էի մուրանալ կամ գնել ի ձէնջ զոր ինչ կերեալ եմ: Հատուցէք ինձ, ոչինչ գողացեալ եմ, և ոչ երբէք առնելոց էի զայսպիսի ինչ՝ եթէ սիրեալ էր ոսկի ի գետնի: Առէք ահա զրամ ի գին կերակրոյն զոր կերի, և զոր գնելոց էի ի վերայ սեզանոյն յետ ուտելոյ եւ ի բաց գնալոց՝ օրհնելով զկերակրողս իմ: Զարժամ զլացան նոքա ստանալ զդրամն ընդդէմ բոլոր թախանձանաց նորա, «ուրեմն բարկացեալ էք ի վերայ իմ», ասաց Իսօժին երկչոտութեամբ իմն, «այլ տեարք իմ, եթէ սպանջիք զիս վասն յանցանաց իմոց, գիտացէք զի չունէի ապրել եթէ չգործէր զյանցանսդ»:

«Ո՞ր երթաս, և զինչ է անուն քոյ», հնարց Բէլարիոս:

«Անուն իմ Ֆիլէէ կոչի», պատասխանեաց Իսօժին, «ունիմ ես ազգական մի որ ճանապարհորդեալ է առ Իտալիա, նաւելով ի Միլֆօրդ նաւահանդստէ. և ես ևս կամելով գնալ առ նա, մոլորեցայ ասա, և միանգամայն գրեթէ նուազեալ ի քաղցու՛, պարտաւորեցայ գործել զյանցանսդ»:

«Ո՛վ գեղեցիկ պատանի», պատասխանեաց Բէլարիոս, «մի, աղաչեմ, համարիր զմեզ այպիսի մարդիկ անարգամիտ, և ոչ իսկ կշռեա՛ զբարեմտութիւն մեր այսու գռեհիկ բնակարանաւ մերով: Բարեաւ է գալուստ քոյ և պիտաւոր, քանզի մերձ է ահա վերահաս գիշերոյ: Ե՛ւս բարեգոյն հիւրնկալութեան պիտոյից ես զու, յառաջ քան զմեկնիլդ ասեմ. և չնորհակալ արասցես զմեզ ճաշելովդ առ մեզ և վայելելով զայն: Մանկունք, յառաջ մատիք և սղջունեցէք զհիւր մեր»:

Զայնժամ ազնիւ պատանիքն՝ եղբարք նորա՝ սղջունեցին զԻսօժին, բազում հաճոյական և քաղցր բանիւք բարեւելով զգալուստ նորա յայր իւրեանց, և ասելով թէ սիրելոց էին գնա իբրև եղբայր մի: Եւ ապա մտին ի ներքս ի քարայր անդ, ուր (բերեալ որոս ինչ ընդ իւրեանց) Իսօժին պատճառեաց նոցա ոչ սակաւ հաճութիւն զեղեցիկ տնտարութեամբ իւրով, յօգնելն նոցա ի պատրաստել ընթերս. քանզի թէև վերացեալ է արդ սովորութիւն վասն ազնուազարմ ասիկնանց ուսանիլ և գիտել զարհեստ խահելոյ զկերակուրս, որպէս առնէին յայնժամ, Իսօժին յոյժ ճարտար էր և գերազանց յայսմ պիտանի արհեստի, և որպէս եղբարք նորա վայելչապէս ասացին, Ֆիլէէ համեմէր զարդանակ իւրեանց այնպէս անոյշ, որպէս թէ հիւանդ էր Հերա, և կարգեալ էր նա ի կերակրել զդիցուհիդ: «Եւ նաև, որպիսի հրեշտակային իմն ձայնիւ երգէ նա», յաւելոյր Պոլիպոր:

Երկոքին եղբարքն առէին ընդ միմեանս նաև՝ զի թէև Ֆիլէլ ունէր ժպիտ իմն յոյժ քաղցր, սակայն այնպիսի խոր արտաւրեիան ինչ ծաւալեալ տեսանէր յերեսս նորա, որպէս թէ վիշտ սրտի և համբերութեիան՝ ի միասին վարակեալ պրաւէին զմիաս նորա։

Վասն հեզիկ և քաղցր բարուց իւրոց (կամ գուցէ ի պատճառս սէրա արենակցութեան նոցա, որում անծանօթ էին նորքա) Իմօժին (կամ Ֆիլէլ՝ որպէս յորջորջէին զնա արդ) եղև առարկայ մեծ իմն սիրոյ եղբարց իւրոց, և ինքն ևս՝ փոխադարձաբար սիրէր զնոսա ոչ նուազ ինչ, մանաւանդ զի եթէ չէր այն վասն կաթողիկութեանն՝ զոր ունէր առ աւետարն իւր, ընտրելոց էր կեալ և մեռանել յայրի անդ, ընդ անտառաբնակ պատանեացն այնոցիկ. վասն որոյ ինդուրեիամբ հաւանեցաւ ձեալ ընդ նոսա, և հանդչիլ անդ մինչ անցցէ յորնութիւն իւր ի ճանապարհորդութենէ անտի և ապա ուղևորիլ առ Մրէֆօրդ։

Յորժամ կերեակ սպառեցին զորսոն զոր բերեալ էին և պատրաստէին կրկին գնալ ի խնդիր որսոյ, Ֆիլէլ անկարող գտաւ ընկերել նոցա քանզի անառողջ էր։ Զիւք կասկած թէ անձուկ մտաց, անդիմութիւն աւետեաց իւրոյ, և վաստակ թափառման յանտառի անդ, էին պատճառ հիւանդութեան նորա։

Ուսոի բարեձիա եղեալ նմա, ելին գնացին Բէլիսարիոս և պատանեակքն ի բաց, և ի ճանապարհի անդ անդադար գովէին զպնութ արքունի և զհնոր-հալի բարս պատանեկին Ֆիլէլայ։

Իմօժին իսկոյն՝ յորժամ եգիտ զինքն առանձին յայրի անդ, յուշ ած զգեղն, զոր Պիսանիօ տուեալ էր նմա, և էարբ զայն, եւ փութով զինի անկաւ ի խոր եւ ի մահանման քուն ինչ։

Յորժամ Բէլարիոս եւ եղբարք նորա գարձան յորսորդութենէ, Պոլիտոր առաջինն էր՝ որ եմուտ

յայրն, և կարծելով թէ Իմօժին ննջեալ էր, ի բաց հան իսկոյն զկօշիկս իւր յոտից, որպէս զի քայլեսցէ մեղմով, և չզարթուսցէ զնա ոտնաձայն իւր (քանզի սիրա անտառարուեակ պատանեկացս լի էր ճշմարիտ զգացմամբ կարեկցութեան) այլ փութով հասու եղեւ նա, թէ ոչինչ ձայն զարթուցանել կարէր զնա. եւ կարծելով թէ մեռեալ էր նա, սկսաւ լալ և աւաղել զնա այնպիսի եղերայրական գորովով և կսկծանօք, որպէս թէ ի ծննդենէ անտի իրմէ անբաժան էր լեալ ի նմանէ։

Բէլարիոս ևս մեռեալ կարծելով զնա, առաջարկաց առնել զնա յանտառ անդ և կատարել զհանդէս յուղարկաւորութեանն երգովք և սգալի ծիսակատարութեամբ, որպէս սովորութիւն էր առնել յայնոսիկ ժամանակս։

Յայնժամ երկու եղբարք Իմօժինայ առեալ սաբան զնա ի հովանաւոր սարվինա մի, և անդ մեղմով եղեալ զնա ի վերայ սիզաւէտ գետնոյն, երգեցին երգս ողբագինս ի հանդիստ հոգւոյ նորա, և ծածկեալ զնա տերեւովք և ծաղկամբք, ասաց Պոլիտոր, «Որչափ ամառն է և ձեամ ես ասա, սփռեցից ծաղկունս ի վերայ գերեզմանի քոյ։ Զկրինագեղ վարդ, որ յաւէտ նմանի կարմրափայլ այտից քոց, և զկրինագոյն մանուշակ, որոց վճիտ երանգ՝ կապոյտ երակաց քոց բերէ գոյն, և զթերթս շուշանաց, որոց բոյր չէ անոյշ ինչ քան զշունչ քոյ, զայս ամենայն ցանեցից ես ի վերայ քոյ. այո՛, և զթաւշեայ մամուռ ձմերան՝ յորժամ չգտն ծաղկունք՝ առ ի ծածկել զվիակն քոյ քաղցրիկ»։ Եւ յորժամ այսպէս կատարեցին նոքա զարամագին հանդէս յուղարկաւորութեանն, բաժանեցան անտի արտասուագին և յոյժ թախծեալ սիրօք։

Զկնի սակ երկար ժամանակի յետ բաժանման նոցա, սպառեալ թմրեցուցիչ ներգործութեան դեղոյն,

ալեափեցաւ Իսօժին, և առանց պժուարութեամբ ի բաց թօթափեաց յինքենէ՝ զնեղն ծածկոյթ աերևոց և ծաղկանցն, զոր ձգեալ էին ի վերայ նորա, յոսն եկաց, և թուեալ նմա թէ յերազի լեալ էր՝ ասաց, «կարծէի ես, թէ պահապան էի ես այրի միոյ, և պատրաստէի զկերակուր վասն բարի արանց ոմանց, զիաթրզ եկի ուրեմն ես ասա, և ծածկեցայ ընդ ծաղկամբքս»։ Եւ չկարելով պատանել զճանապարհ առ ի վերադառնալ առ քաբայըն, և ոչ իսկ տեսանելով զոք ի նոր ընկերակցաց իւրոց, եղերեաց ի միտս իւր, թէ իսկապէս երազեալ էր զամենայն. վասն որոյ միւսանգամ շարունակել սկսաւ նա զտարժանելի ճանապարհորդութիւն իւր, յուսալով թէ ի վերջոյ հասանելոց է ի Մէլքիօրէ, և անտի հասելոց առ Իսալիա. քանզի տակաւին միաք նորա լի էին միայն յիշատակօք Պոսթիւմոս ամուսնոյ իւրոյ, և զոր խնդրէր որոնել և գտանել, ծպտեալ այնպէս ի զգեստ պատանեկաց ծառայի միոյ։

Սակայն զեղի առնուին յայսմ ժամանակի մեծամեծ և կարևոր գէպք ինչ, որոց անտեղեակ էր Իսօժին։ Յանկարծակաս զրդեալ էր պատերազմ ի մէջ Օգոստոս կայսեր Հռովմայ և Սիմբրլին արքայի Բրիտանիոյ. և Հռովմայեցի լեգէոնախառնք մի լինեալ էր ի ցամաք, յարձակիլ ի վերայ Բրիտանիոյ. և այս լեգէոնախառնք յառաջ խաղայր առ միինոյն անառաւ, յորում ճանապարհորդէր Իսօժին, և ընդ այսր լեգէոնախմբի եկեալ էր և Պոսթիւմոս։

Թէև եկեալ էր Պոսթիւմոս ի Բրիտանիա ընդ Հռովմայեցի զօրացն, սակայն մտադրութիւն նորա չէր երբէք պատերազմել ընդ նոսա ընդդէմ աշխարհակցաց իւրոց, այլ կամէր յարել ի զօրս Բրիտանիոյ և մարտնչել վասն թագաւորի իւրոյ որ աքսորեալ էր գնա։

Տակաւին հաւատայր Պոսթիւմոս, թէ Իսօժին անհաւատարիմ էր եղեալ ինքեան, սակայն ի յիշելն

թէ ուրուք կանոգին սիրով սիրեալ էր գնա, մահ նորուն, որ մանաւանդ իւրով սաղրանօք զտեղի կալեալ էր, (քանզի Պիսանիօ գրեալ յայտնեալ էր նմա, թէ ըստ պատուիրանի նորա արդէն պատճառեալ էր զմահ Իսօժինայ) յոյժ ծանրաբեռնեալ էր զնիզճ նորա, և վասն որոյ գարձեալ էր նա ի Բրիտանիա ըղձիւ մեռանելոյ կամ ի պատերազմի կամ ի ձեռաց Սիմբրլինայ՝ վասն վերադառնալոյ ի տարագրութենէ իւրմէ։

Իսօժին նախ քան զհասանելն իւր ի Մէլքիօրէ, անկաւ ի ձեռս Հռովմայեցի զօրականացն, և զեմք նորա և վարք հաճոյ գտեալ յաչս Լուգիոս Հռովմայեցի սպարապետի, կարգեցաւ սենեկապան նորա։

Զօրք Սիմբրլինայ յառաջ խաղացին արդ առ գունդ Թշնամեացն, և յորժամ մտին յանտառն՝ Պոլիտոր և Կապվալ միաբանեցան ընդ զօրս Թագաւորին։ Յոյժ ըղձակաթ էին պատանիքս մղել զանձինս ի քաջագործութիւնս ինչ, չկարծելով երբէք, թէ գնային մարտնչել զմարտ հօր իւրեանց, և ծերունին Բէլարիոս ևս գնաց ընդ նոսա։ Արքէն ի բազում ժամանակէ հետէ սարջացեալ էր սա ընդ գործ վրէժխնդրութեան իւրոյ ի Սիմբրլինայ՝ ի բաց առնելով զորդիս նորա. և քանզի ի պատանեկութեան իւրում լեալ էր քաջ ռազմամարտ մի, յոժարութեամբ յարեցաւ ի կողմն արքային մարտնչել վասն նորա, որում այնպէս անիրաւեալ էր։

Եւ ահա մեծ ճակատամարտ մի տեղի էառ ի մէջ երկու զօրախմբին. և Բրիտանացիք անշուշտ ի պարտութիւն մատնելոց էին, և Սիմբրլին իսկ անկանելոց էր ի մարտին, եթէ չէր այն վասն մեծամեծ արիական գործոց Պոսթիւմոսի և Բէլարիոսի և երկուց որդւոց Սիմբրլինայ, որք զերծուցին զկեանս թագաւորին, և այնպէս միանգամայն փոփոխեցին զկերպարան

մարարին, զի կատարելապէս շահեցան Բրիտանացիք դյաղթութիւն աւուրն։

Յորժամ վախճան եղև մարարին, Պոսթիւմոս որ չեգիտ զմահ որոյ ի խնդիր էր, անձնատուր եղև միւսմ ի զօրապետաց Սիմբելինայ, յօժարեալ ընդունել զմահն որ վճռեալ էր նմա, որպէս պատուհաս պատնաշոյ իւրոյ յաքսորանաց իւրոց։

Իմօժին և ակր իւր ևս՝ որում ծառայէր, ձերբակալ եղեն և ածան առաջի Սիմբելինայ, նոյնպէս և հինաւուրց թշնամի նորա Եակիմօ՝ որ էր գնդապետ ի Հռովմայեցի զօրսն. և մինչդեռ կային սոքա առաջի արքային, Պոսթիւմոս ածաւ ի ներքս ընդունել զվճիռ մահուան. և յայսմ տարօրինակ զուգադիպութեան, Բէլարիոս, Կադվալ և Պոլիդոր ևս բերան առաջի արքային՝ սահանակ զպարգևս արժանաց իւրեանց ուսան մեծամեծ ծառայութեանն զոր բազմութեամբ իւրեանց մատուցեալ էին Թագաւորին։ Պիսանիօ ևս գոլով մին ի պաշտօնէից արքային, նա ևս ներկայ էր անդ։

Վասն որոյ կանգնեն կային ահա առաջի Թագաւորին ի միասին (սակայն տարբեր յուսով և երկիւղիւ) Պոսթիւմոս և Իմօժին, ակր Իմօժինայ՝ Հռովմայեցի զօրապետին. հաւատարիմ պաշտօնեայն Պիսանիօ, և կեղծ բարեկամն Եակիմօ, նմանապէս և երիւ որդիք Սիմբելինայ և Բէլարիոս որ գոզացեալ էր զնոսա։

Հռովմայեցի զօրապետն առաջինն էր՝ որ սկսաւ խօսել, մինչդեռ այլք ամենեքին լուա, թէ և յոլովից ի նոցանէ սիրաք՝ կային ի տրտմութեան։

Իմօժին տեսեալ զՊոսթիւմոս ծանեաւ զնա խոկոյն, թէ և ծպտեալ էր նա ի զգեստ շինականի միոյ. սակայն Պոսթիւմոս չկարաց ճանաչել զիմօժին յառնական զգեստ նորա։ Ծանեաւ Իմօժին և զԵակիմօ, և եաես զմատանի մի ի մատին նորա, զոր գիտաց թէ

իւր մատանի էր. այլ անիրաւեկ էր տակաւին, թէ Եակիմօ էր լեալ հեղինակ բոլոր վշտաց և տառապանաց իւրոց. և ինքնին Իմօժին կայր ահա որպէս ձերբակալ ի պատերազմի առաջի հօր իւրոյ։

Պիսանիօ ծանեաւ զիմօժին, քանզի նա էր որ ծպտեաց զնա ի հանդերձ առնացի։ «Տիկին իմ է սա», ասէր ի միտս իւր, «և այն զի կենդանի է նա, չիք փոյթ ահա, թէ զինչ և իցեն բերմունք ժամանակիս՝ բարի կամ չար»։ Բէլարիոս ևս ծանեաւ զիմօժին, եւ զարձեալ առ կապվալ հծծեաց յունկն նորա, «չերևի՞ որպէս թէ պատանիս այս յարուցեալ է ի մեռելոցենէ»։ «Հասիկ մի աւազոյ չկարէ այնչափ նմանիլ միւսոյ, քան որչափ քազգրիկ վարդերիս պատանեակդ նմանի Ֆիդելէյ», պատասխանեաց կապվալ։ «Միևնոյն պատանի է», ասաց Պոլիդոր «յարուցեալ ի մեռելոց»։ «Լուռ կաց», ասաց Բէլարիոս «եթէ միևնոյն էր նա. խօսելոց էր ընդ մեզ»։ «Բայց», զարձեալ հծծեաց Պոլիդոր, «տեսաք մեք զնա մեռեալ»։ «Լուռ լեր», պատասխանեաց Բէլարիոս։

Պոսթիւմոս սպասէր անխօս վճռոյ մահուան իւրոյ, և հաստատեալ էր ի մտի չյայտնել Թագաւորին զի ի ձեռն իւր զերծեալ էր կեանք նորա ի մահուանէ ի ճակատի մարարին, որպէս զի մի գուցէ սիրտ Սիմբելինայ ի գութ շարժեսցի ներել ինքեան։

Լուշիոս Հռովմայեցի զօրապետն՝ որ ընդ պաշտպանութեամբ իւրով առեալ էր զիմօժին՝ որպէս սենեկապան իւր, առաջինն էր (որպէս ասացաւ) որ խօսել սկսաւ ընդ Թագաւորին։ Էր սա այր մի քաջասիրտ և վեհանձն և այս ինչ էր բան իւր՝ զոր ուղղեաց առ արքայն։

«Լսեմ ես, թէ չառնուս դու զկնի փրկանաց վասն ձերբակալեալ ի պատերազմի, այլ վճռես զամենեսին ի մահ։ Ես Հռովմայեցի մի եմ, և Հռովմէա-

կան քաջասրտութեամբ կարեմ հանդիպիլել մահու, սակայն միայն մի խնդիր ունիմ առաջի առնել ձեզ »։ Եւ յառաջ մատուցեալ առ արքայն վիմօժին, ասէ, « պատանեակս այս ծննդեամբ Բրիտանացի է, սակայն զոնէ թոյլ տուր վճարել փրկանս վասն կենաց իւրոց։ Սենեկապան իմ է սա, և պաշտօնեայ մի աշխատասէր, հաւատարիմ և խնամակալ, առաւել քան զսա չէ իմ տեսեալ երբէք։ Ո՛չ իւիք վնասեալ է Բրիտանացւոյ ումեք, թէ և ծառայ է Հռովմայեցւոյ, եթէ ո՛չ ումեք, զոնէ սմա ներեա զկեանս իւր »։

Սիմբելլին մատպրութեամբ նշմարեալ զէմս իմօժին զսաեր իւրոյ, չկարաց ճանաչել զնա ի ծպտեալ կերպարան նորա. սակայն թուէր նմա, որպէս թէ բուռն ազդումն ինչ բնութեան խօսէր ի սիրտ նորա, ուստի ասաց, « աներկբայ տեսեալ եմ ես զդա նախ քան զայս, քանզի յայժ ծանօթ երևի զէմք նորա ինձ։ Զգիտեմ ընդէ՞ր և առ ինչ պատճառի ասեմ զայս, բայց կեաց պատանեակ դու, ներեմ քեզ զկեանս քոյ, և նաև թոյլ տամ քեզ խնդրել յինէն զոր ինչ շնորհ և կամիս, զոր անխափան պարգևիլոց եմ քեզ, նա իսկ եթէ իցէ այն կեանք աւազազունին ի ձերբաց կալաց ասել »։

« Խոնարհաբար մատուցանեմ գշնորհակալիս իմ վերադարձութեան ձերում», պատասխանեաց իմօժին։

Շնորհաբաշխութիւն արքայի յայնոսիկ ժամանակ՝ նշանակէր խոստումն պարգևիլոյ զինչ և խնդրէր աղերսարկն, և վասն որոյ բոլորեքին ըղձակաթ էին լսել թէ զինչ էր զոր խնդրել կամէր սենեկապանն. և Լուշիոս աչք նորա ասաց ցնա, « չեմ ես ի խնդիր կենաց իմոց, պատանեա՛կ բարի, թէ և զիտեմ զի զայլ խնդրելոց ես ի պարգև քեզ »։ « Ա՛ւաղ, ո՛չ ո՛չ », պատասխանեաց իմօժին, « այլ ինչ առաջի ունիմ ինձ, ա՛յր իմ, չկարեմ խնդրել զկեանս քոյ »։

Այս ըստ երևութի ապերախտ պատասխանի պատանեկին՝ մեծապէս զարմացոյց զՀռովմայեցի սպարապետն։

Յայնժամ իմօժին յառեալ ի զէմս եակիմոի, ո՛չ այլ ինչ շնորհ ազատեաց յարքայէն, քան միայն հրամայել եակիմոի խոստովանիլ, թէ ուստի և զինա՞ պիա զմատանին՝ զոր կրէր նա ի մատին իւրում։

Շնորհեաց Սիմբելլին զինդիրն իսկոյն, և սպատնացաւ եակիմոի մատնել զնա ի տանջանս սաստիկս, եթէ չխոստովանէր նա իսկոյն, թէ արդէս գտեալ էր զպատմանպեայ մատանին՝ որ ի մատին իւրում։

Յայնժամ եակիմո լիապէս խոստովանեցաւ զյանցանս գաւաճանութեան իւրոյ, պատմելով մանրամասնաբար, որպէս ցուցաւ ի վեր, զբոլոր անցս պայմանի գրաւոյն ի մէջ իւր և Պոսթիւմոսի, և թէ որպէս յաջողեալ էր ինքեան, պատրել զկիւրահատանութիւն նորա։

Աչնհնար է նկարագրել թէ որպիսի՛ ինչ էին զգացմունք Պոսթիւմոսի ընդ լսելն այսպէս զանմեղութիւն կնոջ իւրոյ։ Անկէն և անդ յառաջ մատեաւ և նա, և խոստովանեցաւ առաջի Սիմբելլինայ և զիւր յանցանս անդթութեան, որոց ի ձեռն Պիսանիոի պատճառեալ էր զմահ պատիւ արքային, և այլ յայլմէ եղեալ բազում ազազակէր, « Ո՛վ իմօժին թագուհի իմ, կեանք իմ, կին իմ, ո՛վ իմօժին, իմօժին, իմօժին »։

Իմօժին չկարացեալ տեսանել զսիրելի ամուսին իւր յայնպիսի գառն տագնապ յուսահատութեամբ, ծանօթս ևս զանձնէ՝ յանհնարին խնդութիւն Պոսթիւմոսի, որ ահա այսպէս յանկարծ զերծ գտեալ զանձն ի ծանրաբեռն յանցանաց և ի թշուառութենէ, արժանացաւ միանգամ վայելից քաղցրութեան և շնորհաց ազնիւ սիկնոջ իւրոյ, ընդ որում վարեալ էր այնպիսի անգթութեամբ։

Սիմբըլլին ևս՝ ոչ նուազ ինչ այլ յայլմէ եղեալ ի խնդութենէ սրտին՝ քան զՊոսթիւմոս, ի գառնեղն զկորուսեալ զուսար իւր, որ այսպիսի տաբօրնակ իմն պիտուածով ի յայս եկն ահա, ցնծութեամբ վերամբարձ զնա ի նախկին վիճակ վայելից հայրական սիրոյ իւրոյ և կաթոգնութեան, և ոչ միայն ներեաց Պոսթիւմոսի ամուսնոյ նորա զկեանս իւր, այլ և հաճեցաւ ընդունել և սիրել զնա որպէս փեսայ իւր։

Յայսմ ցնծալից ժամու՝ յառաջ մատեաւ և Բէլարիոս առնել զիւր խոստովանութիւն։ Մատոյց առաջի թագաւորին զպոլիզոր և զկապվալ, և յայտնեաց նմա, թէ Գուգերիոս և Աւրէլիրագոս՝ որպիք նորա էին նոքա։

Սիմբըլլին ներեաց և Բէլարիոսի, քանզի ոչ կարէր զպատուհասից և զվրէժխնդրութենէ խորհել յայսպիսի հանրաւայել երջանկութեան։ Գառնեղն զզուսար իւր կենդանի և զկորուսեալ որպիսն՝ յանձկնս երկու զեղեցիկ պատանեկացն, որք զերծուցեալ էին զկեանս իւր ի մահուանէ, մարտուցեալ քաջութեամբ վասն յաղթութեան իւրոյ, արդարև մեծ և անակընկալ երջանկութիւն իմն էր։

Ի վերջոյ, ձեռնհաս գտաւ արդ Իմոժին միջնորդել և վասն նախկին տեառն իւրոյ՝ Հռովմայեցի զօրապետին, զորոյ զկեանս իսկոյն յօժարութեամբ չնորհեաց նմա Սիմբըլլին, ըստ խնդրանաց զսաեր իւրոյ, և ի ձեռն նոյն իսկ Լուչիոս զօրապետի՝ հաստատեաց զշն խաղաղութեան ի սէջ Հռովմայեցւոց և Բրիտանացւոց, որ մեաց անխախտ յերկարացս բազում ամաց։

Ապա թէ որպէս թագուհի Սիմբըլլինայ ի պատճառս յուսահատութեան իւրոյ, ի չկարելն ի կատար ածել զկամս իւր, հարեալ ի խղճէ մտաց, հիւանդացաւ և մեռաւ. թէ որպէս նախ քան զմեռանիլ նորա, յիմար որպի նորա Կլօսլեն սպանաւ ի խռով կռուոյ ինչ, զոր նա ինքն գրգռեալ էր, զէպք են այնք յաւէտ ախորագին, արժանի միայն համառօտ յիշատակի, և անարժան ընդմիջելոյ զցնծալից եղերերաւն բանիս։ Բաւական է ասել, թէ բոլորեքեան ընկալան զիւրեանց բաժին երջանկութեան, մէն մի ըստ արժանեաց իւրոց. և նոյն իսկ Եակիմօ ևս, ի սակս վրիպման աներջին մոռացութեան նորա ի կատար ածելոյ զոր կամէրն, ի բաց թողաւ առանց պատուհասի։

ՏԻՄՈՆ ԱԹԵՆԱՑԻ

Տիմոն՝ Աթենացի ազնուական մի՝ գոլով սէր արքայավայել ճոխութեան, վարէր առատաձեռնութեամբ իմն, որում կայր ոչ չափ՝ ոչ կսպար։ Գրեթէ անսպառ ճոխութիւն նորա՝ որչափ առատութեամբ եւ հեղոյր ի ներքս, աճապարէր նա առաւել յորդութեամբ հոսիլ արտաքս՝ բաշխելով և ցրուելով անխարիր առ ամենայն ոք, չէիք փոյթ թէ բարձր էր նա ի վիճակի կենաց թէ ստոր։ Ո՛չ միայն կարօտք և աղքատք վայելէին զպարգեւս առատաձեռնութեան նորա, այլ մեծամեծ սեպուհք իսկ՝ ոչ արհամարհոս ինչ գրէին անձանց դասիլ ի կարգ հետևողաց նորա, և որոց չընդունէին զնուէր։ Յաճախէին ի սեղան նորա այնպիսիք՝ որոց ճաշակ և քիմ սուղ էին վայելից յոյժ գոլար և համագամ կերակրոց և ըմպելեաց, եւ բաց էր առն նորա բոլոր երեւելեաց Աթենք քաղաքի։ Զբազմահարուստ ճոխութիւն իւր՝ կից ընդ ազատ եւ

շայլ բնաւորութեան իմն, նպատակ արարեալ ինքեան միայն վասն նուաճելոյ և գրաւելոյ զսիրտ ամենից առ ի սիրել զինքն, բոլոր մարդիկ առ բնաւորութեան և պէսպէս հակման մտաց՝ յօժարամիտ էին նուիրել զծառայութիւն իւրեանց ազնուականն Տիմոնայ, յապակերես շողոքորթէ սկսեալ, որոյ զէմք ըստ հայելւոյ պատրաստ է միշտ ցուցանել զբոլոր վայրկենական փոփոխմունս կրից բարերարի իւրոյ, մինչ ցբիրտ և կամակոր երգիծաբանն, որ կեղծէր արհամարանս առ մարդիկ և անտարբերութիւն առ իրս աշխարհային, և որ սակայն տակաւին չկարէր վիմագրել շնորհալի բառուց և ազատասէր հոգւոյ Տիմոնայ, և ընդդէմ ազգման բնաւորութեան իւրոյ, զայր մտանակիզ արքայաշուք խրախճանաց նորա, և զառնալ պարծանօք և պատուով, եթէ արժանանայր լոկ ակնարկութեան և ողջունի նորա ևեթ։

Եթէ բանաստեղծ ոք շարագրէր զհագներդ մինչ, որ կարօտէր պրուատի առ ի բերել ի ծանօթութիւն մարդկան, ո՛չ այլ ինչ հարկաւոր էր նմա առնել, քան միայն վերընծայել զայն Ազնուականն Տիմոնայ, և անկասկած գնելոց էր զայն ամենայն ոք, թէպէտ զի լսէր նմանէ զհեղինակն ի բարերարէ իւրմէ նաև զքսակ մի պրատոյ և զարտօնութիւն երթևեկելոյ ի տուն նորա և սեղանակցելոյ ընդ նմա։ Եթէ նկարիչ ոք առնէր զպատկեր մի և կամէր վաճառել, միայն հարկաւոր էր տանել զայն առ Տիմոն, և կեղծել որպէս թէ գիտել կամէր զկարծիս նորա ի մասին արժէքից այնորիկ, և նոյն ժամայն Սեպուհն առատասիրտ գնելոց էր զայն։ Եթէ վաճառական ոք ունէր զդոհար մինչ մեծագին, կամ զերձակ ոմն զբազմաճաշ զգեստ մինչ, որ ի պատճառս մեծագնի գոլոյն չկարէր վաճառել, տուն Սեպուհոյն Տիմոնայ միշտ բաց էր որպէս վաճառատեղի մի, ուր կարէին նոքա վաճառել զայնս մեծամեծ գնով. և բա-

րեմիտ Սեպուհն նաև շնորհակալ ևս լինէր զնոցանէ, որպէս թէ պատուասիրեալ զինքն՝ թոյլ տուեալ էին նմա գնել զայնպիսի պատուական իրս։ Եւ վասն այսորիկ տուն նորա լի և խճողեալ էր բազում անօգուտ և աւելորդ իրօք, որք չունէին պիտանութիւն ինչ, քան ածել առաւելուլ զցոյց թափուր և մեծաի փառասիրութեան իմն։ Այնձն նորա նմանապէս շրջապատեալ գոլով խուռն բազմութեամբ գատարկապորտ այցելուաց, առաքիսս բանաստեղծից, նկարչաց, խաբեբայ վաճառականաց և արհեստաւորաց, ազնուականաց, սիկնանց, ազքատ պալատականաց և կարօտաւոր ապրանց, որք անպատար ժողովէին ի պահլիճս և ի գաւիթս նորա, հձձէին զքծնի բանս ամօթալի շողոքորթութեանց ի գովեստ նորա. նուիրէին նմա փառաբանութիւնս որպէս Աստուծոյ, կոչէլով զնոյն իսկ ասպանդակ ձիոյ նորա, զոր գնէր զոտն իւր մաքուր լինչ և սրբազան, և ցուցանէին որպէս թէ նոյն իսկ օդ՝ զոր շնչէին ինքեանք, էր շնորհաժուութեամբ և թոյլտուութեամբ նորա միայն։

Ոմանք յայսոցիկ հանապազօրեայ հետևողաց՝ էին պատանիք ազնուազարմք, որք (ճոխութիւն նոցա չբաւեալ շռայլութեան ծախուց) եղեալ էին ի բանս ի ձեռն պարտատերաց, և ազատեալ անտի առաձեռնութեամբ Տիմոնայ. և այսոքիկ անտառակ և շռայլ պատանիք՝ յայնմհետէ անբաժան ընկեր եղեալ նորա, միաբան համակրութեամբ իմն՝ հարկաւորապէս ցուցանէին, իբր զի Տիմոն սիրէր զնմանիս իւրեանց զանառակս և զշռայլս, և չկարելով ճոխութեամբ համեմատել նմա, փիլտռոյն համարէին նմանիլ նմա ի շռայլութեան, ծախելով անխնայաբար որ ինչ չվերարերէր ինքեանց։ Մին յայսոցիկ իշամեղուաց՝ էր Վիտիփիոս, ի վճար պարտուց որոյ, ի մօտոյ հատուցեալ էր Տիմոն տաղանդս հինգ։

Սակայն ի մէջ այսոցիկ մեծ խմբի հեաւողաց, յոգնաթիւ ամբոխի այցելուաց, առաւել քան զամենայն նշանաւոր էին ընծայաբերք և պարգեւատուք: Բարեբախտութիւն էր համարելի սոցա, եթէ Տիմոն ցուցանէր սոսկ հաճութիւն ինչ, կամ խօսէր բառ մի գովեստի, վասն շան միոյ կամ ձիոյ, կամ թեթեւագին անօթոյ ինչ կամ կահու վերաբերելի ինքեանց: Իսկ այսպէս հաւանեալ կամ գովեալ, որ ինչ և էր այն, ի միւսում առաւօտու՝ աղջունիս սիրոյ առաքեալ լինէր անխափան առ Տիմոն որպէս ընծայ, հանդերձ ներողութեամբ, իբր զի չէր այն բաւականաչափ արժանաւոր վասն նորա, և այն շուն կամ ձի, կամ որ ինչ և էր, ոչ երբէք վերկէր ի փոխադարձ պարգեւոյ առատաձեռնութեամբ Տիմոնայ, որ չկամելով պակաս ինչ երևիլ քան զնուիրատուն, առաքէր պարգև՝ յոյժ առաւելութեամբ ճոխ և մեծագին. և այսմ քաջ տեղեակ էին կեղծաւոր նուիրատուքն, և պիտէին զի նուէր իւրեանց ոչինչ էր քան զմեր վրայոյ ի փոխառեալ ծանր վաշխու: Այսպէս սեպուհն Լուշիոս փութու յառաջ առաքեալ էր առ Տիմոն ի նուէր՝ զչորս սպիտակ նժոյգս՝ զարդարեալ ի թամբ արծաթի, զորս խորամանկ Սեպուհն լուեալ էր ի Տիմոնայ գովել, եւ այլ մի Սեպուհ Ղուկուղէս անուն ընծայեալ էր նմա զղեցիկ մի զրահական շանց, առ որս Տիմոն ցուցեալ էր զմայլումն ինչ. և զայսոսիկ նուէրս՝ պարզամիտն Տիմոն սառացեալ էր առանց կասկածելոյ զխորամանկ նպատակիէ նուիրատուացն, և ի հարկէ ի փոխարէն պարգեւեալ էր և ինքն զպատմանդ ինչ կամ զայլ գոհար քանիցս առաւել արժէքիւք քան զկեղծուպատիր նուիրացն:

Այսոքիկ նուաստախոհ շողոքորթք բազմիցս ի գործ դնէին զխարամանկութիւն իւրեանց՝ և՛ առաւել ուղղակի միջոցովք զոր ցիւրահատուն Տիմոն կու-

բօբէն չկարէր տեսանել: Կեղծելով նոցա զմայլումն մեծ ընդ իր ինչ՝ զոր ունէր Տիմոն, ասա՛, ըստ պիպաց պիւրապնի ի ձեռս բերեալ պատուական իր իմն, կամ մեծածախ կահ կամ զարդ ինչ, սկսանէին գովել զայն չափազանցաբար, և աներկբայ էին թէ քաղցրասրտութիւն Տիմոնայ իսկոյն համոզելոց էր զնա՝ տալ զայն ինքեանց ի պարգև, ոչ վասն ծառայութեան ինչ մատուցեալ նմա, այլ վասն վայրկենական պիւրապնին շահմտութեան իւրեանց: Այսու եղանակաւ միայն աւուրբք ինչ յառաջ տեսեալ էր նա՝ միւսում յայսոցիկ նուաստախոհ ազնուականաց՝ զդեղեցիկ նժոյգ մի, զոր ինքնին հեծանէր. քանզի տացեալ ազնուականն հաճեալ էր գովել զայն, որպէս զեղեցկագոյն յերիվարաց և որ ընծանայր յոյժ արագ, Տիմոն նուիրեալ էր նմա զայն տանելով ի միտս իւր, թէ սէգ ոք գովելոց էր այնպէս զիր ինչ, զոր չցանկայր ունել ինքն: Քանզի Սեպուհն Տիմոն կշռադատեր զսէր և զհաւատարմութիւն բարեկամաց իւրոց ընդ իւրոյն, և այնչափ ըղձայր նա պարգևել և տալ, զի բաշխելոց էր յոժարութեամբ զթագաւորութիւնս անգամ կարծեցեալ բարեկամաց իւրոց, առանց երբէք խնայելոյ կամ տագնապելոյ:

Մի՛ կարծեսցի, թէ հարստութիւն Տիմոնայ հոսէր արտաքս վասն ճոխացուցանելոյ զչարամիտ շողոքարսն միայն: Ունէր նա նաև զարժանաւայել և զգալելի գործս. և անգամ մի, յորժամ մին ի ծառայից իւրոց սիրէր զդուստր փարթամ Աթենացւոյ միոյ, այլ անյոյս էր գտանել զնա ի կնութիւն ի պատճառս պերազանցութեան ասպիճանի նորա և ճոխութեան, Տիմոն առատաձեռնութեամբ շնորհեաց ծառային իւրում ի պարգև՝ զերիս Աթենական տաղանդս, առ ի վճարել հօր օրիորդին, որ պահանջէր զայն յոժիս գտեր իւրոյ ի փեսայացուէ նորա: Սակայն ըստ մեծի մասին

ղողոքրդիք և հացկատակք էին, որք վայելէին զհարըս-
տութիւն նորա, կեղծ բարեկամք՝ զորս չճանաչէր թէ
կեղծէին. այլ որովհետև ժողովէին շուրջ զնովաւ, հա-
մարէր թէ անխափան սիրէին զնա հաւատարմութեամբ.
և որովհետև ժպտէին և շողոքրդէին և քծնէին զնո-
վաւ, կարծէր այս գործք իւր և բարք անկերկայ հա-
ճելի էին յաչս խմաստնոց և բարեմտաց: Եւ մինչդեռ
վայելէր նա ի մեծամեծ խրախճանս շրջապատեալ ի
շողոքրդի և ի կեղծ բարեկամաց այնոցիկ, որք յըղ-
փային ի կերակուրս նորա, և սպառէին զճոխութիւն
գանձուց նորա յամպս անուշահամ գինւոյ, զոր ըմ-
պէին յաղխութիւն անձին նորա, չկարէր նա որոշել
զաստրկութիւն ճշմարիտ բարեկամի միոյ և շողոքոր-
թի, այլ զիւրաքանչիւր աչաց նորա (շլացեալ պարծա-
նօք ընդ շքեղութիւն ամենայն) թուէր երջանկութիւն
մեծ՝ ունել զիւրն զայնչափ բազմաթիւ բարեկամս, որք
ըստ օրինակի եղբարց (որպէս կարծէր նա) բաժանա-
կից լինէին ընդ նմա բախտի իրերաց, (թէ և յիւրմէ
քսակէ էր միայն, զի մատակարարէին ամենայն ծախք)
և խորագոյց հրճուանօք իմն էր, զի շրջեցուցանէր
զհայեցուած իւր ի տեսարան հանդիսին, որ երեւէր նմա
իրապէս ցնծալի և սիրավայել կաճառ մի եղերաց և
բարեկամաց:

Մինչդեռ այսպէս անցանէր՝ գերազանցէր նա
զնոյն իսկ մարդկային քաղցրատրութեամբ, և հոսէր
արտաքս զբարիս և զչնորհս, որպէս թէ Պղուտոն աս-
տուած ոսկւոյ մատակարար էր իւր, մինչդեռ այսպէս
շարունակէր անդադար առանց փոյթ ունելոյ զծախուց,
զոր ոչ հոգ առնէր գիտել, թէ ուստի մատակարա-
րեսցի, և ոչ գիայ տայր սասակի շռայլութեանց և
զեղխութեանց, ճոխութիւն նորա՝ որ չէր անսպառ՝
առ առ նուազէր ի հարկէ յանկանոն շռայլու-
թենէն՝ որում ոչ չափ կայր ոչ սահման: Բայց ոմ

փոյթ ունէր զգուշացուցանել զնա, շողոքրդիք նորա:
Սոցա օգուտ պահանջէր յաւէտ կափուցանել զաչս
նորա, քան զգուշացուցանել զնա: Ի զուր էր զի
հաւատարիմ մատակարար նորա Ֆլէվիոս ջանայր իրա-
զեկ առնել զնա հանգամանաց վիճակի իւրոյ, գնեալով
հաշիւս առաջի նորա, թէև խնդրէր ի նմանէ, ապաչէր
զնա թախանձանօք իմն, որ յայլ ժպտ ժպրհութիւն
համարէր ծառայի միոյ, և արտասուք յաչս պաղատէր
զնա հայիլ ի գրութիւն և ի վիճակ իրացն, սակայն
ի զուր էր այն: Ցիմն տակաւին ոչ փոյթ առնէր
լսել բանից նորա, և սովոր էր փոխանակել զզրոյցն առ
այլ առարկայ լինչ, քանզի ոչ ոք այնպէս խուլ է թա-
խանձանաց, ոչ ոք այնպէս անյօժար և դժկամակ՝ ըն-
դունել զաղքատութիւն իւր, ոչ ոք այնպէս անհամա-
զգի ի նշմարել զիրական վիճակ իւր, և հաւատալ,
թէ ի վերայ հասեալ է ձախորդութիւն, որպէս այր
ճոխ յաղքատանալ իւրում: Ցաղով անգամ յորժամ
մեծամեծ պահլիճք տան տեառն իւրոյ լի էին աղ-
միայոյզ խրախճանակցօք, որք յղփանային ի կերա-
կուրս պատրաստեալ ծախսիւք տեառն իւրոյ, յորժամ
նոյն իսկ յատակք պահլճիցն՝ որպէս թէ արտասուէին
գինւոյն հեղեալ ի դղդղօղն ձեռաց արբեցելոց, և բո-
լոր տունն ցոլայր ի բոց ճրագաց, և հնչէր ի ձայն
երգոց և երաժշտականաց, այս բարի և հաւատարիմ
մատակարար մեկուսացեալ. ի խորշ մի հեղոյր ար-
տասուս առատս առատութեամբ, քան զվինն որ հոսէր
ի տակառաց, մինչ տեսանէր զանկոպար առա-
տութիւն տեառն իւրոյ. և մտածէր զի յորժամ
սպառէր ի բաց միջոցն՝ որով գտանէր նա գովեստ
յամենայն բերանոց, ուրչափ փութով սպառելոց էր և
շունչն որ կազմէր զգովեստն. քանզի գովեստ՝ ի ձեռս
բերեալ զայլս կերակրելով, կորուսանի՝ յորժամ պա-
կասի կերակուր անձին. և միայն տեղ մի ձմերային

անձրևոյ անեղեւսթացուցանէ իբրև զճանճս զշուշաքորթս այսպիսիս։

Բայց ի վերջոյ եկն եհաս օրն, յորում Տիմոն ոչ այլ ևս փակել կարէր զականջս իւր և չլսել բանից հաւատարիմ մատակարարի իւրոյ։ Հարկաւոր էր գաւառնել զրամ, և յորժամ հրամայեաց մատակարարի իւրում վաճառել զկալուածն ինչ գեանոյ առ ի ձեռս բնակել զայն, Ֆլէվիոս յայտնեաց նմա, զոր ինչ յառաջն ի նանիր գուն գործեալ էր տալ նմա խնամալ, զի մեծագոյն մասն կալուածոց նորա արդէն վաճառեալ էին կամ գրաւեալ ի պատճառս անհատոյց փոխառութեանց. և որ ինչ մնացեալ էր, չէր բաւական վճարել զկէս պարտուցն, զոր ունէր արդէն։ Զարմացեալ յոյժ ընդ այս Տիմոնայ՝ պատասխանեաց շատապով, «բայց կալուածք գեանոյ իմ, սարածէին յԱթէնայ մինչ ցկէսպիսն»։ «Տէ՛ր իմ», պատասխանեաց Ֆլէվիոս, «աշխարհս իսկ՝ աշխարհ է միայն, և ունի սահմանս, եթէ բաղդրովին քոյ լինէր այն պարգևել ումեք ի մի շունչ բերանոյ, ոչչափ փութով ի բաց գնայր ի քէն և այն»։

Տիմոն, մխիթարէր զանձն, զի ոչ երբէք զառաձեռնութիւն իւր ծախեալ էր ի գործս անօրէնութեան. և զի թէ և անխոհեմաբար էր պարգևեալ զճոխութիւն իւր, սակայն պարգևեալ էր զայն յօգուտ և ի բարութիւն բարեկամաց իւրոց, և ոչ ի հաճել զկիրս իւր. վասն որոյ պատուիրեաց զվաճառքս մատակարարի իւրոյ (որ արտասուէր առ ժամն) չարամել, այլ սփոփել զինքն անեղբայր յուսով, զի ակն իւր ոչ երբէք կարօտ մնալոց էր զրամոց, մինչդեռ ունէր նա այնքան ագնիս և առատասիրտ բարեկամս, յորոց սոսկ բանիւ միով խնդրել արժան էր, և գտանելոց էր փոխ ոչչափ և կամէր։ Եւ յայնժամ, ուրախալից գիմօք, որպէս թէ հաւատաւ էր միանգամայն ընդ ելս փորձոյն, առաքեաց իսկոյն ծառայս՝ առանձին առ սեպուհն Լուշիոս, և առ սեպուհսն Ղուկուղէս և Սեմպրոնիոս, որոց առատաձեռնեալ էր զպարգևս իւր յանցեալ ժամանակաւն, առանց չափու կամ խնայողութեան, և նաև առ Վիտալիոս՝ զոր ի նորոյ զերծուցեալ էր ի բանտէ՝ վճարելով զպարտս նորա, և որ փոքու յառաջ հայր նորա մեռեալ զոլով՝ ժառանգեալ էր մեծ հարստութիւն իմն՝ և գիւրաւ կարող էր պատուել զինքեր Տիմոնայ, յուշ ածելով վերջնոյդ զի շնորհեսցէ վերադարձուցանել զհինգ տաղանդսն՝ զոր հատուցեալ էր վասն նորա, և խնդրելով ի միւս ազնուականաց տալ ինքեան մէն մի ի փոխ տաղանդս հինգ, բնաւ չերկբայեալ թէ երախտագիտութիւն նոցա մղելոց էր զնոսա անյապաղ լցուցանել զկարօտութիւն իւր, ոչ այնչափ գումարով միայն, այլ (եթէ կարօտէր այնմ) հինգ հարիւրիցս առաւելութեամբ իսկ։

Ղուկուղէս առաջինն էր՝ որում մատուցաւ խնդիր Տիմոնայ. և այս ցածամիտ սեպուհ երազեալ ի գիշերի զարծաթի կոնքոց և ընդանակաց, յորժամ եհաս ծառայ Տիմոնայ առ նա, նուաստաբոհ միաք նորա խոկոյն ազդեաց նմա, իբր զի անշուշտ երազ իւր կատարիլ կամէր. և զի Տիմոն առաքեալ էր ինքեան զնմանօրինակ մեծագին պարգև ինչ, այլ յորժամ լուաւ զխոհութիւն իրին, անդէն և անդ ի յայտ եկն կեղծ և ազաչուր բարեկամութիւն նորա, քանզի բազում բազոքարկու բանիւք սկսաւ յայտնել ծառային, թէ յերկար ժամանակէ հետէ կանխագուշակեալ էր ինքն զձախորդութենէ վիճակի տեառն իւրոյ, և բազմիցս սեզանակից էր լեալ յընթերիս նորա, առ ի ջանալ համոզել զնա չշռայլել այնպէս ի ծախս իւր, սակայն յայնչափ յաճախելոյ իւրոյ ոչ խրատեալ էր նա, ոչ զգուշացեալ երբէք։ Այո՛, թէ և իրաւ էր, զի յաճախեալ էր սա չարունակ ի հանդէս խրախճանաց Տի-

մինայ, որպէս և բազմօք վայելեալ զբարիս առատա-
ձեռնութեան նորա, բայց թէ երբէք գնացեալ էր նա
այնու մտադրութեամբ՝ զի խրատեսցէ և զգուշացուսցէ
զնա՝ խայտառակ սուտին իմն էր այն, և ընդ այսմ
սուտեան յարմարապէս կցեաց գայլ մի, ցածահո-
գութեամբ խոստանալով ծառային կաշառ, զի զարձեալ
առ տէր իւր յայտնեսցէ նմա, թէ չէր գտեալ զՂու-
կուզէս ի տան։

Յաջողութիւն ծառային՝ որ առ Լուշիոս էր գնա-
ցեալ, չէր ինչ առաւել քան զվերնոյն։ Այս սատիսօս
սեպուհ, որոյ փոր լի էր կերակրով Տիմոնայ, և ճո-
խացեալ էր ոչ սակաւ մեծագին պարգեւօք նորա, յոր-
ժամ դիտաց թէ շրջեալ է հողմն՝ որ փչէր զբարիսն
ի գոգ նորա՝ առ հակառակ կողմն, և աղբիւր այնչափ
առատաձեռնութեան յանկարծակուստ խցեալ, յառաջն
հաղիւ կարէր հաւատալ չիսկութիւն իրին, այլ ի
հաւատացուցանելն զնա ծառային, ցուցանել սկսաւ
արամութիւն մեծ, զի չկարէր մատուցանել զծառայու-
թիւն իւր Սեպուհն Տիմոնայ, քանզի տարաբախտա-
պէս (և այս արհամարհ սուտին իմն էր) յանցեալ
աւուր արարեալ էր, ասէ, զոյժ ծանրագին գնուած
ինչ, որ խապաս թաւիրս կացուցանէր զնա առ ժամն
ի զրամոյ. և սկսաւ աւաղել, թէ որպիսի չիմար ումն
էր ինքն, զի այնպէս զրկեալ էր զանձն ի մեծ զուար-
ճութենէ ծառայիլոյ պատուական բարեկամի միոյ, և
համարէր զայն չարագոյնն ի գժբախտութեանց, զի
վրիպեր ի հաճելոյ զկամս այնպիսի գերամեծար ազ-
նուականի։

Ո՞վ կարէ բարեկամ համարել զամենայն ոք, որ
միէ ընդ իւր զձեռն ի սկաւառակ կերակրոյ։ Արդարև
շողոքորթք և կեղծաւորք նոյն են, որպէս անարգ
պղինձ նոյն իսկ սկաւառակի։ Հանրացանօթ ինչ էր
այս, զի Տիմոն լեալ էր իբրև հայր մի վասն Ղուկու-

զեայ. քսակ նորա լի էր միշտ զրամով Տիմոնայ. զրա-
մով Տիմոնայ էր զի վճարէին վարձք ծառայից նորա,
և վարձք աշխատաւորաց և վարձկանաց՝ որք վաստա-
կէին ի շինութեան շքեղ տան միոյ, զոր ամբար-
տաւանութիւն Ղուկուզեայ հարկաւոր զտեալ էր կա-
ռուցանել վասն իւր, սակայն աւաղ, որպիսի ան-
հեթեթ զազան մի ցուցանէ զոլ զինքն այր մի, յորժամ
երևի ապերախտ։ Այս Ղուկուզէս զլանայր այժմ տալ
Տիմոնայ զգումար ինչ զրամոյ, որ համեմատեալ ընդ
այնմ՝ զոր ինչ Տիմոն առատասրտութեամբ պար-
գևեալ էր նմա, համարելի էր նուազ ինչ՝ քան զոր
այր սակս ոգորմածասիրտ տայ աղքատի միոյ։

Սեմպրոնիոս և այլ բոլոր օգտածարաւ սեպուհքն,
առ որս Տիմոն խնդրատատոյց եղև, մի զինի միոյ
պարձուցին զնմանօրինակ կամ զայլ սնոտի պատճա-
ռանս, կամ ուղղակի զլացան կատարել զինդիր նորա։
Նա իսկ վէնտիդիոս ևս — ի բանտէ ազատեալ եւ
այժմ ճոխն վէնտիդիոս — զլացաւ օգնել նմա և
զարձուցանել զփոխ հինգ տաղանդացն, զոր Տիմոն
տուեալ էր նմա առատասրտութեամբ ի տանկութենէ
նորա։

Եւ ահա Տիմոն այնչափ խորշելի լինէր յազգա-
տութեան, որչափ պատուասիրեալ էր նա և շրջապա-
տեալ յամենից ի ճոխութեան իւրում։ Ահա նոյն բա-
րեացն որք բարձրաձայն էին յաղագակ իւրեանց ի գո-
վեստ նորա, զրուանակով զնա որպէս առատաձեռն,
բարերար, ազատամիտ և անխնայ ի տուրս, չամաչէին
սպառանել զնա, և զնոյն իսկ քաղցրասրտութիւն նորա
յիմարութիւն անուանել, զառատաձեռնութիւն նորա՝
շռայլութիւն, թէ և յիմար ցուցեալ էր նա զինքն
երապէս յոչ այլ ինչ այնչափ՝ որչափ յընտրելն իւր
զայսոսիկ անարժան արարածս՝ ընկալուչս պարգևաց
առատաձեռնութեան իւրոյ։ Ահա աղքայալայել պարապս

Տիմոնայ, լքեալ բարձի Թոզի եղեալ էր, և յամենից խորշելի և ատելի իմն տեղի համարեալ: Եղեալ էր այն վայր ինչ, անցանել միայն առ նովաւ, և ոչ տեղի՝ ուր ամենայն անցորդ՝ որպէս յառաջն մտանէր ճաշակել զգինի և վայելել զկերակուր նորա: Ահա փոխանակ հանդիսից և խրախճանաց և բազմախումբ բազմազազակ հանդիսականաց և խրախճանակցաց՝ անդ էր տեսանել ամբոխ իմն անհամբեր և աղմկայոյզ պարտատերց և կեղեքիչ վաշխառուաց, որք ունելով ի ձեռին մուրհակ պահանջից, պարանոցապիրս, Թուղթս գրաւոց — որք երկաթասիրաք, որք ունէին զնէին ոչ համոզանաց, ոչ պատճառաց, ոչ երկարաձգութեան վճարի պահանջից, որով և առն Տիմոնայ եղեալ էր նմա բանս, և յորժ ի պատճառս նոցա, ոչ արտաքս ելանել կարէր՝ ոչ մտանել, քանզի մին պահանջէր զվճար իւրոց յիսուն տաղանդաց, միւս ի ձեռին ունէր զմուրհակ վասն հինգ հազար դրամաց, և զայսոսիկ՝ եթէ կամիլ առ կամիլ հանէր զարիւն իւր ի մարմնոյ՝ չկարէր Տիմոն վճարել զամենայն:

Յայսմ (որպէս երևէր) անդարմանելի վիճակի լեալ, զարմացան յանկարծ բոլոր մարդիկ ընդ նոր և անհաւատալի փայլ իմն արևու բախտի Տիմոնայ, որ թէև ի մուսս խոնարհեալ՝ արդ որպէս թէ կրկին ծագել սկսանէր: Դարձեալ անդամ մի պատրաստեալ Տիմոն զխրախճան մեծահանդէս, առ որ հրաւիրեաց զսովորական կոչնականս իւր՝ զսնապուհն. զսիկոփայս և զհամայն երևելիս և զազնուականս Աթենք քաղաքի: Եկին ներկայացան ի հանդէսն՝ սենատուքն Լուշիոս, Ղուկուղէս, նաև վէնտիդիոս և Սեմպրոնիոս, և այլք բազումք: Ո՛րշափ մեծ էր սիրութիւն ցածամիտ հոգեառակացս, յորժամ սեսին (որպէս կարծէին) թէ զքաւութիւն Տիմոնայ միայն պատրաստ ինչ էր առ ի փորձել զսէր և զհաւատարմութիւն իւրեանց, և զի չէին

կարացեալ դիտել զայս վազազոյն, և զրաւել թեթևագնի զհաճութիւն նորա. բայց որչափ մեծ էր և ուրախութիւն նոցա, զի ազբիւր մեծի առատաձեռնութեանն՝ զոր չորացեալ կարծէին, սեսանէին ահա բղխել կրկին առատօրէն որպէս յառաջն: Եկին նոքա քծնելով՝ շոգմոզելով և ցուցանելով զթախիծ խոր ընդ սարաբախսութիւն իւրեանց, որով անկարող էին զտեալ կատարել զինդիր Տիմոնայ, և հաճել զկամս ազնիւ և պատուաբժան բարեկամի միոյ. բայց Տիմոն ազաչեաց զնոսա մոռացման տալ զայնպիսի չնչին դէպ մի, որպէս մոռացեալ էր ինքն արդէն: Եւ այսոքիկ անամօթ և քամահանաց արժանի սեպուհք, թէև զլացեալ էին օգնել նմա զրամով ի ձախորդութեան նորա, սակայն չզլացան զնեղկայութիւն իւրեանց ի վայելս նորոյ բարեբախտութեան նորա, զոր վերածագեալ կարծէին: Քանզի ոչ այնչափ ճեպով և հաճութեամբ հետևէ զարնան ծիծեռն, որչափ այսպիսի օգտածարաւ և շողոմ մարդիկ հետևին բարեաց բախտի բախտաւորաց. և ոչ իսկ այնչափ ճեպով և հաճութեամբ փախչի ծիծեռն ի բաց ի ցրտոյ ձմերան, որչափ ընկերկին խուսեն սոքա ի բաց ընդ առաջին նշանս վերահաս ձախորդութեան, — այո՛, այսպիսի՛ ամառնային թռչունք են մարդիկ: Այլ արդ ի ձայն նուագի երաժշտականաց, արկաւ սեղան մեծի հանդիսին, և չերմաջերմ շոգիաբարձ սկաւառակք եղան ի վերայ, և յորժամ կոչնականքն հաղիւ սթափեալ էին ի զարմանաց իւրեանց, թէ ուստի՛ մարթացեալ էր տնտեսացեալն Տիմոն զատնել միջոցս առ ի պատրաստել զայնպիսի մեծածախ սեղան, ոմանք կասկածելով ընդ խոհութիւն իւրն և չհաւատալով անդամ աչաց իւրեանց, տեսեալ Տիմոնայ նշան սիրարկութեան, ի վեր առան իսկոյն կափարիչք սկաւառակացն, և յայնժամ յայտնեցաւ ծածուկ նախապատրաստութեան նորա: Փոխանակ սէտպէս համա-

զամ կերակրոց՝ որում ակնկալէին, և որովք յանցեալ ժամանակն անխնայ առատութեամբ լի էր սեղան նորա, ի բանալն զայնս, երևեցաւ ահա ի մէն մի սակաւառակի խահրուած ինչ, առաւել պատշաճ աղքատութեան Տիմոնայ. և որ ոչինչ էր՝ քան փոքր մի գոլորշի և չուր զաղջ — կերակուր՝ և՛ս պատշաճագոյն վասն խմբոյ իմն այսպիսի սուտ բարեկամաց, որոց խոստովանութիւն սիրոյ՝ արտաքուստ՝ ոչ առաւել ինչ էր քան շոգի վազանցիկ, և սիրա նոցա թոյլ և անկայուն որպէս չուրն՝ զոր առնչի եղ նոցա Տիմոն: Զայնեալ ապա առ նոսա, «լափեցէք սի՛ չունք», չև սթափեալ էին միաք նոցա ի զարմանաց, և ահա ձգիլ սկսաւ յերեսս նոցա զչուր սկաւառակացն զի լիասցին այնու, ձգեաց նաև զսկաւառական զինի նոցա: Եւ այն ինչ բոլորեքեան սնապուճք և սիինայք՝ շառագմամբ հագիւ թէ ի ձեռս բերեալ զչքխարիս իւրեանց՝ փութային մղելով զիրեարս ի բաց փախչիլ մեծաւ շփոթութեամբ, Տիմոն զեւ ընթանալով զինի նոցա՝ կոչէր զնոսա որ ինչ էինն իրաւ, «կեղծաղէ՛մ կեղծաժպիտ ժժմունք ապականիչք, կո՛րծանիչք՝ պատրուակաւ բարեկամութեան. գա՛յլք ծպտեալք, ա՛րջք գառներանք, մի՛մունք բախտի, անա՛մօթ հագիւատակք, ճանճք գարշելիք»: Խոնհալ նոցա ընդ միմեանս՝ առ ի խոյս տալ ի նմանէ, առաւել ճնշով ի բաց ելին ի տանէն՝ քան արչաւի մտեալ էին, ոմանք կորուսանելով ի շտապ խրտնից ի խոտան անդ՝ զչքխարիս, ոմանք զչօպիկս, և ոմանք զգարպս իւրեանց, բոլորեքեան ըղձակաթ ազատիլ ի ձեռաց խելագար առն միոյ, և յայտնակատակ խրախճանէն:

Վերջինն էր այս ի հագիւրութենէ՝ զոր եա երբէք յայնմհետէ Տիմոն. և զինի այնորիկ, հրաժեշտ եառ նա յԱթենք քաղաքէ և յընկերակցութենէ մարդկան: Գնաց առանձնացաւ նա յանտառս՝ գարձուցեալ զերիկունս իւր առ քաղաքն առելի և առ բոլոր սեռ մարդկան: Մաղթէը զի կործանեալ յաւեր գարձցին պարիսպք քաղաքին, և առնքն փշեալ թագեսցեն ի ներքոյ զբնակիչս իւրեանց, զի ժանտասիա՝ պատերազմ՝ կողոպուտ՝ աղքատութիւն և երաշխեպք ցաւոց բաժին լիցին բնակչաց այնորիկ. և զի արտաքուստիւն գից բնաջինջ արասցէ զրոլոր Աթենացիս՝ զմանկունս և զծերս, զմեծամեծս և զխոնարհս, և այսպէս անիծանելով զնոսա յանտառսն, ուր՝ ասէր, գառանելոց էր զկատաղագոյնսն անգամ ի գազանաց առաւել գիմած քան զմարդ: Մերկացաւ նա ի զգեստուց իւրոց՝ զի մի նմանեսցի մարդկան ի սովորութեան իւրեանց, և փորեաց զանձաւ մի առ ի բնակել ի նմին, և կեայր նա յաւէտ որպէս գազան մի՝ ուտելով զարմատս ծառոց և ըմպելով չուր միայն, ի բաց խուսելով յերեսաց մարդկան, և ընտրելով մանաւանդ բնդ գազանս ճռել, զքան առաւել անվնաս և բարեկամ համարէր, քան զմարդիկ:

Ո՜հ, սրպիսի տաբբերութիւն ահա ի մէջ գանձուք ճոխացեալն Տիմոնայ, որ ազբիւր էր հրճուանաց և ցնծութեան ամենայն մարդկան, և ի մէջ մերկամարմնին Տիմոնայ՝ մարդատեացն Տիմոնայ: Ո՞ւր էին ամենայն շողոքորթք նորա, ո՞ւր հետևողք նորա և պաշտօնեայք: Արդեօք ցրտաշունչ հո՞ղմ — այլ խոտաբար սպասհարկու — ծառայելոց էր նմա որպէս սենեկապան: Արդեօք կարծրաբուն ծո՞ռք անտառին՝ երկարակեաց քան զարծիւս՝ փոխարկելոց էին ի մատաղատի սթափ ծառայս ճեպ տալ ոտին ի տանել և բերել զպատգամս նորա, և սպասել ակնարկի նորուն: Արդեօք ցուրտ առուոյն՝ որ անդ, և որ ի ձմերան փոխիւր ի սառոյց, մատաղ կարարելոց էր նմա արգանակ ջերմ և խաշու հիւանդի՝ յորժամ գնէր նա անառողջ և խոթ ի ջերմախտ: Կամ արդեօք անասո՞ւնք և գազա՞նքն՝ որք կէին յանտառան վայրենի՝ գալոց էին լիզել զձեռս նորա և շոգոմել զնա:

Ցաւուր միւսմ, յանդգնակ անդ մինչդեռ փորէր նա զգետին գտանել զարմատս անկոց, որ կազմէր զաղքատիկ կերակուր նորա, մուրճ նորա հարաւ յանկարծ նիւթոյ ինչ, զոր հանեալ եհաս, թէ էր ոսկի — մեծ քանակութիւն ինչ, զոր՝ որպէս երեւէր՝ ժլատ ոմն թաղեալ էր անդ ի ժամանակի խռովութեան ինչ, եւեալ ի մահ գալ և ի բաց տանել զայն կրկին, այլ մեռեալ էր յառաջ քան զտանել զպատահութիւն, և մնացեալ էր այն՝ առանց գործելոյ օգուտ կամ վնաս՝ ի թագստեան անդ յարդանդ երկրի՝ մօր իւրոյ, որպէս թէ չէր պէտ կորզեալ անտի ի ձեռն մարդկան, մինչ յորժամ ըստ վիպաց ի յայս եկն Տիմոնայ, և երեր նա զայն միւսանգամ ի լոյս արեւու:

Այս ահա առաջի կայր Տիմոնայ մեծագանձ ճոխութիւն մի, զոր՝ եթէ դնս ի նոյն միտս լինէր նա որպէս յառաջն, բաւական էր գնել նմա կրկին բազում բարեկամս և շողոքորթս. սակայն զղուեալ պժգացեալ էր Տիմոն ընդ կեղծաւորական սուտութիւն աշխարհի, և տեսիլ ոսկւոյն էր նմա որպէս ժահր մահացու, և ծածկելոց էր զայն կրկին ընդ երկրաւ. այլ յուշ ածեալ, թէ ի ձեռն ոսկւոյ քանի՛ աղէաք և թշուառութիւնք ի վերայ ածին սեռի մարդկան, և թէ որպէս քաղց այնորիկ պատճառէ կողոպտմանց, բռնաբարութիւնս, անբարեւութիւնս, կաշառակերութիւնս, հարուածս և սպանութիւնս ի մէջ նոցա, զոց ցնծութիւն իմն ի սիրտ (այնչափ խիստ էր ահա տանջութիւն նորա առ բնութենականիցս իւր) յերեսակայէն, թէ յայնմ կուսակրօնք ոսկւոյ, զոր ի փորելն զգետին գտեալ էր, քանի՛ ճնաք և աղէաք յառաջ գալ կարէին, առ ի խոշտանգել զմարդիկ: Եւ զօրականք ոմանք անցանելով ընդ անտառն հուպ առ անձաւ իւր, որք՝ որպէս գիտաց՝ էին մասն զինուորաց Ալսիբէադես Աթենացի զօրապետի, որ ի պատճառս ժխտամտութեան ինչ ընդդէմ Սինկղի-

տոսաց Աթէնայ, (Աթէնացիք միշտ համբաւեալ էին զոլ ժժգոհ և ապերախտ ժողովուրդ իմն առ զօրապետս և բարեկամս իւրեանց) յառաջ խաղայր ի գլուխ միւնոյն զօրաց, որովք գործեալ էր մեծամեծ յաղթութիւնս ի պաշտպանութիւն նոցա. արդ պատերազմիլ ընդդէմ նոցա, և Տիմոն՝ որ յոյժ հաճ և հաւան էր ընդ նպաստակ նոցա, պարզեւաց զոսկին գնդապետի զօրացն՝ առ ի բաշխել զօրականաց իւրոց, խնդրելով ի նմանէ ոչ այլ ինչ փոխարինութիւն առ այն, քան միայն զի հնարիցայ տակ արասցէ զԱթէնք քաղաք այրեսցէ ի սուր մահ շեսցէ և կոտորեսցէ զբնակիչս այնորիկ. մի՛ խնայեսցէ ի ծերունիս վանն ալեաց իւրեանց՝ որք (որպէս ասէր) բոլորեքեան վաշխառուք են, և մի՛ ի մանկունս վանն անմեղութեան իւրեանց, որք կեցեալ զարգանալոց էին գոլ գաւաճանք և խաբեբայք, այլ խնայել զականջս և զաչս իւր ի չլսել և չտեսանել ինչ՝ որ զարհուրանել կարիցէ ի նմա զութ ի սրտի, և ոչ իակ թոյլ տալ զի աղաղակ կուսանաց, տանջեալ և մարդ խափան գնել կարիցէ ընդհանուր կոտորածոյ բոլոր քաղաքին, և բնաջինջ համայնայինջ առնել գնոսա ի պարտութեան նոցա. և մաղթէր ինքն ի խորոց սրտէ, զի յետ յաղթանակութեան իւրոյ և առնելոյ զայս ամենայն, ասպատաւածք ջնջեսցեն և զինքն զյաղթանակող նոցա: Այսչափ սաստիկ էր ահա տանջութիւն Տիմոնայ առ Աթենացիս և առ բոլոր սեռ մարդկան:

Մինչդեռ կայր Տիմոն յայսմ տառապեալ վիճակի, վարելով կեանս յաւէտ անասնական քան մարդկային, յանկարծ յաւուր միւսմ զարմացաւ յոյժ տեսանել զայր մի կանգնեալ առ դրան անձաւոյ իւրոյ՝ որպէս թէ ի զմայլմանն: Էր սա Ֆլէվիոս հաւատարիմ մատակարար նորա որ մղեալ ի սիրոյն զոր ունէր առ նա տակաւին, որոնեալ գտեալ էր զքշուառ բնակարան տեառն իւրոյ առ ի մատուցանել նմա զծառայութիւն իւր, և ի տեսա-

նէին զՏիմոն – Տիմոն՝ երբեմն շքեղն և ազնուական – յայնմ անարգ վիճակի, մերկ որպէս ծնեալն էր ի մօրէ, և բնակեալ ի մէջ գազանաց որպէս գազան, անկեալ և կործանեալ որպէս զաւերակս տան իւրոյ, և որպէս մահարձան մի կիսախորտակ, այնպէս շիտեցեալ ի միտս ծառայն բարի, զի ծնաց կանգուն լուռ և անխօս, և թմրեալ ի զարհուրանաց և ի խռովութենէ հոգւոյ: Եւ ի վերջոյ յորժամ մարթացաւ արտասանել բառս ինչ, այնպէս հեղձամղձուկ լինէր յարտասուաց, մինչ զի Տիմոն զժուարաւ կարէր ճանաչել զնա, կամ զիանալ, թէ ով էր նա՝ որ եկեալ էր (այնպէս հակառակ փորձոյ իւրոյ, զոր գտեալ էր ի մարդկանէ) մատուցանել նմա զծառայութիւն իւր՝ յայնմ չնաշխ վիճակի թշուառութեան իւրոյ: Եւ քանզի ունէր նա զձև, զկերպարան մարդոյ, Տիմոն կասկածէր զնմանէ զոլ զաւաճան ոմն, և զարատասուս նորա հնար պատրանաց: Սակայն բարի ծառայն այնպէս պէսպէս նշանօք սատուգեաց զճշմարտութիւնն հաւատարմութեան իւրոյ, և եցոյց ակներև, թէ ոչինչ քան սէր միայն և երախտապիտութիւն առ ազնիւ սէր իւր բերեալ էր զնա անդ, զի Տիմոն սիրեցաւ խոստովանել թէ կայր յաշխարհի դէթ մի միայն այր բարի և անկեղծ, այլ և այնպէս՝ ունելով նորա կերպարան մարդոյ չկարէր հայել առ նա առանց պժգալոյ նաց, ուստի զայս եզակի անկեղծ մարդ ևս սակաւաց ի բաց գնալ յինքենէ՝ միայն վասն զի մարդ էր նա. և քանզի, թէև բարեսիրտ և գթած էր զոր օսար ինչ համարէր ի մարդոյ, բայց տակաւին բներէր յանձին զաստեղի արտաքին կերպարան նորա:

Բայց ևս մեծամեծ այցելուք քան զաղքատս մատակարարն հանդերձեալ էին գալ առ Տիմոն ի վայրենի՝ այլ ի հանդարտ առանձնութեան նորա: Հասեալ էր ահա օրն, յոր ապերախտ սնտուկք Աթենայ սասեալ սարջացան ընդ ապերախտութիւն իւրեանց՝ զոր

ցուցեալ էին առ ազնուասիրտն Տիմոն: Քանզի Ալսիբիադես որպէս կատաղի վարազ մի, մաքառէր ընդ պարիսպս քաղաքի նոցա, և անտեղիտալի պաշարմամբ սպառնայր յաւեր գարձուցանել զհիմունս այնորիկ: Եւ ահա յիշատակ նախկին քաջութեանց Տիմոնայ, զոր գործեալ էր ի ժամանակս անցեալս, արծարծիլ սկսաւ ի մտացիկոս միտս նոցա, քանզի Տիմոն քաջարի և փորձառեալ զինուոր մի էր, և գիտացին թէ ի միջոյ բոլոր Աթենացւոց նա միայն կարէր գիմադրել այնպիսի զօրաբանակի՝ որ պաշարեալ զնոքօք սպառնայր կործանումն, և նա միայն կարէր ի բաց հալածել զկատաղի յարձակմունս Ալսիբիադեայ: Վասն որոյ՝ յայսմ վտանգաւոր վիճակի, ընտրեցան ամենք ի Սենկղիտոսացն գնալ ներկայանալ առաջի Տիմոնայ, և եկին սոքա առ նա ի տապնալ խրճանց, մինչդեռ յորժամ ինքն նա ի տապնալ ձախորդութեան, ցուցին նմա սէր փոյթ ոչ կարեկցութիւն, եկին առ նա որպէս թէ ակնկալէին ի նմանէ երախտագիտութիւն ի փոխարէն ամօթալի ապերախտութեան իւրեանց, և կամ որպէս թէ արժան էր նմա պատուասիրել զինքեանս վասն անարգ անպատիւ գնացից նոցա:

Սկսան յայնժամ աղաչել զնա թախանձանօք, պաղատանս արտասուաք յաչս՝ զի զարձցի նա փրկել ի թշնամեաց զքաղաքն, յորմէ ապերախտութիւն նոցա՝ ի մօտոյ վարեալ էր զնա ի բաց: Խոստանային նմա ահա ճոխութիւն, իշխանութիւն, վիճակ բարձրագահ և փոխարինութիւն ամենայն անցեալ անիրաւութեանցն արարեալ նմա, նաև շուք և զհանրային սէր ժողովրդական: Դնէին առ ոտս նորա զանձինս իւրեանց, և զբոլոր ճոխութիւն միայն եթէ գառնայր փրկիչ հանդիսանալ ազգի իւրոյ: Սակայն Տիմոն – միրկամարմին մարդատեացն Տիմոն, չէր այլ ևս սնապատն Տիմոն, չէր ազգիւր շնորհաց և բարերարութեան, չէր ծաղիկ քա-

ջարի վինուորաց և ամրոց պաշտպանութեան ի պատե-
րազմի, և սկ զարկ և շուք նոցա ի խաղաղութեան։
Զէր նմա փոյթ թէ Աւսիբիադէս կոտորէր զքաղաքացիս
իւր։ Եթէ Աւսիբիադէս ի կապուտ կողոպուտ մատնէր
զքաղաքն, և ի սուր մաշէր զծերս և զմանկունս, ու-
րախանալոց էր Տիմոն, և այսպէս իսկ ասաց նոցա, և
նաև թէ զմէն մի սուր ի բանակի թշնամեացն և՛ մե-
ծագնի համարէր քան զպարանոց երևելագունին ի քա-
ղաքացեաց Աթենայ։

Սա էր միայն պատասխանի նորա՝ զոր ետ լա-
կեան ապայոյս սինկղիտոսացն, և ի բաժանելն նոցա՝
պատուիրեաց ողջունել ի կողմանէ իւր զքաղաքացիս
Աթենայ և ասել թէ առ ի ամոքել զարամութիւն նոցա
և զանձուկ սրտի և խափան գնել չարաչար հետևանաց
կատաղի բարկութեան Աւսիբիադեայ, զոր կայր հնար
մի՝ զոր ուսուցանելոց էր նոցա, քանզի տակաւին տա-
ծէր ի սրտի՝ որչափ կենդանի էր, զկաթոգնութիւն լինչ
ման քաղաքակցաց իւրոց։ Սյսոքիկ բանք արծարծե-
ցին յոյս նոր ի սիրտս սինկղիտոսացն, որք կարծեցին
թէ վերանորոգէր քաղցրասրտութիւն նորա առ քաղա-
քակիցս իւր. և յայնժամ Տիմոն ասաց ցնոսա, թէ ու-
նէր նա ծառ մի բուսեալ հուպ առ անձաւ իւր, և
մտադրեալ էր զկնի փոքու հատանել զայն, և ման
որոյ հրաւիրէր զբոլոր Աթենացի բարեկամս իւր՝ զմե-
ծամեծս և զփոքունս և զմարդիկ ամենայն վիճակի, որք
ցանկային զերծանել ի վտանգէ տագնապին, գալ և առ-
նուլ զճաշակ ծառոյն, այնու նշանակել կամելով թէ
բարւոք էին առնելոց գնալ կախել զինքեանս անտի, և
այնպէս ազատել զանձինս իւրեանց ի վշտաց։

Եւ այս վերջինն եղև ի բոլոր գործոց պատուա-
սիրութեան, ի բոլոր առատաձեռն շնորհաց բարերարու-
թեան իւրոյ, զոր եցոյց Տիմոն առ սեռ մարդկան. և
վերջին անգամ եղև այս ի տեսին գնա քաղաքակիցք

իւր, քանզի սկ զկնի բազում աւուրց աղքատ զօրական
մի յանցանելն առ ծովեզերբն, որ սակաւ մի հեռի էր
յանտառէն՝ ուր բնակէր Տիմոն, ետես զգերեզման մի
առ շրթամբ ծովուն, ունելով գրուած ի վերայ՝ որ
յայտնէր, թէ էր այն գերեզման մարդատեացն Տիմո-
նի, որ «Մինչդեռ կեայր առէր զամենայն մարդիկ և
ի մեռանիլն փափագէր զի ժանտախտ լինչ բնաջինջ
արասցէ զնոսա»։

Թէ արդեօք անձնասպան եղև նա կամ թէ ան-
հնարին պժգամնգն՝ զոր յղացեալ ալ էր ի սրտի առ
մարդիկ վախճան եղ կենաց նորա, չէր յայտնի. սա-
կայն ամենայն ոք չհարբէր, քան զմայլիլ ընդ պատշա-
ճաւորութիւն արձանագրութեան գերեզմանի նորա, ի
մեռանիլն խրոմ որպէս և ի կենդանութեան առեցող
եղև սեռի մարդկան. և կային ոմանք որք կարծեցին,
թէ երևէր սէր փառաց ի նոյն իսկ ընարութեան նորա՝
զեզր ծովու, որպէս սեղի գերեզմանի իւրոյ, ուր լայ-
նատարած խոր ծով, ողբասցէ ցյաւետեան ի վերայ
շիրմի իւրոյ՝ ի քամահանս վազանցուկ և կեղծաւոր
արտասուաց, շողոքորթ և սատկաբե սեռի մարդկան։

ՈՐՊԷՍ ԵՒ ՀԱՃՈՅ Է ՔԵԶ

Ձրնթաց ժամանակին՝ յորում գազգիա բաժանեալ էր ի զանազան նահանգս, (կամ որպէս յայնժամ կոչէին՝ ի զանազան գբօսութիւնս) իշխէր ի միւսմ յայսոցիկ նահանգաց գուքս ումն՝ որ անիրաւութեամբ յափշտակեալ զամեռս եղբօր իւրոյ՝ օրինաւոր ժառանգի այնորիկ ի բաց վտարեալ էր զնա յաքսոր։

Դուքսն՝ որ այսպէս բռնաբարութեամբ արտաքսեալ էր յերկրէ իշխանութեան իւրոյ, ընդկերեալ ընդ քանի մի հաւատարիմ կուսակիցս՝ առանձնացեալ էր յանտառ Ազրենայ, և անդ բնակէր ի միասին ընդ բռնկամաց իւրոց, որք ի սէր նորա կամաւ տարապրեալ էին զինքեանս, մինչդեռ եկամուտ կալուածոց նոցա և ճոխութիւն անցանէր ի ձեռս բռնացեալ գբօնին։ Եւ ասա սովորութիւնն՝ փութով ընտելացուցեալ զնոսա, անշուք՝ այլ ազատ կենցաղավարութեանն՝ զոր վարէին, թուէր նոցա այն առաւել քաղցր քան շուք և բազմահոգ փառաւորութիւն պալատական կենաց։ Ասա կենցաղավարէին նոքա բուռ օրինակի հինաւուրց անտառականն Ռոբին Հուդ Անզղիացւոյ, և գային ժողովէին յանտառ անդ առ նոսա՝ նաև բազում ազնուական պատանիք յարբունեաց գբօնի. և անցանէր ընդ նոսա ժամանակն ճեպով և զուարճ, որպէս յաւուրս նոցա, որք կեցին յոսկեդարու աշխարհի։ Ցամարան նոտիկն նոքա ընդ հովանեօք սաղարթախիտ ծառոց անտառին, նշմարելով վխտալ և զկայտիս այծեմանց և եղջերուաց. և այնչափ սիրելի էին նոցա այսոքիկ խղճիկ յիմար անասունք՝ բնիկ բնակիչք անտառին, զի գութ սրտի նոցա չներէր որսալ սպանանել զնոսա, առ ի պատրաստել ինքեանց կերակուր ի նոցանէ։ Յորժամ ցրտագին հողմունք ձմերան զդալի առնէին գբօնի զփոփոխութիւն վիճակի կենաց նորա և զձախորդութիւն բախտի, առնելով այնմ համբերութեամբ ասէր միայն, «այսոքիկ սառնաշունչ հողմունք՝ որք անցանեն զինեա՝ են անկեղծ և հաւատարիմ խորհրդականք. չշողոմեն նոքա, այլ ցուցանեն ինձ զիրական որպիսութիւն վիճակի իմոյ. և թէև կծանեն զմարմին խստութեամբ սառնութեան իւրեանց, այլ ատմունք նոցա չեն այնչափ սուր՝ որչափ են սլաքք անիրաւութեան և ապերախտութեան։ Ինձ թուի թէ ո՛րչափ և արանջեն մարդիկ ընդ ձախորդութիւն բախտի, տակաւին հնար է արտապրել անտի զհանգոյս և զքաղցրութիւն կենաց, որպէս գոհարն որ՝ ասի թէ՝ արտապրի ի գլխոյ թուխաւոր զեհոյ ինչ, և զկ ազգու է հիւանդութեան»։ Այսու եղանակաւ համբերատար գուքսն՝ քաղէր միշտ խրատ իմն և օգուտ յամենայնէ զոր տեսանէր. և զրաղեալ զմիտս իւր յայսպիսի բարոյական մտածութիւնս, յառանձնութեան անդ իւրում՝ հեռի ի բնակութենէ մարդկան, գտանէր նա լեզու ի ծառս, մատեան ի հոսանս վտակաց, քարոզ և խրատ ի քարինս, և բարի և շահաւէտ յամենայն կենս։

Աքսորեալ գուքսս այս՝ ունէր զմիամօր գուստր մի անուանեալ Ռոզըլինդ, զոր գուքսն Ֆրէդրիկ, յափշտակ ազթոյ իշխանութեան առաջնոյն, ի վարձն գնա ի բաց, պահեալ էր յարքունիս իւր, իբրեւ ընկեր իւրոյ դստեր՝ յորմէ որջեալ Սիլիա։ Հաւատարիմ և մտերիմ բարեկամութիւն իմն հաստատեալ կայր ի մէջ երկու տիկնանցս, որում խորհուրդք և անհամաձայնութիւնն ի մէջ հարց նոցա՝ ոչ իւիք ազդեալ էր, կամ ընդ միջնեալ զայն։ Սիլիա ջանայր ցուցանել զամենայն կարելի գութ և քաղցրութիւն, առ ի սփոփել զսիրտ Ռոզըլինդայ, վասն անիրաւութեանն՝ զոր արարեալ էր հայր իւր, առբազրելով զհայր նորա. և յորժամ երբեմն թախծեալ

տեսանէր զՈզըլլինպ՝ ի մտածելն նորա զվիճակէ իւրոյ՝ որ այնպէս կախեալ էր զկնարհածութենէ անիրաւ դքսին, կամ զաքսորանաց հօր իւրոյ, գուն գործէր ամենայն իւիք մխիթարել և սփոփել զնա։

Յաւուր միում, մինջևո Սիլիա ըստ սովորութեան իւրոյ խօսէր քաղցրութեամբ ընդ Ռոզըլլինպայ ասելով, «ազաչեմ զքեզ Ռոզըլլինպ, քաղցրիկ քոյր իմ, ուրախ լեր, ընդէ՞ր արտասուես այպէս», եկն ծառայ մի՝ առաքեալ ի դքսէն՝ յայտնել նոցա, զի եթէ ցանկային տեսանել զմրցումն ըմբշամարտիցաց՝ որ սկսանելոց էր փութով պարա էր նոցա իսկոյն գնալ ի սրահ արքունեացն՝ որ առաջի պալատին. և Սիլիա կարծելով թէ զբաղեցուցանելոց էր այնու զմիտս Ռոզըլլինպայ, հաճեցաւ գնալ և տեսանել զայն։

Յայնոսիկ ժամանակս, մարզ ըմբշամարտութեան, որ այժմ ի գիւղօրէս ի մէջ շինականաց միայն տեսանի, համարէր զուարճալի տեսարան լինչ՝ նա իսկ յարքունիս Թագաւորաց, և զանգի առաջի գշխոյից և ասիկնանց. ուստի Սիլիա և Ռոզըլլինպ՝ գնացին հանդիսակից գոլ տեսարանի այնորիկ։ Բայց ի հասանելն նոցա անդ, գիտացին թէ յոյժ հաւանական էր, զի գուցէ անկեղ մին յըմբշամարտիցն, և զուարճութիւն տեսարանին եղերեսցի յեղերերգութիւն քանզի ահագնամարմին կորովի այր մի՝ որ ի բազմաց հետէ կըրթեալ էր ի մարզ ըմբշամարտութեան, հանդերձեալ էր փորձել զոյժ իւր ընդ մատագաի պատանւոյ միոյ, որ ի պատճառս յոյժ մատաղ հասակի իւրոյ և անփորձ գոլոյն արհեստի այնորիկ, բոլոր հանդիսականք կարծէին թէ մեռանելոց էր անխափան։

Յորժամ հասեն դուքսն զՍիլիա և զՌոզըլլինպ ասէ ցնոսա, «Ջինչ, եկեալ էք և դուք տեսանել զտեսարան մարախս։ Երկնչիմ թէ ոչ այնչափ զուարճանալոց էք, քանզի տարբերութիւնն ի մէջ մարտակացն կարի յոյժ մեծ է. և դիմացեալ ի վերայ պատանեկիդ, յաւէտ ընարէք, թէ համոզէր ոք զնա ի բաց կալ ի փորձոյդ։ Խօսեցարուք ընդ նմա գուցէ համոզել կարիցէք զնա դուք սիկնայքդ»։

Տիկնայքն յօժարութեամբ փութացան կատարել զպործն մարդասիրական, և նախ Սիլիա ազաչեաց զպատանին, զի ի բաց կացցէ ի փորձոյն, և ապա Ռոզըլլինդ խօսեցաւ ընդ նմա քաղցրութեամբ և այնպիսի շարժմամբ կրից ընդ սարսռի վտանգի նորա, զի փոխանակ համոզելոյ զպատանին անուշակ բանիւք իւրովք առ ի լքանել զմտադրութիւն իւր, յաւէտ զարթոյց ի նմա աժխոյժ և կորով առ ի նշանաւոր առնել զինքն ի մարտի անդ, ուստի գարձեալ պատանւոյն առ նա, «սիրուր եմ» ասէ, «ղլանալ երբէք գեղանի և ազնիւ սիկնանցդ զի և իցէ իր, սակայն թոյզ քաղցր հայեցուածք և բարի փափագ հզիկ սրտից ձերոց՝ ընկերեսցեն լինել ի փորձ իմ ի մարտիս. և եթէ պարտեցայց իսկ ամաչելոց է միայն անարժան և անշնորհ ոք, և եթէ սպանայց՝ մեռանելոց է ոք, որ յօժար է մեռանել. մեռանելով իմ ոչ ումեք վնասելոց եմ կամ անիրաւելոց, քանզի ոչ ոք ունիմ ողբալ վասն իմ. չեմ վնասելոց աշխարհի, քանզի ունիմ ի նմին ոչինչ, և զրաւեմ միայն տեղի, զոր այլ ոք ևս բարեպէս ունի լինել յորժամ հրաժարեցայց ես անտի»։

Եւ ահա սկսաւ մրցումն մենամարտութեան։ Սիլիա ըզձայր, զի օտարական պատանին մի վնասեսցի, այլ Ռոզըլլինդ էր՝ որ առաւելապէս կրէր անձուկ ի սիրտ վասն նորա։ Զուրկ լինելն նորա այնպէս ի բարեկամաց, որպէս ասէր, և այն զի յօժար էր մեռանել, ևս Ռոզըլլինպայ խորհէ՝ թէ և նա նման իւր տարաբախտ ոմն էր, և այնպէս գորովալիր կարեկցութիւն լինչ զգալ սկսան վասն նորա, և այնչափ ընդ վտանգ անձին նորա ի շփոթի կայր, մինչ զի հնար է ասել թէ յայսմ ժամանակէ զրաւեցաւ նա ի սէր նորա։

Գութ և կարեկցութիւն ցուցեալ ի սիրտս նորին՝ այնպէս քաջալերեաց և հնչեաց ոգի արիութեան ի սիրտ անծանօթ պատանւոյն, զի եցոյց նա կորով և ճարպկութիւն զարմանալի և ի վերջոյ յաղթեաց հակառակորդի իւրում, որ այնպէս վնասեալ վատթարացաւ, մինչ զի ի քանի մի ժամս կարէր ոչ խօսել ոչ շարժել։

Դուքսն Ֆրէդրիկ, եցոյց հաճութիւն մեծ ընդ քաջութիւն և ճարտարութիւնն ցուցեալ ի պատանւոյն, և ցանկացան գիտել զանուն նորա և թէ ո՛յր որդի էր նա, եդեալ ի մտի ընդունել զնա ընդ խնամով և շնորհածութեամբ իւրով։

Պատանին պատասխանեաց, թէ անուն իւր Օրլանդօ էր, և զի էր կրտսեր որդի Ռօլանդ Դի Բօյս ասպետի։

Ասպետն Ռօլանդ Դի Բօյս հայր Օրլանդօի, մեռեալ էր յամաց ինչ հնաէ. այլ մինչդեռ կենդանի էր, լեալ էր հաւատարիմ հպատակ և անկեղծ բարեկամ աքսորեալ դքսի. վասն որոյ յորժամ լուաւ Ֆրէդրիկ թէ Օրլանդօ որդի էր բարեկամի աքսորեալ եղբօր իւրոյ, բոլոր հաճութիւն նորա ընդ քաջարի պատանին՝ փոխեցաւ ի ահաճութիւն, և ի բաց գնաց ի տեղւոյն զայրացեալ և խժռեալ ի դէմս։ Աւէր նա թէև զնոյն իսկ աւնուն բարեկամաց եղբօր իւրոյ, սակայն չկարաց զբաւսպիլ զզմայլումն իւր ընդ արիութիւն պատանւոյն. ուստի ի գնալն ի բաց ասաց, երանի՛ թէ էր նա որդի այլոյ ուրուք և ոչ հօր իւրոյ։

Ռօզըլինդ լուեալ թէ պատանին սիրելի՝ էր որդի բարեկամի հօր իւրոյ ուրախացաւ յոյժ, ասաց ցՍիլիա «Հայր իմ սիրէր զասպետն Ռօլանդ Դի Բօյս, և եթէ գիտէի ես, թէ պատանիդ որդի նորա էր, յաւելլոյ էի յաղաչանս իմ և զարտասուս յառաջ քան զղնել նորա զաձն ի վանդի»։

Յայնժամ սիրնայքն մերձեցան առ նա, և տեսեալ զի վհատեալ էր նա ի սիրտ ընդ գժգմունքին դքսին, սկսան խօսել ընդ նմա քաղցրութեամբ և քաջալերական բանիւք. և ի գնալն նոցա ի բաց, Ռօզըլինդ զարձաւ ասել զայլ քանի մի քաղաքավարական բանս որպէս բարեկամի հօր իւրոյ, և առեալ զշղթայ մի ի պարանոցէ իւմէ, եա նմա ասելով. «Ազնիւ Պարոն, հաճեաց ընդունել և կրել զայս իբրև նուէր բարեկամութեան, չեմ ես ընդ շնորհօք բախտի արդ, եթէ ոչ մեծագնի քան զայս ունէր նուիրել»։

Ապա յորժամ առանձնացան սիրնայքն, Ռօզըլինդ վեռ անդադար խօսելով ի վերայ Օրլանդօի Սիլիա սկսաւ նշմարիլ, թէ ազգական իւր գրաւեալ էր ի սէր գեղագէմ պատանի ըմբշամարտին, և ասաց ցնա, «Կարելի՞ ինչ է այդ, զի այսպէս յանկարծ գրաւեցար դու ի սէր պատանւոյն», և Ռօզըլինդ պատասխանեաց թէ, «Հայր իմ սերտ սիրով սիրէր զհայր նորա»։ Բայց ի վերայ եղեր Սիլիա, «ուրեմն հաւատ այսի, թէ և դու զորդի նորա սերտ սիրով սիրե՞լ պարտիս. եթէ այդպէս իցէ՝ ուրեմն և ես առել պարտիմ զնա, քանզի հայր իմ առեր զՕրլանդօ»։

Ֆրէդրիկ զայրացեալ յոյժ ընդ տեսանել զորդի Ռօլանդ Դի Բօյս ասպետի, որ յուշ ածէր նմա զրազում բարեկամն՝ զոր ունէր դուքսն աքսորեալ՝ ի մէջ գասուածոյ. և ի ժամանակէ ինչ հնաէ յղացեալ զղջալ ի սրտի նաև ահաճութիւն ընդ զուստր եղբօր իւրոյ, քանզի ամենեքին գովէին զնա վասն առաքինութեանց նորա և զթային ի վերայ նորա ի պատճառս տարագրութեան հօրն, յանկարծ բորբոքեցաւ առելութիւն նորա առ Ռօզըլինդ. և մինչդեռ խօսէին Սիլիա և նա զՕրլանդօէ, նմուա Ֆրէդրիկ ի ներքս ի սենեակն և յոյժ բարկացեալ զիմօք հրամայեաց Ռօզըլինդայ իւկայն ի բաց ելանել ի պալատէ անտի և հետևել հօր-

իւրում յաքսոր նորա, ասելով Սիլիա զսաներ իւրում, որ ազաչել սկսաւ զնա վասն Ռօզըլինդայ, թէ թոյլ առեալ էր նա զսաներ եղբօր իւրոյ՝ ՇՈՒալ անդ միայն ի սակս ընկերակից լինելոյ նմա։ «Ես յայնժամ չազաչեցի զքեզ պահել զնա ասա առ մեզ», պատասխանեաց Սիլիա, «քանզի հասակ իմ փոքր էր և չկարէի արժէս զնել ազնուութեան նորա. սակայն այժմ զի զեամ զարժէս նորա, զի սիրեմ զնա, և զի յայնչափ երկար ամս նստեալ եմք ի միասին, յարուցեալ ի միասին ի միևնոյն ժամու, ուսեալ ի միասին, խազացեալ և կերեալ ի միասին, չկարեմ ես ՇՈՒալ առանց ընկերակցութեան նորա»։ Այլ Ֆրէդրիկ պատասխանեաց, «շատ խորամանկ է նա վասն ընկեր լինելոյ քեզ, մեղմաբարոյութիւն նորա և համբերութիւն զբաւեն զուշակութիւն ժողովրդոց, և ցաւին և գթան նոքա ի վերայ նորա։ Ցիմար ումն ես դու՝ ազաչաւոր գոլ ի սակս նորա, քանզի ի գնալն նորա ի բաց, զուարճութիւն քոյ և առաքինութիւնք առաւել ևս փայլեսցեն, վասն որոյ մի՛ ևս աշխատ առներ զշրխնաւնս քոյ խնդրել շնորհ վասն նորա, քանզի վճիռն՝ զոր արձակեալ եմ ի մասին նորա՝ անդառնալի է»։

Ցորժամ եառես Սիլիա, թէ չկարէ համոզել ըղհայրն իւր, թոյլ տալ Ռօզըլինդայ ՇՈՒալ ընդ իւր, ի քաղցրութենէ սրտի իւրոյ՝ հաստատեաց ի մտի ընկերել նմա ինքնին, և եղեալ ի պաշտօն հօրն ի գիշերի գնաց ի միասին ընդ Ռօզըլինդայ՝ որոնել զհայր նորա զդուքսն տարապրեալ, յանտառ Արդինայ։

Յառաջ քան զուշակելն իւրեանց, Սիլիա կարծելով թէ վտանգաւոր է լինելոց վասն երկու մատանի սիկնանց ճանապարհորդել ի շքեղ հանդերձն զոր զգեցեալ էին ինքեանք, խորհրդատրեաց զի ծպտեսցին նոքա զբարձր վիճակ իւրեանց՝ զգեստաւորելով ի հանդերձս շինական աղջկանց, և Ռօզըլինդ ևս առաջար-

կեաց զի և՛ ս առաւել բարեգոյն է լինելոց, եթէ մին՝ ի նոցանէ ծպտեսցէ զինքն ի զգեստ առնացի, և խոհեմ հաւանեցան երկոքին. զի որովհետև Ռօզըլինդ բարձր էր հասակաւ, զգեստաւորեսցի նա որպէս զիւղական պատանի մի, և Սիլիա զերթ մանկամարդ մի շինական, և ասացին թէ եղբայր և քոյր էին նոքա, և զի Ռօզըլինդ կոչեսցի Գանիմիդ և Սիլիա՝ Էլինա։

Այսպէս ծպտեալ նոցա, և առեալ զգոհարս իւրեանց, և զդրամ վասն ծախուց ճանապարհորդութեան, եկին յուղի անկան գեղագէմ արքայազարմ սիկնայքս, գնալ առ անտառն Արդին՝ որ բազմօք հեռի էր անտի, գոլով արտաքոյ սահմանաց իշխանութեան դքսին։

Տիլինն Ռօզըլինդ, (կամ Գանիմիդ, որպէս այժմ կոչել արժան է զնա) ընդ առնական զգեստուն զոր ունէր ի վերայ, սաստիկ էր և նոր իմն արիասրտութիւն. և ի փոխարէն հաւատարիմ բարեկամութեան և ճշմարիտ սիրոյ՝ զոր ցուցեալ էր նմա Սիլիա յընկերն իւր նմա ի տարժանելի հեռաւոր ճանապարհորդութեան այնմիկ, նոր եղբայր նորա նկրաեր առնել խրախուսել զնա և ի զուարճութեան պահել զսիրա նորա՝ որպէս թէ խոհապէս էր նա Գանիմիդ՝ շինական և քաջասիրտ եղբայր՝ հեզաբնոյթ գիւղացի աղջկանն Էլինայ։

Ցորժամ ի վերջոյ հասին նոքա յանտառ Արդինայ, չկարէին գտանել անդ այլ ևս՝ զմխիթար պանդոկն և զճաշարանս՝ յորս օթևանանալ էին ի ճանապարհի անդ. և ի կարօտութենէն գոլով արդ կերակրոյ եւ հանգստութեան, Գանիմիդ՝ որ այնպէս զուարթ և խրախ էր կացուցեալ զքոյր իւր մինչ ցարդ՝ հաճոյական զրուցօք և զուարճաբանութեամբ, այժմ ինքնին խոստովանիլ սկսաւ զի այնչափ նուազեալ էր ի վաստակոյ և ի քաղցէ, զի սիրտ իւր սպրդէր նմա, նա խոկ յամօթ առնացի զգեստու իւրոյ, լալ սպէս զկին

մի, եւ Էլլինա եւս յայտնեաց, թէ այլ ևս չկարէր փոխել քայլ մի յառաջ: Բայց սակայն յուշ եած Գաւնիմիոյ թէ առն պարտիք էր մխիթարել և սփոփել զկին, ակարագոյն գոլով սորա քան զնա. և առ ի ցուցանել զարիւթիւն սրտի իւրոյ քեռ իւրում, ասաց, «Եկ մի վհատիր, քոյր իմ Էլլինա, արդ զի հասեալ եմք յանաւառ Աղպինայ, վախճան ճանապարհորդութեան մերոյ չէ հեռի ինչ»: Սակայն կեղծեալ առնացի բնութիւն և քաջասրտութիւն նորա չկարաց տևել ընդ երկար. և թէ և կային նոքա յանտառի անդ, այլ չդիտէին թէ ուր էր տեղին յոր ծնայր զուքան, և ասա գուցէ ուղևորութիւն նքթեալ սիկնանցս եզերելոց էր ի վախճան տխրալի. քանզի իցէ թէ մոլորեալ նոցա անդ մեռանիցեն էին ի կարօտութենէ կերակրոյ, սակայն նախախնամութեամբ իմն՝ մինչդեռ բնաւին նքթեալ և նուաղեալ ի սովոյ նոտէին նոքա ի վերայ սիպաւէտ գետնոյն, շինական մի ըստ դիպաց եկն անցանել առ տեղեան, և Գանիմիդ անգամ մի զարձեալ արծարծեալ զառնական քաջասրտութիւն իւր և զհամարձակութիւն ասաց, «Հովիւ գու, եթէ սէր ոսկւոյ կարէ երբէք ի ձեռս բերել վասն մեր ուրեք, յայտ անմարպարնակ վայրի՝ զինամ և զկերակուր, ազաչեմ զքեզ առ զմեզ անդ հանդչել փոքր մի, քանզի այս մանատատաի աղջիկ՝ քոյր իմ նքթեալ է յոյժ ի վաստակոյ ճանապարհորդութենան և մերձ է նուաղիլ ի կարօտութենէ կերակրոյ:

Այրն պատասխանեաց, թէ ծառայ էր ինքն հովուի միոյ, եւ թէ տուն տեառն իւրոյ ի մօտոյ վաճառել ունէր, ուստի սակաւ ինչ միայն ակնկալելի էր գտանել անդ. բայց եւ այնպէս, եթէ ցանկային նոքա գնալ ընդ նմա, որ ինչ և էր՝ ուրախութեամբ առաջի գնելոց էր նոցա: Գնացին նոքա ընդ առնն, յոյս ազատութեան ի նեղութենէ իւրեանց ներշնչեալ նոր զօրութիւն ի

նոսա, և գնեցին գառն և զոչխարս հովուին, և զայրն՝ որ տարաւ գնոսա անդ ի վարձու կալան հովուել գխաշնն, և այսպէս բարեբախտապէս գտեալ ինքեանց զմաքուր հիւղ մի ի բնակութիւն, և գնպարս առատս ի նմին, հաստատեցին ի մտի ծնեալ անդ՝ մինչ յաջողեսցի նոցա ծանօթս գտանել, թէ յորում մասին աշխարհն բնակէր զուքան՝ հայր Ռօզըլինդայ:

Յորժամ հանգիստն փոքր մի ի վաստակոց իւրեանց, սկսան վայելել նոքա հաճութիւն մեծ ընդ նոր եղանակ կենցաղավարութեան իւրեանց, և թուէր նոցա թէ իրաւէս նոյն իսկ հովիւ և հովուհի էին ինքեանք, որպէս կեղծէին գոլ. սակայն մերթ ընդ մերթ յիշէր Գանիմիդ զի երբեմն լեալ էր ինքն Ռօզըլինդն այն՝ որ սիրեալ էր կաթոգնութեամբ զքաջն Օրլանդօ, քանզի որպէս էր նա Ռօլանդ ասպետի բարեկամի հօր իւրոյ: և թէև Գանիմիդ կարծէր, թէ Օրլանդօ բազում մղձաւանջ հեռի էր արդ յինքենէ, գուցէ այնչափ հեռաւորութեամբ որչափ ճանապարհորդեալ էին ինքեանք, այլ փութալով յայտնեցաւ զի կայր նաև Օրլանդօ յանտառի Աղպինայ, և այսու օրինակաւ էր զի ի յայտ եկ տագնապ դէպքն այն:

Օրլանդօ էր կրասեր որդի Ռօլանդ Ասպետի, և հայր նորա ի մեռանելն յանձն արար զինա (Օրլանդօ գոլով յայնժամ ի յոյն մատաղ հասակի) խնամոց եղբօր նորա Օլիվերայ, երդմամբ պատուիրելով նմա տալ կրասեր եղբօր իւրում զարժանին կրթութիւն, և մատակարարել վասն նորա զպիտոյս և զհարկաւորս կենաց, որպէս վայելէր էր անուան և պատուոյ ցեղի և տան իւրեանց: Օլիվեր եցոյց զինքն անարժան եղբայր մի, և զանց արարեալ զպատուիրանաւ հօր իւրոյ, չառաքեաց զեղբայր իւր երբէք ի դպրոց, այլ պահեալ զնա ի տան, անոյց զնա միանգամայն զուրկ ի կրթութենէ մտաց, և բոլորովին լքեալ բարձի թոզի

եղեալ: Սակայն բնաւորութեամբ և բնաձիր ազնիւ որպիսութեամբք մտաց այնչափ նման էր Օրլանդօ բարերարոյ հօր իւրում, զի առանց ընդունելոյ զբարիս հրահանգութեան և մշակման մտաց՝ երևէր պատանի մի՝ որպէս թէ սնեալ էր յոյժ մեծ խնամօք և պատրաստութեամբ. և Օլիվը այնչափ նախանձէր ընդ վայելչութիւն հասակի նորա և անձին, և ընդ ծանրաբարոյ ազնիւ գնացս ուսումնասիրութեան հզօր իւրոյ, զի ի մերձոյ ի մահ եղ բառնալ զնա ի միջոյ, և ի սակս իրագործելոյ զայս նպատակ, հրապուրեաց զոմանս համոզել զնա փորձել զայժ իւր ընդ համբաւաւոր ըմբշամարտին, որ՝ որպէս ասացաւ ի վեր, սպանանել էր զբազում մարդիկ, և անպարտութիւն և առնութիւն քարասիրտ եղբօր իւրոյ էր՝ որ նա Օրլանդօի ասել, թէ յօժար էր մեռանել, զոլով այնպէս անխնամ, անօգնական և առանց բարեկամի միոյ:

Ապա յորժամ հակառակ ապիրատ ակնկալութեան նորա, եղբայր իւր յաղթական հպոյց զինքն՝ նախանձու և առնութեան իւրոյ, ո՛չ այլ ևս կարաց չափ գնել, և երդուաւ հրկէզ առնել զսենեակն յոր նստէր Օրլանդօ: Զայս երդումն սպառնալեաց լուեալ ուրուք՝ որ լեալ էր հինաւուրց հաւատարիմ ծառայ հօր նորա, և որ սիրէր զՕրլանդօ, վասն բերելոյ նորա նմանութիւն հօր իւրոյ ասպետի Ռօլանդայ, այրն ծերունի եկ արագաբար առ ի հանդիպել Օրլանդօի ի պատնէն նորա ի պալատէ դքսին. և յորժամ հասս գնա վառանդն որ սպառնայր սիրելի պատանեհասակ տեառն իւրում, հա նմա ազաղակել և ասել, «ո՛վ ազնուաբարոյ տէր իմ, քաղցրասիրտ տէր իմ, ո՛վ գու բարի յիշատակ ասպետին Ռօլանդայ, զի՞ է զի այդչափ առաքինի և բարեմիտ հս գու. ընդէ՞ր է զի հեզաբնոյթ հս և արիասիրտ, և ընդէ՞ր ցանկացար գու յաղթել հռչակաւոր ըմբշամարտին: Գոլեհաս քաջու-

թեանդ յառաջեալ է քան զքեզ ասա»: Օրլանդօ զարմացեալ ընդ բանս ծառային, և չկարացեալ գիտել, թէ զինչ նշանակել կամէր այնու, եհարց թէ զի՞նչ էր պատահեալն: Եւ յայնժամ այրն ծերունի յայտնեաց նմա, թէ որպէս չարամիտ եղբայր նորա նախանձեալ էր ընդ սէր և պատիւն՝ զոր ցուցանէին նմա ժողովուրդք, և այժմ իսկ ի լսելն զհամբաւ քաջութեան նորա՝ զոր ցուցեալ էր յաղթելով ախոյենի իւրում ըմբշամարտութեան առ ի պալատ դքսին, երդուեալ էր զրկել զնա ի կենաց, ճարակ հրոյ տալով յայրմ գիշերի զսենեակն յոր նստէր նա. և յաւարտ բանից իւրոց, խրատեաց զնա ազատել զանձն ի մօտալուտ վտանգէն անյապաղ փախստեամբ. և գիտելով զի Օրլանդօ չունէր զրամս, Ադամ՝ (քանզի այդ էր անուն բարի ծառային) բերեալ էր ընդ ինքեան՝ զոր ինչ խնայութեամբ ժողովել կարացեալ էր ինքն, եւ տուեալ նմա ասէ, «առ ահա զայսոսիկ հինգ հարիւր ոսկիս, զորս հաւատարիմ ծառայութեամբ իմով հօր քումմ՝ խնայել կարացի, և պահեալ էի որպէս թոշակ աւուրց ծերութեան իմոյ, յորժամ ծիւրեալ անպատմք մարմնոյս ո՛չ այլ ևս կարասցին ծառայել. քոյ են այդք ահա, և նա որ կերակրէ զպտուս, և զիս կերակրելոց և մխիթարելոց է ի ծերութեան իմում: Ցամ քեզ յօժար սրտիւ զբոլոր ոսկիսդ, թոյլ տուր ինձ ծառայ լինել քոյ, և հաւատալ լիր, ի դէպս բոլոր կարեաց, հարկաւորութեան և աշխատանաց քոց՝ ծառայեցից քեզ որպէս պատանի մի»: «Ո՛վ այր բարի և ազնիւ», պատասխանեաց Օրլանդօ, «Ո՛րչափ բացայայտ ցուցանես դու զհաւատարմութիւն ծառայից ժամանակաց հնոց. չես դու այր սովորութեանց արդի ժամանակի: Եկ երթիցուք մեք ի միասին, յառաջ քան զսպառնէն զվարձ աշխատանաց պատանեկութեան քոյ, յաջողելոց է ինձ, հաւատալ եմ, գտանել զմիջոց ինչ ի ձեռս բերելոյ զպարէն երկոցունց մեր:

Յայնժամ երկոքին՝ ծառայն հաւատարիմ և սիրելեալ աէր իւր ելին յուղի անկան և սկսան ճանապարհորդել, և չգիտէին առ ո՛ր կողմ ուղղել զոտս, ի վերջոյ եկին ժամանեցին յանտառ Արկինայ, և անդ գտին զինքեանս ի միմեանց ժժուարութեան և ի նեղութեան ի պատճառս կարօտութեան կերակրոյ, յոր գանգիմէք և էլինա անկեալ էին։ Թափառել սկսան նոքա ի խնդիր մարդկային բնակութեան ինչ, և գրեթէ նըքթեալ էին խոպատ ի քաղցէ և ի վատառակոյ, և ի վերջոյ ասաց Ադամ, ա՛լ աէր իմ, մեռանիմ ես յանսուսգութենէ, գնալ յատաջ այլ ես ո՛չ կարեմ»։ Եւ զայս ասացեալ ընկղմանեցաւ նա ի վերայ գետնոյ, ցանկալով գերեզման առնել ինքեան զանգին, և ես զոջոյն հրաժշտի տեսան իւրոյ։ Օրլանդո տեսեալ զնա յայսպիսի ողորմելի վիճակի, էառ ամբարձ զծերունի ծառայն ի գիրկս իւր, և սարեալ եդ զնա ընդ զուարզին հովանեաւ գալար ծառոյ ինչ, և ասէ ցնա «քաջալերեսցյ մի վհատիր, ծերունիդ Ադամ, հանդո՛ւրդը մի գառաժտնեալ անգամս քոյ ասա, և մի խօսիր զմահուանէ»։

Ադա գնաց Օրլանդո որոնել զկերակուր ինչ, և եկն ժամանեաց յայդ կողմն անտառին ուր էր գուքան, և որ յայդմ ժամու՝ նստէր հանդերձ բարեկամօք իւրովք ի սեղան կերակրոյ, բազմոց առեալ ի վերայ խոտաւէտ գետնոյն, ի նըքթոյ ո՛չ այլ յարկի կամ տաղաւարի քան մեծամեծ հովանաւոր ծառոց։

Օրլանդո՝ զոր քաղց բղխորովին ի յուսահատութիւն ձգեալ էր՝ մերկեալ զուսր իւր կամէր բռնութեամբ յափշտակել զկերակուրն, և ձայնեաց առ բազմականն ասելով. «պատրեցէք յուսելոյ, զմեացորդ կերակրոյդ ես պարտիմ ուտել»։ Գուքան լուեալ զայս եհարց՝ արփօք տագնապ սովոյ էր որ այնպէս յանդուգն կացուցեալ էր զնա, թէ բիրտ և գոհիկ ոմն

էր նա և անփոյթ զկանոնաց քաղաքավարութեան։ Ընդ այս Օրլանդո պատասխանեաց, թէ մեռանէր ի սովոյ, և գուքան յայտնեաց նմա, թէ բարեաւ էր գալոստ նորա, և նստել և ուտել կարէր ընդ նոսա։ Յորժամ լուաւ Օրլանդո զխօսել զբսին այնպիսի քաղցրութեամբ, ի բաց եդ զսուր իւր և շիտեալ սկսաւ յամօթոյ ընդ բրտութիւն բանից իւրոց՝ որով այնպէս խստութեամբ պահանջեալ էր զկերակուր նոցա։ «Ա՛ղաչեմ, ներողամիտ լերուք ինձ», ասէ, «ինձ թուեցաւ թէ ի վայրենի անտառի այսմիկ՝ ամենայն ոք վայրենի էր, և այդու պատճառաւ ի գործ եղի հրամայական եղանակ բանի, այլ թէ ո՛վ և որպիսի ոմանք և էք դուք՝ որք յայսմ յանբնակ վայրի՝ ի ներքոյ հովանեաց ծառոցս ծաղկեք յանհոգութեան զսահուն ժամս կենաց ձերոց, եթէ երբէք տեսեալ էք զառաջս բարեգոյնս քան զայս. եթէ երբէք լեալ է ձեր ի տեղիս՝ ուր ձայնք զանգակաց կոչեն ըզմարդիկ յեկեղեցի, եթէ երբէք նստեալ էք առ բարեվից սեղանով բարեառն միոյ, եթէ երբէք ջնջեալ է ձեր կաթիլս արտասուաց յաչաց ձերոց, և գիտէք զինչ է ողորմելն ուրեք, կամ գոլ ի վիճակի ողորմելութեան, թո՛ղ ուրեմն բանք ազաչանաց իմոց շարժեացեն զսիրտ ձեր ցուցանել ինձ զքաղցրութիւն մարդասիրութեան»։ Ա՛ռ այս պատասխանեաց գուքան, «ճշմարիտ է բանդ, զի որպէս ասես, մարդիկ եմք մեք որք տեսեալ եմք զառաջս բարեգոյնս քան զայս, և թէև բնակիչք եմք արդ անմարդաբնակ անտառի, սակայն կեցաք երբեմն յաւանս և ի քաղաքս, և ձայնք զանգակաց կոչեալ են զմեզ ի տուն աղօթից, նստեալ եմք առ բարեվից սեղանի բարի առանց, և ջնջեալ եմք յաչաց զկաթիլս արտասուաց՝ բղխեալ ի սուրբ աղբերէ զթութեան. վասն որոյ բազմեա՛ զու և վայելեա ի կերակրոյդ, ա՛րչաւի և կարօտի այնմ ախորժակ քոյ»։ «Բայց կա՛յ և ծերունի

աղքատ այր մի», ասաց Օրլանդո, «որ ուղեկցեալ է ինձ ընդ բազում հեռաւորութիւն ճանապարհի՝ միայն ի սակս սիրոյ իմոյ, և ինայ արդ ճնշեալ գլխովին յերկուց ցաւոցն ակարութեանց բնութեան այսոցիկն՝ ի զառամութենէ և ի սովոյ, և որչափ զնա չեմ կարեալ պահել, չկարեմ ես ուտել ինչ»։ «Ուրեմն զնա և բեր զնա առ, պատասխանեաց պուքան, սպասելոց եմք, և չունիմք ուտել մինչ ցվերապառնալ ձեր»։ Յայնժամ Օրլանդո սրացաւ որպէս եղջերու՝ որ որոնէ զառանել զձագ իւր և առ նմա կերակուր, և վերադարձաւ վազվազակի բերելով զԱդամ ի վերայ բազկաց իւրոց՝ զոր ի տեսանելն զքսին ասէ, «գիր ի վայր զպատկառելի բեռն քոյ, և երկոքեան զուք բարեաւ եկիք», և ջամբեցին ծերունւոյն կերակուր, և արծարծեցաւ ոգի նորա, և վերատացաւ զառողջութիւն իւր և զօրութիւն անձին։

Ապա պուքան հարց ցՕրլանդո, թէ ո՛վ էր նա. և յորժամ ծանօթացաւ, թէ էր նա որպէս բարեկամի իւրոյ ասպետի Ռօլանդայ, էառ զնա ընդ խնամօք պաշտպանութեան իւրոյ, և յայնմհետէ Օրլանդո և ծառայ նորա միացին ընդ զքսին յանտառի անդ։

Օրլանդո ժամանեաց յանտառն ո՛չ զկնի բազում աւուրց յետ ժամանման անդ Գանիմիդայ և Էլինայ, որք՝ որպէս պատմեցաւ ի վեր՝ գնեալ զհիւղ հովուին բնակէին ի նմին։

Գանիմիդ և Էլինա ի շրջելն իւրեանց յանտառին՝ ժեժապէս զարմացան տեսանել ո՛չ միայն զանուն Ռօզրլինդայ քանդակեալ ի վերայ ծառոյն, այլ և զերգս սիրոյ կախեալ ի վերայ նոցին՝ ուղղեալ առ Ռօզրլինդ. և մինչդեռ կային յապշութեան, թէ զիարդ հնար էր այնմ այնպէս լինել, հանդիպեցան անդ Ռօլանդոի, և տեսին զի կրէր նա ի պարանոցի զշղթային՝ զոր Ռօզրլինդ տուեալ էր նմա։

Ո՛չ երբէք զմտաւ ած Օրլանդո, թէ Գանիմիդ՝ էր արքայազարմ զեղեցիկ աղիկնն Ռօզրլինդ, որ ազնուութեամբ և քաղցրաբարոյութեամբ իւրով այնպէս գերեալ էր զսիրտ իւր, մինչ զի զրոլոր ժամանակ իւր ծախէր արդ քանդակել զսիրելի անուն նորա ի վերայ ծառոցն, և երգել երգս սիրոյ ի գովեստ չքնաղ գեղեցկութեան նորա, այլ հաճեալ մեծապէս ընդ շնորհալի կերպարան և բարս զուարթագէմ պատանի հովուին՝ սկսաւ խօսել ընդ նմա, և կարծէր թէ նշմարէր զնմանութիւն ինչ սիրելոյն իւրոյ Ռօզրլինդայ ի դէմս Գանիմիդայ, այլ միայն չունէր վերջինդ գնազեղ գնացս և զշարժմունս աղնուհի աղիկնոջ այնորիկ. քանզի Գանիմիդ կեղծէր ի հարկէ զհամարձակ վարս, հասարակօրէն նշմարելի ի պատանիս, յորժամ զեռ չէն միանգամայն չափահաս, և ո՛չ սակաւ խորամանութեամբ և ի լռելեայն ակնարկս խօսէր ընդ Օրլանդոի զտարփածուէ միտ, որ ասէր թէ՝ շրջի յանտառի անդ և վնասէ մատաղ ծառոց փորագրելով ի կեղև նոցին զանուանդ Ռօզրլինդ, և կախէ զերգս սիրոյ զանկոց և զթփոց՝ պրուատելով զնոյն Ռօզրլինդ։ «Եթէ, ասէր, կարէի զտանել զտարփածուէ այդ, տալոց էի բարի խրատս ինչ, որ փութով բժշկելոց էր զվէր սիրոյ սրտի նորա»։

Օրլանդո խոստովանեցաւ ընդ այս, թէ ինքն էր սիրագրաւ տարփածուն՝ զորմէ խօսէր նա, և խնդրեաց ի Գանիմիդայ տալ զբարի խրատն՝ զոր յօժարէր նախրել նմա. և Գանիմիդ ասաց թէ խրատն զոր առաջարկել կամէր նմա՝ այն էր, զի Օրլանդո գնացեալ յամենայն աւուր ի հիւղ անդ՝ ուր ինքն և քոյր նորա բնակէին. «և յայնժամ, ասէ Գանիմիդ, կեղծեցից ես զանձն, որպէս թէ եմ ես Ռօզրլինդ սիրուհի քոյ, և դու ես ընդ կատակս վարեսցիս որպէս սիրահար իմ և խօսեսցիս զայնպիսի բանս սիրոյ, որպէս թէ ի-

բազէս Ռօզըլինդ էի ես, և յայնժամ ես ես կեղծեցից զվախճանական վիսս և զճաշակ և զհազար ու մի նա-զանս՝ զոր նազարնոյթ և զժուարահաճ սիկնայք ցուցանեն առ առաքեալս իւրեանց, մինչեւ ամաչեալ յանձին քումմ՝ պաղեսցի սէր սրտիդ, և այսու կատա-րեսցի բժշկութիւն քոյ ի վիրէ սիրոյդ»։ Օրլանդօ՝ թէև ո՛չ այնչափ հաւատս ունէր ի վիրայ պարմանի բժշկու-թեանն մատուցեալ ի Գանիմիդայ, սակայն հաճեցաւ յաճախել յամենայն օր ի հիւղ նորա, և կեղծէր ընդ կատակս խաղալ զկնի սիրագրաւ առարքածուի մերոյ. և յամենայն աւուր յորժամ գնայր այց առնել Գանիմե-դայ և Էլինայի, կոչէր զհովիւն Գանիմիդ՝ սիրելի Ռօ-զըլինդ իւր, և յամենայն աւուր խօսէր իսկ զայնպիսի սիրալիր բանս և հաճոյական գովեստս, զորս պատա-նիք սովոր են խօսել առ սիրուհիս իւրեանց։ Սակայն այսու ամենայնիւ չկրնէր թէ Գանիմիդ ցուցանէր յա-ջողութիւն ինչ ի բժշկել զՕրլանդօ ի սիրոյ Ռոզը-լինդայ։

Թէև Օրլանդօ կարծէր, թէ այն ամենայն միայն կատակ ինչ էր և խաղ զուարճութեան (ո՛չ երբէք հրա-զեալ, թէ Գանիմիդ նոյն ինքն Ռօզըլինդ էր) սակայն պատահութիւնն ընծայեալ նմա այսպէս՝ ի յայտնել զմտիդ կամոգնութեան սրտի իւրոյ, այնչափ հաճոյական լինէր նմա, որպէս հաճելի էր և Գանիմիդայ, որ ի ծածուկ հրճուէր ի սրտի գիտելով թէ բոլոր բանք սիրոյ նորա ուղղեալ էին իրապէս առ նոյն իսկ անձն, առ որ իղձ սրտի նորա էր ուղղեալ։

Այսու եղանակաւ անցին բազում զուարճալի աւուրք, ընդ մատաղատի ընկերակցաց այսոցիկ, և հեզաբնոյթն Էլինա՝ տեսանելով թէ ուրախ և երջանիկ էր Գանիմիդ, թոյլ եա նմա շարունակել զխաղն ըստ հաճոյից իւրոց, ոչ սակաւ զուարճացեալ և ինքն ընդ ի կատակս արարեալ սիրահարութիւնն նորա, և ո՛չ իսկ

փոյթ տարաւ յուշ ածել Գանիմիդայ. զի թէ և արդ զխաբեալ էին ի Ռօզալնդայ զտեղի բնակութեան ըրք-սին, այլ դեռ չէր նա ծանօթացուցեալ զինքն հօր իւրոյ։ Գանիմիդ հանդիպեալ էր զբսին յաւուր միում և խօսեցեալ էր ընդ նմա, և հարցեալ էր զուքսն ցնա, թէ ո՛վ էին ծնողք իւր։ Գանիմիդ պատասխանեալ, թէ սերեալ էր ինքն յայնչափ ազնիւ ծնողաց որպէս նա, ժպտեալ էր զուքսն ընդ այս, քանզի չկարէր կարծել, թէ զուարթերես հովիւն իցէ յարքայական սերնդոյ. և Գանիմիդ տեսեալ զի ուրախ և երջանիկ երևէր զուքսն, բարւոք համարեցաւ յապաղել դեռ ժամանակ մի, և չծանօթացուցանել նմա զինքն։

Յառաւօտու միում՝ յորժամ Օրլանդօ գնայր այց առնել Գանիմիդայ, ի ճանապարհի անդ եահս զայր մի սր ունջէր ի վերայ գետնոյն, և կանաչագոյն մեծ օձ մի պատեալ էր զինքն զպարանոցաւ նորա։ Ի տես-սանելն օձին զՕրլանդօ ի բաց սողացեալ եահս ի մէջ թփոց լինչ. այլ ի մերձենալն յառաջ՝ եահս նա զմա-սակ առիւծ մի նստեալ անդ՝ գլուխ իւր ի վերայ թաթիցն, որպէս կատու մի առնէ ի կամելն սրսալ լինչ, և սր սպասէր արձնութեան առն ի քնոյ, (քանզի առ թէ առիւծք ոչ յարձակին երբէք ի վերայ սրսոյ լինչ՝ սր ի քուն իցէ կամ մեռեալ)։ Երևէր որպէս թէ երկնային նախախնամութիւն իմն առաքեալ էր զՕր-լանդօ, ազատել զայրն ի ժանեաց օձին և առիւծուն. այլ յորժամ հայեցաւ Օրլանդօ յերեսս առնն՝ սր ունջէր այնպէս ի նեղբոյ կրկնակ մահաբեր վտանգացն, եահս զի էր նա Օլիվը եղբայր իւր, սր այնպէս դաժանաբար և անգթութեամբ վարեալ էր ընդ իւր, սպատնալով բառնալ զկեանս իւր հրով, և սակաւ մի և ահա հո-գւով վրէժխնդրութեան լքանելոց էր զնա զոլ սրս ժա-նեաց առիւծուն. այլ եղբայրական գութ նորա և ազ-նուութիւն սրտի փութով ճնշեալ զիղձ վրէժխնդրու-

թեանն, մերկեալ զսուր իւր յարձակեցաւ ի վերայ առիծուն և սպան զնա. և այսպէս զերծոյց զկեանս նորա ի թունաւոր օձէն, որպէս և ի կատաղի առիւծոյն, այլ յառաջ քան սպանանելն նորա զառիւծն, սայրասուր ճիրանօք իւրովք վիրաւորեաց վերջինք առատութեամբ զբազուկ Օրլանդոյ։

Մինչ նկատէր Օրլանդօ սպանանել զառիւծն, զարթեաւ Օլիվը ի քնոյ. և նշմարեալ թէ եղբայր իւր, որ այնչափ չարիք և անպիտանութիւն կրեալ էր յիւրմէ, ահա նա իսկ նկրաէր ի վտանգ անձին իւրոյ փրկել զկեանս իւր ի կատազի գազանէն, ի վերայ եկն նմա առ ժամայն ամօթ և խղճահարութիւն սաստիկ, և սարչացաւ յոյժ ընդ անարժան և անգութ արարս իւր, և բազում արտասուօք աղաչել սկսաւ զներողութիւն եղբօր իւրոյ, վասն անիրաւութեանցն զորս էգործեալ ընդդէմ նորա։ Օրլանդօ ուրախացեալ յոյժ ի տեսանելն զնա այնպէս անկեղծօրէն արտասուել և սարչացեալ, յօժարութեամբ ներեաց նմա, և երկոքեան զրկեցին զմիմեանս խանդագատանօք. և յայնմհետէ սիրել սկսաւ Օլիվը զեղբայր իւր ճշմարիտ և անկեղծ սիրով, թէ և ևկեալ էր նա յանտառ անդ նպատակ ունելով իւր՝ զսպանութիւն եղբօր իւրոյ։

Ի վիրէն զոր ստացեալ էր Օրլանդօ ի բազուկ իւր՝ հոսեալ արիւն յորդութեամբ, ի նուազութենէ ուժոյ անձինն չկարաց գնալ նա յայլ Գանիմիդայ առ ժամն. վասն որոյ խնդրեաց յեղբօրէ իւրմէ գնալ և պատմել Ռօզըլինդայ իւրում (քանզի յայտնեաց եղբօրն, թէ յայլ անուն կոչէր ինքն զհովիւն) որ ինչ պատահեալն էր։

Եւ Օլիվը գնացեալ ի հեռու նոցա՝ պատմեաց Գանիմիդայ և Էլինաի, թէ որպէս փրկեալ էր Օրլանդօ զկեանս իւր, և յետ աւարառելոյ զպատմութիւն անցից և քաջութեան Օրլանդօի և սքանչելի փրկութեան

իւրոյ, խոստովանեցաւ նաև, թէ էր ինքն եղբայր Օրլանդօի, որ այնպէս անողորմութեամբ էր վարեալ ընդ նմա, և զի ահա ի հաշտութիւն ևկեալ նոցա ընդ միմեանս, հաստատեալ էր ի միջի նոցա ճշմարիտ սէր և գորով եղբայրական։

Անկեղծ արտութիւն և ապաշխարութիւն ընդ արարս իւր, զոր եցոյց Օլիվը ընդ արարս իւր, ի խօսեն իւր ընդ նոսա, այնպիսի խոր ապաւորութիւն ինն գործեաց ի գաղտրիկ սիրտ Էլինաի, մինչ զի անպէն և անզ զրաւեցաւ նա ի սէր նորա. և Օլիվը ևս նշմարեալ, թէ որչափ ի զուիժէր նա ի վերայ իւր ի լսելն զատառապանս սրտի իւրոյ և զսարչանս վասն ապերաւութեանցն որով յանցաւոր գտեալ էր նա, նմանապէս յանկարծուստ, և ինքն՝ փոխադարձ համակրութեամբ՝ հարաւ ի սէր Էլինաի։ Այլ մինչդեռ սէր այսպէս արձակէր զնեաս իւր ի սիրտ Էլինայ և Օլիվըայ, չէր անփոյթ և ի մասին Գանիմիդայ, քանզի ի լսելն նորա զվատանգէն՝ ի վերայ հասեալ Օրլանդօի, և զի վիրաւորեալ էր նա յառիւծոյն, անկաւ ի վայր ուշաթափ, և յորժամ զգաստացաւ յուշաթափութենէն, պարզուակէր իրը զի չէր այն իրական, այլ միայն կեղծեալ էր զայն, որպէս թէ ձևացուցանել կամելով զինքեանն Ռօզըլինդ, և ապա ասէ ցՕլիվը, «պատմեա Օրլանդօ եղբօր քումմ, թէ վիրաւորդ գեղեցիկս կեղծեցի ես զայն»։ Սակայն Օլիվը ի զարկացմանէ զիմաց նորա, գիտաց թէ ոչ կեղծ այլ իրական էր ուշաթափութիւնն, և ոչ սակաւ զարմացեալ ընդ սիտարամտութիւն պատանւոյն ասաց, «արդարև եթէ կեղծեցեր զայդ միայն, որպէս ասես, սատկիր ուրեմն քաջութիւն սրտի և կեղծեա լինել այր անվհեր»։ «Զայդ իսկ առնեմ ես», պատասխանեաց Գանիմիդ, «այլ ինձ թուի յաւէտ կին լինել իրաւունք էր իմ քան այր»։

Օլիվը բաւական երկարեաց զայցելութիւն իւր, և

ի վերջոյ, յորժամ զարձաւ առ եղբայր իւր, ունէր քաղցում նոր լուրս տալ նմա։ Թողեալ զանցս ուշադրութեանն Գանիմիդայ, ընդ լանջն զլուր վիրաւորութեան Օրլանդոյ, պատմեաց նմա նաև թէ սրպէս զրաւեալ էր սիրա իւր ի սէր գեղեցիկ հովուուհւոյն Էլինայի, և զի չէր ցուցեալ նա ահաճութիւն ինչ ընդ առաջարկ ամուսնութեան՝ նա իսկ յառաջին անդ տեսակցութեան իւրեանց, և խօսէր առ եղբայր իւր, որպէս թէ արդէն կնքեալ իրողութիւն լիմ էր, զի ամուսնասցի ինքն ընդ Էլինայի, և թէ այնչափ սիրտիւ սիրէր զնա, զի ընտրէր մնալ և կեալ յանտառի անդ որպէս հովիւ մի, և պարգևել Օրլանդոյ զբոլոր կալուածս իւր և զառն։

«Ես յիմ մասին՝ հաճ և հաւան եմ ընդ այն», ասաց Օրլանդո, «եթէ ցանկասս, Թող ամուսնութիւն ձեր զտեղի կալցէ ի վաղիւ, և հրաւիրելոց եմ ես զդուքն և զբարեկամս իւր ի հարսանիս։ Երթ համոզեա զհովուուհի քոյ տալ զհաւանութիւն իւր, քանզի տես ահա եղբայր նորա գայ աստ, և գտանելոց ես զնա առանձին»։ Օլիվը եզ խոկոյն ի բաց գնալ առ Էլինա, և Գանիմիդ եկն հարցանել զողջութենէ վիրաւորեալ բարեկամի իւրոյ։

Յորժամ Օրլանդո և Գանիմիդ սկսան զրուցել զյանկարծական սիրազրաւութենէն՝ որ զտեղի առեալ էր ի մէջ Օլիվրայ և Էլինաի, Օրլանդո ասաց, թէ խորհրդատրեալ էր եղբօր իւրում համոզել զդեղեցիկ հովուուհին՝ ամուսնանալ ընդ նմա ի վաղիւ, և յաւել ի վերայ նաև, թէ սրչափ ըղձալի էր, եթէ յայնմ աւուր և ինքն մարթանայր ամուսնանալ ընդ սիրելի Ռոզըլինդայ իւրոյ։

Գանիմիդ՝ որում յոյժ հաճելի թուէր ամուսնութիւն Օլիվրայ և Էլինաի, ասաց զի եթէ Օրլանդո խոկացեալ սիրէր այնչափ զՌոզըլինդ՝ որպէս խոստովանէր

սիրել, նա ևս հաստանելոց էր փափագանաց իւրոց. քանզի ասէ, խոստանայր ինքն զի ի վաղիւ յերեան ածելոց էր զՌոզըլինդ առաջի նորա, և երաշխաւորէր նաև, զի Ռոզըլինդ ինքնին հաճելոց էր ամուսնանալ ընդ նմա։ Եւ զայս ըստ իրաւութի սքանչելի զեղք (քանզի Գանիմիդ ինքն Ռոզըլինդ գոլով, կարի զիւրաւ ի յայտ ածել կարէր զինքն) կեղծէր Գանիմիդ՝ պատճառել ի ձեռն կախարդական հնարի ինչ զոր ուսեալ էր, ասէ, ի հռչակաւոր կախարդէ միոյ։

Օրլանդո՝ կաշկանդեալն ի զողարիկ կապանս սիրոյ՝ կէս մի հաւատալով և կէս մի երկբայելով բանից նորա, եհարց Գանիմիդ թէ արդեօք խօսէր նա զոր ինչ կարէր առնել խնդալէս։ «Երկուսի յարև իմ», պատասխանեաց Գանիմիդ, «զի կարեմ առնել իմ» զոր ասեմս, վասն որոյ արի զքեզ զբարեգոյնն ի հանգերձէ քոյ, և հրաւիրեա զդուքն և զբարեկամս նոցա ի հարսանիս քոյ, քանզի եթէ իրապէս ցանկասս ամուսնանալ ընդ Ռոզըլինդայ, լեր հաւաստի, զի անխափան ներկայ գտցի նա անդ»։

Ի յաջորդ աւուր, Օլիվը սատցեալ արդէն զհաւատնութիւն Էլինաի, երկոքեան նոքա եկին ներկայացան առաջի դքսին, և եկն նոյնպէս և Օրլանդո։

Ամենեքին նոքա ժողովեալ ի միասին առ ի հանդիսացուցանել զկրկնակ ամուսնութիւն, և քանզի դեռ միայն մի ի հարսանցն էր անդ ներկայ, ամենեքին սկսան զարմանալ և զանազան կարծիս տալ. այլ յոլովագոյն մասին ի նոցանէ թուէր, թէ Գանիմիդ ընդ կատակս արարեալ էր զխոստումն իւր, և միայն խաղ առնել կամէր զՕրլանդոյ։

Դուքսն տեղեկացեալ թէ զուտար իւր էր, զոր Գանիմիդ յերեան բերել խոստացեալ էր, այնպիսի տարօրինակ եղանակաւ, եհարց զՕրլանդո թէ արդեօք հաւատայր նա, թէ պատանի հովիւն խնդալէս կարէր

ցեալ էր յոյժ, հանդիպեալ էր նա ծերունի ճգնաւորի միոյ, որ բազում ինչ խօսելով ընդ նմա, ի վերջոյ միանգամայն պարձուցեալ էր զնա ի չար նպատակէ նորա, և յայնմ ժամէ ցուցեալ զքսին սարջանս և ապաշաւ մեծ, կամովին ի բաց հրաժարեալ էր յանիրաւի յափշտակեալ իշխանութենէ իւրմէ, հաստատեալ ի մաի ծախել զմնացեալ աւուրս կենաց իւրոց յառանձնութեան՝ ի վանս մենակեցաց։ Եւ ի ցուցանել զանկեղծութիւն սարջանաց իւրոց, որպէս առաջին գործ ապաշխարութեան՝ առաքեալ էր զպատգամաւորն (որպէս ասացաւ) առ եգբայր իւր, առ ի հրաւիրել զնա գնալ և վերստանալ զաթոռ իշխանութեան իւրոյ զոր այնպէս բռնաբարութեամբ յափշտակեալ էր ինքն ի բազմաց հետէ. և նաև վերապարգևել նոցա զկալուածս և զհարկ կալուածոց բարեկամաց իւրոց, որք հաւատարիմ էին կացեալ նմա ի ձախորդութեան իւրում։

Այս ցնծալից լուր, որ օրչափ անակընկալ, այնչափ և ախորժընկալ, եհաս ի բարեպէտ ժամու անդ, որով խանդ և հրճուանք հանդիսի հարսանեաց երկու արքայազարմ սիրնամոյն՝ մեծապէս առատևլեալ։ Սիլվա շնորհաւորեաց Ռօզըլինդայ ազգականի իւրում զբարեբախտութիւն նոր դքսի՝ հօր նորա, և մաղթէր նմա ի սրտէ զամենայն բարօրութիւն և զկեանս բարեբաստիկ. թող զի չէր ինքն յայնմհետէ ժառանգ ամենայն դքսութեանն. և հրաժարմամբ հօր իւրոյ յիշխանութենէն, Ռօզըլինդայ միայր գալ ժառանգ այնորիկ, — այդչափ հաւատարիմ և անկեղծ էր ահա սէր երկոցունց սոցա առ միմեանս և անխառն բաղդաւորիլն ի նախանձաւէ և ի չաչաղանաց։

Եւ դարձեալ՝ որ ահա ձեռնահաս էր առնել զոր կամէրն, յօժարութեամբ վարձաւրեաց առատապէս զճշմարիտ բարեկամս իւր, որք անանձնատ միացին ի նմանէ ի տարագրութեան իւրում. և այսոքիկ արժանաւոր անձինք, թէ և մասամբ բաժանակից լեալ ձախորդութեան վիճակի նորա, ոչ սակաւ խնդութեամբ էր զի վիրապարձան ի պալատ հարազատ դքսի իւրեանց, ճաշակ ի վայելս յաջողակիւք և անպօրբաւէտ կենաց։

ԱՐՔԱՅՆ ԼԻԵՐ

Լիեր արքայ Բրիտանիոյ ունէր զերիս դստերս, Գոնորիլ՝ կին Այբանի դքսի, Բէգան՝ կին դքսի Կորնվալայ և Կորդիլիա՝ մատաղատի կոյս մի, զորոյ սէր մրցէին ընդ միմեանս պրաւել թագաւոր Գաղղիոյ և դուքս Բրգնդիոյ. և առայս վախճան իսկ կային երկոքին սոքա յայսմ ժամանակի յարքունիս Լիերայ։

Ծերունի թագաւորն, ծերեալ և մաշեալ ի զառամութենէ հասակի և յաշխատանաց և ի հոգոց իշխանութեան իւրոյ, զոլով արդ ի հասակի առաւել քան ուխտուն ամաց, հաստատեաց ի մաի ոչ այլ ևս մասնակցիլ կառավարութեան աշխարհին, այլ թողուլ զայն յիւս մատաղ և ի հզօրագոյն ձեռս, որպէս զի զոցէ ինքն պարապ առ ի պատրաստել զանձն ի մահ, որ ի հարկէ չէր արդ յոյժ հեռի ի նմանէ։ Եւ այսու մտադրութեամբ կոչեաց առ ինքն զերիս դստերս իւր առ ի պիտել ի նոցունց իակ շրթանց թէ ո՛ր ի նոցանէ սիրէր զինքն առաւելապէս, որպէս զի բաժանեսցէ զմեծագործութիւն ի մէջ նոցա ըստ չափու սիրոյ և արժանաւորութեան նոցա։

Գոնդիլ՝ երիցագոյնն ի գաւառացն՝ յայտնեաց թէ սիրէր ինքն զհայր իւր առաւել քան որչափ հնար էր նմա յայտնել բանիւ. թէ առաւել մեծագոյնի էր նա նմա քան զլոյս աչաց իւրոց. առաւել փարելի՝ քան զկեանս և զազատութիւն, յաւելուլ ի վերայ նաև զբազում այսպիսի զրաբան խոստովանութիւնս, զորս պիւրին է կեղծել յորժամ չիք ի սրտի իրապէս սէր ճշմարիտ, և որք միայն հաճոյաձայն այլ դատարկ զրոյցք են՝ առանց ունելոյ իմաստ ինչ: Թագաւորն հրճուեալ մեծապէս ի լսելն ի բերանոյ Գոնդիլայ՝ զխոստովանութիւն այնչափ մեծ սիրոյ և կարծելով, թէ ստուգիւ խօսէր նա ի խորոց սրտի, հայրական խանդագաստանօք պարգեւեաց նմա և ամուսնոյ նորա զմին յերից մատանց լայնատարած աշխարհի թագաւորութեան իւրոյ:

Ապա կոչելով զերկրորդ զուսար իւր, ցանկացաւ լսել թէ ո՞ինչ ասել ունէր նա, և Րէգան, որ կազմեալ էր ի միւնոյն ձայնարձակ մեռադէ որպէս քոյր իւր, ոչինչ նուազ եցոյց զինքն ի խոստովանութիւնս սիրոյ քան զնա, բայց և յաւել ի վերայ, թէ որչափ ինչ քոյր իւր ասացեալ էր, յոյժ սակաւ էր համեմատութեամբ սիրալիր զգացմանց իւրոց՝ զոր ունէր առ վեհափառութիւն հօրն. և թէ բոլոր ուրախութիւն և վայելք կենաց նորա, մեռեալ չըացեալ ինչ էին նմա բազդատութեամբ ընդ մեծի հաճոյից և հրճուանացն՝ զոր վայելէր նա ի սէր ազնիւ հօր իւրոյ՝ թագաւորի:

Ի լսելն զայս՝ Լիեր երանեալ սկսաւ զանձն ուրախ ունելոյ, որպէս կարծէրն, զայսպիսի հայրասէր զաւակունս. և յետ այսպիսի դեղեցիկ խոստովանութեանց՝ զոր Րէգան արար, ի հարկէ չկարէր առնել սակաւ ինչ և ի նորա մասին, քան պարգեւել նմա զմիւս մի երորդ մասն թագաւորութեան իւրոյ, միանգամայն հաւասար ըստ չափու այնր բաժնի՝ զոր առեալ էր երէց քոյր նորա:

Հուսկ յետոյ պարձեալ առ կրտսեր զուսար իւր, զոր անուանէր խնդութիւն սրտի իւրոյ, եհարց ցնա թէ զինչ ունէր ասել նա յիւրմէ կողմանէ, առերկբայ կարծելով թէ բերկրեցուցանելոց էր և նա զլսելիս իւր նմանօրինակ բանիւք, որպէս խօսեցեալ էին քոյրք նորա, կամ մանաւանդ բանք նորա լինելոց էին յոյժ առաւել հզօր քան զնոցայն, քանզի միշտ լեալ էր նա նմա սիրելագոյնն ի բոլորից, և վայելեալ զնորհս և զզգուանս իւր առաւել քան զնոսա: Սակայն Կորդիլիա՝ գարշեալ ընդ շողոքորթութիւն քերց իւրոց, որոց սիրտ գիտէր նա՝ ոչ այն ինչ էին որպէս շրթունք նոցա, և տեսեալ զի բոլոր շողոմարար բանք նոցա՝ էին միայն ի սակս խաբելով ի բաց հանելոյ զծերունի թագաւորն ի թագաւորութենէ իւրմէ, որպէս զի ինքեանք և ամուսինք իւրեանց տիրեսցեն այնմ ի կենդանութեան նորա, պատասխանեաց զայս ինչ միայն՝ թէ սիրէր զինքն զվեհափառութիւն նորա, որպէս որդիական պարտիք էր իւր սիրել, և ո՛չ յաւել և ո՛չ նուազ քան զայն:

Թագաւորն ապշեալ միանգամայն և զժկամակեալ ընդ այս՝ ըստ երևութի ապերախտութիւն սիրելագոյն զաւակ իւրոյ, հրամայեաց նմա զդուշանալ, թէ զինչ և զորպիսիս խօսէր, և փոխել զոճ բանի իւրոյ, եթէ ոչ չար ինչ էր լինելոց բաժին վեճակի նորա:

Յայնժամ Կորդիլիա ասաց ցհայր իւր՝ թէ էր նա ծնող իւր, որ սնուցեալ և զարգացուցեալ էր զնա. և զի ի փոխարէն վճարէր նմա և ինքն զպարտիս հնազանդութեամբ և սիրոյ իւրոյ՝ որպէս արժանն էր, սիրէր զնա և ամենայն որպիսական մեծարանօք, պատուէր և յարգէր զնա: Սակայն չկարէր կազմել զբերան իւր գործի՝ արտաբերելոյ զայնպիսի բանս, զորս քորք իւր խօսեցան, կամ խոստովանել, թէ զոչ այլ ինչ սիրել կարէր երբէք յաշխարհի քան զնա միայն: Եթէ քորք

իւր, որպէս ասէին նոքա, տածէին ի սրտի սէր՝ միայն առ հայր իւրեանց և ոչ առ այլ ինչ, ուրեմն զի՞ էր զի ունէին նոքա ամուսինս: Ձիւր մասին՝ հաւատամի էր ինքն, զի եթէ երբէք ամուսնանայր նա, այր իւր պահպանէրոց էր զկէս սիրոյ սրտի նորա, զկէս խնամոց և հնազանդութեան նորա, և զի չէր ամուսնանալոց ինքն ըստ օրինակի քերց իւրոց՝ առ ի նուիրել զբոլոր սէր իւր հօր իւրում միայն:

Կորդիլիա, որ իրապէս սիրէր ի սրտէ զհայր իւր՝ գրեթէ նայն իսկ չափով՝ զոր կեղծէին քոքք նորա, պարզապէս խոստովանելոց էր զայն՝ յայլ ժ և իցէ ժամանակի, և առաւել կամովնութեամբ և սիրավայել բանիւ՝ քան որչափ ինչ խօսեցաւ ընդ նմա, որ արդարև սակաւ մի անշնորհ լեզու ունէր ոճ և ձայն. սակայն յետ լսելոյ զկեղծաւորսն խորամանկ բանս քերց իւրոց, որով յաջողեցաւ նոցա ընդունել ի փոխարէն՝ զայնպիսի ճոխ պարգևս, կարծեաց նա, թէ բարեգոյն եղաւ նոցին վասն իւր՝ էր սիրել, այլ սիրել լռութեամբ: Քանզի զայս առնելով անարատ և վերծ պահէր զսէր իւր, ի նպատակէ շահասիրութեան անձին, և ցուցանէր թէ սիրէր ինքն, այլ ոչ վասն ծարաւոյ օգոյ. և որչափ սակաւ յայտնէր զայն ի ցոյց այլոց, անչափ առաւել ճշմարտագոյն և հաւատարիմ էր այն՝ քան զսէր քերց իւրոց:

Այս անսեթևեթ պարզութիւն բանից նորա, զոր Լիւիր կարծէր յամբարտաւանութենէ յառաջ եկեալ, այնպէս զայրացոյց զծերունի թագաւորն — որ արդէն սովոր էր գժգոհել և բարկանալ յաճախ, և որոյ զառամութիւն հասակի այնպէս ակարացուցեալ և խոհրեալ էր զմիտս նորա, մինչ անկարող գտանել որոշել զճշմարտութիւն ի կեղծաւորութենէ, կամ զսեթևեթեալ բանս շողոքորթութեան ի բանից ի խորոց սրտի արտայայտեալ — զի կատաղի լինի վրէժխնդրութեամբ

զհատուցանել երրորդ մասն թագաւորութեան իւրոյ՝ զոր պահեալ էր վասն Կորդիլիայ, զացաւ տալ նմա, և բաժանեաց զայն հաւասարապէս ի մէջ երկուց քերց նորա և ամուսնոց նոցա՝ զբսին Ալբանիոյ և Կորնուալլայ, զորս ահա կոչեաց առ ինքն, և ի ներկայութեան բոլոր պալատականաց իւրոց պարգևեալ նոցա զսպասք թագաւորութեան իւրոյ, յանձն արար նոցա զիշխանութիւն, զհարկ և զկառավարութիւն աշխարհին, պահեալ ինքեան լոկ զանուն թագաւորի, և հրաժարեցաւ միանգամայն ի բոլոր արքայական պատուոյ հանդերձ այսու պայմանաւ՝ զի միայնոց էր ինքն միշտ հանդերձ հարիւր ասպետ թիկնակցօք՝ փոխանակաբար ամիս մի ի պալատի միոյ զաւակին, և ամիս մի՝ միւսոյն, և պատականութիւն էր նոցա հոգալ զամենայն ծախս իւր և ասպետաց իւրոց:

Այս անլուր և աստուածնակ ի բաց բաշխումն թագաւորութեան իւրոյ և այնպիսի անհանճար և անխոհեմ եղանակաւ, և անվայել կրիւք բարկութեան, ելից զպալատականս իւր և զնախարարս զարմանօք և տրտմութեամբ. սակայն ոչ մին ի նոցանէ վստահացաւ խօսել ընդ ցասուցեալ արքային բաց ի կոմսէն Կէնտայ՝ որ յորժամ սկիզբն արար յօդելոյ բանս ինչ բարեխօսութեան վասն Կորդիլիայ, խափան բարկութեամբ և սպառնալեօք մահու հրամայեաց նմա թագաւորն զգալ տալ բանից իւրոց: Սակայն զբարեսիրտ կոմսն ոչ այնպէս գիւրաւ նահանջել հնարէր ի նպատակէ իւրմէ, քանզի ցուցեալ էր նա զինքն միշտ հաւատարիմ հպատակ, յարգեալ էր զԼիւիր որպէս թագաւոր իւր, սիրեալ զնա որպէս հայր և պաշտեալ զնա որպէս աստ. ոչ երբէք համարեալ էր զկեանս իւր առաւել ինչ քան զգործի իմն պատերազմելոյ ընդ թշնամիս տեառն իւրոյ, և ոչ իսկ երկնչէր արդ կոտուանել զայն, յորժամ զօգուտ նորա շարժառիթ

ունէր առաջի աչաց: Ո՛չ իսկ այժմ, զի Լիւր ինքնին
Թշնամի երևէր ինքեան, մոռացաւ այս հաւատարիմ
ծառայ զհինաւուրց բարի սկզբունս մտաց իւրոց, այլ
քաջասրտութեամբ ընդդիմացաւ տեառն իւրում ի սակս
օգտի և բարեշաւութեան նորա. և եթէ անքազաքավար
և անշնորհ էին բանք իւր, այն էր պատճառ՝ զի ակր
իւր ցնորեալ երևէր ի խելաց: Լեալ էր նա տեառն
իւրում խորհրդական բարեխրատ և հաւատարիմ ի
ժամանակն անցեալս, և ազաչէր զնա այժմ անօգ
բանից իւրոց, (որպէս արարեալ էր բազմից յիւրս կա-
րևորս և ծանուցս) և հանել զարձեալ խրատու իւրոյ,
և խոհեմութեամբ յետս կոչել զլիմարական և զանի-
բաւ վճիռ իւր, քանզի՝ ասէր, պատասխանատու էր
զոլոց ինքնին կենաց չափ, զի սխալ էր կարծիք Լիե-
րայ, և կրասեր զաւակ նորա չիերէր զնա նուազ ինչ
քան զայլսն. և անսեթևեթ և պարզ բանք նորա, չէին
նշան սակաւութեան սիրոյ և զորովոյ սրտի նորա:
Ցորժամ իշխանութիւն, ասէր, կորանայ առ բանս շո-
զոքորթութեան, պատուասիրութիւն և վհատութիւն հո-
գւոյ պարտաւորի յայտ ածել զինքն, պարզ և անպա-
ճուճակ: Իսկ ի մասին սպասաւորացս Լիերայ, ո՛չինչ
կարէր նա առնել այնու, ասէր, մինչ զեռ կեանք նորա
արձէն նաւիրեալ կայր ի ծառայութիւն և ի զոհ վասն
նորա. և մահ՝ չունէր նմա զարհուրանս ինչ՝ յետս
կասել զնա ի խօսելոյ, զոր պարտիք համարէր անձին
խօսել յայնժամ:

Անկեղծութիւն և ազատամտութիւն բարեսիրտ
կամաց փոխանակ ամբոխելոյ զթագաւորն՝ առաւել ևս
զրդռեաց զբարկութիւն նորա, և որպէս մտածէի
հիւանդ մի, որ սպասանէ զբժիշկ իւր, և տածէ զմա-
հարեր ախտ անձին իւրոյ, տարագրեաց նա զայս
հաւատարիմ ծառայ, սպասնացեալ՝ զի եթէ յրնթացս
հինգ աւուրս չգտանէր նա պատրաստ մեկնիլ ի բաց

յաշխարհէ անտի Բրիտանիոյ, անհրաժեշտ ի մահ
մատնելոց էր զնա: Ընդ այս կոմսն եա արքային զղ-
ջոյն հրաժեշտի իւրոյ և ասէ, այժմ զի ընտրէը նա
վարիլ այնպիսի եղանակաւ, յաւէտ գթալ իւր քան
զկնալ համարելոց էր աքսոր. և ի մեկնելն իւր, յանձն
արարեալ զկորդելիա՝ զկոյսն որ խօսեցեալ էր այնպէս
ճշմարտութեամբ և ազատամտութեամբ՝ խնամոց դիցն,
և գնաց ի բաց տանել զկինօրեայ կեանս իւր ի նոր
աշխարհ մի, և ասէր ի մէաս իւր, երանի՛ թէ մեծա-
բարբառ խոստովանութիւնք միւս գտաերաց արքային՝
արդիւնաւորէր ի զործս սիրոյ միայն:

Թագաւոր Գաղղիոյ և Դուքս Բրգիդիոյ, կոչեցան
այժմ ի ներքս՝ լսել զվճիռ թագաւորին ի մասին
անժառանգ առնելոյ զկրասեր զուստր իւր, և յայտնել
թէ արդեօք տակաւին ի նոյն միտս էին որպէս յա-
ռաջն, և ցանկա՞յր սը յերկուց անտի ամուսնանալ ընդ
նմա, մինչդեռ անարգեալ և անժառանգ եղեալ էր նա
այնպէս ի հօրէ իւրմէ, և չունէր օժիտ հարսանեաց:
Դուքս Բրգնդիոյ եցոյց զինքն զժկամակ և հրաժարե-
ցաւ ի կնութիւն առնլոյ զնա ի ներքոյ այնոցիկ հան-
գամանաց. այլ արքայն Գաղղիոյ իրազեկ եղեալ խո-
կութեան իրին և թէ օրպիսի ինչ էր յանցանք կա-
սին, սրով զրկեալ էր ի սիրոյ հօրն, և զի պարզա-
խօսութիւն նորա և անհարողութիւն ի յօդել զրանս
շողոքորթութեան ըստ օրինակի քերց իւրոց՝ էր միայն՝
որ ընդ սպասաւոր արկեալ էր զնա, կալեալ զձեռանէ
կուսին, ասաց, թէ զառաքինութիւն նորա համարէր
նա մեծագոյն օժիտ քան զթագաւորութիւն մի, և պա-
տուիրեաց կորդելիայ՝ բարեաւ ճեաք ասել քերց իւրոց
և հօր, թէ և այնպէս չարաչար էր վարեալ վերջինով
ընդ նմա. և պատրաստել գնալ ընդ նմա, և լինել
թագուհի իւր և գեղեցիկն Գաղղիոյ, և իշխել ի վերայ
ևս առաւել ճոխ սահմանաց, քան որչափ քորք իւր

կարէին առնել. և ապա զարձեալ առ զուքան Բրգնպիոյ՝ արհամարանօք կոչեաց զնա՝ յանուն նախասահական՝ զուքս ազաջուր. քանզի սէր նորա առ կայսն մեռաւ՝ այնպէս ի վայրկենի մեռաւ հալեալ լուծեալ էր, որպէս ալ ի ջուր:

Յայնժամ Կորդիլիա արտասուեալոր աչօք ոչ ջունեաց դբոցս իւր, և ազաչեաց զբոցս իւր, և ազաչեաց զնոսա ամենայնիւ խնամ առնել և սիրել զկայր իւրեանց, որպէս խոստացեալ էին. և քորքն անհամբոյր վիճօք պատասխանեցին, թէ չէր նմա հարկաւոր խրատել զնոսա, քանզի գիտէին նոքա զպարտիս իւրեանց, այլ յաւէտ ինքեան արժան էր ջանալ և հաճոյացուցանել զամուսին իւր, որ՝ (որպէս երկիմաստ նօրէն ասացին) ընդունէր զնա միայն, որպէս ազքատիկ առուրբ լինի բախտի: Եւ Կորդիլիա մեկնեցաւ ի նոցանէ ախտր և անանդորը ի միտս, քանզի ծանօթ էր խորամանկութեան քերց խրոց, և յաւէտ փափագէր, զի ինամարկութեան այլոց ձեռաց յանձն արարեալ էր հայր իւր, քան նոցա, որոց ի ձեռս թողոյր զնա:

Փութով զկնի գնալոյ Կորդիլիայ, պիւական չար բնաւորութիւն քերց նորա սկսաւ ի վեր երևել՝ իսկական գունով իւրով: Նա իսկ, յառաջ քան զլրանալ առաջին ամսոյ, յոր Լիեր բնակէր՝ ըստ գաշնադրութեան եղելոյ՝ ի տան երէց գտաւ իւրոյ Գոնորիլայ, ծերունի արքայն սկսաւ զգալ, թէ ո՛րչափ ինչ էր տարբերութիւն ի մէջ արարման խոստմանց և կատարման խոստմանց: Այս անգութ կին գտեալ ի հօրէ իւրմէ՝ զամենայն զոր պարգևել կարէր նա, մինչ անգամ ցմեռ արքայութեան նորա, սկսաւ ահա խնայել ի նմանէ, նա իսկ զայնսիսի չնչին նշխարս թագաւորութեան՝ զորս պահեալ էր նա անձին իւրոյ, առ ի հաճել զմիտս իւր և երևակայել, թէ պեռ էր ինքն թա-

գաւոր գոնէ անուամբ ևեթ, և աչք նորա չկարէին տեսանել զնա. և զհարիւր ասպետսն՝ զորս ունէր նա ընդ ինքեան, յիւրաքանչիւր անգամ ի տեսանելն զհայրն՝ խոժոռէր զդէմս իւր, և յորժամ խօսել կամէր ընդ նմա ծերունին, կեղծէր նա զոլ հիւանդ, կամ զայլ պատճառանս յառաջ ածէր, միայն զի ի բաց պահեսցէ զնա յինքենէ. քանզի ահա պարզապէս երևէր, թէ համարէր նա զծերունի հասակ նորա տաղտկալի բեռն կամ ծանրութիւն ինչ, և զասպետս նորա և զպաշտօնեայս՝ որպէս ծախք ինն անօգուտ և անհարկաւոր, և ո՛չ միայն ինքնին օրըստօրէ թերանայր ի կատարման պարտուց իւրոց առ թագաւորն, այլ օրինակաւ նորա, և զուցէ առանձին սպրդանօք ևս, նոյն իսկ սպասաւորք նորուն սկսեալ էին վարել ընդ նմա արհամարանօք, և կամ զլանային խոպան կատարել զհրամանս նորա, կամ որ առաւել ևս քամահանք էր՝ կեղծմամբ չլսելոյն առնէին զայն: Լիեր չկարէր՝ քան նշմարել յայտնապէս զայս փոփոխութիւն բարուց զտաւ իւրոյ. այլ և ինքն չտեսանելոյն առնէր զայն ընդ երկար ժամանակ, քանզի մարդկի հասարակաւորէն չյաժարին խոստովանել ի միտս իւրեանց իսկ զանհաճոյ հետևանսն, զորս ի վերայ ածեն անձանց՝ վրիպանօք և կամակորութեամբ իւրեանց:

Ձշմարիտ սէր և հաւատարմութիւն չկարեն փոփոխել և օտարանալ երբէք ի յոտնկոնէ դիպուածոց, որպէս և խարանք և կեղծմտութիւն՝ չկարեն յերկար սովորութենէ զոլ բարի ինչ: Եւ այս առած, զլխաւորապէս ապացուցանէր զինքն ի մասին բարեմիտ կամսին կէնտալ, որ թէ և տարապրեալ յարքայէն, և սպառնալիք ահագին ի վերայ եղեալ, զի ի գառնիլն ի Բրիտանիա՝ ունէր ի մահ մատնել խոկոյն, սակայն և այնպէս ընդարեաց նա ձնալ ի Բրիտանիա, և տանել բոլոր հետևանաց այնորիկ, յորժամ գտանէր պատե-

հաւթիւն ցուցանելոյ օգուտ կամ ծառայութիւն ինչ՝ արքայի տեառն իւրում։ Ցնծա ահա առ արպիսի՞ առար մինչոց և այլակերպութիւնս զիջանիլ յօժարի հաւատալ իմ հպատակութիւն. սակայն ոչինչ անարգութիւն է նմա այն, մինչդեռ նուիրել մարթանայ այնու գծառայութիւն՝ որ պահանջէ զայն երախտապարտութիւն, ի բաց եղեալ յանձնէ ահա զբոլոր շունչ և պերճութիւն բարձր վիճակի իւրոյ, և ծպտեալ ի զգեստ ծառայական, մատոյց բարի կոմսն զծառայութիւն իւր արքային, որ անկարող գտեալ ճանաչել զնա յայլակերպութեան նորա, և յաւէտ հաճեալ ընդ պարզութիւն բարուց նորա, կամ լաւ ևս ասել՝ ընդ համարձակ և անպաճոյճ պատասխանիս նորա՝ զոր կեղծէր կոմսն (միանգամայն տարբեր յայլմ ձիթանման կաղուղ շողոքորթական բանից, ընդ որ արդ ոչ սակաւ տազտկացեալ էր, և ունէր իրաւունս տազտկանալոյ՝ տեսեալ թէ արշալի ապարպիսն և տապալաւիր էր այն, որպէս ցուցանէր փորձ ի գուսար իւր) տացաւ իսկոյն զկոմսն՝ որ զանուն իւր փոխեալ էր ի կէիոս՝ ի ծառայութիւն իւր, ոչ երբէք կարծելով, թէ էր նա մեծաշուք և ճոխ կոմս կենաց՝ և երբեմն սիրելազոյնն ի պալատականաց իւրոց։

Փութով զինի այսորիկ կէիոս այս եղեալ պատճհութիւն մի ցուցանել զհաւատարմութիւն և զսէր իւր տեառն իւրում, քանզի մատակարար Գոնրիլայ, յայլմ իսկ աւուր վարեալ ընդ Լիերայ յանպզնութեամբ և քամահանօք, և խօսեալ ընդ նմա անվայել բանիւք ինչ և շարժմամբ, ըստ որում՝ անհրկեայ տացեալ էր նա ի ծածուկ քաջալերութիւն ի սիրնոջէ իւրմէ առնել զայն, կէիոս չկարացեալ տանել այսմ յայտնի արհամարանաց մատուցեալ արքային, առանց յայտազման՝ անդէն և անդ եհար զլօրեաց գլխաւայր՝ զբարուկն լրբաբարոյ ի խրամ պալատին. և ման այսր ժիրաժիր բարեկամական ծառայութեան, Լիեր սկսաւ սիրել զնա ևս առաւել։

Եւ ոչ կէիոս էր մի միայն բարեկամն՝ զոր ունէր Լիեր։ Ազբատիկ միմոս կամ խեզկատակն, զոր ունէր նա ի պալատի իւրում, որպէս սովոր էին թագաւորք ունել յայնմ ժամանակի, առ ի ծիծաղեցուցանել և զուարճացուցանել զնոսա յետ ծանր հոգոց և գործառնութեան աւուրն, նա ևս՝ յիւրում ասոր վիճակի, և նուիրեան աւուրն, նա ևս՝ յիւրում ասոր վիճակի, և ոչափ հնար էր առնել անձնեան անձին միոյ՝ որպէս նա էր, հաւատարմութեամբ սիրեալ էր և անանձնաբնացեալ յարքայէն, յետ հրաժարման նորա յանձնոյ իւրոյ. և զուարճաբանութեամբ իւրով զբօսեցուցանէր զնա, թէ և երբեմն չկարէր զսպել զանձն ի խօսելոյ երկիմաբանօրէն և ի կատակս, վասն ասելոյ զամենայն զոր ունէր զտեսից իւրոց։ Ասէր, թէ մինչդեռ դատերք նորա ի յանկարծահաս ինդութենէ սրտի՝ հոգուին արտասուս, երբք արտութեան հնչէին ի բերանոյ հօր նորա, և այսպիսի թագաւոր մի՝ որպէս նա էր, յարմար էր յաւէտ ընդ մանկանց կայտառել և ընկերել խմբի յիմարաց։

Յայսոսիկ և յայսպիսի տարօրինակ խօսս և երգս, զորս առատութեամբ ամբարեալ ունէր ի միտս իւր, սովոր էր հաւատարիմ և զուարճարարոյ միմոսդ արտայայտել զզգացմունս սրտի իւրոյ՝ նա խակ ի ներկայութեան Գոնրիլայ. և խօսէր բազմիցս յոյժ կծու երկիծանս և կատակս, որ խիտ և ի խոր խոցէր զվերջինդ։ Նմանեցուցանէր զթագաւորն թռչնոյն՝ որ անուցանէ զձագս տատրակի, մինչ աճեն նորա. և ի տուեալ աշխատանաց նորա, խածանեն ի բաց զգլուխ նորա, և ասէր թէ աւանակ մի ևս գիտէ, թէ ձին է որ քարշէ զկառս, (նշանակելով այնու, թէ զտեսիլք արքային՝ որք ըստ օրինակի կառաց գեահելիալ էին յետևոյս ձիոյն, այժմ յառաջագոյս էին քան զհայր

իւրեանց)։ Եւ նաև, թէ Լիեր չէր այլ ևս Լիեր, այլ միայն սուտեր Լիերայ, և վասն այսոցիկ ազատիս սուրհանդ քանիցս անգամ սպառնացեալ եղև նմա զանակոծութիւն։

Անառքերութիւն և նուաղութիւն յարգանաց, զոր Լիեր սկսաւ այժմ նշմարել յայտնապէս, չէին միմիայն փոխադարձութիւն առատասրտութեան իւրոյ՝ զոր գատնէր զիւրաքանչ և յիմար հայրս այս յանարժան զբօսանէրէ իւրմէ, այլ պարզապէս ասաց ցնա վերջինդ, զի ճնաշն նորա ի պալատի իւրում պատճառէր անհանգստութիւն և անյարմարութիւն ցորչափ ժամանակ պնդէր նա պահել ընդ իւր զխուժ մի հարիւր ասպետացն. և թէ պահելն զնոսա պատճառ էր ծախք մեծ վասն խնդրոյ կերակրոյ և ըմպելոյ նոցա, և նաև ընդդէմ զպալատ իւր ցանգ ամբոխիւ և շփոթութեամբ, և խնդրէր ի նմանէ նուազեցուցանել զթիւ նոցա, և պահել շուրջ զիւրև միայն զարս ծերունիս նմանս իւր և պատշաճ իւրում հասակի։

Լիեր՝ ի լսելն զայս՝ նախ չկարէր հաւատալ թէ ստոյգ ինչ էր զոր լսէրն կամ տեսանէր, և թէ իրապէս զնուսար իւր էր՝ որ խօսէր այնպէս ապերախտաբար և բարասրտութեամբ։ Զկարէր հաւատալ թէ նա որ սակաւ ցեալ զթագ արքայութեան ի նմանէ, երբէք խորհել էր անգամ բառնալ ի նմանէ զպաշտօնեայս և զթիկնակիցս նորա, և զլանալոց նմա զարժանին պատիւ հասակի ծերութեան իւրոյ։ Սակայն սնդելով զսէրն յանվայել թախանձանս իւր, այնպէս սաստիկս զայրացաւ ծերունին, զի կչեաց զնա գարշելի անգղ, և յերեսս ած նորա զի սուտ խօսէր նա, որպէս և իրապէս սուտ էին բանք նորա. քանզի հարիւր ասպետքն բոլորովին էին արք ազնուաբարոյք և պատուելիք և յոյժ կերթի ի պարտուպատշաճս քաղաքավար կենաց։ Եւ հրամայեաց նա պատրաստել զերիվարս իւր զի

գնասցէ ինքն և ասպետք իւր առ Բէգան՝ միւս դուստր իւր, և խօսեցաւ նախատանօք զապերախտութենէ երէց դստերն՝ նմանեցուցեալ զնա չար զեւի միոյ. և թէ ապերախտութիւն նորա՝ ցուցեալ այնպէս ի զաւակի միւսմ առ ծնող իւր՝ առաւել գաժան և անհեթեթ էր քան զծովային վիշապ մի։ Ապա սկսաւ անիծանել զԳոնորիլ այնպիսի սաստիկ պատուհասիւ, մինչ զարհուրեցուցանել զլսողսն։ Մաղթէր, զի մի երբէք մայր լիցի նա զաւակի, կամ զի եթէ ծնանէր նմա զաւակ, կեցցէ այն փոխարինել նմա զանարգանսն և զարհամարհանս՝ զոր ցուցեալ էր նմա, որպէս զի զգասցէ նա թէ զիարդ գաժանագոյն ինչ էր քան զժանիս օձի՝ ունել զաւակ ապաշնորհ և երախտամոռաց։ Եւ ամուսին Գոնորիլայ՝ դուքս Ալբանիոյ, կամելով արդարացուցանել զինքն իբր զի չունէր նա մասնակցութիւն ինչ ի գործ այնպիսի չարաչար վարմանց կնոջ իւրոյ՝ զոր ցուցանէր նա հօր իւրում, Լիեր զլացաւ ունկն դնել բանից նորա, և ցասմամբ հրամայեաց թամբել զերիվարսն, և յուզի անկաւ հանդերձ ասպետօք իւրովք՝ առ բնակութիւն Բէգան զսուր իւրոյ. և յուշ ածելով արդ, թէ քանի՛ թիւիւ էին յանցանք (եթէ էր այն յանցանք ինչ) Կորդիլիա զսուր իւրոյ, համեմատութեամբ արարման քեռ նորա, սկսաւ լալ, թէ և ապա ամաչէր, զի այնպիսի անպիտան անձն մի՝ որպէս Գոնորիլ էր՝ կարէր այնչափ ազդել առնութեան իւրոյ՝ մինչ սաւ նմա լալ։

Բէգան և ամուսին իւր բնակէին ի պալատի իւրեանց՝ մեծաւ շքով և փառաւորութեամբ. և Լիեր յղեաց զկէիոս ծառայ իւր՝ հանդերձ թղթով, ազդ առնել զսուր իւրում, որպէս զի պատրաստ գոցի ընդունել զնա, և ինքն հանդերձ ասպետօք իւրովք ի չուտ անկաւ զկնի նորա։ Այլ որպէս երևեցաւ, Գոնորիլ կանխագոյն ևս հաղորդեալ էր զլուր գնալոյ հօրն քեռ

իւրում, զրելով առ նա թուղթ և չարախօսելով զնը-
մանէ, իբր զի հայր իւրեանց պաժանաբնոյթ և կամա-
կար էր, և խրատելով զքոյրն չառանալ զմեծամիւ
խումբ ասպետաց նորա՝ զոր բերէր ընդ իւր: Այս
թղթաբեր ժամանեցաւ ի միևնոյն ժամանակի, յոր և
հաս կէիսս, և հանդիպեալ սոցա միաբանց, հաս
կէիսս, թէ էր նա հին թշնամի իւր՝ մասնակարար
Գոնրիլայ, զոր ղէխիլայր զլորեալ էր ի խրամ պալա-
ատն, վասն քամահանօք վարելոյ ընդ Լիւերայ, և ոչ
հաճեալ ընդ հայեցուած և ընդ դէմս առնն, և գուշա-
կելով թէ ոչ ի բարեաց մասին եկեալ էր նա, սկսաւ
ծագրել և նախատել զնա, և հրաւիրեաց զնա ի մե-
նամարտութիւն. բայց ի հրաժարելն մասնակարարին
ի մարանչելոյ, կէիսս բորբոքեալ արդարացի բարկու-
թեամբ, սաստիկ զանակոծ արար զնա, որպէս խոց-
վարար սին և բերող վնասուածի պատգամաց. և այս
լուր հասեալ յականջս Րէգանայ և ամուսնոյ նորա՝
հրամայեցին նոքա զնել զկէիսս յոտնակապս, թէև
պատգամաւոր էր նա ի թագաւորէն, և այլմ պաշ-
տօնի արժանի էր նա ամենայն պատուով և յարգա-
նաց. և ի ժամանել արքային՝ յորժամ եմուտ նա
յամրոց անդ, զառաջին ինչ զոր նաս՝ էր հաւատարիմ
ծառայ իւր կէիսս՝ նստեալ յայրմ անարգալից վի-
ճակի:

Թէև չէր այս բարեգուշակ նշան ինչ ընդունե-
լութեանն՝ զոր ակնկալէր Լիւեր ի զօտերէ իւրմէ, այլ
հետևեցաւ այսմ վատթարագոյն իմն. քանզի յորժամ
հարցուփորձ արար նա զզօտերէն և զառնէ նորա,
ասացաւ նմա, թէ ճանապարհորդեալ նոցա զգիշերն
ազջոյն, նքթեալ էին ի վաստակոյ և չկարէին տես-
նել զնա. և յորժամ ի վերջոյ պնդէր բարկութեամբ,
թէ անխափան տեսանել կամէր զնոսա, եկին նոքա
արտաքս. բայց ահրչափ մեծ եղև զարմանք արքային,

իբրև տես, թէ առելի զուսար իւր Գոնրիլ էր ընդ
նոսա, որ որպէս երևէր՝ եկեալ էր կանխագոյն թու-
նաւորել զմիաս քեռ իւրոյ, և զնա ևս նման իւր հա-
կառակորդ կացուցանել կամաց հօր իւրոյ արքայի:

Ո՛չ սակաւ տագնապեցաւ սիրտ ծերունւոյն ընդ
այս, մանաւանդ յորժամ տես զի Րէգան սիրողաբար
կալեալ ունէր զձեռանէ քեռ իւրոյ, և զարձեալ առ
Գոնրիլ եհարց, թէ չամաչէ՞ր արդեօք՝ յետ բոլոր ա-
նարժան արարմանց իւրոց՝ հայիլ յերես ալեւոր հօր
իւրոյ: Այլ ընդ այս Րէգան խրատել սկսաւ զհայրն,
զառնալ յետս ընդ երէց քեռ իւրոյ, խնդրել ներողու-
թիւն ի նմանէ, ի բաց արձակել զկէս ասպետաց և
պաշտօնէից իւրոց, և կեալ ընդ նմա խաղաղութեամբ.
քանզի՝ ասէր, ծերացեալ էր նա և ակարացեալ ի խո-
հականութեան, և արժան էր նմա հպատակել առաջ-
նորդութեան նոցա, որք առաւել խոհական էին քան
զնա: Եւ Լիւեր ցուցեալ թէ սրչափ անարգութիւն և
ամօթ մեծ էր համարիլի վասն իւր խոնարհիլ ի
ծունկս, և որպէս թէ մուրալ ի զօտերէ իւրմէ զկեր-
կուր իւր և զհանգերձս, և հակառակեալ ընդդէմ այս-
պիսի անբնական նուաստացուցման պատուոյ անձին,
յայտնեաց զանյողդողդ մտադրութիւն իւր չմնալ այլ
ևս երբէք ընդ երէց զօտերս իւրոյ, այլ բնակել ուր
էրն՝ ընդ Րէգանայ, հանդերձ ասպետօք իւրովք:
Քանզի, ասէր, թէ սա գոնէ չէր մոռացեալ զշնորհս
հօրն, որ պարգևեալ էր նմա զկէս թագաւորութեան
իւրոյ, և աչք նորա չէին այնպէս կատաղահայեաց,
որպէս Գոնրիլայն, այլ հեզ և քաղցրահամբոյր: Եւ
նաև՝ ասէ, զի առաւել ընտրելագոյն համարիլոց էր
գնալ ի Գազղիա և գոլ թշուառ թոշակաւոր մի թա-
գաւորի տեղւոյն, որ ամուսնացեալ էր ընդ կրասեր
զօտերս իւրում առանց օժտի, քան վերապատնալ ընդ
Գոնրիլայ և ի բաց արձակել զկէս մասն ասպետաց
իւրոց:

Սակայն սխալեալ էր արքայն ի կարծիս իւր, յակնկալելն թէ վիպելոց էր առաւել ևս քաղցրասուրբեան ի Բէգանայ, քան որչափ փորձ առեալ էր ի Գոնորիլ երէց զսաթէ իւրմէ: Սա ևս, որպէս թէ մրցել ցանկացեալ ընդ քեռ իւրում՝ յանարժան և յանզուարճալի բարս նորա, յայտնեաց զի կարծէր ինքն, թէ ասպետք յիսուն շատ աւելորդ էին վասն սպասաւարկելոյ նմա, և միայն քսան և հինգն էին լիով չափ բաւական: Եւ ի լսելն զայս Լիերայ, սաստիկս վշտացեալ և սրտաբեկ եղեալ՝ զարձաւ առ երէց զուսար իւր, և յայտնեաց զի վերադառնալոց էր ընդ նմա յիսս ի տուն նորա. քանզի՝ ասէ, երկիցս քսան և հինգ բովանդակին ի յիսուն, և վասն որոյ սէր նորա երկիցս առաւել էր քան զքեռ իւրոյ Բէգանայ: Բայց Գոնորիլ՝ ահա յայլ միտս եղեալ՝ ասէր, զինչ հարկաւորութիւն զոյ և քսան և հինգ ասպետաց, կամ տասանց, կամ հնգից իսկ, մինչդեռ սպասաւորել կարեն նմա ծառայք առն իւրոյ, կամ ծառայք քեռ իւրոյ: Եւ այսպէս երկոքին չարամիտ և ապերախտ զրոյս՝ որպէս նախանձաւոր իւրեաց առ ի մի զմիասն առաւելալ յանգիտութեան առ հայր իւրեանց, որ այնչափ բարերար և քաղցր էր հանդիսացեալ առ նոսա, երևէր իբր զի հասատատեալ էին ի մաի տակաւ տակաւ զրկիլ զնա բոլորովին յասպետաց իւրոց և յամենայն նշխարաց շքեղութեան և պատուոյ, որ ինչ թոյլեալ էր նմա ի ցուցանիլ, թէ երբեմն լեալ էր նա թագաւոր մի: Ո՛չ թէ մեծամասն և շքեղ խումբ ասպետաց և ծառայից հարկաւոր էր վասն երջանկութեան նորա, այլ սաստրանականին յանդոյն թագաւորութեան միոյ՝ ի վիճակ ազգաւորութեան, ի հրամայող զօրին միլիոնաւոր անձանց՝ մնալն ապա առանց սպասաւորի միոյ՝ խիստ ինչ էր արդարև, և ապերախտ զաւակաց իւրոց զանարէն էր, որ առաւելապէս ի խոր խոցէր

զսիրտ նորա. քանզի որչափ զրկիլն անտի կարէր վշտացուցանել զնա, այնչափ և պատնապէս զգալի եղև նմա արարողութիւն պատերաց իւրոց, և անխոհեմութիւն իւր վասն այնպէս յիմարաբար տալոյ նոցա զթագաւորութիւն իւր, մինչ զի խանգարիլ սկսաւ միտք նորա. և մինչ խօսէր բազում ինչ, չգիտելով զինչ էր որ խօսէրն, երկնոյր և ուխտէր վրէժխնդիր գոլ յանբնական հրէշին, և զարհուրելի օրինակ ի մեծացուցանել զնոսա ի վերայ աշխարհի:

Մինչդեռ այսպէս ի նանիր սպառնայր զայն ինչ, զոր ակարացեալ ձեռք իւր չկարէին երբէք կատարել, ի վերայ եհաս գիշեր և ընդ նմին ահագին փոթորիկ ի, որոտումն, կայծակն և անձրև, և գսաթերք նորա տակաւին պնդելով ի բանս իւրեանց և չկամելով ընդունել զասպետս նորա, հրաման ետ Լիեր բերել զերիվարս իւր, և ընտրելով յաւէտ տանել կատարի փոթորկին արտաքոյ, քան մնալ ընդ յարկաւ ապերախտ զրնտերացն իւրոց, պատրաստեցաւ ի չու. և գսաթերքն ատերաց իւրոց, պատրաստեցան ի չու. և գսաթերքն ատելով թէ վիշաք՝ զոր ի վերայ ածին ինքեանց արք կամակորք՝ արդարացի պատուհաս է վասն նոցա, թոյլ եաւն նմա մնկնիլ ի բաց ի խելագարեալ վիճակի իւրում, փակելով զդուռն իւրեանց յերեսս նորա:

Փչէր հոգմ անհնարին սաստկութեամբ, և անձրև ահագին յորդութեամբ հեղոյր՝ յորժամ այրն ծերունի ել մաքառիլ ընդդէմ տարերացդ. բայց սաստկութիւն սոցին, թուէր գեռ նուազ ինչ համեմատութեամբ զտանգին՝ ապերախտութեամբ զսաթերաց իւրոց: Ի բազում մղոնաց տարածութեան՝ հազիւ թէ երևէր թուի ինչ պատսպարան գոլ նմա, և անդ ի լայնատարած անապատի որպէս խաղալիկ կատաղութեան մրրկին ի խաւար գիշերոյն թափառէր արքայն անիսոյթ զհոգմոյն և զկայծականց. և ի խելագարութեան իւրում ազաղակէր առ հոգմունսն զլսել զցամաք ի ծով, կամ

ամբառնալ զկոհակս ծովու և ոչոչել զցամաք, որպէս զի մի այլ ևս ինասցէ ի նմին այնպիսի կենդանի ապերախտ՝ որպէս մարդ է: Այլ ոչ ևս կայր այլ ոք անդ ընկերել նմա, այլ միայն աղքատիկ խեղկատակ նորա, որ տակաւին անբաժան էր ի նմանէ, և չանայր զուարճաբանութեամբ խրով մեղմել զարամութիւն և ցլյուսահատութիւն սրտի նորա:

Այս երբեմն մեծ թագաւոր, այսպէս այժմ լքեալ յամենից, ունէր զեռ ևս այլ ոմն հաւատարիմ բարեկամ, և այն՝ էր կէիոս բարի կոմսն կէնտաց, որ սրպէս ասացաւ փոխեալ էր զկերպարան իւր և զանուն, և ծառայէր նմա հաւատարմութեամբ, որ և ահա ի վերայ հասեալ՝ ասաց ցարքայն: «Ձի՞նչ գործես ակ՛ր իմ, նոքա՝ որք սիրեն զքեզ՝ չսիրեն սակայն զայսպիսի գիշեր մի: Սասակի փոխարինիս այս վարեալ է ահա զղազանս իսկ յորջս իւրեանց, և բնութիւն մարդոյ չկարէ տանել այսպիսի սարսափելի խռովութեան տարերաց»: Այլ Լիեր յանպիմանեաց զնա ասելով, յորժամ տառապի սիրտ յիս զայրագին հարուածոց, այսպիսի վիշաք թեթև ինչ են առ այն: Յորժամ յանդորրու կայ միաք, յայնժամ միայն մարմին ընդարձ ինքեան փափկութիւն. այլ մինչ փոխարինիկ զմիտան խռովէ՝ բանսայ զայն ամենայն զգացմունս ի զգայարանաց՝ թողեալ զոր կրէ և զգայ սիրտ միայն: Եւ ապա սկսաւ խօսել զապերախտութենէ զաւակաց, և ասէր՝ այնպիսի ինչ է այն՝ որպէս թէ բերան մի խածեալ պատառեսցէ զձեռն՝ որ մատուցանէ նմին կերակուր. քանզի ծնօղք ձեռն էին՝ կերակուր և ամենայն ինչ վասն զաւակաց իւրեանց:

Սակայն բարեմիտ և հաւատարիմն կէիոս պնդեալ ի թախանձանս իւր առ արքայն՝ զի մի ինասցէ նա անդ բացօթեայ ի փոխարկի անդ, ի վերջոյ համոզեաց զնա մտանել յաղբատիկ հիւղ մի՝ որ կայր առ ան-

ղեան. և խեղկատակն նախ մտանելով ի հիւղն, վաղեաց արտաքս աղաղակելով թէ տեսեալ էր անդ զուրուականն երևոյթ ինչ: Բայց ի քննելն լաւագէս, երևեցաւ թէ ուրուական տեսիլն ոչ այլ ինչ էր քան Թշուառ աղքատ ոմն, որ մտեալ էր ի լքեալ հիւղ անդ առ ի պատսպարել զինքն ի փոթորկէն: Ողորմելի այրս այս՝ էր մին ի լուսնոտեալ մուրացկանաց, որք կամ իսկապէս խելագար են, կամ կեղծեն զինքեանս զոլ այնպէս, առ ի պիւրաւ ևս շարժել զգութ սրտի շինականաց. և որք շրջին թափառական՝ կոչելով զինքեանս ի մի կամ ի միւս անուն, մինն զընդասեղն կամ զեղունդն ի բազուկս իւրեանց, և հանեն զարիւն. և այլ այսպիսի պժգալի գործովք, և մասամբ թախանձելով և մասամբ անիծանելով որպէս լուսնոտս, շարժեն զողորմ սրտի կամ զերկիւղ ոմանց, առ ի պարգևել նոցա տուրս ողորմութեան: Ահա այսպիսի ոմն էր աղօրմելի այրս այս, և թագաւորն տեսանելով զնա յայնպիսի Թշուառ վիճակի, յոր ոչինչ ունէր քան միայն զգեստ գրկելիակ մի ծածկել զմերկութիւն մարմնոյն, կարծէր — և անհնար լինէր տարակարծել զնա ի կարծեաց անտի — թէ էր այրն հայր մի, որ զամենայն զոր ունէր տուեալ էր զաւակաց իւրոց, և այնու պատճառաւ մնայր ի Թշուառութեան յայնմիկ. քանզի համարէր նա, թէ ոչինչ կարէր ձգել զայր ոք յայնպիսի վիճակ աղօրմելի, որպէս ունէին զաւակս ապերախտս:

Եւ յայսոցիկ և յայլ սոյնասարս անյարիր բանից՝ զոր խօսէր Թշուառացեալն Լիեր, գիտաց պարզապէս հաւատարիմն կէիոս, թէ բարձեալ էր կատարելութիւն մտաց նորա, և թէ չարաչար բերք զտանբաց նորա կացուցեալ էին զնա բոլորովին խելացնոր: Եւ յայմ աղօրմելի վիճակի արքային էր ահա, զի հայոյց նմա բարեսիրան կէիոս զճշմարիտ հաւատար-

մութիւն իւր, և վնս կարևորագոյն ծառայութիւն, քան զոր պատեհ գտեալ էր վնս ցուցանել նմա: Քանզի օգնականութեամբ ոմանց պաշտօնէից արքային, որք վնս հաւատարիմ էին նմա, առեալ տարաւ զնա յառաւօտու՝ յամրոց Դովրայ, ուր զվնասարակս կային բարեկամք և թիկնակիցք իւր, զորս իբրև կոմս կէնտայ ունէր նա, և ինքն նաւեալ առ Գազղիա, փութացաւ յարքունիս Կորղիլիայ, և անդ այնչափ սրտաշարժ բանիւք նկարագրեաց զվշտաւոր վիճակ թագաւորի՝ հօր նորա, և այնպիսի կենդանի գունովք ի յայտ ած զանգութ վարս և արարս քերցն, մինչ զի բարի և սիրագորով զաւակս այս, բազում արտասուօք խնդրեաց յանձն իւրմէ՝ օգնել հօր իւրում վերստանալ անկրէն գահոյ իւր. և այր նորա զիջեալ ի կամս նորուն, ի չու անկաւ Կորղիլիա և էջ ի ցամաք ի Դովր, գնդով իմն արքայական զօրաց:

Լիներ եղանակաւ ինչ վերծեալ ի ձեռաց պահապանաց իւրոց, զորս բարի կոմս կէնտայ կարգեալ էր զգուշանալ և խնամ առնել նմա ի խնդրատրութեան իւրում, գաւ յանձնց ի պաշտօնէից Կորղիլիայ ի գաշտի միում ի Դովր, ուր թափառէր յողորմելի վիճակի, բղտրտիլն ցնորեալ ի խնդս, և որ երգէր բարձրաձայն՝ ունելով ի գլուխ գլեզ մի բղտրեալ ի յարկից և ի պէսպէս խոտոց և ի փշոց ժողովեալ ի գաշատց ցորենոյ: Կորղիլիա թէև ըղձայր մեծապէս տեսանել զնա, այլ խորհրդով բժշկաց համոզեցաւ համբերել ժամանակ ինչ, մինչ քուն և գեղսրայքն՝ զոր առեալ էին նմա, անպորրացուսցին զնա. և օգնութեամբ այսոցիկ ճարտար բժշկաց, որոց խոստանայր Կորղիլիա գրոյր գոհարս և գզարդս իւր վասն առողջութեան թագաւորին, ի վերջոյ գաւ նա ի բաւական անպորր վիճակի մտաց, առ ի կարող լինել հանդիպել գտեր իւրում:

Սրտաշարժ տեսարան իմն էր հանդիպումն իրերաց հօրն և գտեր, և անզուսպ խնդութիւն առաջնոյն ի տեսանելն միանգամ զսիրելի գուսար իւր. և ամօթն՝ զոր կրէր յընդունելն զայնպիսի բազմազորով սէր ի նմանէ, զոր վասն թեթև պատճառի ինչ զժկամակութեան իւրոյ, ի բաց ձգեալ էր յինքենէ, և այսոքիկ երկու կիրք մի զմիով մրցելով ի միասին ընդ խօթամբութեան իւրոյ, խանգարեալ ուղղ նորա՝ երբեմն մոռանալ տայր նմա թէ ուր էր նա, կամ ով էր որ այնպէս խանդաղատանօք համբուրէր զնա և խօսէր ընդ նմա: Ուստի գանայր և ազաչէր զորս կային անդ չծիծաղել ի վերայ իւր, եթէ սխալմամբ կարծէր ինքն, թէ տիկինն այն էր Կորղիլիա գուսար իւր: Եւ յետոյ քանի սրտաշարժ էր տեսանել զհայրն ի ծունկս անկեալ խնդրել ներողութիւն ի զաւակէն, և բարի տիկինն ևս նոյնպէս ի ծունկս խոնարհեալ հայցել զօրհնութիւն ի հօրէն. և որ ասէր, թէ չէր վայել հօրն ծնրդել, այլ իւր պարտականութիւն էր առնել զայն, քանզի ինքն զաւակ էր նորա, հարազատ և սիրագորով զաւակ նորա — Կորղիլիա: Եւ ապա համբուրէր զնա կրկին, առ ի համբուրիւք իւրով ի բաց վտարել (որպէս ասէր) զբոլոր ապերախտութիւն քերց իւրոց, որք՝ ասէր, ամաչել պարտին ընդ արարս իւրեանց, վասն այնպէս արատաւոր վարելոյ զծնրունի հայր իւրեանց՝ սպիտակեալ հերովք, ի ցրտագին անապատ անդ, մինչդեռ շան թշնամւոյ իւրոյ, թէ և խածեալ էր զնա իսկ, թոյլ տալոց էր ինքն ինքեան առ վառարանաւ իւրով և ջերմանալ յայնպիսի դիշերի միում՝ յոր վտրեցին զհայր իւրեանց արտաքս: Եւ նաև պատմեաց հօր իւրում, թէ ուրպէս զարձեալ էր նա ի Գազղիոյ բերելով նմա օգնականութիւն. և հայրն ասէր, թէ պարտ էր նմա արդ մոռանալ և ներել ինքեան զամենայն անցեալսն, քանզի ծերացեալ և յիմարացեալ էր

ինքն և չգիտէր զինչ առնէր, և արդարև ունէր նա իրաւունս՝ վասն առեղոյ զինքն, սակայն քորք նորա չունէին զայն բնաւ: Ա՛ւ այս պատասխանեաց Կորդիլիա, թէ ինքն ևս չունէր բնաւ իրաւունս չսիրելոյ զնա՝ քան որչափ քորք իւր չունէին:

Ա՛յսպէս թողեալ ահա զծերունի թագաւորն ընդ խնամօք և պաշտպանութեամբ ծնողասէր և գորովալիր զաւակի իւրոյ, որ օգնութեամբ քնոյ և զարմանաց և ճարտար բժշկաց, ի վերջոյ մարթացաւ սթափեցուցանել զմիտս նորա ի շփոթութենէն և ի խանգարմանէ ի վերայ ածեալ յանդիմութենէ միւս զսաերաց իւրոց. զարձցուք այժմ խօսել զինչ զնոյն անողորմ և գորովազուրկ զսաերաց:

Ա՛յսքիկ հրեշք ապերախտութեան, որք այնպէս կեղծաւորաբար ցուցին զինքեանս առ նոյն իսկ հայր իւրեանց, անմարթ էր թէ լինել կարէին նոքա ճշմարիտ և անկեղծ առ ամուսինս իւրեանց: Փութով սաղացան նոքա ի ցուցանելոյ առ նոսա և ըստ երևութի անգամ զինուալեալ պարախս և զսէր, և բացայայտ և համարձակապէս ի յայտ ածին, թէ զրաւեալ էր զսէր իւրեանց այլ ոք. և ըստ զիպաց այնպէս եղև, զի առարկայ սիրոյ երկուց քերցն իսկ՝ նոյն և մի անձն էր: Էր սա Էդմընդ անհարազատ որդի հանգուցեալ կոմսի Գլօստրայ, որ զաւանութեամբ իւրով մարթացեալ էր զրկել ի ժառանգութենէ զեղբայր իւր Եդգար — զըստ օրինի ժառանգ կոմսութեանն, և չարհնար միջոցօք սասանէնեալ էր ահա ըղտիաղոս և զկալուածս նորա: Եւ քանզի յայտ ժամանակի մեռաւ զուքս Կորնվալայ՝ ամուսին Րէգանայ, և վերջինդ խոհոյն յայտնեաց զմտադրութիւն իւր ամուսնանալ ընդ կոմսի Գլօստրայ, բորբոքեալ այս զնախանձ քեռ նորա, առ որ չարամիտ կամն երբեմն՝ երբեմն արաբեալ էր խոստովանութիւնս սիրոյ, որպէս և առ Րէգան քոյր նորա, Գոնորիլ հնարիւք իմն թունաւորեալ սպան զՐէգան. և զուքս Ա՛լբանիոյ՝ ամուսին Գոնորիլայ գիտացեալ զայս և տեսանելով զապօրէն և զչար համակամութիւն կնոջ իւրոյ, բանտարկեաց զնա, որով ի յուսահատութենէ սրտի իւրոյ, փութով զկնի վախճան եղ կենաց իւրոց. և այսպէս արդարութիւն երկնից ի վերջոյ ած զարժանին պատուհաս ի վերայ ապիրատ զսաերացս այսոցիկ:

Մինչդեռ աչք ամենից յառեալ ունային առ այսոսիկ զիպուածս, զմայլեալ և սքանչացեալ բոլորովին ընդ վաղահաս արդարութիւն երկնից, և յարժանի մահ քերցն, յանկարծուստ նոյն հայեցուած աչաց բոլորից, զարձուցաւ ի տես և ի հիացումն այլ մի զաղանախորհուրդ տնօրէնութեան նոյն իսկ զօրութեան երկնից՝ վերաբերութեամբ բախտի մատաղատի և առաքինաբարոյն Կորդիլիայ՝ կրասեր զսաեր աղքատի, որոյ հեզահամբոյր բարք և քաղցրութիւն սրտի երևէին գոլ արժանի, արդարև, բարեզոյն ևս վախճանի: Սակայն ահարկու ճշմարտութիւն իմն է այս, զի անմեղութիւն և բարեպաշտութիւն բազմից վրիպին յաշխարհի աստ ի յաչողուածոյ և յարժանին վարձատրութենէ: Գունդ զօրացն՝ զոր Գոնորիլ և Րէգան առաքեալ էին ի ձեռն դքսի Գլօստրայ՝ յաղթական գտեալ, Կորդիլիա անկաւ ի ձեռս դքսին. և սա ապիրատ հնարիւք կամեալ խափան պնել ժառանգելոյ նորա զաթոռ հօր իւրոյ, վախճան եղ կենաց նորա ի բանտի: Եւ այսպէս երկինք վերատացաւ առ ինքն զայս անմեղ և բարի սիկին, յետ ցուցանելոյ զնա աշխարհի որպէս չքեղ օրինակ մի ճշմարիտ ծնողասիրութեան: Լիեր ևս չեկաց երկար յետ մահուան սիրելի զաւակի իւրոյ:

Ա՛յլ յառաջ քան զվեռանելն նորա, բարի և հաւատարիմ կոմս Կէնտայ, որ միշտ անանձնատ էր մնացեալ ի տեսանէ իւրմէ ի ժամանակի անոի չարա-

չար վարմանց գտաերաց նորա՝ մինչ ցտխրագին ժամ մահու նորուն, գուն գործեաց իրազեկ առնել զնա, թէ կոմս կէնտայ էր ինքն, որ ծառայեալ էր նմա կէիոս անուամբ, սակայն ցնորեալ միաք Լիերայ չկարէր ըմբռնել զայն, թէ կէիոս և կոմս կէնտայ նոյն և մի էին, վասն որոյ անօգուտ համարեցաւ կոմսն ձանձրացուցանել զնա երկար բացատրութեամբ. և Լիեր մեռանելով զկնի փոքու, այս հաւատարիմ ծառայ և բարեկամ ևս՝ թէ ի ծերութիւնէ հասակին և թէ ի տրամութիւնէ սրտի ընդ վիշտն կրեալ ի թագաւորէ իւրոյ, և ինքն ո՛չ յեա երկար ժամանակի էջ ի գերեզման։

Եւ թէ ո՛րպէս արդարութիւն երկնից ի վերայ եհաս ապիրատ կոմսի Գլօստրայ, որոյ գաւաճանութիւնք բոլորովին ի յայտ եկեալ, մեռաւ ի մենամարտիչն ընդ եղբօր իւրոյ՝ օրինաւոր ժառանգի կոմսութեան, և թէ ո՛րպէս Դուքս Ալբանիոյ՝ ամուսին Գոնորիլայ, որ անմեղ էր ի մասին մահուան Կորդիլիայ, և որ ո՛չ երբէք իրախուսեալ էր զկին իւր յանարժան գնացս նորա ընդդէմ հօրն, ամբարձաւ յաթոռ թագաւորութեան Բրիտանիոյ, անհարկաւոր է պատմել առաջնոր, քանզի Լիեր և երիքին գտաերք իւր մեռան ահա, և վէպ բանիս միայն գնացային նկարագրէ անցս կենաց։

ՓՈԹՈՐԻԿՆ

Կայր կղզի մի ի ծովու, բնակիչք որոյ էին ժեղուն այր մի՝ անուանեալ Պրասպիրօ և դուստր նորա Միրանդա — գեղեցիկ և մատաղատի կոյս մի։ Վերջինդ եկն ի կղզի անդ յայնչափ փոքրիկ հասակի՝ զի ո՛չ կարէր յիշել զէմս այլ մարդոյ ուրուք թողեալ հօր իւրոյ։

Բնակէին նոքա յանձաւի միում փորեալ ի ժայռի, և բաժանեալ էր անձաւն ի զանազան օթեակս, յորոց զմին Պրասպիրօ անուանէր գրասենեակ իւր, և անդ պահէր նա զմատեանս ինչ, որք ըստ մեծի մասին վերաբերէին արհեստի կախարդութեան — արհեստ իմն, որում ուսեալ մարդիկ ժամանակին ո՛չ սակաւ նուիրէին ուշադրութիւն. և զդիւութիւն այսր արհեստի, եղիտ Պրասպիրօ յոյժ սիրանի և օգտակար վասն իւր, քանզի տաւօրինակ դիպուածով իմն անկեալ նորա ի կղզիս այս, զոր վհուկ ոմն անուանեալ Սայկօրաքս ձգեալ էր ի ներքոյ կախարդական զօրութեան ինչ, և մեռեալ անդ սակաւուք յառաջ քան զժամանիլ իւր, Պրասպիրօ ի ձեռն արհեստին՝ զոր ուսեալ էր՝ զերծուցեալ էր զրազում բարի ոգիս զորս Սայկօրաքս կաշկանդեալ բանտարկեալ էր ի բունս մեծամեծ ծառոց վասն չկատարելոյ ղչար կամս և զհրամանս իւր։ Այսոքիկ հեզաբնոյթ ոգիք՝ յայնմհետէ միշտ պատրաստ էին հնազանդել կամաց Պրասպիրօի, և զխաւարն ի սոցանէ էր էրիէլ։

Այս փոքրիկ կայտառ ոգի, անուանեալ Էրիէլ, չունէր բնաւ ճշտասիրութիւն ինչ կամ չարութիւն ի

բնաւորութեան իւրում, այլ միայն հաճութիւն մեծ զգայը նեղել զազել հրէշ սմն անուանեալ կալիբան, քանզի ունէր խէթ առ նա, ըստ որում էր նա որդի Թշնամւոյ իւրոյ Սայկօրաքսայ: Պրասպիրօ գտեալ զկալիբանս այս — տարօրինակ և անհեթեթ կենդանի մի, յաւէտ կապկի քան մարդոյ բերելով նմանութիւն — ի մէջ անտառաց կղզւոյն, տարաւ զնա յանձառ իւր, և ուսոյց նմա խօսել, և յոյժ քաղցրութեամբ վարելոյ էր ընդ նմա, բայց չար բնաւորութիւն, զոր ժառանգեալ էր նա ի Սայկօրաքս մօրէ, իւրմէ չտայր նմա թոյլ՝ ուսանիլ բարի ինչ կամ պիտանի. վասն ո՞ր աշխատեցուցանէր զնա Պրասպիրօ որպէս տարուկ, բերել փայտ և պարապիլ յայլ ծանր վաստակս. և էրիէլ կարգեալ էր վերակացու նորա, առ ի մղել և սակսկել զնա ի կատարումն ծառայական գործոց իւրոց:

Եթէ երբէք ծուլանայր կալիբան ի գործս իւր կամ անփութութեամբ կատարէր զայն, էրիէլ (զոր միայն Պրասպիրօ կարէր տեսանել, և յաչաց այլոց աներեւոյթ էր միշտ) մեզմով յառաջ մատուցեալ, սեղմէր ուժով զբիթ նորա, և երբեմն աքացեալ զլորէր զնա ի տղմալից տեղի ինչ, և յակառ թօթափիլ փոխեալ ի կերպարան կապկի սկսանէր բանալ զբերանն և ծամածռել զերեսս իւր առ նա, և ապա խօսէր այլա-կերպեալ զինքն ի ձև ողնւոյ միոյ, թաւալէր ի ներքոյ ոտից կալիբանայ, որ սկսանէր ի վեր ոստոստել՝ երկուցեալ ի սրածայր փշոց նորին: Եւ այլ այսպիսի բազմազան զաւօք միշտ տանջէր զնա էրիէլ, յորժամ Պրասպիրօ հրամայէր նմա առնել ինչ և կալիբան ծուլանայր ի գործն:

Ունելով ահա զայսպիսի զօրաւոր ոգիս ի ծառայութեան իւրում և ի հպատակութեան կամաց իւրոց, կարէր Պրասպիրօ իշխել հողմոց և ալեաց ծո-

վու: Եւ յաւուր միում, հրամանաւ նորա յարուցեալ ոգւոցն սաստիկ փոթորիկ ի ծովու, ուր դեղեցիկ մեծ նաւ մի ծփեալ յանհնարինս ի մէջ կատաղի ալեացն՝ մերձ էր ի խորտակումն, եթոյլ զայն գտեր իւրում և առէ, թէ լի էր նաւն ահա այնպիսի կենդանեօք՝ որպէս ինքեանք էին: «Ո՛վ հայր իմ», աղաղակեաց իսկոյն Միրանդա, «եթէ ի ձեռն արհեստի քոյ՝ դու յարուցեր զզարհուրելի փոթորիկդ՝ ուրեմն գթա ի վերայ տառապելութեան նոցա: Տես ահա մերձ է նաւն խորտակիլ ի փշուրս ի վերայ ժայռիցն, և աւազ, բոլորեքեան մեռանելոց են ջրահեղձ: Եթէ ունէի ես զօրութիւն բաւական, յաւէտ ընկղմելոց էի զծով ի յատակս երկրի, քան թոյլ տալոց գեղեցիկ նաւուն ընկղմիլ հանդերձ բոլոր անգնահատելի կենօք որ ի նմին»:

«Մի՛ շփոթիր այդպէս, Սիրելիդ իմ Միրանդա», պատասխանեաց Պրասպիրօ, «ոչինչ վնաս գոյ յիրիդ, հրամայեալ եմ ես արդէն՝ զի մի՛ ոք վնասեսցի բնաւ ի նաւուրդաց անտի. և զոր ինչ առնեմ արդ, միայն ի քոյ սակս առնեմ, քաղցրիկ զաւակ իմ: Ա՛նծանօթ է քեզ թէ ո՛վ ես դու, կամ ուստի եկիր աստ, և յիմ մասին ոչինչ առաւել գիտես, քան միայն զի հայր քոյ եմ ես, և բնակիմ յայգաբակի անձաւի աստ: Կարե՞ս յիշել արդեօք զժամանակ ինչ յառաջ քան զգալ քոյ ի կղզիս: Երկնչիմ թէ չկարես, քանզի յայնժամ էիր ի հասակի ո՛չ առաւել քան երից ամաց միայն»:

«Ա՛յո՛, կարեմ, հայր իմ», ասաց Միրանդա:

«Զինչ է զոր յիշել կարես», եհարց Պրասպիրօ, «զամե՞ն ինչ կամ զմի՛նձն ոք, ասա ինձ զինչ են զորս մտաբերել կարես»:

Միրանդա պատասխանեաց, «Թուի ինձ մտաբերել զայն որպէս երազ մի, բայց ո՞չ ապաքէն կանայք չորք կամ հինգ ի սպասու կային ինձ»:

«Առաւել քան չորք կամ հինգ», ասաց Պրասպիրս, «բայց զիաՓրդ է զի յիշատակ այնորիկ առնեալ է ի միտս քոյ: Ցիշե՞ս զու, թէ որպէս եկիր ասա ի կղզի յայս»:

«Ո՛չ», պատասխանեաց Միրանդա, «ո՛չ այլ ինչ կարեմ մտաբերել ես»:

«Երկոտասան ամօք յառաջ քան զայս, սիրելի իմ Միրանդա», շարունակեաց Պրասպիրս, «էի ես զուքս Միլանայ, և զու զուստր իմ, էիր իշխանուհի մի և ժառանգ իմ: Ունէի ես զկրտսեր եղբայր մի, որոյ անուն էր Անտոնիս, և ի ձեռս նորա ապստարեցի ես զամենայն ինչ. և քանզի սիրէի ես զառանձնութիւն և զնոր հետամտութիւն գիտութեանց, յանձնեցի զկառավարութիւն իշխանութեան և կալուածոց իմոց հօրեղբօր քումմ՝ զաւաճան եղբօր իմում (որպէս ապա եցոյց զինքն զոլ այնպէս): Բարձի թողի արարեալ իմ զամենայն աշխարհային զբաղմունս և զգործս, և ի խոր թաղեալ ի մէջ գրոց և ուսմանց, նուիրեցի զբոլոր ժամանակ իմ միայն մտաւոր կրթութեան: Եղբայր իմ տեսեալ այնպէս զիշխանութիւն իմ յիւրում ձեռին, սկսաւ կարծել, թէ իրապէս ինքն էր զուքս և ո՛չ ես. և պատեհութիւն, զոր ընծայեալ էի նմա հաճոյ կացուցանել զինքն յաչս հպատակաց իմոց, զարթոյց ի չար սիրա նորա ամբարհաւաճ փառասիրութիւն իմն և զիս զրկելոյ զիս ի գքսութենէ իմմէ, և զայս արար փութով և գիւրութեամբ ի ձեռն օգնականութեան իշխանի Նէապօլսոյ, որ ի թշնամութեան կայր ընդ իս»:

«Եւ ընդէ՞ր ո՛չ բարձին զմեզ ի միջոյ իսպառ», եհարց Միրանդա:

«Զաւակ իմ՝», պատասխանեաց հայր նորա, «չէաւահացան նոքա, քանզի յոյժ մեծ էր սէրն և համակրութիւն զոր ժողովուրդք իմ ունէին առ իս:

Անտոնիս տարաւ զմեզ ի նաւ մի, և յորժամ հեռացեալ էաք ի ծով մեծոս ինչ, բռնութեամբ ստիպեաց զմեզ մտանել ի փոքրիկ նաւակ մի, որ ունէր ոչ թիս, ոչ առագաստ, և ո՛չ կայմ, և անդ ելիք զմեզ, որպէս կարծէր, կորնչիլ ի ծովու: Սակայն մեք ի քաղցրասիրտ պալատականաց իմոց, անուանեալ Գօնզալօ, որ սիրէր զիս, ի ծածուկ եղեալ էր ի նաւակ անդ ջուր, պաշար կերակրոյ, զհանդերձս, և զգրեանս ինչ որ առաւել մեծագնի էր ինձ քան զգքսութիւն իմ»:

«Հայր իմ սիրելի». ասաց Միրանդա, «Ո՛հ, ո՛րչափ նեղութիւն մեծ կրեալ լեցես զու յիմ մասին»:

«Ո՛չ, սիրելիդ իմ», պատասխանեաց Պրասպիրս, ընդ հակառակն, որպէս փոքրիկ պահապան հրեշտակ մի եղեր զու ինձ: Անմեզ ժպիտ քոյ քաջալերէր զիս հնամբերութեամբ տանել ձախորդութեան իմոյ: Կերակուր մեր բաւեաց մեզ, մինչ ժամանեցաք յանմարդաբնակ կղզի ասա, և յայնմհետէ զվնասուորն ի զուարճութեանց իմոց լեալ է կրթիչն զմիտս քոյ, և արդարև լիապէս գանձեալ ես անձին քումմ զպատուոյ պատասխարակութեան իմոյ տուեալ քեզ»:

«Օրհնեսցե՛ զքեզ երկինք, հայր իմ սիրելի», ասաց Միրանդա, «բայց այժմ պատմեա ինձ, ապաշաւեմ, զի՞նչ է պատճառ յարուցանելոյ քոյ զփոթորիկդ այդ»:

«Գիտացիր ուրեմն», պատասխանեաց հայր նորա, «զի ի ձեռն փոթորկիս այսորիկ՝ երկոքին թագաւորք Նէապօլսոյ և անդուստ եղբայր իմ ձգեալ են ի ցամաք ի կղզի ասա»:

Եւ զայս ասացեալ, Պրասպիրս մեղմով հպեալ ի զուստր իւր կախարդական գաւազանաւ իւրով, խոհոյն անկաւ վերջինդ ի քուն խոր, քանզի յայժմ պահու ոգին Էրիէլի երևեցաւ առաջի տեառն իւրոյ, յայտնել նմա զպատահարս փոթորկին, և թէ զինչ էր

արարեալ նա ընդ նաւորդան. և թէև ոգիքն միշտ ա-
ներևոյթ էին յաչաց Միրանպայ, այլ և այնպէս Պրաս-
պիրօ չհամեցաւ զի լուիցէ նա զզրոյցսն ի մէջ Է-
րիէլի և իւր, որ ի հարկէ երևելոց էր նմա որպէս թէ
հայր իւր խօսէր առ օդ զառարկ։

«Է՛կ ահա պատմեա՛ ինձ, քա՛ջ ոգի իմ»· ասաց
Պրասպիրօ ցէրիէլ, «թէ ո՛րպէս ի կատար ածէր
զհրաման իմ»։

Ա՛սա Էրիէլ նկարագրեաց ճշդութեամբ զիմոթորիկն
և զղարհուրանս նաւորդացն, և թէ ո՛րպէս որդի ար-
քային Ֆրկինանդ՝ առաջինն էր որ ոտեաւ ի ծով, և
հայր նորա եաես զնա կլեալ յալիս ծովուն։ Սակայն
յապահովի էր նա և առողջ, ասէ Էրիէլ, յանկեան
միում կղզւոյս, և ձեռն ի ծնօթի նստեալ անդ տըխ-
րութեամբ ողբայր զկորուստ հօր իւրոյ ալքային, զոր
կարծէր, թէ հեղձաւ ի ծովու։ Եւ ո՛չ մին ի մազից
գլխոյ նորա վնասեալ էր, և թէև շքեղ հանդերձք
նորա թացեալ էին բոլորովին յալեաց ծովուն, սակայն
երևէր նա առոյգ և կայտառ որպէս յառաջն։

«Գոհ եմ ես, իմ լաւ Էրիէլ»՝ ասաց Պրաս-
պիրօ, բայց արդ բեր զնա ասա, քանզի կամիմ զի
դուստր իմ տեսցէ զալքայորդին։ Եւ ո՞ւր են ալքայն
և եղբայր իմ»։

«Յորժամ Թոզի զնոսա»՝ պատասխանեաց
Պրասպիրօ, «որոնէին նոքա գտանել զՖրկինանդ, թէ
և հազիւ յուսային գտանել զնա, կարծելով թէ հեղ-
ձեալ էր նա ի ծովու։ Ի նաւատեաց անտի և ոչ մին
վտանգեալ է, թէ և մէն մի կարծէ թէ զերծեալ է
ինքն միայն, և նաեւ ես թէև աներևոյթ ի նոցանէ,
կայ յապահովի ի նաւահանգստի անդ»։

«Էրիէ՛լ»՝ ասաց Պրասպիրօ, «զհրաման իմ
հաւատարմութեամբ կատարեալ ես, սակայն զեռ կայ
քեզ առնել այլ ինչ»։

«Ջի՞նչ, զեռ ունի՞ ինձ առնել այլ գործս»,
պատասխանեաց Էրիէլ· թոյլ տուր ինձ յուշ ածել
քեզ, ա՛ռ իմ, զխոստումն քոյ վասն տալոյ ինձ ա-
զատութիւն։ Յուշ ա՛ծ, ազա՛տեմ, զի նուիրեալ եմ քեզ
զարժանի և զհատատարիմ ծառայութիւն, ո՛չ երբէք
խօսեցեալ եմ սուտ, ո՛չ երբէք գործեալ սխալանս ինչ,
և ծառայեալ առանց զժկամակութեան կամ տրտնջա-
նաց»։

«Ջի՞նչ է այս զոր լսեմ»՝ ասաց Պրասպիրօ,
«և դու չյիշե՞ս թէ յորպիսի չարչարանաց ազատեցի
զքեզ· մոռացա՞ր արդեօք զչար վհուկն Սայկօրաքս, որ
յապիրատութենէ խրոյ և ի հասակէ անձին կորացեալ
էր մարմնով որպէս աղեղն մի· ո՞ւր ծնաւ նա, յայտ-
նեա՛ ինձ»։

«Ծնաւ նա Ալժիերս քաղաքի, ա՛ռ իմ»՝
պատասխանեաց Էրիէլ։

«Եթէ այսպէս»՝ ասաց Պրասպիրօ, «ուրեմն
հարկ է ինձ վերապատմել, թէ ջի՞նչ էիր դու և յոր-
պիսի վիճակի, զոր՝ երևի թէ մոռացեալ ես։ Ա՛յս ա-
նօրէն Սայկօրաքս ի պատճառս գործոց վհկութեան՝
զորս զարհուրելի է լսել անգամ, տարագրեցաւ Ալ-
ժիերս քաղաքէ և բերեալ լքաւ ասա ի կղզեղս յայս-
միկ· և քանզի էիր դու ոգի մի գողար և հեզ, և
չկարէիր կատարել զչար հրամանս նորա, փակեաց նա
զքեզ ի մէջ ծառոյ միոյ, ուր յորժամ գոհ ես զքեզ
բառաչէիր ի ցաւոյ չարչարանացդ, և յուշ ած զի ես
ազատեցի զքեզ յայդմ չարչարանաց»։

«Ներողամիտ լեր, ազա՛տեմ բարի տէ՛ր իմ,
պատասխանեաց Էրիէլ, ամաչելով ընդ ապերախտու-
թիւն իւր, պատրաստ եմ ահա հպատակել ո՛և
իցէ հրամանի քոյ»,

«Զա՛յդ արա՛»՝ ասաց Պրասպիրօ, և ազատե-
ցից ես զքեզ»։ Յայնժամ եաս նմա զայլ պատուէր

ինչ, և Էրիէլ սլացաւ ի բաց նախ գնալ ի տեղին՝ ուր կայր Ֆրկինանդ, և ուր եգիտ զնա գիւղ նստեալ այնպէս անմխիթար ի վերայ խոտաւէտ գետնոյն, և թաղեալ ի խոր տրամութեան։

«Ո՛վ իմ գեղեցիկ պատանի, ասաց Էրիէլ, յորժամ եաես զնա, փութով ահա տեղաշարժ առբերից զքեզ։ Որպէս թուի ինձ, հարկ ի վերայ կայ իմ ածել զքեզ առ տիկինն Միրանդա, որպէս զի նշմարեսցէ նա զչնորհալի անձն քոյ։ Ե՛կ Պարոն, հետեւեա առաջնորդութեան իմոյ»։ Եւ ընդ այս սկսաւ երգել ժեղմաձայն։

Ահա ի խորս ծովու մարմին հօր քոյ եղեալ,
Ոսկերք նորա կազմեն զբուստ և զխեցի։
Ակունք նորա ի մարգարիտ փոխակերպեալ,
Մէն մի մասնիկ մարմնոյն ի ձև օտարացի,
Յաւէրժհարսունք ժամէ ի ժամ, լուր զու զձայն,
Հնչեն նորա զախրագին զանգակ թաղման։

Այս ախրագին լուր կորուսեալ հօր իւրոյ, փութով սթափեցոյց զարբայորդին ի թմրութենէն՝ յոր անկեալ էր, և պշուցեալ հետեւեաց առաջնորդութեան ձայնի Էրիէլի, որ բերեալ հասոյց զնա առ Պրոսպիրո և Միրանդա, որք առ ժամն նստեալ էին ընդ հովանեաւ մեծ ծառոյ միոյ։ Այլ Միրանդա բաց ի հօրէ իւրմէ չէր տեսեալ երբէք յառաջ քան զայն զայր որ։

«Սիրելի Միրանդա», եհարց Պրոսպիրո, «ասա՛ ինձ, առ ի՞նչ հայիս զու այդպէս մտապիր»։

«Ո՛վ հայր իմ, ասաց Միրանդա զարմացեալ բոլորովին, անկասկած՝ ոգի մի է այն։ Ցե՛ս, որպէս հայի նա շուրջ զիւրև. ա՛հ, որպիսի գեղեցիկ արարած մի է յիրաւի։ Ասա՛ ազաչեմ, ոգի՞ է այն»։

«Ո՛չ, գուստր իմ», պատասխանեաց հայրն, ուստի այն և նմանէ, և ունի զգացմունս որպէս մեք ունիմք։ Պատանիդ զոր տեսանես՝ էր ի նաւի անդ։ Փոքր մի թօշնեալ է նա ի դէմս իւր ի տրտմութենէ, եթէ ոչ մարթ էր կոչել զնա գեղեցիկ։ Կորուսեալ է նա զընկերակիցս իւր, և թափառի արդ ի խնդիր նոցա»։

Միրանդա՝ որ կարծէր թէ բոլոր մարդիկ ունէին զմիևնոյն լուրջ դէմս և զմօրուս որպէս հայր իւր, բերկրեցաւ մեծապէս ընդ տեսիլ գեղագէմ պատանեհասակ արքայորդւոյն, և Ֆրկինանդ տեսեալ զայնպիսի սիրազրաւ տիկին մի յանմարզարնակ վայրի անդ, և ի զարմանալի ձայնիցն զոր լուեալ էր՝ ակնկալելով սքանչելիս միայն և հրաշս, թուեցաւ նմա, թէ էր ի կախարդեալ կղզւոջ միում, և Միրանդա էր ոգիացուհի տեղւոյն, և որպէս առ ոգիացուհի մի՝ ուղղեաց զբան իւր առ նա։

Միրանդա երկչոտութեամբ լինն պատասխանեաց, թէ չէր ինքն ոգիացուհի, այլ սոսկ պարզ աղջիկ մի, և կամէր ծանուցանել զհանգամանս վիճակի իւրոյ, յորժամ Պրոսպիրօ ընդմիջեաց զբան նորա։ Խնդայր նա ի սիրա իւր տեսանել զի զմայլէին սոքա ընդ իրեարս. քանզի յայտնապէս եաես, զի (որպէս սովոր եմք ասել ընդ առաջին տես նոցա՝ հարեալ էին ի սէր միմեանց. այլ առ ի փորձել զհաւատարմութիւն Ֆրկինանդայ, ի մտի եդ ի միջ արկանել զժուարութիւնս ինչ, և վասն որոյ յառաջ մատուցեալ խօսեցաւ ընդ արքայորդւոյն խոժոռ դիմօք ասելով նմա. Թէ եկեալ էր նա անդ որպէս լրտես մի, առ ի խլել զկղզին ի ձեռաց իւրոց, որ աչք և իշխան էր այնորիկ։ «Եկ զկնի իմ, ասաց, և ահա կապեցից զպարանոց քոյ և զոտս ի միասին, ընդունել պարտ է քեզ ջուր ծովու և խեցի ձկանց, փըշաեալ արմատ ծառոց և թեփ ընկոյց լիցի կերակուր

քոյ»։ «Ո՛չ այդպէս, ասաց Ֆրկինանդ, ընդհակառակն ցայդ ես այսպիսի հիւրընկալութեան, մինչ առաջի անձին իմ առաւել զօրաւոր թշնամի ոք քան զքեզ», և իսկոյն ձգեաց զսուր իւր արտաքս ի պատենէ։ Բայց Պրասպիրօ ճօճեալ զկախարդական գաւազան իւր, բեւեռեաց զնա ի տեղւոջ անդ ուր կայր և չշնայր նմա զօրութիւն շարժելոյ։

Միրանդա փարեալ զհարբ իւրով ասէր, «ընդէ՞ր այդպէս խստութեամբ և անհամբոյր վարիս, հայր իմ, զթա՛ ի նա, ես երաշխաւոր եղէց վասն նորա։ Երկրորդ այր է սա զոր տեսեալ եմ ես և թուի ինձ թէ բարի ոմն է սա»։

«Լուռ լե՛ր, ասաց հայր նորա, այլ բան մի թող եղիցէ ի շրթանցդ, և ահա յանդիմանել ունիմ զքեզ։ Ուստե՞ւ ուսար չառագով հանդիսանալ այսպիսի խաբեբայի միոյ։ Կարծես դու թէ ո՛չ գոն այլ ևս ազնիւ մարդիկ, այն զի տեսեալ ես դու զդա և զկալիբան միայն։ Ցիմար աղջիկ դու, ասեմ քեզ, կան բազում մարդիկ՝ որք այնչափ գերազանց են զպատահեալդ, որչափ գերազանց է նա զկալիբանաւ»։ Զայս ասէր առ ի փորձել զհաւատարմութիւն զտանը իւրոյ, և Միրանդա պատասխանեաց, «սէր սրտի իմոյ և գորով խնամարհ է և համեստ, և չփափագիմ ես տեսանել զայլ ոք բարեգոյն քան զնա»։

«Եւ զկնի իմ, պատանի դու, ասաց Պրասպիրօ, անհնար է քեզ չհնազանդել կամաց իմոց»։

«Արդարև անհնար է որպէս երևի», պատասխանեաց Ֆրկինանդ և չփախելով թէ ի ձեռն կախարդութեան էր, զի այնպէս բոլորովին թափուր կացուցեալ էր զինքն յուժոյ ընդդիմութեան, ապշեալ զարմացեալ էր ընդ այնպէս սաթօրինակ սախպուն իւր՝ հեռևելոյ հրամանի Պրասպիրօի. և ի գնալն իւր՝ մերթ ընդ մերթ հայեցուլ յետս առ Միրանդա՝ որչափ կարէր տեսանել զնա, ասէր, «հոգի իմ բնաւին չապշութեան կայ, որպէս թէ էի յերազի, այլ սպառնալիք առնս և սկարութիւն անձին իմոյ՝ զոր զգամ, առ ո՛չինչ գրելոց էի, եթէ հնար լինէր լինձ գոնէ միանգամ յամենայն աւուր տեսանել ի բանտէ իմմէ զգեղեցիկ տիկինդ»։

Պրասպիրօ չպահեաց զՖրկինանդ ընդ երկար յանձնաւի իւրում, զկնի փոքուն երեր զնա արտաքս յարգելանէ իւրմէ, և առաջի եղ նմա զառաժանակիր աշխատանս ինչ, զգուշանալով զի գուսար իւր Միրանդա չկարասցէ անձանձրոյթ զխստութենէ աշխատութեան նորա, և ապա կեղծեալ իբր զի՝ հրաժարի ինքն ի գրասենեակ իւր, ի ծածուկ հսկէր երկոցունց նոցա։

Պրասպիրօ հրամայեալ էր Ֆրկինանդայ կուտել ի վայրի միում զծանր կոճեղս ինչ փայտից. և արքայորդին անսովոր զոլով այսպիսի բազմաշխատ գործոյ, Միրանդա փութով նշմարել սկսաւ, զի սիրահար իւր զբեթէ կիսամեռ եղեալ էր ի վաստակոյ, և մաուցեալ առ նա ասէ, «Ահ, մի՛ այդպէս խստիւ աշխատ լինիր դու, հայր իմ ինայ ի գրասենեկի իւրում և չունի գալ արտաքս յառաջ քան ժամս երիս, ազաչեմ զքեզ զադարեաց և հանգիր փոքր մի»։

«Ո՛չ, սիրելի տիկին, պատասխանեաց Ֆրկինանդ, չկամիմ առնել զայդ. նախ պարտ է ինձ աւարտել զգործ իմ, և ապա հանգիստ առնուլ»։

«Բայց եթէ դու նստցիս վայրիկ մի, ասաց Միրանդա, ես կրեցից զկոճեղն ի կոյտ անդ»։ այլ զայս Ֆրկինանդ բոլորովին զլացաւ առնել, սակայն Միրանդա փոխանակ օգնելոյ նմա, որպէս ցանկայրն, յաւէտ արգել եղև նմա, քանզի երկոքին նոքա սկսան երկար զրուցատրութիւն ինն, և կրաւն կոճեղացն շատունակէր ոչ այնչափ արագ՝ որպէս յառաջն։

Պրասպիրօ որ ի վերայ եղեալ էր Թրվինանդայ զծանր աշխատութիւնն, միայն ի սակս փորձելոյ զհաւատարմութիւն սիրոյ նորա, չէր զբաղեալ յընթերցմունս գրոց որպէս կարծէր զուսար նորա, այլ յանեբևոյթս կանգուն կայր առ անկեան և լսէր զոր ինչ խօսէին նոքա։

Թրվինանդ նախ եհարց ի Միրանդայ թէ զինչ էր անուն նորա, և Միրանդա յայտնեաց նմա զայն, այլ ասէ, թէ ընդդէմ էր այն բոլորովին հրամանի հօր իւրոյ։

Ընդ այս առաջին անհնազանդութիւն գտաւ իւրոյ ժպտեցաւ Պրասպիրօ, քանզի կախարդական արհեստիւ զարթուցեալ յանկարծ ի սիրտ Միրանդայ սէր մեծ առ պատանին, չէր ժխտակ առանել՝ զի այնպէս յայտնէր նա նմա զսէր իւր, մոռանալով զպարտիս հնազանդութեան իւրոյ հրամանի հօր իւրում։ Եւ ոչ սակաւ հաճութեամբ ունկն եդ նա երիտ բանախօսութեան ինչ Թրվինանդայ, որով խոստովանէր և նա, զի սիրէր զՄիրանդա առաւել քան զմ և իցէ աւիկին զոր երբէք տեսեալ էր։

Ի պատասխանի գովեստիցն, զոր խօսէր Թրվինանդ վասն գեղոյ իւրոյ, որ ասէր թէ գերազանցէր զզեղեցկութեամբ բոլոր կանանց աշխարհի, պարզմտութեամբ ասաց Միրանդա, «չիարեմ ես մտաբերել զչէմն կնոջ ուրուք, և ոչ իսկ տեսեալ եմ զայլ ոք բաց ի քէն և ի հօրէ իմմէ. այլ հաւատամ ինձ, ազնիւ բարեկամ իմ, չփափագեմ ունել զայլ ոք ինձ ընկերակից յաշխարհի աստ քան զքեզ, և ոչ իսկ երևակայութիւն իմ յղանալ կարէ զայլ զչէմն ինչ՝ որ առաւել հաճելի իցէ ինձ քան զքոյն։ Այլ երկնչիմ թէ խօսիմ ես առաւել ազատօրէն քան զոր արժան է և մոռանամ զիրատ հօր իմոյ»։

Ժպտեցաւ ընդ այս Պրասպիրօ, և խոնարհեցոյց զգլուխ իւր ի նշան հաճութեան, որպէս թէ ասել կամէր, «որ ինչ սրտի իմոյ փափագ է, ահա ճշդիւ այնպէս կատարի ամենայն, և զուսար իմ լինելոց է թագուհի Նէապօլսոյ»։

Եւ յայնժամ Թրվինանդ այլ մի գեղեցիկ ճարտարապետութեամբ (քանզի ալքայորդիք խօսին պերճ շքեղ ոճով) յայտնեաց Միրանդայ զի ժառանգ էր ինքն թագաւորութեան Նէապօլսոյ, և թէ առնել կամէր զնա թագուհի իւր։

«Բարեկամ իմ, ասաց Միրանդա, աւաղ, յիմարութիւն է ինձ լալ յուրախութենէ սրտիս, այլ պատասխանեցից բանի քում պարզօրէն և անկեղծ հաւատարմութեամբ։ Եթէ փափագիս ամուսնանալ ընդ իս, պատրաստ եմ ահա ես հարսնանալ քեզ։

Պրասպիրօ ընդմիջեաց յայսմ ժամու զբանս շնորհակալութեան Թրվինանդայ՝ երևեցուցանելով զինքն առաջի նոցա։

«Մի երկնչիր, զուսար իմ, ասաց նա, լուայ ես զամենայն զոր խօսէիք զուք, ես հաճ և հաւան եմ ընդ այն։ Եւ դու Թրվինանդ, եթէ վարեցայ ընդ քեզ խաւտութեամբ ինչ, ահա լիասէս վարձատրեցից զքեզ ի փոխարէն՝ տալով քեզ զզուսար իմ։ Բոլոր նեղութիւնք, զոր կրեցեր, միայն փորձք էին հաւատարմութեան սիրոյ քոյ, և յոյժ բարւոք և անուսան տաբար զու փորձեցի։ Եւ ահա որպէս պարգև քեզ, որում անկեղծութեամբ սիրոյ քոյ արժանացուցեր զանձնդ, առ զզուսար իմ, և մի ծիծաղիր ընդ պարծանօք ասել իմ թէ գերիվերոյ է նա քան զամենայն գովեստ»։ Եւ ապա ասելով նոցա թէ ունէր ահա ինքն գործ ինչ որ պահանջէր զներկայութիւն իւր, պատուիրեաց նոցա նստել անդ և զրուցել ի միասին

մինչ ցվերապառնալ իւր, և զայս պատուէր Միրանդա յոյժ հնազանդութեամբ յանձն էառ կատարել:

Յորժամ Պրասպիրօ ի բաց գնաց ի նոցանէ, կոչեաց առ ինքն զողին Էրիէլն, որ անդէն երևեցաւ առաջի նորա և ըղձակաթ էր պատմել նմա զոր ինչ արարեալ էր ընդ եղբօր Պրասպիրօի և Թագաւորին Նէապօլսոյ: Յայնմանէ Էրիէլ զի Թողեալ էր զնոսա զրեթէ խելաթափ յերկիւղէ տաբօրինակ իրացն՝ զորս տեսեալ էր նոցա տեսանել և լսել: Մինչդեռ նըքնեալ ի վաստակոյ և յանուադութենէ Թափառէին նորա աստ և անդ, երևեցուցեալ էր առաջի նոցա զսեղան յոյժ ախորժահամ կերակրոց, և ապա ի նսեմն նոցա ուրախ անտի, ցուցեալ զինքն որպէս ահագնամեծ հրէշ իմն Թևաւոր, և Թափեալ էր իսկոյն զկերակուրն: Ապա ի մեծ զարմանս նոցա այս հրէշ սկսեալ էր խօսել ընդ նոսա յուշ ածելով զապիրատութենէն նոցա, որով զբրկեալ էին զՊրասպիրօ ի գքսութենէնէ իւրմէ, և լքեալ զնա և զանդի գուսար նորա կորնչիլ ի ծովու, ասելով Թէ այդու պատճառաւ էր, զի ահա սարսուռ և երկիւղ այնպէս տանջէին զնոսա:

Թագաւոր Նէապօլսոյ և Անտոնիօ եղբայրն դաւաճան, սարջացան ահա ընդ անիրաւութենէն զոր արարեալ էին Պրասպիրօյի, և Էրիէլ յայտնեաց տեսեան իւրում, Թէ իրապէս անկեղծ էր ապաշխարութենէն նոցա, և զի Թէ և ոգի մի էր ինքն, սակայն չկարէր քան զԹագաւորն նոցա:

« Ուրեմն բեր զնոսա աստ , ասաց Պրասպիրօ, քանզի եթէ զու որ միայն ոգի մի ես և զԹաս ընդ Թշուառութենէն նոցա ազդուի առաւել ես՝ որ լինելոյ Թիւն եմ մարդկային իրաւ զնոսա, զԹող պարտիմ»:

Փոքու ջկնի վերադարձաւ Էրիէլ բերելով զԹագաւորն և զԱնտոնիօ, և ընդ նոսա զծերունին Գոնզալօ որ հետևեալ էր նոցա, սքանչացեալ ընդ նորօրինակ

ձայն երաժշտութեան՝ զոր լսելի էր արարեալ Էրիէլ յօդ անդ առ ի գրաւել բերել զնոսա առ աէր իւր: Այս այն Գոնզալօ էր, որ զԹաստրատութեամբ մատաղ կարարեալ էր վասն Պրասպիրօի մատեանս և պաշար կերակրոյ, յորժամ անիրաւ եղբայր նորա լքեալ էր զնա ի ծովու ի նաւակի միւսմ, առ ի մատնել ի կորուստ:

Թշուառութիւն և երկիւղ այնպէս Թմրեցուցեալ էին զմիտս նոցա, զի չկարացին ճանաչել զՊրասպիրօ. և վերջինդ նախ յայտնեաց զինքն քաղցրասիրան Գոնզալօի կոչելով զնա փրկիչ կենաց իւրոց, և ապա եղբայր նորա և Թագաւորն ևս զիտացին Թէ անիրաւեալն Պրասպիրօ էր նա:

Անտոնիօ յայնժամ սկսաւ լալով և ողորմագին բանիւք և սարջանօք՝ աղաչել ներողութիւն յանցանաց իւրոց, և Թագաւորն ևս եցոյց անկեղծ տրտմութիւն վասն օգնականութեանն մատուցեալ Անտոնիօի՝ ի սակս բառնալոյ զեղբայր նորա ի միջոյ: Պրասպիրօ ներեաց նոցա և Թագաւորն և եղբայր իւր խոստանալով վերադարձուցանել զգքսութիւն նորա առ նա, ասաց Պրասպիրօ ցարքայն Նէապօլսոյ, « ես ևս ունիմ վասն քոյ պարգև մի » , և բանալով զգուռն մի, եցոյց նմա զորդի նորա Ֆերդինանդ որ զբօսնոյր ընդ Միրանդայ ի խաղ սաղրնջի:

Ոչինչ կարէր գերազանցել զինդութեամբն՝ զոր ահա հայր և որդի զգացին յանակնկալ հանդիպմանն իւրեանց իրերաց. քանզի իւրաքանչիւր կարծէր, Թէ հեղձեալ էր միւս՝ ի ծովու ի փոթորկի անդ:

« Ո՛վ հրաշիցս , ասէր Միրանդա , որպիսի գերազնիս արարածք են սոքա, արդարև գեղեցիկ ինչ է աշխարհ, եթէ պարունակէ այն չինքեան գայսպիսի մարդիկ »:

Աբքայն Նէապօլսոյ ո՛չ սակաւ զարմացեալ էր ընդ գեղեցկութեան և ընդ հնարհալի կերպարան պատանուհ-

ւոյն Միրանդայ, քան զորովի իւր: «Ո՛վ է օրիորդս այս, ասէր նա, երևի սա գոլ պիղծուհին այն՝ որ բաժանեալ էր զմեզ և ահա ժողովեալ է զմեզ դարձեալ ասա առ միմեանս»: «Ո՛չ այդպէս, պատասխանեաց Ֆլորինանդ, ժպտելով զի հայր իւր ևս ըստ իւրում օրինակի սխալեալ՝ կարծէր զՄիրանդա պիղծուհի ոմն. մահկանացու է նա, այլ անմահ նախախնամութեամբ երկնից՝ իմ է նա ահա. ընտրեցի ես զնա, յորժամ անմարթ էր ինձ հայցել զհաճութիւն քոյ, կարծելով թէ չես զու կենդանի: Ի նա զուսար Պրասպիրօի՝ ականատուր գթոյ Միլանայ, որոյ մեծ համբաւ արդէն ծանօթ էր ինձ, այլ չէի տեսեալ զնա, և ի նմանէ ահա ընկալայ՝ որպէս թէ ի նորոյ՝ զկեանս իմ, և երկրորդ հայր է նա ինձ՝ տալով ինձ զսիրելի տիկինս այս»:

«Ուրեմն և ես եղէց հայր սորա, ասաց Թագաւորն, այլ ահ, քանզի տարօրինակ ինչ համարեսցի ազաչել իմ զներգործութիւն դառեր իմոյ»:

«Մի ասեր ինչ յայդր մասին, ասաց Պրասպիրօ, թէպէտ մոռասցուք զանցեալ վիշաս մեր, այնինչ եզերին այնք ահա այսպէս երջանկաբար»: Եւ յայնժամ Պրասպիրօ գրկեաց զեղբայր իւր, և գրկին հաւասատեցոյց զնա, թէ բոլորովին ներեալ էր նմա, ասելով թէ ամենևին ոտ անօրէնութիւն երկնից էր՝ որ թոյլ տուեալ էր այնպէս մերժիլ նմա յաղքատիկ դքսութենէ Միլանայ, որպէս զի զուսար իւր ժառանգեսցէ զաթոռ թագաւորութեան Նէապօլսոյ. քանզի հանդիպաւմն նոցա յանմարդաբնակ կղզւոջ անդ, առիթ լեալ էր գրաւման որդւոյ արքային ի սէր դստեր իւրոյ:

Յայսոցիկ սրտառուչ բանից, զորս խօսեցաւ Պրասպիրօ, Անտոնիօ այնպէս յոյժ ամաչեցաւ և հարաւ ի խայթից խղճի, զի սկսաւ արտասուել, և ի լա-

լոյ իւրոյ չկարէր խօսել. և նաև ելից քաղցրասիրտն Գօնզալօ ի տեսանելն զհաշտութիւն և զվերանորոգութիւն սիրոյ եղբարցն, և մաղթէր զօրհնութիւն երկնից վասն մատաղ ամոլիցն:

Ապա Պրասպիրօ յայտնեաց նոցա, թէ նաև նոցա հայր յապահովի ի նաւահանգստի անդ, և կայնի ի նմա անվնաս բոլոր նաւատոմք, և զի ինքն և զուսար իւր ընկերելոց էին նոցա ի վաղիւ յառաւօտու: «Եւ արդ, ասէ, մանկակիկ պարոիկք այնչափ ինչ կերակոյ զոր աղքատ հիւղ մեր մատակարարել կարէ. և առ ի զբօսեցուցանել զձեզ յերեկոյիս յայսմիկ, պատմեցից ձեզ զանցս կենաց իմոց յօրէ անտի մատնելոյ իմոյ յանմարդաբնակ կղզիս այս»: Յայնժամ կոչեաց նա զկալիբան և պատուիրեաց նմա պատրաստել զկերակուր և յարդարել և ի կարգի գնել զամենայն յանձաւի անդ. և կոչնականքն բոլորովքին զարմացեալ էին ընդ անհնթեթ կերպարան տզեղ հրեշիս այսմիկ, որ (Պրասպիրօ ասաց) էր միմիայն ծառայ՝ որ սպաս հարկանէր նմա:

Յառաջ քան զմեկնիլ իւր ի կղզւոյն՝ Պրասպիրօ արձակեաց զէրիէլ ի ծառայութենէ իւրմէ ի մեծ խընդութիւն սրտի փոքրիկ կայտառ ոգւոյ այնորիկ, որ թէ և լեալ էր նմա ծառայ հաւատարիմ, սակայն միշտ անձկայր վայելել յազատութեան, թափառել յօդ ածոց զսլսման իրիք սրպէս թռչուն մի, կամ շրջշրջել ի ներքոյ կանաչագեղ ծառոց և ի մէջ քաղցրահամ պաղոց և անուշահոտ ծաղկանց: «Իմ սքանչի և կայտառ էրիէլ, ասաց Պրասպիրօ ցփոքրիկ զուարճ ոգին, յորժամ ազատէր զնա, թէև զգալի եղիցի ինձ մեկնումն քոյ, սակայն և այնպէս պարգևեցից քեզ ազատութիւն»: «Գոհ եմ յոյժ, քաղցրիկ տէր իմ, պատասխանեաց էրիէլ, այլ թոյլ տուր ինձ, յառաջ քան զարձակելդ զհաւատարիմ ծառայ քոյ, ընկերել

նաւու ձեր առ առն, հանպերձ յաջողակ հոգմովք. ապա յորժամ գալից ազատութիւն, ո՛հ, կեցից ես յայնժամ քանի՛ երանի և երջանիկ »: Եւ սկսաւ նա նուագել զհետեւեալ երգ:

Ուր ծծէ մեղուն, անդ և ես ծծեմ,
Ի մէջ գողտր թերթից չուշանաց ննջեմ.
Հանգչիմ անդ մինչ բու ճչէ բարձրաձայն,
Թռչիմ ի վերայ թևոց ջղկան
Ուրախ և զուարթ զհետ ամարան:
Կեցից ես զուարճ, յար ի ցնծութեան
Ի ներքոյ ծաղկանց կախեալ ի ստեղան:

Յայնժամ Պրասպիրօ թագուհւոյ խոր ի գետնի՛ զկախարդական մատեանս իւր և զգաւազան, քանզի հաստատեալ էր ի մտի ո՛չ ևս ի կիր արկանել զարհեստս կախարդութեան: Եւ այսպէս յաղթելով թշնամեաց իւրոց, և սիրակցեալ ընդ եղբօր իւրոյ և թագաւորի Նէապօլսոյ, ո՛չ այլ ինչ մնայր ահա այլեւս առնել, առ ի լնուլ զչափ երջանկութեան իւրոյ, քան վերադառնալ յերկիր ծննդեան և վերատառնալ զիշխանութենէն զրկութեան իւրոյ, և վկայ զոլ հանդիսի բարձրջանիկ ամուսնութեան Միրանդայ դստեր իւրոյ ընդ արքայորդւոյն Ֆրդինանդայ, զոր ցանկացաւ թագաւորն, զի կատարեսցի առանց յապաղման ի ժամանակն նոցա ի Նէապօլիս: Եւ ուր ի ներքոյ անփոյթ առաջնորդութեան Էրիէլ ոգւոյ, յետ զուարճալի ճանապարհորդութեան իմն, եկին հասին բոլորքին:

Վ Ե Ր Ջ

Յ Ա Ն Կ

Ռօմիօ եւ Ջուլիէտ . . . . . էջ 9
Վենետկացի վաճառականն . . . » 36
Օթելլօ . . . . . » 58
Զգօնացուցանել կին ժանտաբնոյթ . . » 80
Համլէտ . . . . . » 98
Դեր սխալանաց եւ շփոթի . . . » 122
Մակբեթ . . . . . » 144
Սիմբելին . . . . . » 162
Տիմոն Աթենացի . . . . . » 183
Որպէս եւ հաճոյ է քեզ . . . » 204
Աքքսայն Լիեր . . . . . » 229
Փոթորիկն . . . . . » 253

ՎՐԻՊԱԿ	ԷՋ	ՏՈՂ.	ՈՒՂԻՂ.
վկայ	17	11	զկայ
լար	21	5	լաւ
եւ	25	32	եւս
իբաց, դադաղ	27	24	ի բաց դագաղ
Պօրչա	42	10	Պօրչիա
զիսխադրութիւն	44	10	զիսխառուբթիւն
, ապա յուսութեամբ	48	22	ապայուսութեամբ
ցաւալին՝ սկիզբն	57	16	ցաւալի սկիզբն
զմազապուրք	59	12	զմազապուրծ
փեսանալ	60	29	փեսայանալ
յալս	61	7	յաչս
զանձն լինչ	61	32	զանձն յայն լինչ
ի տարփան	63	32	ի տարփանս
մարտաւոր	65	26	մարմնաւոր
մերկացուցին	66	33	մերկացուցան
Ցայն	67	8	Զայն
իբրև	71	4	թեթև
կասկածոյզ	71	6	կասկածայոյզ
այնչափ	79	28	յանչափս
բարձրագոզ	87	28	բարձրագոչ
աւել	90	27	յաւել
այդ	94	14	արդ
Պապտիստա	94	29	Բապտիստա
»	»	32	»
գլխոյ	109	8	գլխոյ
ապերատ	112	17	ապիրատ
աներկեայ	135	33	աներկբայ
զարմանանք	140	12	զարմանք
կատարելագործեալ	143	6	կատարելագործեայ
կարճ առ և	150	27	կարճառև
զօրութիւն, որոյ	155	25	զօրութիւն որոյ,
առեղութիւն	158	23	առելութիւն
այլ և խայթից	158	31	այլ և առնել խայթից
փախչիլ	160	4	փախչիլ
զդատապարտեալ	169	9	դատապարտեալ
Ա ժանչելապէս	170	16	Ա քանչելապէս
որոց	181	22	որով

ՎՐԻՊԱԿ	ԷՋ	ՏՈՂ.	ՈՒՂԻՂ.
յառաջատաւթեամբ	181	27	յառաջատաւթեան
հոսիլ	183	13	հոսել
զոր	185	17	յոր
զվեր	186	18	գուսար
փոխանակել	189	11	փոխարկել
ընդանակաց	191	19	ըմպանակաց
հանրացանօթ	192	32	հանրածանօթ
խնանկութենէ	193	20	խնանկութեան
որչափ	194	30	որչափ
խահրուած	196	4	խահուած
յայտնակատակ	196	28	յայպնակատակ
պժգանգն	203	10	պժգանքն
ընարէք	207	2	ընարէի
սկսան	207	29	սկսաւ
խոյս	213	24	ի յոյժ
վերադարցաւ	218	11	վերադարձաւ
նկատէր	222	7	նկրտէր
առաւելեալ:	228	20	առաւելեալ,
մանուանդ	231	6	մանաւանդ
աւուրս	234	33	աւուրց
Բրգիդիոյ	235	12	Բրգնդիոյ
երբեմ	239	13	երբեմն
աւտնակ	239	30	աւանակ
այդմ	242	19	յայդմ
զվիսով	244	20	զմիւսով
ածին	245	19	ածեն
դառնագին	245	27	դառնագին
ապերախտութեամբ		27	ապերախտութեան
Յորժամայ	258	25	Յորժամ

UBA

ՀՀ Ազգային գրադարան
NL0166609